Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆ

ԻՏԱԼԻԱՅՈՒՄ

263

910.4
Ա-42

-5 OCT 2011

Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆ

910.4
Ա-42

ԻՏԱԼԻԱՅՈՒՄ

(ՈՒՂԵՒՈՐԻ ԹՈՒՒՅԻԿ ՏՊՐՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ)

1021
3971
963

ԹԻՓԼԻՍ
ԱՐԱԳԱՏԻՊ ՄՆ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑԻ
ՊՈՒՉԿԻՆԵԱՆ ՓՈՂՈՑ, 12

1903

ՀԱՅԿ. ՊԵՏ ՀԱՅԿ. ԳՐԱԴԱՐԱՆ
Ն ԵՐ
Վ Ա Ղ Ե Հ
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԱՆՎ. Ն.


5 FEB 2013

21598

Дозволено цензурою. Тифлисъ, 7 Февраля 1903 г.



171+





ՄԱՐԻԱՄ ՄԱԳԹԱՂԻՆԱՑԻ ԶԻՄԻՐԻ, ՍԻՆ-ԼՈՒԿԱՅԻ ԱԿԱԴԵՄԻԱՅՈՒՄ (ՀՌՈՄ)

I

—Յորհուրդ կը տամ ձեզ երրորդ կարգովչը ճանապարհորդել, ասաց ինձ չվէյցարացի բարեկամս, իմանալով՝ որ ես Իտալիա եմ ուղևորվում։

—Ինչու՞։

—Իտալական ամբոխն անտանելի է, բիրտ ու կեղտոտ։

—Նախ՝ ինձ վիճակվել է ձեր կարծածից աւելի անտանելին տեսնել. երկրորդ՝ ամբոխն ինձ հետաքրքրում է, ինչքան բիրտ և կեղտոտ լինի նա։ Դուք, կարծեմ, չէք դուլի այն բուսաբանին, որը դաշտերում ուշադրութիւն է դարձնում միայն փարթամ, դրաւիչ ծաղիկների ու խոտերի վրա և զանց է առնում ջրերի ափին, քարերի տակ, խոռոչներում կծկված, գալարված բոյսերը, որոնք իրանց արտաքին խեղճութեան տակ թագցնում են չատ անգամ չատ բարդ բուսական կեանքի երևոյթներ։

—Բայց մէթէ երկրորդ ու առաջին կարգերում նոյնպէս մարդիկ չեն ճանապարհորդում։

—Հոգիների մի գունատ միակերպութիւն կայ այնտեղ, որ աւելի ճնշող է, քան ամբոխի քրտինքի հոտը. դիտէք ինչքան ծանր է յարատև

ինքնագոհ, միշտ ժպտուն, վարթամ կեանքից փայլուն այդ դէմքերի հալածանքը։ Չէ, բարեկամ, ինձ ամբոխն է հարկաւոր, յօդնած ու տառապալից, որպէս ծովը. անծանօթ ու խորը, որպէս նրա անդունդները։

—Դուք գիտէք։

—Մնաք բարև։

—Գնաք բարև։

Պէտք եղաւ լօգանից նախ դէպի Միւնխէն գնալ ցիւրիխի վրայով և ապա այնտեղից Ինսբրուկի վրայով ուղևորվել դէպի Իտալիա։ Մի խոնաւ ու ցուրտ երեկոյ է. Միւնխէնից գնում եմ Վենետիկ։ Գերմանական երկաթուղիները օրինակելի ճշտապահութեամբ են շարժվում։ Երեկոյեան ժամը 10 և 10 րոպէն է. գնացքը մեկնում է վայրկեանի ճշտութեամբ։ Գերմանիայում կարծէք քաղաքացիական պաշտօնէութիւն չկայ. ամեն ինչ այստեղ զինուորական է, երկաթուղու պաշտօնեաները էլ զինուորականների պէս են պահում իրանց. վագոնների դռները փակվում են մի տեսակ չոր, անսիրտ խստութեամբ, ասես ներսում բանտարկեալներ նստած լինեն. իսկ գնացքի շարժվելու նշանը տրվում է, որպէս բանակին ուղղած հրաման։

Մութ է. լուսամուտից նայելն անօգուտ է, թէև ցերեկով էլ երկաթուղու լուսամուտից շատ բան չէ կարելի տեսնել,—կապոյտ երկինքի կամ փախչող ամպի մի կտոր, ծառերի կամ անտառի անորոշ կանաչութիւն, իրար եռանից վազող լեռ-

ների և բլուրների խառնիճաղանճ չարքեր, մի խօսքով անընդհատ փախչող անորոշ, անձև պատկերներ, որոնք ոչինչ չեն ասում մարդու երևակայութեանն ու սրտին։ Իրաւուք ունեն գեղեցկագէտները, երբ պնդում են, թէ երկաթուղին ջնջեց նախկին կարաւանների ճանապարհորդութեան հմայքը. տարաբաղդաբար, գեղեցիկն ու օգտակարը ամեն անգամ դժուար է լինում իրար հետ հաշտեցնել։ Այո, երկաթուղով ճանապարհորդութիւնը շատ էլ գրաւիչ չէ, բայց նա դառնում է ծանր մանաւանդ գիշերները, երբ ոչ քնել կարելի է, ոչ կարդալ կիսախաւարի մէջ և ոչ դուրսը դիտել։ Ծանր, խեղդուկ օդը չունչ է կտրում, և երկաթուղային այլանդակ զանգուածի աղմուկն ականջ է խլացնում անդադար։ Ճիշտ մի այդպիսի ծանր գիշեր վիճակվեց ինձ։

Ժամանակը սպանելու համար նայում եմ ճանապարհորդակիցներիս. սովորական դէմքեր են. այլ տեղում, այլ պայմաններում միանգամայն աննշադիր կերպով կանցնէի առաջներից, իսկ այժմ ես այդ դէմքերն ուսումնասիրում եմ ուշի-ուշով։ Զարմանալի է, նրանք նոյն իսկ սկսում են ինձ հետաքրքրել. դուրս է գալիս, որ չը կայ աչխարհում անհետաքրքիր գոյութիւն. բաւական է միայն կենտրօնանալ, մի փոքր խորը մտածել, թէկուզ ամենասովորական համարված երևոյթի, անձի մասին, և ահա իրերն ընդունում են այլ պատկեր, այլ խորհուրդ։ Ճանապարհորդակիցներս երկու հոգի են. հվքեր են արդեօք, ուր են գնում և ին-

չե՜... կեանքի հոգսն է տանում սրանց, թէ վա-
յելքը, տեսնես ինչ ծրագիրներ ունեն իրանց գը-
լուխներում։ Մէկը մօտ քառասուն տարեկան է,
կարճ ու հաստ. իր արտաքինով քաղաքի մանր
առևտրական դասին պատկանող մէկն է երևում։
Ներվային մարդ է, անդադար խաղում է իր թաւ,
երկար միրուքի հետ և կարծեմ իր գեղեցկութեան
անտեղի գիտակցութիւնն ունի. իր տեղում ան-
հանգիստ է, ձեռներն ու ոտները անդադար չար-
ժում է, և արագ-արագ նայում դէպի դրսի խա-
ւարը։ Բոլոր մանր առևտրականներին յատուկ
ինքնագոհութիւնը, սակաւապէտ երջանկութիւնը
նկարված է սրա դէմքին։ Փոքրիկ դրամագլխի
տէր աննշան խանութպանները երևի ամեն երկ-
րում քչով գոհանալու յատկութիւնն ունեն։ Միւսը
դիւղացի է՝ մօտ 50 տարեկան, յոդնած ու ինճուռտ
դէմքով, որից մի զարմանալի խաղաղութիւն է
բուրում, երկրի հողի խաղաղութիւնն է այն, որ
համակել է նրա ամբողջ էութիւնը։ Նա գլուխը
քաչ է գցել, չէ նայում ոչ մի կողմ և ըստ երևոյ-
թին ինչ որ մտածում է։

Լռութիւն է վազօրում. վերջապէս առաջին
մարդը մի բան ասաց, երկրորդը պատասխանեց.
նրանք սկսեցին հետաքրքրվել ինճանով. այդ ե-
րևում էր նրանց հայեացքից. կուզէին խօսել,
բայց չեն համարձակվում։ Ահա ջահել կարճահա-
սակ մարդը սկսեց մի բան պատմել տաք-տաք,
միւսը լսում է և կարծեմ ակամայ. ապա երկու-
սով էլ միաժամանակ սկսում են ծխել։ Ինչ որ

փոքրիկ կայարանում կանգ առաւ գնացքը. մեզ
մօտ ներս եկաւ մի գերմանուհի, միջին տարիքով.
նա անցնելիս դիպաւ մի վերարկուի, որ վայր
ընկաւ կախարանից. ջահիլ ճանապարհորդը զայ-
րացաւ. նա պահանջում է, որ տիկինն անպատ-
ճառ վերցնէ և վերարկուն կախէ իր տեղում.
վերջինս չը լսելու է տալիս։ Տիկնոջն այս անա-
խորժ դրութիւնից ազատելու համար ես վեր եմ
կենում և տեղաւորում վերարկուն. գերմանացին
խէթ խէթ նայում է ինձ, նա դժգոհ է ինձանից.
գերմանացիները երևի չատ էլ մեզ չեն դէպի
կանայք։ Կրկին լռութիւն է տիրում։ Ահա տարի-
քով մարդը ոտքի կանգնեց, ցած բերեց իր ձեռքի
պայուսակը, ձեռքը ներս կոխեց և դուրս քաչեց
այնտեղից մի ահագին «սօսիս» ու ագահաբար ու-
տել սկսեց։

Միևնոյնում կարիկատուրներ տեսայ, ուր
գերմանացին ներկայացրած էր գարնջրի տակառի
կողքին, կամ տակառի վրայ նստած, կամ հար-
բած, կամ գաւաթը չրթունքներին և մի հարիւր
հատ էլ գատարկած, ոտքերի տակ ընկած։ Ըստ ես
պէտք էր իւրաքանչիւրի մի ձեռքին մի մի հատ
սօսիս տալ և միւսում մի գաւաթ. սօսիս և գա-
րեջուր գերմանացու համար անբաժան երկւորե-
ակներ են։ Տարիքով մարդը ուտում էր ագահու-
թեամբ, ապա նա դուրս քաչեց նաև մի չիչ գա-
րեջուր և խմել սկսեց, առանց հարևանին մատու-
ցանելու. մեր ժողովրդի համար դա մի հրէչաւոր
անքաղաքավարութիւն, եթէ ոչ անդթութիւն կը

թեւայ. բայց սրանք այսպէս են. ամեն մէկն իր համար, վայ չունեորին. գոյութեան կռիւ է, անսիրտ, անողորմ։ Հարեւանը, սակայն, նրանից յետ չը մնաց. ահա նա էլ, չը դիտեմ որտեղից, դուրս քաշեց մի ահագին չիչ գարեջուր և դրեց բերնին. նրանց տրամադրութիւնը լաւացաւ և ուրախ խօսակցութիւն սկսեցին։

Գիշերվայ ժամը մէկն է. աւստրիական սահմանն անցանք անսպասելի հեշտութեամբ. ճանապարհորդութիւնների ժամանակ ինձ համար ամենից անախորժը սահմաններ անցնելն է. անօգուտ ձևականութիւնները հոգի են հանում. սահմաններին մօտենալիս քիչ է մնում հեռուից ճչամ՝ թողէք ինձ հանգիստ, ես ոչինչ չունեմ պայուսակիս մէջ, որ ձեզ սարսափելի թեւայ, թէև համոզված եմ, որ այդ էլ չի օգնի։ Ահա թէ ինչու. այս անդամ քիչ մնաց վեր ցատկեմ, մաքսատան պաշտօնեայի ձեռքը սեղմեմ պինդ պինդ, երբ նա դրսից ներս նայեց և հարցրեց մեղմութեամբ։

—Ոչինչ չունէք յայտարարելու։

—Օ, պարոն, ոչինչ, ոչինչ, համարեա ճչացի ես։ Որքան ուրախացայ. մեզ ցած էլ չիջեցրին վագոններից և անցանք խաղաղութեամբ։

Առաւօտեան ժամը 4-ն է, լուսաբաց է, բայց անքուն անցրած գիշերուայ լուսաբացն էլ չէ գըբաւում։ Տեսնում ենք ճանապարհորդները հետզհետէ բազմանում են. գեղջուկ ժողովուրդ է, ամբողջ ընտանիքներ, կանայք, ծերեր, աղջիկներ, երիտասարդներ, երեխաներ տօնական չորերով

ինչ որ մի տեղ են գնում կիրակի առաւօտը. արդեօք ուխտագնացութիւն է. գուցէ։ Մեզ մօտ գեռ 5 տեղ կայ, բայց ներս են մտնում 8 հոգի. գիւղացին ոչ մի երկրում կարդ պահելու հետ սէր չունի։ Պէտք է սեղմվել, տեղ անել. իրաւունք ունեն. ամենից առաջ սրանք իրաւունք ունեն պոնէ երրորդ կարգով ճանապարհորդելու. այս կոչտացած ձեռները. այս ջլուտ բազուկներն են ձգել երկաթէ այս անհուն չաւիղները, որով մենք հանգիստ ալանում ենք։ Սեղմվում ենք, որչափ կարելի է. այդ միևոյն չունի. օդն էլ սաստիկ ծանրանում է քրտինքի հոտից և բազմութեան շնչառութիւնից. այդ էլ միևոյն չունի. բայց տիրոջին ծխում է, անչափ է ծխում. մի քանի անգամ առիթ եմ ունեցել անցնել Տիրոլով և չը տեսայ մի տիրոջի, որ չրթունքներից կախած չունենար մշտաբորբոք չիբուխը և ձեռքին ծխախոտով լի պարկը։ Մինչև իսկ խօսելու ժամանակ չիբուխը բերաններից վար չեն առնում։

Խեղճ կրակ մարդիկ են. սրանց նայելով ես մի րոպէ մոռանում եմ Եւրոպան, որի հետ կապված է միշտ քաղաքակիրթ հասարակութեան, կրթված, կոկված մարդու գաղափարը. թւում է, թէ ես մեր երկրի այն քարվանսարաներից մեկումն եմ, ուր ապաստանում են գանազան ճանապարհորդներ և բանւորներ։ Ես նոյն իսկ աւելին կասեմ. այս մարդկանց դէմքերը չունեն որոշ, չեչուված դիմագծեր, որ արտայայտէր կիրք կամ մտքի սրութիւն. աչքերի արտայայտութիւնը զո-

րեղ չէ, ինչպէս մեր գիւղացիներինը, դէմքերի խաղաղութիւնն ու խեղճութիւնը հասնում է միամտութեան, որ մի ողորմելի տպաւորութիւն է գործում: Աչքերն էլ մի փոքր անբնական, անտուր կացութեան մէջ լինեն կարծես: Ահա այս պատասը, որ մի չատ տարօրինակ ցողունէ գլխարկ ունի ու բաւական յիմար դէմք, իր տոմսակն է կորցրել և դրպաններն է խառնում չիոթված. մի ծերունի այնպէս կորցրել է իրան, որ չէ հասկանում, թէ պաչտօնեան տոմսակ է ուզում և իր անբաժան չիբուխն ու տոմսակն իրար խառնած, չը գիտէ որը մեկնէ առաջ. կողքի երիտասարդը խլում է ձեռքից տոմսակը ու մի փոքր սրտնեղած՝ պաչտօնեային տալիս: Ժողովուրդ... մեծ այստեղ էլ նա իր իրաւունքի գիտակցութիւնը չունի. աշխատող, արտադրող, բայց չը վայելող, յիմար տարր. ամեն տեղ համարեա նա նոյնն է. այս կնճռված, բիրտ ճակատների տակ դարերի փորձառութիւնը կայ, ասում են, բայց այդ փորձառութեան վրա նա հիմնել է միմիայն իր պասսիվ փիլիսոփայութիւնը, հնազանդութեան և լոկ հնազանդութեան և պարտքի էթիկան. ինչու. արդեօք դարերի ընթացքում նա ճակատը չատ է ժայռերին խփել...

Յաջորդ կայարանում բազմութիւնն ամբողջապէս վար իջաւ. մնացինք դարձեալ երեքով. երկու գերմանացիները գոհունակութեան ակնյայտնի նշաններ են ցոյց տալիս, որ տեղերը լայնացաւ. մէկը նոյն իսկ ձեռքով մի զայրացած չարժում ա-

րեց, կամենալով ասել, թէ «ազատվեցինք» և միւսը մի անախորժ բառ մռմռաց գնացողների հասցէին և այնպէս նայեց ինձ, կարծես ուզում էր ասել. «տեսնում էք, պարոն, մենք ձեզ համար էլ ենք ցաւում». և համոզված էին, որ իրանց արածն ինձ դուր է գալիս: Զարմանալի է. ամեն տեղ, ամեն կլիմայում ժողովրդի մարդը, այդ կողոպտած, զրկված, չարչարված մարդը ինքն իր ընկերի, իր պէս զրկվածի, իր պէս խեղճի դահիճը կը լինի սիրով մի ուրիշ դասակարգին ծառայելու, նրան դուր գալու համար: Ես յիշեցի ականջ մեր երկրի հռչակաւոր չափարներին. աւելի անսիրտ, աւելի զազիր արարածներ քիչ կարող են ճարվել, քան մարդկանց այդ դասակարգն է. գիւղացիների դահիճներն են նրանք. ոչ ոք այնքան արհամարհանքով չէ վերաբերվում գիւղացուն, որքան չափարը, ոչ մի պաչտօնեայ այնքան հեզտութեամբ չի դաւաճանի, չի խաբի, չի զրկի, չի թակի գիւղացուն, որքան չափարը. և սակայն այդ հրէշները իրանք երեկվայ խեղճ ու կրակ: Գիւղացիներն են, և չեն էլ մտածում մի րոպէ, որ վաղը էլ այդ գիւղացիները պիտի դառնան, երբ դաւառապետը կամ պրիստաւը պոկեն նրանց ուսից այն կարմիր ուսադիրները. ինչու է այդպէս, ինչու գիւղացին, խեղճը, հալածվածը իր նմանին դահիճ է:

Լոյսը բոլորովին բացվեց, արևը բարձրացաւ. լուսամուտից նայում եմ, Իտալիային մօտ ենք. այստեղ ծառերը ծաղկել են, իսկ Միւնխէնում

դեռ ձիւն էր գալիս։ Գերմանացիք վար իջան, դնացին չը գիտեմ ուր, ես մնացի մենակ։

Ահա նաև իտալական սահմանը. այստեղ մեզ ցած են բերում, պաշտօնեան խառնում է դրքերով լի պայուսակս, պարտք է կատարում, պաշտօնական պարտք, որով մի կտոր հաց է ուտում, բայց և այնպէս սահմանի վրա ես անկարող եմ վիլիսոփայօրէն մտածել և դատել. ես ատում եմ այդ մարդուն, ատում եմ մանաւանդ նրա այդ վարժ մատները, որոնք կարծես ծայրերին ոտիկանների աչքեր ունեն։ Անախորժ ձևականութիւնը վերջացաւ։

—Ես ձեզ ասացի, որ ոչինչ չունեմ, իզուր նեղութիւն էք կրում։

—Պաշտօնս է, պարոն, պատասխանեց նա յօդնած դառնութեամբ։—Իրաւունք ունի, նա շըղթայի մի օղակն է. միայն քաշողներն ուրիշ են։

—Այժմ արդէն Իտալիայումն ենք, Վերօնան հեռու չէ։ Այստեղ կատարեալ դարուն է. այսպէս է երկաթուղին. մի դիշերվայ մէջ հնար է տալիս մարդուն երկու տարբեր եղանակներ տեսնել։

II

Այս անգամ իմ ուղեկիցներս են մի իտալացի ջահիլ աղջիկ, փոքրիկ, սևաչեայ ու չարժուն, ինչպէս լինում են առհասարակ իտալուհիները, և

մի խումբ գեղջկուհիներ։ Շուտով ներս են գալիս նաև իտալացի բանուորներ. նրանք այնպիսի պայուսակներ ունեն, որ նայելն անգամ նողկանք է բերում։ Աղքատութիւնը թափվում է թէ տղամարդկանց և թէ կանանց զգեստներից, այդ չարչարված դէմքերի արտայայտութիւնից։ Մի երկրի ժողովրդի բարեկեցիկ վիճակն ու խեղճութիւնը դիւղական դասակարգով պիտի չափել, այն մութ ու մոլոր ամբոխով, որ իր իսկական վիճակը, իր խեղճութիւնը ծածկելու արուեստը չը գիտէ և չէ իմացել երբէք։ Շվէյցարիայում երկաթուղու երրորդ կարգում դուք խեղճութիւն, աղքատութիւն չէք տեսնում. մանաւանդ տօն օրերին, երբ ամենքը համարեա միակերպ են հագնվում, դժուար է որոշել սովորական գիւղացուն, բանուորին՝ նրա կողքին նստած բուրժուայից։ Այստեղ, Իտալիայում, թէև օրը կիրակի է և իբր թէ ժողովուրդը տօնական զգեստներ ունի, բայց աղքատութիւնն ակներև է։ Հիւսիսի մի սառնասիրտ ժողովուրդ այսպիսի խեղճութեան մէջ գուցէ կը լռէր կամ տխրութեամբ կը վշվշար, իսկ այս ամբոխը, տաք ու կրքոտ, ծիծաղում է, երգում, աղմկվում։

Տիրօլցիների չիբուխների խեղդող ծուխը չը կայ, բայց նրան փոխարինել են նոր անախորժ հանգամանքներ—բանուորները հարբած են։ Վաղ առաւօտ է. թէ երբ են նրանք ժամանակ գտել հարբելու, դժուար է ասել, բայց երևի ամբողջ չարաչարված մարդը զուարճութեան իր առանձին կանոններն ունի։ Բանուորներից մէկն ուզում է

անպատճառ իր գլուխը դնել հարևան կնոջ ուսին. վերջինս բողոքում է. բանուորի փոյթը չէ այդ, նա հանդարտությամբ տեղաւորվում է իր ուզածի պէս, կինը ստիպված է դիմել ընդհանուր քրքիջի մէջ, ոչ ոք այդ բանից չէ վրդովվում: Միւս բանուորը, չը դիտեմ ինչու, որոշել է բաց պահել կից վագոնի դուռը և ճչում է այնտեղից ներս. միւս կողմից փակում են ուժով, նա կրկին բաց է անում և ճչում. աղմուկն անտանելի է:

Այս աղմուկը աւելի ևս անախորժ է դառնում կանանց բարձրաձայն խօսակցութիւնից. իտալացիք արևելցիների նման ցածր ձայնով և կամաց խօսել, վիճել չը գիտեն, և ինչ հնչուն, զիլ ձայն ունեն այս կանայք. ականջ է ծակում: Բայց ահա նրանք լռեցին. իմ կողքի կինը չատպով դէպի իրան քաշեց 6—7 տարեկան աղջկան և անպատճառ ուզում է նստեցնել իր ծնկան վրա: Երեխան, և՛ զարմացած և՛ վշտացած, չէ կամենում իր տեղը թողնել և մօր ծնկան նստել. մայրը էլ աւելի պնդում է և բռնի կերպով նստեցնում է նրան իր դիրկը: Ես հետաքրքրված նայում եմ և մնացել եմ զարմացած, թէ ինչու այս կինը ճնշում է երեխայի ազատութիւնը. պատրաստվում եմ հարցնել, բայց նոյն րոպէին պաշտօնեան ներս է մտնում և տոմսակներ է պահանջում: Պաշտօնեան հեռանում է և կինը կրկին երեխային նստեցնում է իր նախկին տեղում. խնդիրը պարզվեց. գրկում պահելով 6—7 տարեկան աղջկան, խորամանկ կինը կարողացաւ նրան տարիքից ա-

ւելի փոքր ներկայացնել և տոմսակ դնելուց ազատվել: Կարեկցութեամբ եմ նայում այս փոքրիկ երեխային, որ զարմացած նայում է իր չուրջը և չէ հասկանում մօր արածը, չը գիտէ, թէ իր գլխով ինչ կատարվեց, չէ էլ կասկածում, որ ինքը իր բոլոր միամտութեամբ, իր բոլոր անմեղութեամբ գործակից եղաւ մի կեղծիքի, մի խաբէութեան. և ինչ լաւ, որ չէ հասկանում այդ. որքան բազմաթիւ են հասակաւորների այնպիսի գործողութիւնները, որ եթէ փոքրիկները երբէք չը տեսնէին և երբէք չը հասկանային՝ աւելի լաւ կը լինէր: Կարեկցութեամբ եմ նայում մանաւանդ մօրը, այդ ողորմելի գեղջկուհուն, որը իր կարօտութեան, իր խեղճութեան մէջ գողութիւն յանձն առաւ: Աչքարհում մեծ մասամբ կարիքն ու յանցանքը ձեռք ձեռքի տուած են ընթանում, ոճիրները շատ յաճախ ծնունդ են առնում մութ նկուղներից, խաւար գետնափորներից, խշտինների վրայից, ցնցոտիների միջից. քաղցից գալարվող ստամոքսը մնունդի տեղ թոյն է քամում մարդկային երակների մէջ և տանջված գլուխները, տառապանքներից չսմած, կեղծիքի, խաբէութեան և յանցանքների մէջ են փնտռում մի ելք, մի հնարք: Ո՞վ է յանցաւորը:

Իմ դէմ ու դէմ նստած օրիորդը աւելի և աւելի է հետաքրքրվում ձեռքիս ֆրանսերէն գրքոյկ և վերջ ի վերջոյ խնդրում է նայել. իտալուհին չէ ճնշվում օտարից. ես սիրով մեկնում եմ նրան գիրքս, նա սկսում է կարդալ իտալական

արտասանութեամբ, անդադար հարցեր է ուղղում ինձ, սաստիկ ուրախանալով, որ ինքն իտալուհի լինելով կարդում է, նոյն իսկ հասկանում է ֆրանսերէն իր մայրենի լեզուի օգնութեամբ, և իր գոհունակութիւնն արտայայտում է բարձրաձայն բացականչութիւններով ու քրքիջով: Ճանապարհորդութիւնս մի րոպէ կերպարանափոխւում է դասատուութեան. ինչ աւելի լաւ միջոց ձանձրոյթը փարատելու. ես մաքիս մէջ օրհնում եմ իտալական պարզութիւնն ու բացսրտութիւնը և այնպէս զբաղվում, որ չեմ նկատում վագոնի միւս անկիւնում պատրաստվող փոթորիկը:

Երեք բանուորներ կան այնտեղ: Ինչ որ ըսպառնալից դիրք են ընդունում նրանք: Իտալացի բանուորը նոյն իսկ ղժաս ժամանակ միշտ գազազած, կատաղած է, ուր մնաց թէ հարբած ժամանակ, մանաւանդ՝ երբ իր առջև տեսնում է մի մաքուր հագնված մարդ: Այդ ես փորձով գիտէի դեռ Իտալիա չը մտած: Իրանց երկրում ամբող անտեսական ողբալի կարգերի չնորհիւ չարքաշ կեանքի դատապարտված այդ տաք, կենսալից, կրքոտ մարդիկ իրանց արիւնով հայրենիք վերաստեղծեցին, օտարի լուծը հերոսաբար թօթափեցին՝ կարծես մի ոչ պակաս ծանր, անտեսական լծի տակ կռանալու համար: Հարուստ երկրի այս քաղցած ժողովուրդը այժմ զայրոյթով է նայում ամեն մէկին, որ հեռաւոր նմանութիւն ունի, թէկուզ իր արտաքինով, իր մի փոքր մաքուր զգեստով, իր կեղեքիչներին: Եւ իտալացի բանուորը

միշտ կատաղած է, որովհետև միշտ զրկված է. նա յաճախ է հարբած, որովհետև ցաւի և զրկանքի դառն գիտակցութիւնը խեղդել է հարկաւոր:

Ինձ ճանապարհորդակից այս երեք բանուորների չարժումներն ու խօսակցութիւնը հրէշաւոր լինելու չափ անտանելի են դառնում. նրանց այլանդակութիւններից զերծ չէ մնում նաև իտալացի աղջիկը: Ինձ փրկում է այն տխուր գիտակցութիւնը, թէ առջևս երեք մարդ չեն կանգնած, այլ մի ամբողջ դասակարգ, միլիոններ կեղեքված, տանջված խեղճերի, միշտ աշխատող և միշտ կարիքի մէջ խեղդված, որոնք իրանց վրէժխնդրութեան մէջ կուրանալու և նոյն իսկ գարչելի դառնալու բիրտ իրաւունքն ունեն: Շվեյցարացի բարեկամիս խօսքերը Իտալիայում երբորդ կարգով չը ճանապարհորդելու մասին ես յիշում եմ դառնութեամբ, սակայն գարձեալ չեմ ցաւում նրա խորհրդին հետևած չը լինելու համար. կեանքն է այս. ուր փախչել և ինչու... քամիները կը բերեն հառաչանքի ձայները...

III

Հասանք Վերօնա:

Կէս օր է. ինչ չոգ է այստեղ ապրիլի վերջերին. փողոցներում հովանոցները բազմաթիւ են, կայարանում խմբված է ռօնական ամբոխ: Աւելի

1001 3671

բազաթիւ են նրանք, որոնց դոյութիւնը այսպէս թէ այնպէս կապված է ճանապարհորդների հետ։ Իտալական քաղաքների առանձնայատկութիւնն է կասկածելի առաջնորդների մի ահագին բազմութիւն, կամ պղերգ, հացկատակ մարդկանց մի ամբողջ դասակարգ. սրանցից մի քանիսը միանգամից չըջապատում են ճանապարհորդին և իրանց ծառայութիւնն առաջարկում։ Ամենավճռական տոնով մերժում եմ բոլոր առաջարկութիւնները և անդլիացու պէս մենակ, առանց առաջնորդի, մանում եմ անծանօթ քաղաքը։ Անմիջապէս ձեռք եմ բերում ուղեցոյց գրքոյկը և չըշում աչքի ընկնող պատմական յիշատակարանները տեսնելու։

Վերօնան իտալական այն քաղաքներից մեկն է, որի պատմութիւնը մենակ բաւական է արիւնոտ տարեգրութեան հատորներ կազմելու։ Հռոմի փառքի և անուան հետ է կապված նրա անունը և արևմուտքի դոռող կայսրները իրանց պատմութեան հետքերն են գծել այստեղ հինաւուրց պարիսպներով և յաղթական մուտքերով, որոնցից նմուշներ են մնում միայն։

Առաջին հնադարեան յիշատակարանը, որ դրաւում է ճանապարհորդի ուշադրութիւնը, դա հռոմէական ամֆիթէատրօնի հսկայ, զանգուածային չէնքն է Վիկտօր-Էմմանուէլ հրապարակի վրա, որ համարեա ամբողջապէս մնում է, ծաղրելով ժամանակի աւերիչ ոգին։ Անհատի մի ժեստը երբեմն նրա ամբողջ էութիւնն է ներկայացնում. ժողովուրդների մի հատիկ ձեռագործը, որպէս նրբանչ հանճարի գործ, պատմական մի ամբողջ էպօխա է ներկայացնում բնորոշ կնիքով։ Հին քաղաքակրթութեան երկիրներում յիշատակարաններ կան, որոնք մենակ իրանց վրա են կրում այդ ամբողջ անցեալը և իրանց քար լռութեամբ անգամ աւելի պերճախօս են, քան գրված յիշատակարանները։ Եգիպտական բուրգերը մի մի գոռող փարաւօններ չեն, բաղմած մրլիօնաւոր սարուկների, տառապող ժողովրդի ծռված, կոչկոճած մէջքերին։ Այսպէս է նաև այս ամֆիթէատրօնը. անհնարին է նայել առանց բացականչելու՝ «ահա Հռոմը»։ «Հայց և զուարճութիւն» ճչացող ժողովուրդն է այս՝ իր ներօններով հանդերձ։ Այս չէնքը իր գեղարուեստականութեամբ չէ, որ տպաւորութիւն է գործում, ինչպէս յունական դրաւիչ յիշատակարանները, ուր նրբութիւնը, վայելչութիւնը և ներդաշնակութիւնն է իշխում. այստեղ մի ուրիշ բան կայ, որ կարելի է մօտաւորապէս արտայայտել այս խօսքերով՝ «խեղդող, ընկճող, անսիրտ մեծութիւն»։ Արդարև ամեն ինչ ճնշում է այստեղ՝ և խոշոր ու անճոռնի քարերը, որոնք իրար վրա չարված են ասես հրաբուղխի թափով, և այս հնադարեան ահագին կամարները, և վերից դէպի երկինք ուղղված այլանդակ բացուածքները, որոնք կարծես հրէշների անճոռնի երախներ լինեն, որ հեգնում են տիեզերքի անհունութիւնը։

Ներս եմ մտնում։ Զուտաձև ընդարձակ հրապարակի չուրջը, դէպի յետ դնալով, իրար վրա բարձրանում են քարեայ անթիւ աստիճաններ, ուր

կարող են նատել մի քանի տասնեակ հազար հանդիսականներ: Բարձրանում եմ վեր, դիտում վարի կրկէսը, ուր այնքան ժամանակ ոճիրները ծափահարվում էին, գազանութիւնները՝ հրճուանք յարուցանում, ուր առիւծների ճիրաններով յօշոտված մարդկային էակների արեան գոլորշին վեր էր բարձրանում, տարածվում այս իսկ աստիճանների վրա բազմած մեզի հանդիսականների գլխին, չմեղցնում, հարբեցնում էր նրանց և մղում դէպի նոր արիւն, նոր ոճիր, նոր, յնցող տպաւորութիւններ: Լուռ են այժմ կամարները, գազաններ ու զոհեր դուրս չեն սողում վանդակապատ դռների ետևից. անձրևը լուզել, յղկել է քարերի երեսը, գետինը գարեր առաջ ծծել է արդէն թափված արիւնը, բայց չէնքը կայ տակաւին ամբողջութեամբ և իր լռութեան մէջ անդամ խօսում է արիւնից: Գարեր կան, որոնց զուարճութիւններն էլ ահաւոր են մեզ. ապագայ գարերն էլ չեն սոսկայ, արդեօք, մեր ժամանակի սերնդի «զուարճութիւններից» ու վայելքներից. արեան և կենդանի մսի կուլտը գադարել է արդեօք: Իդէայի յաղթանակը գանգատ է կատարվում. ինչ փոյթ, ապագան նրանն է, բուրգերի և ամֆիթէատրոնների հիմքը Պլատոններն ու Արիստոտելներ են փորում, մտքի էվոլիւցիան ժամանակից էլ զօրեղ է, երբ պէտք է քանդել մղված խաւար հասկացողութիւնների գարաւոր չէնքերը:

Թողնում եմ ամֆիթէատրոնը և չտապում եմ տեսնել բուն քաղաքը, հին Վերօնան: Այս քաղաքի արտաքին տպաւորութիւնն այնպէս է դեռ, ինչպէս նրան թողել է վերածնութեան դարը: Թւում է, թէ ամբողջ գարեր անցել են նրա վրայով առանց երբեք աւերելու այն ժամանակի կնիքը, երբ միստիցիզմից և արիւնհեղութիւնից յոգնած մարդկային միտքը բարձրացաւ աւերակների միջից գեղարուեստն ու պիտութիւնը իր լուսաւոր թևերի տակ առած: Փողոցները տեղ-տեղ այնքան նեղ են, որ հազիւ 2—3 հոգի կողք-կողքի անցնեն. չինութիւնները խիտ իրար վրա կուտակված, ժամանակից անացած, թւում է, թէ ամբողջ գարեր մարդկային ձեռքը չէ փոխել նրանց փոքրիկ ծեփը. չէ շարժել և ոչ մի քար:

Ուշադիր դիտողի համար սակայն այդ աչքից ընկած՝ մեռնող հնութեան մէջ հին գեղարուեստի սիրուն նմուշներ կան պահված. այս ու այն անկիւնում, մի խուլ փողոցի ճակատի առաջ, ուր ճարտարապետական մի գրաւիչ գարդ, մի մօզաիկ, մի գօթիական սիւն, գօթական ճաշակի չքնաղակով եղերված մի լուսամուտ կամ մի սիրուն պատշգամբ աչքի է ընկնում մոյգ ֆօնի վրա: Այս նեղ ու գալարուն փողոցները պրօֆանի համար անտանելի են և խեղդող, իսկ գեղարուեստագէտի համար երբեմն գոհարներ են պարունակում. այստեղ սովորական անների հետ խառնիխուռն կանգնած են նաև հինաւուրց քարեայ պալատներ, որոնց հետ կապված են պատմական նշանաւոր անձինքների յիշատակներ: Երբեմն այնպիսի փողոցներում, խուլ բակերում պար-

տէզներ են պատահում, ուր բնակութիւն ենթադրելն անգամ դժուար է. բայց գնդերից բակի խորքում մի պատի վրա երևում է որ և է սիրուն նկար՝ անձրևից ծեծված և ծառերի սաղարթներով կիսածածկ, նրա կողքին էլ մի փոքրիկ արձան, մի աւազան:

Երբեմն երբեմն այս ու այն խուլ անկիւնից, այս ու այն կորած անից լսւում է ախորժելի երաժշտութեան ձայն, երգ, նուագածութիւն. տեղացիների փոյթը չէ, նրանք սուլելով անցնում են, իսկ օտարականը կանգ է առնում և ախորժանքով ականջ է դնում: Իտալական քաղաքներում երաժշտութիւնը, քանդակագործութիւնն ու նկարչութիւնը ի ցոյց են հանված փողոցներում:

Վերօնայում հրապարակները փոքր են, բայց ուշադրաւ իրանց արձաններով: Ահա Վերօնայի փառքը, Պաօլօ Վերօնային, կամ ինչպէս կարճ կերպով անուանում էր ինքն իրան՝ «Վերօնեզը» (1528—1588) մեծ կօլօրիստը, վենետիկեան նկարչական չկօլայի ամենակատարեալ, ամենաէպիքական ներկայացուցիչը, որի բեղմնաւոր վրձինի տակ դուրս եկած նկարները լցրել են իտալական եկեղեցիները և եւրօպական պետարուեստական մուզէյները: Մի ուրիշ հրապարակի վրա Դանտէն է բարձրանում իր միտիկ ու չորացած դէմքով, ուր կրօնական խորհրդաւորութիւնը խառնված է պետարուեստական թռիչքի և խորունկ վշտի հետ: Այստեղ է Սկալիգերի տոհմի պալատը և մատոլէն, պետարուեստական մի դիւթիչ ձեռագործ, իր նուրբ

սիւներով, մանր, գօթական բուրգերով, որոնք ամենքը միասին խառնվում, բարձրանում են որպէս մի սիրուն խուրձ:

Չը կայ մի ամենափոքր հրապարակ, ուր գէթ մի հատ գօթական եկեղեցի չը լինի, և չը կայ մի հատ սովորական կամ նոր եկեղեցի. ամենն էլ հին են, միջին դարերից, ու ամենն էլ պետարուեստական, ճարտարապետական մեծ հետաքրքրութիւն են ներկայացնում:

Այս բոլոր պետարուեստական յիշատակարաններից ոչ պակաս այցելուներ է գրաւում նաև մի տուն, ուր ապրել է ու տանջվել Շէքսպիրի Ջիւլիէտտան: Փողոցը, ուր գտնվում է այդ չէնքը, քաղաքի ամենախեղճ անկիւններից մէկն է. նեղ լուսամուտներով, խարխուլ և թափթփված մի փոքրիկ տուն է: Մուտքի ճակատին դրսից կարդացվում է հետևեալ արձանագրութիւնը՝ «Այս է Կապուլետտիի ընտանիքի տունը, ուր ծնվեց Ջիւլիէտտան: Նրա վիշտը ողբացին այնքան զգայուն սրտեր և երգեցին այնքան բանաստեղծներ»: Ներս եմ մտնում բակը. այստեղ դեռ ցոյց են տալիս այն լուսամուտը, ուր ուղղում էր Բօմէօն իր սիրակէզ հայեացքը Ջիւլիէտտայի դիւթիչ պատկերը նչմարելու համար: Բակում կանգնած է մի չիկահեր աղջիկ, սիրուն, չարաճճի դէմքով. նա մի կողմից խաղում է գրկած երեխայի հետ և միաժամանակ իտալուհու այն համարձակ հայեացքով նայում է օտարականին առանց զարմանքի. նա այցելուներ չատ է տեսել: Մի մարդ, մրթմրթալով, քաշ-

քընում է իր սայլակի կապերը և լծում է մի նոր հար ձի՝ հէնց Ջիւլիէտտայի լուսամուտի տակ, ինչ ասել կուզի մաքի մէջ ծիծաղելով այցելուների վրա, որոնք գալիս են նայելու այս ողորմելի տունը, ուր չը գիտեմ ոմ ումն է սիրել։ Վերին յարկերի լուսամուտներից բազմաթիւ կանացի գլուխներ են երևում. նայում են վար՝ կէս հետաքրքիր, կէս չարաճճի աչքերով, ով գիտէ գուցէ մի-մի Ջուլիէտտաներ—նոյնպէս սիրող, գուցէ և նոյնպէս վշտոտ։

Քանի քանի միլիոնների հոգու խորունկ ցաւեր այնարհի ամեն կողմերում կոչնում են անյայտութեան ծոցում, ամենքից գաղտնի թաղվում են սէրերի կրծքերի տակ յաւիտեան։ Շէքսպիրները հակայ են հէնց նրանով, որ մի կորած անհատի, մի թոյլ էակի, մի փոքրիկ աղջկայ վիշտը կարողանում են սիեղերական դարձնել. առանց մի հանճարեղ գրչի՝ այս ողորմելի տունը, իր կեղտոտ բակով, ուր նիհար ձին քաչքչում է մի վատ սայլակ, իր փլփլած պատերով, իր մուխ, ողորմելի բնակիչներով, ում ուշքը կարող էր գրաւել։ Ի՞նչ է Շիլիոնը առանց Բայրոնի և ուր չը կան աւելի զարհուրելի Շիլիոններ և հազար անգամ աւելի դժբաղդ Բոնիվարներ։ Հանճարը սրբագործում է վշտի վայրը, որքան և խեղճ լինի նրա պատկերը և վուլգար իրականութեան վրա ձգում է յիշատակների և խորը զգացմունքների կրթիչ քողը։ Ջիւլիէտտայի տունը այդ քողով է գրաւիչ։

IV

Ս. Ղազար եմ գնում։ Մանկութիւնից եմ երազել այս օրը, այն անգամներից անցած ժամանակներից, երբ դեռ չէի հասկանում «Որ ի քնար հոգեառիւ»-ը և երբ սիրտս փղձկում էր «Ո՛վ դու բարեկամ»-ը կարդալիս։ Բագրատունիները ու Սլիշանները հեռուից ասես դիւթում, քաշում են։ Ի՜նչ հաճելի է օտար երկրում հայրենիք զգալ այսպէս խորունկ կերպով։

Վենետիկեան գարնանային օր է։ Հիւրասէր մենաստանն իր նաւակն ունի ծովափին։ Ուղիղ ճաշ է։ Մի ծեր և մի երիտասարդ իտալացի թիավարների յաղթ բազուկներով սև, կոկիկ նաւակը սլանում է հարաւային արևի վառ շողերով ողողված ջրերի հայելանման մակերևոյթի վրա։ Շուրջս ամեն բան ժպտուն է, և՛ արևը, և՛ ջրերը, և՛ գնդօլները. իսկ այս երկինքը՝ ինչ յստակ է ու կապոյտ։ Մի ուրախ տրամադրութիւն է իջնում վրաս. թեւում է՝ երկար տարիներից յետոյ հայրենիք եմ գնում, մայր երկրի մի կտորը պիտի տեսնեմ և այնտեղ՝ հռչակաւոր ծերունուն, հինաւուրց նահապետին։

Տեղատուութիւն է. ջրի տակից բազմաթիւ կղզիներ են դուրս ցցվել, աւազապատ կամ կանաչ, և նրանց միջից գալարվում է խոր ջրանցքը, ինչ-

պէս մի լայն գետ։ Ջրանցքի երկու կողմերում, զանազան ուղղութեամբ, չարված են ուղեցոյց հաստ ցիցերը, որպէս լուռ պահապաններ ըմբոստ ալիքների կատաղութեան դէմ։ Այստեղ, այնտեղ կղզիների ափին, ծանծաղուտների մէջ, ինչպէս մոլորված կամ չուարած, անշարժ կանգնած է մի ձկնորսական նաւակ, իսկ նրա տէրերը, երկու ընկերներ կամ մի հայր ու որդի ձեռքերով խառնում են ջուրը կամ փոքրիկ ցանցերը քաշում և դուրս հանում ջրից այն բոլորը, ինչ որ չարժուն է, ինչ որ կենդանու հեռաւոր նմանութիւն ունի։ Ծովախնայ ժողովուրդը ջրային կենդանիների մէջ խարութիւն չէ դնում։ Ծովային գինուորները մեծ ու փոքր նաւակներով սիւված ջրերի վրայ, զանազան վարժութիւններ են կատարում, թիավարելով և իրանց ուրախ աղաղակներով լցրել են շրջակայքը։

Երբեմն երբեմն մեր կողքից անցնում են մեծ ու փոքր չոգենաւեր՝ բազմութեամբ լցված։ Նրանք թաւիով յուզում, տակն ու վրա են անում ջրերը։ Մի րօպէ մեզ էլ է հասնում ուռած ալիքների թաւիը, մեր նաւակը տաշեղի պէս վեր ու վար է անում, ծփում է սիրուն ելևէջներով և ապա կըրկին սլում առաջ, խաղաղ ու անձայն։ Թռչուն չը կայ, ո՛չ ջրային և ո՛չ ցամաքային. նրանց երգը չէ հնչվում այս կղզիների վրա, որոնք իրանց փխրուն մէջքին կրում են այս տարօրինակ քաղաքը. թռչունի փոխարէն այստեղ մարդն է երգում օրն ի բուն։

Մեզանից դէպի ձախ երևում է մի կանաչ ծառախումբ. դա Վենետիկի միակ պարտէզն է, միակ տեղը, ուր վենետիկցի մանուկը գաղափար է կազմում ծառի, բուսականութեան մասին։ Ծովը հազիւ է համաձայնել քանի մի չերտ հող տալ տներ չինելու համար. ծառերի, պարտէզների տեղը կատարեալ չոայլութիւն կը լինէր։ Աւելի հեռուն Լիդօ պատմական կղզին է, կանաչապատ ու ծառազարդ, որ ինչպէս մի հսկայ օձաձուկ կիսաչըրջանով պատել է Վենետիկի առաջը և մէջքը դէմ առած լայնարձակ ծովին, ասես ուխտել է յաւիտեան հսկել այնտեղ և մեղմել հեռու խորքերից եկած ալիքների կատաղութիւնը։

Մեր նաւակն անցնում է մի կղզու առաջից, որի վրայի շինութեան ճակատին գրված է «Fate bene, fratelli»— «Բարի արարէք, եղբայրներ»։ Խենթերի ապաստանն է,—պատասխանում են իմ հարցին։ Այստեղ ապրում են 5—6 հարիւր դըժբաղդներ և կրօնական մի ուխտ նրանց խնամելու վրայ պարտքն է յանձն առել։ Հաւատացնում են, որ դռան ճակատին փայլող նշանաբանը ամենալայն գործադրութիւն է գտնում այդտեղ։ Այս կղզու դէմ ու դէմը գտնվում է մի այլ նման կղզի, որ կին խելագարների ապաստարանն է, ուր խնամողները բնականապէս միանձնուհիներ են։ Այս բոլորը դեղեցիկ է, ափսոս սակայն, որ «Fate bene, fratelli»-ն քրիստոնեայ աշխարհում չատ ուշ է հասնում,—մեծ մասամբ այն ժամանակ, երբ թըշուառը տանջանքների և խելագնութեան երեսից անպէտքացած դառնում է ապաստանի առարկայ...

Մեր առջևն է այժմ մի փոքրիկ կղզի կարմիր շինութիւններով... Ս. Ղազարն է, այն համեստ անկիւնը, որ մեր նոր կեանքի վերածնութեան շրջանում այնքան խոշոր դեր է խաղացել։ Ես այլ ևս աչք չեմ հեռացնում։ Բոլոր շինութիւններից վեր բարձրանում է սպիտակ զանգակատունը կարմիր եկեղեցու վրա։ Ջրածեծ ցածր պարսպի ետևից երևում են փոքրիկ պաղատու ծառերի կատարներն ու ատուերախիտ նոճիները։ Մի բօսէ շինութիւնների այս վառ կարմրութիւնը, ծառերի կանաչը, ջրերի փայլը, այս զանգակատունը, եկեղեցին ծովային հօրիզոնի վրա խառնվում են իրար արեգակի վառ շողերի տակ և ստացվում է մի ֆանտաստիկ տեսարան, ուր հայեացքը չփոթվում է և չը գիտէ որին առաւելութիւն տայ, ինչին նայէ, որ կողմը ուշք դարձնէ։ Թուում է՝ թէ Սպրիական ծովն ամենից աւելի այս կղզին է գուրգուրում, որպէս հեռու երկրից իր գիրկն ընկած մի աղնուազարմ որբ, որը ամենից աւելի է խնամքի կարօտ... Գեղեցիկ է ս. Ղազարը։

Նաւակը սուրալով կանգ է առնում մուտքի քարեայ աստիճանների առաջ. ծեր իտալացի դըռնապանը օգնում է հիւրերին դուրս գալու նաւակից։ Վերին աստիճանի դրաւիչ է առաջին տպաւորութիւնը, երբ մարդ ներս է մանում։ Բակը ներկայացնում է մի քառակուսի, լաւ մշակված պարտէզ՝ ծաղկաչատ և ատուերախիտ. չորս կողմից անցնում են երկայն, համաչափ և համանման սիւնազարդ սրահները (portique), ծաղիկներն ու

կանաչ բաղեղները չորս կողմից եղբայրաբար զարդարում են սպիտակ, նուրբ սիւների մէջքին, գեղարուեստական անհոգութեամբ փարում են երկաթեայ վանդակապատի ճաղերին, տեղ-տեղ պատում են սրահի բայ կողմը, ու կամարների տակ առեղծվում է մի կրօնական կիսաստուեր, որ զուրկ չէ խորհրդաւորութիւնից։

Ճաչի ժամ է. գրաւում ոչ ոք չը կայ. պարտէզի կենտրօնում արուեստական աւազան կայ, ծածկված սիրուն վէրանդայով, և այդ աւազանի մէջ մի հաստիկ կարմիր ձուկ. նա չարժվում է մեղմութեամբ, ասես վախենում է իր խղճուկ պոչի թափով աղմկել չորս կողմի լռութիւնը, երբեմն մնում է անշարժ՝ թեները փռած, ասես մտածելով՝ թէ ինչպէս չարժվի, որ աղմուկ չը լինի, որ անհամեստութիւն չանի. երբեմն իջնում է ջրի խորքը, երբ արևի շողերը շատ են ոսկեզօծում նրա փոքրիկ մէջքն ու կարմիր թեները. համեստ է ու մենաւոր, որպէս մի վանական։ Ես դեռ այսքան լռութ, այսքան մելամաղձոտ ձուկ չեմ տեսել. հասկանալի է. չէ որ ձկները միանակեցութեան սովոր չեն. միգի չէ նոյն իսկ, եթէ այդ Մխիթարեանների աւազանում լինի։ Խնդճ, դժբաղդ ձուկ...

Իմ միայնութիւնը երկար չի տևում։ Ահա մի ծերունի, ալեզարդ մազերով ու միրուքով։ Նա քայլում է բաւական արագ, բայց տարիների բեռի տակ կռացած է մէջքը։ Նրա պատկառելի դէմքը մերթ ծածկվում է սիւների և սաղարթների յետևում և մերթ յայտնվում է իր բոլոր վայելչու-

Թեամբ, որպէս հին աշխարհի մի ծեր նահապետ... Ալիշանն է. ինչպէս չը ճանաչել նրան. թէև ժամանակն աւերմունք է գործել, բայց արտաքինը դեռ պահպանում է բանաստեղծական խորհրդաւոր գծեր այդ խոշոր, մեզմ աչքերի մէջ, այդ սիրուն ճակատի վրա, որ տարիները բոլորել են ճերմակ մազերի պսակով: Ես առանց մի վայրկեան կորցնելու նրա առաջն եմ վազում և համբուրում վաստակաւոր ձեռը: Նա կանգ է առնում զարմացած, և, իսկոյն գլխի ընկնելով, առանց ապասելու, որ իմ անունը լսէ, կամացուկ ասում է.

—Բարի էք եկել. ինչպէս են, աղէկ են ձեզ մօտ:

—Հայր Նահապետ, ձեզ են հարցնում ամենքը, ձեզ տեսնելու ջերմ փափագն ունեն:

—Է՛հ, թող գան և կը տեսնեն,—պատասխանում է նա ժպտալով:

—Այո, բայց նրանք կուզէին, որ դուք լինէք հայրենիքում, որ ամենքը տեսնեն, որ իրանց Նահապետն իրանց մէջ լինի:

—Է՛հ, երբ գալու լինին այստեղ, ես ալ մէջները կը լինիմ, վերջացնում է նա ծիծաղով:

Ահա և միւս միաբանները. սեղանատնից են դուրս գալիս, ծանօթանում ենք, ընդունելութիւնըն ամենի կողմից քաղցր է ու բարեկամական: Հ. Բարսեղ Սարգսեան, Հ. Եսայի Տայեցի, Հ. Սիմէօն Երեմեան սիրալիր պատրաստականութեամբ իրանց թանկագին ժամերը չեն խնայում ինձ, և մենք, խօսելով աւելի կամ պակաս հետաքրքիր

նիւթերի մասին, որոնք կապ ունեն ազգային կեանքի հետ, չրջում ենք կղզու բոլոր անկիւնները: Ուշագրաւ է, որ խօսակցութեան կամ, աւելի ճիշտ, վէճի առաջին հարցերից մէկն է ռուսահայ և թիւրքահայ բարբառների խնդիրը: Արդեօք, սա այն տարօրինակ հարցերից մէկն է, որի վերաբերմամբ մենք երկար դեռ չը պիտի կարողանանք իրար հասկանալ և վերջնական համաձայնութեան գալ մեր թիւրքահայ եղբայրների և մանաւանդ Մխիթարեան հայրերի հետ:

Մտնում ենք եկեղեցի. փոքրիկ, կոկիկ կամարաորուները զարդարված են եկեղեցական-ազգային դործիչների նկարներով: Ահա և գրադարանը, որ իր ձեռագրերի ժողովածուով այնքան օտարականների հետաքրքրութիւնն է չարժում: Զորս մեծ ու փոքր լուսաւոր սենեակներ են առաջին յարկում, ուր դեղնագոյն պահարանների ապակիների ետեւում չարված են բազմահատոր գրքերը զանազան լեզուներով: Ձեռագրերի բաժինը մի առանձին կոկիկ սենեակ է, ուր ազգային այդ չիշատակարանները պահվում են մեծ խնամքով, որպէս նուիրական նչխարներ: Թւում է, թէ մի խնամոտ ձեռք օրն ի բուն զբաղված է դրանցով, այն աստիճան կարգ ու մաքրութիւն կայ այստեղ:

Այն սենեակում, ուր աշխատել է լօրդ Բայրօն խնամքով պահվում են մեծ բանաստեղծի մի քանի չիշատակներ, իր հայերէն ու անգլիերէն ստորագրութիւնը, նկարը, դանակը, թանաքամանն ու գրիչը: Ուշադրութեան արժանի է մանաւանդ հին

դրամների պահարանը. զանազան դարերից հնաոյած մետալեայ այդ փոքրիկ չերտիկները, որոնց վրա շատ անգամ հազիւ նչմարվում են դրերի հետքեր, դասաւորված են ժամանակագրական կարգով և իւրաքանչիւրը կրում է մի փոքրիկ կտոր թուղթ, որի վրա նշանակված է հայերէն դրամի արձանագրութիւնը: Մի ընդարձակ դահլիճ է վանքի ընթերցարանը, որ ճեմարան է կոչվում: Կենտրօնում դրված ահագին սեղանը կորչում է զանազան լեզուներով լրագրերի կոյտի տակ, որոնք դասաւորված են խնամքով և կարգով:

Դժուար է առանց խորին յուզմունքի անցնել այն գալլերէյով, որի պատերի վրա պահվում են վախճանված միաբանների իւղաներկ նկարները: Ի՞նչ սիրելի, ինչ քաղցր սովորութիւն. այս Մխիթարեան ընտանիքի յաջորդ սերունդները հեչտութեամբ չեն մոռանում իրանց նախորդներին և չարունակում են ապրել նրանց մեծ յիշատակներով: Հետաքրքիր են պատերի վրայից ասես անհունը դիտող և խորհող այդ դէմքերը, արևելքում ծնված և արևմուտքի մաքով մշակված այդ ճակատները՝ իրանց վրա ինչ որ մի վսեմ բան են կրում, որ պատկառանք է ազդում: Դեռ օտարներն են նկատել, որ քաղաքակրթված հայի տիպը խիստ գրաւիչ է գտնում, մանաւանդ, երբ առնաբի և սուր վատակի հոգսը չէ կնճռում նրա ճակատը: Եւ ճչմարիտ, այս դէմքերը մէկը միւսից ազդու, մէկը միւնից գրաւիչ են և նայում են նրանք ճչմարիտ կրօնաւորի հեզ և պիտուն մարդուն յատուկ խելացի

աչքերով: Շարքով կարդում եմ՝ Հ. Հիւրմիւզեան, Հ. Աւետիքեան. երկար կանգ եմ առնում այս մեծաչեայ, արծուաքիթ պատկերի առաջ, որ կարծես երազում է հին օրերը. հռչակաւոր Զամչեանն է: Ահա Հ. Աւգերեան, Զախջախեան, Հ. Արսէն Բագրատունի... Ո՞ր մէկը թէւել. վաստակաւոր գլուխների, խոհուն աչքերի ամբողջ երկու չարքեր, մի պիտական պանթէօն, որ մտածել է տալիս և յուզում: Այստեղ է նաև Հ. Ալիշան, իր սիրած Շնորհալին իր չնորհալի ձեռքում, երիտասարդ ու կայտառ, գեղագէմ բանաստեղծ. դեռ կենդանի «Աւետարայի բլբիւլը» այս անմահների չարքում իր տեղը գրաւել է արդէն: Մխիթարեան միաբանը սրանից մեծ փառք չունի. համեստ, բայց վսեմ փառք:

Անցնում ենք ֆիզիկական գործիքների հանքային ժողովածուների դահլիճը: Ի՞նչ զարմանալի է ժամանակի առաջ բերած փոփոխութիւնը: Մարդի յաղթական ընթացքի առաջ պատուար չը կայ: Վանական մի ուխտ և այսքան գործիքներ ֆիզիկական, քիմիական փորձերի համար... Այստեղ է նաև Հ. Արսէն Բագրատունու գանգը, որին նայելիս մարդ ակամայ Համլէտ է գառնում և միտքը հրաժարվում է հաւատալ այսքան անողորմ, այսքան վուլգար իրականութեան, անկարող է գառնում թէկուզ հեռաւոր կապ գտնել այս ողորմելի ոսկեբակոյտի և այն վսեմ պատկերի մէջ, որի անունն է Հ. Արսէն Բագրատունի: Եւ ճչմարիտ, մի՞թէ այս չնչին փչակի մէջ են ծնունդ առել այնքան մտքեր...

Վար ենք իջնում ներքև, մտնում տպարան, ուր կեանքը եռում է. արագատիպերը գործում են. տպագրվում են «Պատմութիւն վարուց և գործոց Տ. Մխիթարայ վ. Սեբաստացւոյ» Հ. Թորոսեանի. «Հայապատումը» Հ. Ալիշանի, «Հայկական արձանագրութեանց ուսումնասիրութիւնը»՝ Հ. Սանդալճեանի (ֆրանսերէն) և այլն:

Դուրս ենք գալիս փոքրիկ պարտէզը: Լաւ մշակված խաղողի վազեր կան, որոնք երկար ու դեղեցիկ ճեմելիքներ են կազմում կամարաձեւ ու զով. նրանց կողքին՝ պաղատու ծառերի շարքեր, աւելի հեռուն, կղզու եղերները, ատուերախիտ նոճիներ: Կղզու մի հեռաւոր անկիւնում մի փոքրիկ թումբ կայ, որ Բայրոնի բլրակ է կոչվում. այդտեղ փայտեայ փոքրիկ նստարանի վրա նստած երբեմն երազելիս է եղել ծովերի սիրահար ըմբոստ ու յոռետես բանաստեղծը: Եկեղեցու յետև, հարաւային անկիւնում վանքի գերեզմանատունն է. պատի վրա Հ. Ալիշանը իրան յատուկ գողարիկ ոճով մի քանի տող բանաստեղծութիւն է գրել, որ վերջանում է հետեւեալ խօսքերով՝

...«Վաստակեցան և աստ հանդչին»:

Այո, հանդիստ յաւիտենական իրանց աճիւններին, որովհետև յիրաւի չատ «վաստակեցան»:

Պարիզն ամբողջապէս մի հայեացքով ընդգրկելու համար էյֆելեան աշտարակը պիտի բարձրանալ. վենետիկը դիտելու համար՝ ս. Մարկոսի զանգակատան կատարը պիտի ելնել: Ինչպէս ամբողջ վենետիկը, նոյնպէս աշտարակը տարօրինակ

է, օրիգինալ: Վերելքը դժուար չէ, աստիճանաւոր սանդուղներ չը կան, այլ կեռմաններով բարձրացող թեթև զառիվայր է, որ բարձրանալիս անկասելի է անցնում: Ասում են, որ Նապոլէօն իշով է բարձրացել այտեղ, մի բան, որ անկարելի չէ թւում. դոռոզ աշխարհակալը կամեցել է երևի էլի մի անգամ մահկանացուների կարգից դուրս երևալ, մի հանգամանք, որ արգելք չեղաւ նրան ս. Հեղինէում միայն այնքան գետին ունենալ իբր գերեզման, որքան ամենաանշէմ մահկանացուն:

Բարձրացողները բազմաթիւ են. ոտքուն ներքանցքների կիսախաւարի մէջ ուրուագծվում են կանացի ճկուն սիլուէտներ և լսվում են գերմաներէն ու անգլիերէն բացականչութիւններ. անգլօսաքսօնները չահագործում են աշխարհի չորս ծայրերը՝ Իտալիան և Շվէյցարիան չափչփելու համար:

Կատարին ենք հասել. երևկոյ է. արևը կախվել է դէպի հօրիզօնը և Ադրիատականի ջրերը վերջալոյսի չողերով ողողված աչք են խտտղում արևմուտքում. դժուար է նայել այդ կողմը: Իմ առջև սփռված է ամբողջ վենետիկը խիտ առ խիտ իրար վրա կուտված տներով, որոնք այնպէս մօտ են իրար, այնպէս սղմված, որ կարծես ամբողջապէս իրար ծեփված՝ մի զանգուածային, խորտուբորտ ամբողջութիւն լինեն: Էլ ջրանցքներն ու ներքանցքի նման վենետիկեան փողոցները չեն երևում. կղմինտրածածկ բոցագոյն կտուրների միապաղաղ հարթութիւն է ներկայանում հայեացքին. ալիքա-

նման դունաւոր այդ ֆօնի վրա տեղ-տեղ վեր են ցցվում բազմաթիւ եկեղեցիների կարմիր զանգակատները, մարմարէ պալատների սպիտակ ուրուագծերը, և այդ ամբողջը վերջալոյսի ոսկեզոյն ճառագայթների փայլի մէջ։

Ադրիատիկ ծովի հինաւուրց թագուհին ծոյլ ծոյլ բազմել է իր ջրային յեղյեղուտ գահի վրա, հին փառքերից յոգնած ու յղփացած, ասես երազում է գալիք օրերի մասին. իսկ նրա չուրջը չոզազարդ, փայլփլուն ծովը կազմում է մի աննման արքայական զօտի։

Դէպի հիւսիս քաղաքից բաժանվում եւ դէպի մայր ցամաքն է ձգվում ջրերի միջից մի նեղ լեզուակ, երկար, երկար, որ կարծես այս կղզու աղերսող ձեռքն է մօր փէշերից կախված՝ ծովի մէջ մինակ չը մնալու համար։ Ո՛չ հեռու այդ պարանոցից փառահեղօրէն բարձրանում է Վենետիկի ամենաւեհ եկեղեցու՝ ս. Յովհաննէս—Պօղոսի մասիվ պատկերը, կարմիր, ինչպէս բոցերի մի դէզ։ Սւելի հեռուն կանաչազարդ մի կղզի—Վենետիկի գերեզմանատունն է և նրա մօտ երևում է Մուրանօ կղզին, ուր գտնվում են վենետիկեան ապակեղէնի գործարանները։ Ուրիշ մանր ու մեծ բազմաթիւ կղզիների նուրբ սիլուէտները գծագրվում են ծովի երևկոյեան թափանցիկ մշուշի մէջից չինուածիններով սպիտակ, անորոշ ձևերով։

Դէպի հարաւ, մեծ ջրանցքի ափին, ջրերի ոսկեզոյն ֆօնից դուրս է ցցվում ս. Մարիամ փըրկագործի եկեղեցին (Santa Maria salute) որպէս

մարմարիայ ծաղիկների մի հսկայական փունջ, որի գմբէթի վրա կանգնած Աստուածածինը իր ոսկեհուռ զգեստով՝ ասես լողում է եթերի վարդագոյն չողերի մէջ։ Այս եկեղեցու դէմ ու դէմ, մի ուրիշ կղզու վրա, ս. Գէորգ եկեղեցին է, իր եռագոյն զանգակատնով, որի կատարին ոսկեզօծ թեւատարած հրեշտակը խաղեցուցիչ ցոլքեր է արձակում։

Հեռու, հեռու բաց ծովի մէջ աւազապատ կամ կանաչ կղզեակների մի ամբողջ շարք գեղարուեստականօրէն անկարգ ու խառն ի խուռն ցրված են ջրերի մէջ և ներկայանում են, որպէս զանազան մեծութեան ու ձևի գեղին, կանաչ բծեր աչքերի փայլուն ֆօնի վրա։ Հողային այս փոքրիկ շերտերը Ադրիատիկ ծովի խաղալիքներն են. ալիքները նրանց հետ վարվում են ինչպէս անհանգիստ, չարաճճի երեխաները իրանց խաղալիքների հետ. նրանք մերթ թոյլ են տալիս, որ կղզիները իրանց խոնաւ կրծքերը դէմ տան արևին և չողեր ու ջերմութիւն ծծեն, և մերթ նախանձոտ եռանդով բարձրանում, թագուամ են նրանց իրանց խոնաւ գրկում։

Ծովը, երևկոյեան թեթև հովից խորչոմած, ոտոտում, դողդողում է մեղմիւ. նրա մակերևոյթի վրա փայլփլում են երերուն ալեհները, որպէս ձկների ոսկեզոյն թեփեր։ Երևկոյեան և վաղօրեան չողերի տակ փայլփլող ջուրը սովոր ենք վարդագոյն անուանել, բայց իրօք դա միայն մարդկային լեզուի անկարողութեան արդասիք է, որ չէ կարողանում չատ յաճախ իրերը և բնութեան ե-

բնոյթները պատչած արտայայտութիւններով պատկերացնել և ստիպված է մի բան ասել: Այլապէս ծովը երբեք միագոյն չէ, մանաւանդ հարաւային երկնքի տակ. լինչ անուն գտնել, օրինակ, լոյսի այս խաղերին, գոյների այս զարմանալի նիւանսներին. բայ մանիչակագոյնը, մուգ կապոյտը, բայ վարդագոյնը, կատարեալ ոսկեգոյնը իրար խառնված են և տեղ-տեղ այնպիսի նրբութիւններով, գոյների այն աստիճան նուրբ խաղերով, որ լեզուն համր է կարում, հոգին է միայն զգում, խօսում և ապրում, մի գերագոյն վայելքի և անուրջների մէջ օրօրվելով:

Հեռուում երևում է ս. Ղազարի վանքի համեստ զանգակատունը. ես տեսնում եմ կարմիր չրջապարիսպը ողողված լուսով և ջրերով, ես տեսնում եմ նաև մոդ նօճիները, որոնք իրանց հովանու խորհրդաւորութեան տակ ծածկում են պիտանական հայրերի փառքը կրօնական համեստութեան քօղով: Երկար ժամանակ իմ հայեացքը սեւեռված է մըտնում այս բարձրութիւնից դէպի հայի աչխատասիրութեան, քաղաքակրթական փայլուն հակումների այդ աքանչելի կոթողը, ուր օտար երկնքի և օտար ափերում բազրատունիներն ու Սւիչանները վերացական հայրենիք են գուրգուրում իրանց վարդագոյն երազներում: Եւ յիշում եմ այն իրական հայրենիքը՝ հեռու, հեռու արևելքում, այն երկիրը, որ դարերի աղջամուղջից լոյս աչխարհ գալու ճանապարհին կանգ է առել անորոչի սարսափով բոսորային արչալոյսի առաջ, խտտղած ու

կարմրած աչքերը տրորում է, նայում է իր չուրջը և չէ գտնում տակաւին առաջադիմութեան ճչմարիտ ուղին:

Ներքևում, իմ ոտների տակ, ս. Մարկոսի հրապարակը լցվում է բազմութեամբ, երաժչտութիւնը նուագում է, ամբոխը զբօսնում է, մարդիկ մանրացած, մանր վայելքի գերկն ընկած, մրջիւնների՝ պէս եռում-կրթում են տեղնուտեղը. գրանիտեայ սիւների կատարներից թեւաւոր առիւծն ու գինված ս. Թէոդորը հակում են՝ իրանք էլ չը գիտեն ինչի վրա, ս. Մարկոսի հինգ գմբէթների չուրջը պար բռնած ոսկեզօծ սրբերն իրանց յաւիտեան բայ մնացած աչքերով նայում են հին դարերի հայեացքով, որ այժմ անհասկանալի է դարձել. գմբէթների ճառագայթաձև խաչերը ցոլցլում են արևի վերջին փայլով, գօժերի պալատը առիւծապակ ճակատը կախած գրկախառնվել է ս. Մարկոսի տաճարի հետ. ծեր եղբօր ու քրոջ պէս նրանք ասես խօսում են իրանց վատ մանկութիւնից, որ այլ ևս երբեք չեն գալու:

Այս բոլորը մի բոպէ իրար են խառնվում. իմ գլխում ստեղծվում է պատկերների մի չիմք, հինն ու նորը ձուլվում են ի մի. զանգակները հնչվում են ահագնագղրդ և խառնվում են երաժչտութեան ձայնին. կազմվում է մի անհասկանալի որոտ. ժամի 7-ն է և ես վար եմ իջնում ծանր խոհերով:

V

Վենետիկեան դիշերը երազ է, կատարեալ երազ. Տէնն իրաւամբ է նկատել, որ «Երազելուց դուրս այստեղ անկարելի է ուրիշ բան անել»:

Սակաւաթիւ ցամաք փողոցները նեղ են, իսկ երեկոները վենետիկցին չէ սիրում յարկի տակ մնալ. հարաւային բնակիչը բաց երկնքի սիրահար է:

Նեղլիկ փողոցներից ահագին բազմութիւն է չարժվում դէպի ս. Մարկոսի հրապարակը. մարդ հազիւ է ճանապարհ գտնում: Քաղաքային երաժշտութիւնը ածում է հրապարակում առաջնակարգ վարպետների գործեր. զբօսնող բազմութիւնը խիստ մեծ է, հետաքրքիր օտարականներ են և անհոգ, ուրախ վենետիկցիներ:

Կանանցին և վայելչքներին ծարաւ բազմութիւնը, որ խմբվել է այստեղ աշխարհի զանազան ծայրերից, այս երաժշտութիւնը, որ արևելեան մի գալարուն, մի մրմնջացող չեզտ ունի իր մէջ, այս գաղջ մթնոլորտը, լապտերների փայլը, մարմարէ հինաւուրց պալատները, կանանց այս հոծ բազմութիւնը, որ վայելչասէր ամբոխի ամենաչնչին չարժումների գաղտնիքն ունի իր ձեռքին, և ուղղութիւն է տալիս իրարանցմանը, այս բոլորը, բոլորը միախառնվելով, առեղծում են հոգեկան մի այնպիսի կացութիւն, որ միայն երազ բառով կարելի է արտայայտել:

Երաժշտութիւնը դադարում է ժամի 11-ին, և ես քայլերս ուղղում եմ դէպի ծովափ: Այստեղ տեսարանն այլ է և աւելի հետաքրքիր: Ուղիղ դէմ ու դէմ բարձրացող երկու գրանիտեայ սիւների մէջից լրացած լուսինը թափում է հրապարակի և պալատների արձանազարդ ճերմակ ճակատներին արծաթէ չիթերի մի ծով: Ափին իրար կողքի չարված են բազմաթիւ գօնդօլներ ցցերին կապած, որպէս ձկների մի վտառ, կամ յօդնած կարապների մի խումբ, որոնք, ողջ օրը ջրերը յուզելուց յոգնած ննջում են ալիքների յեղյեղուտ երեսին, իրանց խոնաւ անկողիններում: Սմին անգամ երբ երեկոյեան թեթև հովի բերած ալեակները գալիս մեղմով զարկվում են գօնդօլներին, նրանք քնից արթնացածի պէս թեթև մրմնջում են իրանց հընչիւնով, կարծես դժգոհ, որ խռովում են իրանց դիշերային հանգիստը, օրօրվում են, քնքշաբար և ծոյլ-ծոյլ քալում են իրար, ապա ինչ որ քչփչում են ալիքների հետ, կարծես աղերսում են իրանց հանգիստ թողնել և կրկին խաղաղվում ու մնում են անշարժ. իսկ ալեակները, գոհացած իրանց չաբաճճի խաղից, թեթև քրքիջով յետ են փախչում դէպի ծովի խորքերը, ցնցելով իրանց փոքրիկ, փրփրուն բաչերը, որպէս զի քիչ յետոյ նորից յետ գան, կրկին խռովեն գօնդօլների հանգիստը և կըրկին յետ փախչեն նոյն ձևով: Գօնդօլներից չատերի մէջ տէրերը ծոյլ ծոյլ ձգված են, օրօրվում են, կամ մեղմիւ երգում են ինչ որ երգ:

Հեռու, հեռու դէպի ծովի խորքը փոքրիկ գու-

նաւոր ձրագներ են երերվում զանազան ուղղութեամբ, և ապա ծածկվում են մութ ջրանցքներում: Կան այնտեղ ուրիշ լոյսեր, որոնք անշարժ են և միայնուն լուսապսակ են կազմում մի գոնդոլի չորս կողմը,—վենետիկեան լապտերներ են, որոնցով զարդարված է սերենադա կազմող երաժիշտների գոնդոլը: Այս տարօրինակ նուագախումբը, բաղկացած մի քանի տղամարդկանցից ու կանանցից ծովի խաւար տարածութեան վրայ կանդնած է, որպէս ջրային ոգիների մի խումբ, որ դուրս է լողացել մռայլ անդունդներից և նուագում է երկնքի աստղերի, ծովի ալիքների և դիշերային քաղ լռութեան համար մի երգ՝ բուռն ու բոցոտ, գալարուն ու խրոխտ: Բայց ահա ձրագներն օրօրվեցին, գոնդոլը լողում է դէպի քաղաք, չուտով նա մտաւ մի ջրանցք և սերենադը գնալով-գնալով մեղմացաւ և ի վերջոյ մեռաւ լուռ ու խաւար չէնքերի աստուերների մէջ:

Ծովը լռեց, հրապարակը դատարկվեց, պալատների և եկեղեցիների արձաններն այժմ ինչ որ ճնշող խորհրդաւորութիւն ստացան:

Ս. Մարկոսի զանգակատան ժամացոյցը կէս գիշեր խփեց. ես դեռ յափշտակված նայում եմ գոնդոլներին, պատառ պատառ ամպերի միջից սահող լուսնին, իտալական այս տարօրինակ երկընքին, որ այնքան մուդ է, դքսական պալատի և ս. Մարկոսի արձաններին, այս դրանիտեայ բարձր սիւներին: Գիշերային խաղաղութիւնը գնալով աւելի ու աւելի կատարեալ է դառնում, հեռու

տեղի փոքրիկ ոտնաձայնն անգամ լսվում է անախորժ ճշտութեամբ: Մի տարօրինակ ցանկութիւն է ծագում իմ մէջ՝ նստել այս գոնդոլներից մէկի մէջ և, եթէ հնարաւոր է, տարվել այս ներհող ջրերի վրայով հեռու հեռու դէպի բաց ծովը և այնտեղից նայել այս մոգական պալատներին, ալիքների մէջ քնած այս տարօրինակ քաղաքին:

—Գոնդոլ:

—Ո՞ւր կուզէք գնալ, պարոն:

—Հեռու այս ափից, դէպի որ և է կողմ:

—Մեծ ջրանցքով պարոն, այն է յարմար այս ժամին:

Նա դանդաղութեամբ արձակում է նաւակը, վերցնում է իր մի հատիկ թին և, կանգնած գոնդոլի ետևի մասում մի եղրի վրա իր այդ մի հատիկ թիակով և՛ ղեկավարում և՛ առաջ է մղում այնպիսի աջողութեամբ, որ կարծես կառք է քշում: Գոնդոլը սահում է քնած ջրերի վրայով. լուռ է ջրանցքը, իմ ետևից ես հազիւ լսում եմ թիակի բարձրացրած մեղմ ճղփիւնը և առջևս տեսնում եմ ցոլակի վրայի փոքրիկ լապտերի դուռնաւոր լոյսը, որ լուսաւոր նետի պէս ցցվում է ջրերի մէջ:

Անցնում ենք փրկագործ ս. Մարիամի եկեղեցու առաջից. կէս խաւար, կէս լուսաւոր կամ ուրուագծերով ջրերի միջից բարձրանում է նրա գեղեցիկ սիլուէտը, որպէս մարմարէ մի հսկայական փունջ. դմբէթի կատարին Սատուածածնի արձանը հազիւ երևում է երկնքի ֆոնի վրա. մի վայր-

կեան լուսինը հէնց այդ արձանի գլխին է և լոյսի անձրևով ասես ողողում է ողջ եկեղեցին։

Դէպի ալ իրար կողքի անվերջ չարքով կանգնած են ջրերի մէջ մի կարգ հին մարմարեայ պալատներ, որոնք այժմ հիւրանոցների են վերածված բուրժուայ փարթամ ճաշասարհորդների ամենատեսակ վայելքների համար։ Այնտեղ ուր ապրում, քնում էր ոսկեհուռ բեհեզների մէջ կորած նախկին գոռոզ իշխանը, այժմ ապրում քնում է ոսկու մէջ կորած բուրժուան, իսկ ժողովուրդը, որ իր մէջքով ու արիւնով այդ փոփոխութիւնն առաջ բերեց, նա դարձեալ անմասն մնաց կեանքի վայելքին, նա դարձեալ այս պալատներից դուրս է մնացել. նա այս գոնդօլների թիավարն է, որ այն լուսամուտներից ձգված փշրանքներն է հաւաքում գլխաբաց։

Պալատներ, պալատներ... լայն ջրանցքի ալ ու ձախ կողմերում ցցուած են ջրից դուրս մէկը միւսի ետևից։ Երբ լուսինը լուսաւորում է նրանց ճակատները, ես տեսնում եմ այդ գեղեցիկ քանդակները, արձանները, տերևաձև զարդերով պատչգամբները, նուրբ սիւները, լուսամուտներն իրանց գալարուն շրջանակներով, կամարները մասամբ սպիտակ և մասամբ թխացած ժամանակի երեսից։ Նաւավարը իմ ետևից անդադար թուում է նրանց անուննները, բայց ես վազուց է, որ այլ ևս չեմ լսում նրան և միայն նայում եմ, որովհետև այդ անուննները միտ պահել անհնարին է և քանիսն են։ Ո՞ր դարին են պատկանում նրանք և

ինչ ճարտարապետական ոճի, դժուար է ասել։ Գեղարուեստական մի զարմանալի խառնուրդ է ներկայացնում թէ իւրաքանչիւր պալատ առանձին վերցրած և թէ ամբողջը միասին։ Գոթական, արաբական, բիւզանդական ոճերի մի զարմանալի խճողումն է այս, որ առաջ է բերել մի առանձին վենետիկեան ոճ, գոռոզ հանրապետութիւնը իր կողոպտած երկրների ճարտարապետական փառքերից աշխատել է մի դիւթական փունջ կազմել կամենալով մարմարիօններով և այս ջրանցքը դարձրել է գեղարուեստական հրաշալիք։ Այս պալատներից իւրաքանչիւրն իր պատմութիւնն ունի։ Մերթ փառաւոր և մերթ ոճիրներով պղծված՝ քարացած անցեալն է, որ լուռ նայում է այս ջրերին, որպէս իր անցքերի միակ վկաներին և նրանց հետ միասին լուռ տխրութեամբ երազում է հին օրերը, որոնք էլ երբէք յետ դալու չեն։

Երկու կողմում չինութիւնների որմերի վրա հաստատված լապտերները լոյսի մի մի սիւն են արձակում ջրի մէջ դէպի խորը, խորը և չարան չարան, երբ նաւակը մօտենում է, լուսեղէն այդ սիւները երերվում են, օձապտոյտ գալարներ կազմում ալիքների հետ և ապա կամաց կամաց ուղղվում և ընդունում իրանց յարատև դողդողուն դիրքը։ Այնտեղ, ուր լուսնի չողերն առատ են, ջրերի մէջ տեսնվում է մի այլ պալատ, մինչդեռ վերինն անշարժ է, ստորինը՝ լուսեղէն սիւների հետ միասին օրօրվում է և դողդողում, որպէս ամանգեայ դիւթական ապրանք։

Եւ գօնդօլն անցնում է մերթ մռայլ տամուկ տուներով, մերթ դուրս է գալիս լոյսով ողողված ջրային փայլուն հրապարակը և սողում է՝ իր պողպատեայ փայլուն ցոլուկը կարապի պարանոցի պէս վեր բռնած ալիքների վրա։

Լռութիւնը մեռելային է. ոչ մի ձայն այս հինաւուրց չէնքերից, ոչ մի չշուկ այս խաւար ջրանցքներում. թուում է թէ մարդ հէքիաթների աշխարհումն է գտնվում, ուր մարմարեայ պալատները մի դիւթական գաւազանի հարուածով յանկարծ ամայացել են։ Միայնութեան և անտէրութեան մի անախորժ զգացում է պաշարում մարդու, կարծէք թէ իրօք մարդ մենակ է ձգված այս ամայի չէնքերի մէջ, մոլորված, չը գիտէ թէ ուր է գնում և սարսափած է խօսել, մի բան ասել։

—Նաւավար, ջրանցքը չատ երկար է։

—Այո՛, պարո՛ն, չուտով երկուսը կը լինի, ուշ է, չէք կամենայ յետ դառնալ։

—Ո՛չ, գնանք դեռ։

Եւ գօնդօլը սահում է ու սահում, և լռութիւնը դառնում է խեղդող։ Մեծ ջրանցքը ուղիղ նեղ ժապաւէններով պալատների ոտքերի տակից տարածվում է աջ ու ձախ դէպի քաղաքի ներսը, կազմելով ուղիղ նեղ, ուղիղ փոքրիկ ջրանցքներ. ես նայում եմ այդ ջրային փողոցներին, որոնք բաժանում են չէնքերն իրարից և նրանց խաւարի մէջ չը գիտեմ ինչ մի գաւազրական բան եմ զգում, և սակայն այնտեղ իշխող խորհրդաւորութիւնն ինձ գրաւում է։

—Նաւավար, ս. Մարկոս վերադառնալու համար մտնենք այս նեղ ջրանցքներից մէկը և պտոյտ գործենք. կարելի՞ է։

Պատասխանի փոխարէն նա լռութեամբ ծռում է գօնդօլի ցոլուկը, և մի րոպէից յետոյ մենք կորչում ենք խաւարի մէջ։ Այստեղ լապտերներ չը կան։ Այստեղ խաւարը և սոսկալի է և գրաւիչ. մռայլ վիշապ լինի կարծես այս ջրանցքը, որ իր բաց երախով քաշում է մեզ ուղիղ և ուղիղ ներս։ Երկու կողմից պատերն այնքան բարձր են, որ կորչում են վերևում։ Նայում եմ և հազիւ եմ տեսնում երկնքի մի նուշճուկ պատառ և նրա վրա քանի մի պլպլան աստղեր, որոնց լոյսն անզօր է թափանցել այս խորութեան մէջ, ուր խաւարն է իշխում և սարսափը։ Նաւակը յուզում է քնած ջրերը, ալեակները թեթև ճղփիւններով զարկվում են չէնքերի քարեայ հիմքերին, մենք անցնում ենք, և մեր ետևում կրկին ամեն ինչ խորասուզվում է ճնշող հոգեկան լռութեան մէջ. միայն թիակն է միակերպ բարձրանում և իջնում և թիավարն է ինչ որ երգ մռմռում քթի տակ։

Տեղ տեղ մտնում ենք ցածրիկ կամուրջների քարեայ մռայլ կամարների տակ և այդ ժամանակ մարդ անչափ մօտ է զգում իրան թաղնված ոճիրը։ Ջրերի չընչիւնը մութ կամարների տակ փոխվում և դառնում է խուլ և խուլ գաւազիրների փըսփսուկ և ալեակների չնչին փայլը, որ առաջ է գալիս նաւակի լապտերի լոյսից, կարծես դաշոյնի պաղ փայլը լինի։ Այսպիսի տրամադրութիւն յա-

բուցանող մթնոլորտում զարմանալի է, որ Վենետիկը կարողացաւ հազար տարի տևող կառավարութիւն ունենալ։ Վենետիկեան դիչերը տափանքի և ոճիրների դիչեր է. այս լուռ չէնքերն ու խաւար ջրանցքները հարուստ կրքոտ մարդուն կամ դէպի դատապրութիւն կամ դէպի մեղկ հեչտութիւններ կը մղեն։

... Գօնդոլը սահում է ու սահում ոլոր մոլոր ջրանցքներով խաւար բարձր պատերի տակից, ուր դարերը ծածկում են Վենետիկի պատմութեան այնքան արիւնոտ անցքեր, այնքան սոսկալի ոճիրներ։ Առաւօտեան ժամի 3-ն է, և մենք մտնում ենք Վենետիկի ամենից խորհրդաւոր, ամենից հետաքրքիր ջրանցքը. մեր գլխի վերև բարձրանում է այժմ «Հառաչանքի կամուրջը» և ալ ու ձախ վենետիկեան այն քանտերը, որոնց գաղտնիքը այս ջրերն ու քարերը գիտեն։

«Հառաչանքի կամուրջ»... սոսկալի և խորհրդաւոր անուն, որ այնքան չատ բան է ասում իր քար լռութեամբ։ Այստեղ է երգել Բայրօնը—«Վենետիկումն եմ, Հառաչանքի կամուրջի վրա. դէպի ձախ ես տեսնում եմ մի պալատ, դէպի ալ մի բանտ։ Այս չէնքերը դուրս են ցցված ալիքներից, որպէս մոզական դաւազանով։ Տաս դարեր փուռում են իմ չուրջը իրանց ամպամած թևերը և մի մեռնող վարագ ժպտում է հեռու ժամանակներին» Չայլդ-Հարօլդ երգ VI.)։

Դարձեալ ս. Մարկոսի հրապարակումն ենք։ Վենետիկի դիչերը երազ է, երազ...



ՀԱՌԱՉԱՆՔԻ ԿԱՄՈՒՐՋԸ (ՎԵՆԵՏԻԿ)
(տես 48)

VI

Օտարականը Վենետիկ հասնելուց յետոյ անմիջապէս ս. Մարկոսի հրապարակն է վազում։ Տէնն իր իտալական նամակներում ամենագողտրիկ տողերն է նուիրել գեղարուեստական այդ գոհարին. Թէօֆիլ Գոտիէն նոյնպէս։ Բայրօնն այնտեղ է թափառել ամիսներով և հաւանականաբար այնտեղ կազմել Չայլդ-Հարօլդի մի մասը և իր «Մարինօ-Ֆալիէրօնն». ով գիտէ, գուցէ Շէքսպիրի «Վենետիկի վաճառականն» այդտեղ է ծնունդ առել հանճարեղ բանաստեղծի գլխում։ Եւ ճշմարիտ, այդ հրապարակն իր չրջապատով, իր եկեղեցիով, դքսական պալատով ընդունակ է ղգայուն մի սրտում ամենաբանաստեղծական յուշեր յարուցանել և անցեալը, հին օրերի պատաւած փառքերը երազող հոգիներին պատկերների և խոհերի ալիքներում օրօրել։

Եթէ գիշերները ս. Մարկոսի հրապարակը ցնորական է ու դիւթիչ, ցերեկն էլ արևի վառ չողերի տակ նա մի այլ գրաւչութիւն, այլ հետաքրքրութիւն է ներկայացնում։ Առաւօտեան ժամի 9-ից հրապարակը լցւում է համարեա բացառապէս օտարականներով, որոնք մեծ մասամբ գերմանացիներ և անգլիացիներ են, խումբ-խումբ ջահիլ օրիորդների հետ. վերջիններիս ամենահե-

տաքրքիր ղուարճութիւնն ու զբաղմունքն այդ ժամին ս. Մարկոսի աղաւնիների կերակրելն է: Այս թռչունները վաղուց սովորել են իրանց կերակրի ժամին. նրանք հաղարներով պատում են սալայատակը գոյնզգոյն երամով, մնչում են և պտոյտ գործում ջահիլ օրիորդների չուրջը, որոնք ձգում են նրանց եղիպտացորենի հատիկներ: Այս աղաւնիներն էլ, ինչպէս ամեն ինչ, որ կայ ս. Մարկոսի հրապարակում, իրանց պատմութիւնն ունեն, որ կապված է Վենետիկի պատմութեան հետ:

Հանրապետութեան վառքի օրերում սովորութիւն կար Ծաղկազարդի տօնին ս. Մարկոս եկեղեցուց, պատարագի ընթացքում, բաց թողնել աղաւնիներ, որոնք բարձրանում չարվում էին գօժերի պալատի պատերի վրա: Նրանք այնուհետև դառնում էին անմատչելի և կերակրվում էին պետութեան հաշուով: Այս աղաւնիները՝ Վենետիկի վառքին մասնակից հին աղաւնիների ձագերն են. իրանց նախորդների պէս՝ սրանք էլ են թառում հինաւուրց պալատների վրա, բայց էլ նրանց պէս չեն կերակրվում պետական հաշուով: Ինչպէս ամեն ինչ, նոյնպէս և այս աղաւնիները գարձել են հարուստ զբօսասէրների սեփականութիւն և կերակրվում են նրանց ձեռքով, նրանց հաճոյքի համար: Դարեր է՝ ինչ այդ աղաւնիները սովորել են կեբակուր վերցնել մարդկային ձեռներից: Զարմանալի է. գեղասէր կանայք կարողացել են թռչունների այդ սովորութիւնն անգամ չահագործել աւելի գեղեցիկ երևալու համար. ջահիլ օրիորդ-

ները գնում են փոքրիկ թղթեայ պարկերի մէջ առատ եղիպտացորեն, ապա ցանում են հատիկները իրանց գլխի, ուսերի և բազուկների վրա, կամ բռնում են ափերի մէջ և այդպէս մնում են անշարժ կանգնած. աղաւնիները երամով թափվում են և չարվում նրանց գլխի, ուսերի, կռնների վրա, իսկ քնքոյշ սեռի երկրպագուները, ծանօթ թէ անծանօթ, նրանց վրա են ուղղում լուսանկարչական գործիքները:

Գոյնզգոյն թռչունների և պճնված կանանց այս գրաւիչ պատկերի չուրջը, ինչպէս սև երերուն բծեր, չարժվում են բազմաթիւ վենետիկցի աղքատ երեխաներ, ոտաբոբիկ, գլխաբաց, գզգզված, պապիրոսը բերաններին, խեղճ ու կայտառ միաժամանակ. սրանք էլ վենետիկեան գաւրօչներն են. նրանք իրար հրհրում, վազվզում են՝ իրանց համար սովորական գարձած այս ճոխ պատկերի չուրջը և կազմում են մի տեսակ տխուր օղակ, որ սղմում է փարթամութիւնը իր սառը գրկում:

Հրապարակի որ կողմն էլ նայելու լինես՝ աչքիդ ներկայանում են յունական ոճի սիւներ, հոյակապ կամարներ, քանդակներ, մօզաիկներ, արձաններ և այս բոլորը սպիտակ մարմարից, որին հնութեան մուգ գոյնը տուել է մի տեսակ պատկառանք ազդող վսեմ տեսք:

Ս. Մարկոսի տաճարը, ինչպէս ճիշտ նկատել է Տէնը «մի տեսակ քրիստոնէական մզկիթ է յիշեցնում». ճարտարապետութեան մի զարմանալի խառնուրդ է իշխում այս զարմանալի չէնքի բոլոր մա-

սերում թէ դրսից և թէ ներսից։ Իշխողը բիւզանդա-արաբական ատիլն է, բայց նրան խառնվել է գոթականը մի այնպիսի արուեստով, որ այլ ևս դժուար է որոշել թէ ո՞ւր է վերջանում մէկը և սկսվում միւսը։

Շէնքի գլխաւոր ճակատը նախշած է՝ որպէս մի խաղալիք. գլխաւոր մուտքի կամարներից վեր տարածվող անօրինակ տերրասի վրա բարձրանում են մի չարք այլ կամարներ, գոյնզգոյն, մնծ ու փոքր, և նրանց վրա չարված են ոսկեթել հրեշտակներ, որոնք արդարութեան կշիռը բռնած ձեռներին ակնապիշ նայում են դէպի վեր, դէպի Աստուածածնի ոսկեզօծ արձանը։ Այս արձանախմբից դէպի աջ ու ձախ չարված են վոքրիկ ոսկեզօծ կաթուղիկէներ, որոնք ծածկում են իրանց հովանու տակ այլ արձաններ կամ արձանախմբեր։ Մայր կաւարի ճակատին թևաւորված ոսկէ առիւծն է իր թաթերի տակ պահում ոսկէ աւետարանը. նրանից ներքև չորս բրօնզէ ոսկեզօծ ձիարձաններ բնական մեծութեամբ ասես թռիլով սաւառնում են օդի մէջ։ Եւ այս բոլոր ճարտարապետական քանդակներով եղերված կամարները, այս արձանները, կաթուղիկէները, խաչերը վերևում կազմում են մարմարէ և ոսկէ ալիքներ, իրանց եղնէջում քարացած։ Ներքևում, հինգ դռագաւիթ կամարների տակ, հինգ դռների չուրջը, սիւների մի անտառ կայ, մարմարեայ, գրանիտեայ, պօրփիւրի զանազան գոյներով, սպիտակ, կարմիր, կանաչ բծաւոր, չարիչար, իրար կողքի, իրար վրա յու-

նական խոյակներով. յօնիական՝ դալարուն, կորինթեան՝ դափնիազարդ։ Ընդհանուր պատկերը լրացնում են արտաքին պատերի վրա փռված բազմաթիւ նկարները հին և նոր կտակարանից ու վարք սրբոցից։

Այս շէնքին նայելով կարելի է կարծել, թէ բոլոր այն երկիրները, որոնք երբ և իցէ վենետիկի ընչաքաղց հանրապետութեան իշխանութիւնը տեսել են, ուղարկել են իրանց հանճարի արտադրութիւնը այս զարմանալի շէնքը զարդարելու համար, կամ, աւելի ճիշտ, հարուստ կողոպուտներից ծայպիսի խոշոր բաժին հանելով Աստուածու տաճարի համար, գօժերը կարծես կամեցել են երկնքի ներողամտութիւնը վաստակել իրանց կառավարութեան անիրաւութիւնների համար։ Աշխարհի միակ եկեղեցին է այս, ուր աւազակութիւնն ու կողոպուտը սրբագործված է բացարձակօրէն։ Նոյն իսկ այն սուրբը՝ ս. Մարկոսը, որի անուանն է նուիրած այս տաճարը, դողացված է արևելքից։ Երկու վենետիկցի վաճառականները 828 թ. Ալէքսանդրիայի ս. Մարկոս եկեղեցուց գողացել են յիշեալ աւետարանիչի մարմինը, և, մահմեդականներին խաբելու համար, այն կողովը, ուր դրված է եղել գողացված աճիւնը, պատել են խոզի մսով ու թարմ ոստերով և այդպիսով աջողացրել են վենետիկ հասցնել։ Ահա այսպիսի գողութեամբ ձեռք բերված սուրբը դառնում է այնուհետև կողոպուտով ապրող այդ պետութեան պատրօն։ Աւելի հետաքրքիրն այն է, որ եկեղե-

ցու դրսի ճակատին, հէնց հրապարակի վրա, նըկարված են այդ «սրբազան» դողոմիեան բոլոր տեսարանները. չը գիտեմ միայն կաթոլիկ եկեղեցին այդ վաճառականներին սրբերի դասը դասել է, թէ ոչ:

Դժուար է ճշտութեամբ ասել, թէ այս չինութեան որ սիւնը, որ մնացորդը որտեղից է բերված, բայց այսքանը յայտնի է, որ գոյնզգոյն մարմարէ սիւներից 590-ը բերված են Կ. Պօլսից և Յունաստանից զանազան ժամանակներում: Հետաքրքիր է չորս բրօնզէ ոսկեզօծ ձիարձանների պատմութիւնը. 1205-ին այդ արձանները տեղափոխվել են Վենետիկ Կ. Պօլսից և տեղաւորվել են տաճարի մուտքի ճակատին. գողից պողանալու յայտնի առածն արդարացնելու համար՝ Նապօլէօն I 1797 թուին, Վենետիկի այլ կողոպուտների հետ, այդ արձաններն էլ տեղափոխեց Պարիզ և միայն 1815 թուին, Նապօլէօնի անկումից յետոյ, բեռտավրացիան կրկին յետ տուեց Վենետիկին: Կ. Պօլսից է բերված նաև տաճարի հարաւային մի անկիւնում պատի մէջ տեղաւորված մարմարէ արձանախումբը, որ ներկայացնում է չորս արևելեան ղինուորներ, երկար զգեստներով,—բիբա ու անճաշակ մի գործ, որ չը գիտեմ ինչու, կարծվում է, թէ հայ ղինուորներ են: Թէ որ աստիճան մեծ է եղել այս եկեղեցու պատերին չարունակ նորանոր զարդեր կպցնելու տենչը, ցոյց է տալիս հէնց այդ արձանախումբը, որ կամեցել են անպատճառ մի տեղ տեսնել և երկաթներով ամրացրել են մի

անկիւնին բաւական անհաստատ կերպով: Հարաւային պատի տակ և դքսական պալատի մուտքի դէմ ու դէմ բարձրանում են մարմարէ երկու քառակուսի սիւներ, որոնք երկար դարեր կախաղանի են ծառայել. այդ սիւներն էլ արևելքիցն են բերված, ինչպէս նաև ծովափին կանգնած գրանիտեայ երկու հսկայական կլօճները: Մի խօսքով այս եկեղեցու չուրջը չը կայ մի սիւն, մի զարդ, մի նկար, որ որ և է ձևով կողոպուտ չը յիշեցնէ, և այդ բոլորը սրբապղծված է տաճարի հովանու տակ: գեղեցիկ է եկեղեցու կտուրը, ուր հինգ անհաւասար մեծութեամբ գմբէթներ բանում են կենտրօնը, իսկ նրանց չուրջը, չորս կողմի պատերի վրա, որպէս մի սիրուն պար, չարված են մանր գոթական կամուղիկէները, որոնց չարքի մէջ սրբերի ու հրեշտակների ոսկին ու մարմարը մրցում են իրար հետ:

Զարմանալի է եղել Վենետիկի հանրապետութիւնը. դքսական պալատն ու եկեղեցին կպած՝ գրկախառնված են իրար և երկուսի վրա հսկում է թևաւոր առիւծը, իր թաթերի տակ պահպանելով բաց աւետարանը: Ինչ գլխիվայր, ինչ տարօրինակ բացատրութիւն Մեծ Մարդասէրի վարդապետութեան: Հեղութեան, սիրոյ պատգամ, առաքինութեան քարոզը գրված է առիւծի ուժեղ ճիրանների պաշտպանութեան տակ. կարծէք այդ վարդապետութեան հեղինակը Գողգոթայի արիւնոտ փայտից չէ կախվել, այլ սուրը ճոճելով դուրս է եկել բոցոտ Սրաբիայի արգանդից: Որ կողմն

էլ նայելու լինենք այստեղ, կը տեսնենք, որ կրօնն ու ոյժը ընթանում են ձեռք ձեռքի տուած. առիւծ ու աւետարան, մարախրոսներ ու աչխարհակալ գօժեր, կոտորած, արիւն ու խաչելութիւն, յաւիրժատակիչներ ու մարգարէներ, առաքեալներ ու աւազակներ իրար խառնված, կողք կողքի բարեկամաբար չարված են տաճարի ու պալատների պատերի վրա: Կրօնատգնեշապետական այդ օլիգարխիան, որ հանրապետութիւն անունն է կրել՝ աչեա ժողովուրդը հեզնելու համար, հին Հռօմի անողոք խստասրտութեան, նրա գոռող եսասիրութեան վրա ձգել է մի կրօնական քօղ և ամբողջ դարեր Միջերկրականի ժողովուրդներից կողոպտել է այն՝ ինչ խուսափած է եղել Հռօմից:

Ս. Մարկոսի հրապարակի հիւսիսումն է գտնվում Վենետիկի հռչակաւոր ժամացոյցի աչտարակը, չինված 1496 թ.: Այս չէնքի վերին աերթասի երկու բրօնզէ Վուլկաններ, մարդու բնական մեծութեամբ, իւրաքանչիւր ժամին մեծ մուրճերով հարուածում են մի ահագին զանգի վրա և նրա խլացուցիչ ղօղանջիւնով ժամերն են յայտնում ամբողջ Վենետիկին:

—∞—

Այս հրապարակի մասին գրելիս մոքովս անդամ չէր անցնում, թէ աոիթ կունենամ հայ անուններ յիշատակել նկարագրութեանս մէջ, բայց աչխարհի որ ծայրում և երբ հայ չի յայտնվել գէթ



Ս. ՄԱՐԿՈՍԻ ՏԱՃԱՐԸ, ԱՇՏԱՐԱԿԸ (ԿԱՄՊԱՆԻԼԼԱ) ԵՒ ՀՐԱՊԱՐԱԿԸ (ՎԵՆԵՏԻԿ)

(Տես և 49)

մի անգամ։ Եկեղեցու արտաքին մարմարէ սիւներ-
ը դիտողը կը նկատէ հայերէն անճոռնի, ծուռ ու
մուռ տառեր քարի ողորկութեան վրա փորագրված.
կարդացվում են՝ Խաչատուր Ջուղայեցի ՌՃԴ.
Գաբրիէլ սարկաւագ ՌՃԱ, և այլն, բազմաթիւ
հայ անուններ և թուականներ։ Անչուշտ հայ վա-
ճառականներ, որոնք յարաբերութեան մէջ են ե-
ղել Վենետիկի հետ, իրանց գործերը վերջացնե-
լուց յետոյ նստել են այս սիւների տակ և, մի
տխուր անմահութիւն ձեռք բերելու համար, դա-
նակով, մեխով, երկաթի կտորով փորագրել են
իրանց անուններն այս գեղեցիկ սիւների վրա.
բայց թէ իշխանութիւնն ինչպէս է թոյլ տուել
այդ կատարեալ վանդալութիւնը՝ չը գիտեմ. գու-
ցէ դէպի հայերը մի առանձին ներողամիտ վերա-
բերմունք է եղել այստեղ։ Պատմում են, օրինակ,
որ հայ վաճառականները «չիտակ» տիտղոսն են
ունեցել արևելքի բոլոր վաճառականների մէջ և
ահա թէ ինչու։

Վենետիկցի մի ազնուական մի անգամ գնում
է հայ վաճառականից մի թանկագին կերպաս.
հայը, արևելքի սովորութեան համեմատ, կրկնակի
գին է ասում իր ապրանքին, յուսալով, որ գնողը
կը վիճի, բազար կանի և ի վերջոյ կը յանգին իս-
կական գնին։ Բայց հպարտ ազնուականը վճարում
է առաջին գինը և վերցնում կերպասը հեռանում,
թողնելով վաճառականին զարմանքի և խղճահա-
րութեան ենթակայ։ Այն ժամանակ հայը վազում
հասնում է վենետիկցուն, բացատրում է իր սխա-

ը և խնդրում է յետ վերցնել աւելորդ դրամը. աղնուականը զոլում է նրա վարմունքը, բայց չէ ընդունում դրամը, այլ թողնում է, իբր ընծայ նրա չիտակութեան համար։ Ահա այս դէպքն է, որ իբր թէ առիթ է դառնում հայերի չիտակութեան հռչակին։

Ճշմարտութիւն է այս, թէ անեկդօտ, չը գիտեմ, բայց ցանկալի է, որ իւրաքանչիւր հայ վաճառական երբէք չը մոռանայ, որ մի հաւիկ դէպքն անգամ բաւական է օտար երկրում մի ամբողջ ժողովրդի վարկը բարձրացնելու կամ ցեխին հաւասարեցնելու համար։

VII

Վենետիկ հասայս օրից ահա երրորդ անգամն է, որ այցելում եմ դքսական կամ, ինչպէս սովորութիւն է անուանել, դոժերի պալատը։ Վենետիկի հանրապետութեան ամբողջ պատմութիւնն այստեղ է. այս գոյնզգոյն պատերը, մարմարէ այս սիւներն ու քանդակները դեռ կրում են իրանց վրա գոռոզ օլիգարխիայի փառքը և ամէն մի գինուորական փառքի հետ կապված զարհուրելի ոճիրները։ Ս. Մարկոսի հարաւային պատի տակ և գլխաւոր պալատի մուտքի առաջ բարձրանում են, օրինակ, 4—5 մետր բարձրութեամբ երկու հաստ մարմարէ սիւներ։ Սիրուն

գործ են, և հետաքրքիր ու գեղասէր ճանապարհորդները զննում են նրանց գեղեցիկ քանդակները, մանուկներն առաւօտից երեկոյ վազվզում են նրանց չուրջը, դատարկապորտ կամ յոգնած վենետիկցին ծոյլ-ծոյլ պառկում է նրանց պատուանդանների տակ, բայց հէնց այդ սիւներից են կախել ամբողջ մի քանի դարեր անմեղ թէ մեղաւոր դատապարտեալներին։ Լաւ է, որ քարերը համր են, լուռ... Մենք էլ անցնենք։

Պալատի գլխաւոր մուտքը ճարտարապետական հաղուագիւտ գործ է՝ գօթական ճաշակով։ Դռան չուրջը քանդակների վինջերի մէջ չորս սիմվոլական արձաններ ներկայացնում են Խոհեմութիւն, Յոյս, Բարեգործութիւն և Այժ։ Շինութեան երկու ճակատները, որոնք նայում են հարաւ և արևելք, ճարտարապետական մի անօրինակ նմուշ են ներկայացնում մաւրիտանական և գօթական ճաշակների խառնուրդով։ Կարճ, բաւական հաստ և կլոր սիւների չարքի վրա բարձրանում է սիւնէրի մի երկրորդ կարգ, կազմելով երկրորդ յարկ, և սրա վրա նստել է չէնքի ամբողջ վերին բաժինը իր հսկայական ու գոյնզգոյն զանգուածով, ներկայացնելով մի վերին աստիճանի յանդուգն մտքի յղացումն։ Այս սիւներից վեր բարձրանում է մի կատարեալ արևելեան պատ, որի սպիտակ և կարմիր քառակուսի մարմարներն այնպիսի արուեստով են խճողված իրար հետ, որ ստացվել է մի ահագին պարսկական կապերտ իր չքեղ քառակուսի ձևերով։ Լուսամուտներն էլ այն

աստիճան արևելեան են, որ մարդ կարծում է, թէ իր առջև բարձրացողը մահմեդական աշխարհի մի պալատ է։

Լայնարձակ բակը, չորս կողմից պարփակված չէնքի չորս թևերով, քառակուսի ձև ունի և արտաքին ճակատների պէս սիւնազարդ է։ Բակից դէպի դլխաւոր մուտքն է առաջնորդում Հսկաների մարմարեայ սանդուխքը (scala dei giganti), որ այդպէս է կոչված իր երկու կողմերում բարձրացող Նեպտունի և Մարսի հսկայական արձանների պատճառով։ Այստեղից սիւնազարդ գալլէրէան այցելուին առաջնորդում է դէպի ներսի դահլիճները։ Ամենահետաքրքիրը՝ մեծ խորհրդի դահլիճն է։ Այստեղ էին կատարվում նիստերը պետական այդ բարձրագոյն ժողովի, կազմված վենետիկի բոլոր ազնուականներից, որոնց անունները գրված էին ոսկէ գրքում։ Իւրաքանչիւր ազնուական, քսան տարեկան դառնալով, իրաւունք էր ստանում իր անունը քուէարկութեան ենթարկել այդ ժողովի անդամութեան համար (հաւատացնում են, որ քուէները ոսկէ և արծաթէ գնդակներ էին), եթէ այդ հասակում նա քուէարկութեամբ չէր ընդունվում, այնուամենայնիւ նա իրաւունք ունէր քսանհինգ տարեկան եղած ժամանակ անդամ դառնալ առանց ընտրութեան։ Ահա այս ժառանգական ազնուականութիւնն էր, որ ամբողջ դարեր այստեղից օրէնքներ է թելադրել այնքան ժողովուրդներին։

Մեծ խորհրդարանի ամբողջ հիւսիսային պատը ծածկ-

ված է մի հսկա նկարով. դա Տինտէրեատոի 26 մետր երկարութեամբ և մօտ 8 լայնութեամբ «Արքայութիւնն» է, 1365 թ. գործ։ Այս զարմանալի նկարի վրա մօտ 600 մարմիններ չողում են ամպերի ապիտակութեան մէջ, սուրբերի և հրեշտակների ամբողջ դնդեր իրանց յաւիտենական ձանձրալի երջանկութեամբ նայում են դէպի վեր և կարծես նրանք էլ չը գիտեն, թէ ինչ անեն այս տարօրինակ երանութիւնը։ Նկարիչը հաւատում էր արդեօք յաւիտենական երանութեան այս տաղտուկ դաղափարին, թէ ոչ. չը գիտեմ, յամենայն դէպս նա կարողացել է հզօր կերպով արտայայտել թէկուզ ամենանուիրական, ամենաանմեղ վայելքի հետ կապված անգործութեան բոլոր ձանձրոյթը։

Դահլիճի միւս պատերը ծածկված են վենետիկի մղած պատերազմների զանազան տեսարաններով. դեղեցիկ է մանաւանդ առաստաղի նկարը, ուր Վենետիկը, մի վարթամ դեղեցկուհի, բազմել է գահի վրա ու փառքը պսակում է նրա չքնաղ գլուխը, իր շուրջն են խաղաղութիւն, առատութիւն և չնորհ։ Առաստաղից անմիջապէս ներքև պատերի վրա չորս կողմում չարված են ժամանակագրական կարգով բոլոր դօժերի նկարները իրանց ճոխ զգեստներով։ Բոլոր նկարներից աւելի այցելուների ուշադրութիւնը գրաւողը այս դահլիճում դօժերի շարքի մէջ հարաւային անկիւնի մի սև կէտն է. այնտեղ են ուղղվում բոլոր հայեացքները, բոլոր դիտակները. այնտեղ մի սև

ֆօնի վրա ներքևից կարդացվում են սպիտակ տառերով հետևեալ բառերը՝ «Nic est locus Marini Falieri decapitati pro criminibus».—«Ոճիրի համար գլխատված Մարինօ Ֆալիէրօի տեղն է այս»։

Մարինօ Ֆալիէրօ դօժ էր 1353 թուին. հազիւ 7 ամիս էր անցել իր ընտրութիւնից, երբ նա, վրդովված մի ազնուական երիտասարդի անպատկառ վարմունքից դէպի իր երիտասարդ կինը, որոշեց ընդ միշտ տապալել ազնուապետութիւնը և հաստատել Վենետիկում միապետական իշխանութիւն։ Բոլոր դժգոհ ռամկավարականները, ազնուականների բռնութեան դէմ բոլոր բողոքաւորները միացան նրա հետ և կազմեցին մի ընդարձակ դաւադրութիւն։ Երբ բոլոր պատրաստութիւնները տեսնված էին և մնում էր նշանը տալ, դաւադիրներից երկուսի մատնութեամբ գաղտնիքը բացվեց. դօժը դահընկեց եղաւ և բանտարկվեց. անմիջապէս բռնվեցին նաև համախոհները. նրանց բոլորին էլ դատապարտեցին մահվան։ Դօժի ընկերներին կախեցին պալատի պատերից, իսկ իրան, 76 տարեկան ծերունուն, գլխատեցին գլխաւոր սանդուխքի բարձրութեան վրա, ուր սովորութիւն կար պսակել նորընտիր դօժերին։ Իրանց իշխանութեան դէմ փորձ անող այս դօժի դէմ ազնուականների ատելութիւնն ու զայրոյթն այնքան մեծ էր, որ նրանց վրէժխնդրութիւնը հասաւ մինչև յանցագործի գերեզմանը. նրա դիակը թաղվեց գերեզմանի անարգաբար ոտների մէջ դրված։ Բոլոր նրա ստացուածքը պետութիւնը գրաւեց, իսկ պա-

լատը տրվեց մատնիչներին ընծայ։ Տաս տարի յետոյ նրա նկարը ջնջեցին դօժերի շարքից և տեղը նկարեցին մի սև քօղ այն արձանագրութեամբ, որ կայ մինչև այսօր։ Մինչև իսկ նրա մահվան վճիռը չը գրվեց տաճկի խորհրդի արձանագրութիւնների մատեանում. այդ վճռի տեղ կարդացվում են միայն հետևեալ երկու բառը՝ «Non scribatur» («չի գրվելու»)։


Ասացի, որ ամենից աւելի այս սև քօղն է ուշադրութիւն գրաւում դահլիճում։ Գլխատված դօժի թշնամիները այս սև քօղով աւելի մեծ ծառայութիւն են մատուցել իրանց ատելի մարդուն. և ճշմարիտ, այն անօրինակ խստասրտութիւնը, որի հիմքը ոչ այնքան հասարակական չարժառիթներն են եղել, որքան դասակարգային չահերը, զայրացնում է մարդու. թւում է, թէ բռնակալների ամբողջ չարքի մէջ այդ սև քօղը ծածկում է մի նահատակի յուզիչ պատկեր։ Բայրօնը չատ սիրուն է արտայայտել այցելուի այդ զգացմունքը իր «Մարինօ Ֆալիէրօ» դրամայի մէջ՝ «Իմ անուան վրա ձգված այս սև քօղը,—ասում է դօժը մահից առաջ,—որ իբր թէ պիտի ծածկի իմ դէմքը, աւելի աչքեր կը գրաւի, քան ժողովրդի բռնակալների հազար պատկերներ, կտաւի վրա փռված ճոխ զգեստներով»։

Մեծ խորհրդի դահլիճից դէպի զանազան կողմեր իբար մէջ բացվում են բազմաթիւ մեծ ու փոքր այլ դահլիճներ, որոնք հանրապետական կառավարութեան զանազան մասերի գործառնութեան

են յատկացված եղել։ Բոլոր այդ սենեակների պատերն ու առաստաղը զարդարված են վերածննդեան դարի իտալական մեծ վարպետների, ինչպէս Պօլ Վերօնեզի, Տինտէրետտօի, կրտսեր Պալմայի, Տիցիանի, Բօնիֆացիօսի և ուրիշ չատ չատերի նկարներով, որոնց մէջ կան բազմաթիւ գլուխգործոցներ։ Այստեղ աչքի է ընկնում վերածննդեան դարի այն սենդոտ և տակաւին անորոշ սահմանների մէջ յեղյեղվող գեղարուեստը, որ յորդացած գետի պէս ընթանում է մերթ ափերից դուրս թափվելով, մերթ կատաղաբար ու յախուռն մի որոշ, յարմարաւոր հուն վնտրելով. բայց միչտ հսկայ՝ իր գալարումներով և գեղեցիկ՝ իր անորոշ ծփանքներով։

Միջնադարեան խաւարից ազատված և վիզը ծուռ ու փայտեայ ձեռներով ու ոտներով սրբերի գեղարուեստից ձանձրացած միտքն է այս, որ առաջին անգամ դուրս է ընկել լոյս աչխարհ և վազում է հև ի հև դէպի ամեն ինչ, որ գրաւում է։ Եւ հինը և նորը, կլասսիկ պիցարանութիւնն ու քրիստոնէութիւնը, բիբլիական սրբերն ու հին դիւցազները, Մովսէսն ու Հերկուլեսը, Աստուածածինն ու Վեներան, միասիկ մարտիրոսներն ու էրօտիկ պատկերներն իրար են խառնված և ստեղծվել է մի անցողական չրջան։

Այսպէս, օտար դեսպանների ընդունելութեան դալիճում (Anticollegio) Պօլ Վերօնեզի մի չքնաղ գեօլրը կայ, «Եւրօպայի առևանգվելը Զևսից». անանձնացած աստուածը մեզի քնքչութեամբ



ԴՕԺԵՐՐ ՄԱՐՄԱՐԵ ՊԱԼԱՏԻ (ՎԵՆԵՏԻԿ)
(Երես 51)

պառկել է խոտերի վրա, թոյլ տալով գեղեցկուհուն նստել իր մէջքին, և մի և նոյն ժամանակ պարանոցը յետ ծռած նայում է, թէ ինչպէս յաւերժահարսը տեղաւորվում է, ինչպէս նաժիշտները պահում են նրան ծաղկի դիրքեանդներով. կենդանու այդ դիրքը զարմանալի է, չրթունքներն այնքան պաղչոտ են, կրքի այնպիսի զօրեղ արտայայտութիւն կայ այդ անասնական դնչի վրա, աչքերն այն աստիճան բորբորիտ փայլ ունեն, որ մարդ ամեն ինչ մոռացած նայում է միմիայն եզան այդ զարմանալի գլխին, որ, կատարեալ անասուն մնալով հանդերձ, մի ինչ որ տարօրինակ հանելուկ, մի գերմարդկային գաղտնիք ունի թաղցրած իր արտաքին անբանութեան տակ։ Այդ նկարի կողքին է «Յակոբ վերադառնում է Քանաան»...

Մտնում ենք այժմ Վենետիկի տերահռչակ Տասնի խորհրդարանը (Consiglio dei dieci), գոժերի պալատի ամենատխուր պատմութիւն ունեցող մասերից մէկը, որի անունը կապված է այնքան մութ դարերի, գաղտնի սպանութիւնների, բանտային տանջանքների, արդար դատապարտութիւնների հետ։ X-ի խորհուրդը աղնուական օլիգարխիայի վրէժխնդրութեան գործիքն էր, ուղղված բուն ժողովրդական իրաւունքների, ժողովրդական չարժման և նրա ամբակավար պարագլուխների դէմ։ Դասակարգային կամայականութիւն, այժի անիրաւութիւնը մարմնացնող հաստատութիւն էր այդ, նման բոլոր այն հաստատութիւններին, որով բռնակալներն ամեն երկրում, ամեն

ժամանակում աչխատել են պահպանել իրանց զա-
զիր սիրապետութիւնը:

Այս խորհուրդը կազմակերպվեց XIV դարի
սկզբում, երբ serrata օրէնքով իր իրաւունքներից
խափան զրկված ժողովուրդը երկու անգամ փորձ
փորձեց խորտակել ազնուականների օլիգարխիան,
բայց երկու անգամն էլ անաջող, և նրա պարա-
զլուխները Մարկո Բոկկոնիո (1300-ին) և Բաժամոնտ
Տիէպոլո (1310-ին) իրանց ընկերներով զոհ գնացին
ազնուականների կատաղութեանը, պատմական
սիւների վրա կախաղան բարձրանալով: Քաղաքական
յանցանքները քննելու և պետական կարգերը պաչ-
պանելու համար կազմակերպված այս խորհուրդը
կամաց-կամաց զարձաւ սարսափելի ոչ միայն ժո-
ղովրդի, այլ և զօժերի համար. լրտեսների, զաղտ-
նի զրուխիւնների, փիչերային զատերի լուռ սոս-
կումը իջաւ քաղաքի վրա և հանրապետութեան
անունը պղծվեց բազմաթիւ ոճիրներով: Պատերի
վրա զեռ ցայց են տալիս այն բացուածքները, որ-
տեղ զաղտնի մատնութեան թղթերը ձգվում էին
առիւծների բերանը և անմեղներին կորցնում: Առ-
իւծները չարգվեցին 1797 թ-ին Նապոլէօնի հրա-
մանով, բայց բացուածքը զեռ մնում է և նայում
է այցելուին ինչպէս մահվան աչք: Այնքան դարեր
յետոյ՝ այժմ էլ այս զահլիճը մի ճնշող տպաւորու-
թիւն է զործ զնում. թւում է, թէ նրա մթնո-
լորտում, այդ նկարների տակ, սողում է ոճիրը և
մի զաղտնի աչք նայում է քեզ անկիւնից, և այդ
բոլորն անչուչտ նրա համար, որ այդ սև պատ-

մութիւնը մնացող զարերի հետ զեռ լիպենդա չէ
զարձել...

Այս զահլիճում էլ նկարների սիւժեաը ներկա-
յացնում է մի տեսակ խառնուրդ հնի և նորի. ա-
լեւտարանի մոգերն ու հռոմէական Մարսը, պատ-
պերն ու կայսրները իրար հետ են, իրար կողքի.
Պօլ Վերոնեզի երկու աննման զործերի ընդօրինա-
կումը կայ այստեղ, մեկը մի հրաչալի իւնօնա, ո-
րի իսկականը զանվում է Բրիւսէլում, և միւսը՝
Իւպիտերը, որ կայծակնահար է անում չորս ոճիր-
ները, X-ի խորհրդի իմաստուն քննութեամբ բաց-
ված. աչխարհը չատ քիչ բան կը կորցներ, եթէ
Իւպիտերը կայծակնահար անէր հէնց աչխարհի բո-
լոր X-երի խորհուրդները...

Այլաբանական նկարներից՝ իր պատմական նը-
չանակութեան պատճառով առանձին յիչատակու-
թեան արժանի է Տիէպոլոյի «Վենետիկի և Նեպ-
տունի ամուսնութիւնը» չորս զանանի զահլիճում:
Ամենայն տարի հանրապետութիւնը մեծ չքով կա-
տարում էր այդ անօրինակ ամուսնութեան տօնը:
Սանից չքով կատարվեց 1177-ին, երբ հաչտվե-
լու համար Վենետիկ էին եկել պապ Ալեքսանդրը
և Բարբարոսա կայսրը: Ամենքը թափորով զի-
մեցին Լիդո կղզին. այնտեղ պապը յանձնեց զօժ
Սեբաստին Զիանին մի մատանի այս խոսքերով՝
«Ա՛ռ, ով զօժ, այս մատանին, որպէս մի կապ, որ
պիտի պահի ծովը Վենետիկի իչխանութեան ներ-
քոյ, այս մատանիքով կը հարսնացնես ծովը, և
թող յաջորդ սերունդներն իմանան, որ Վենետի-

կի զէնքը իչխել է ալիքների վրա և թող ծովը հըպատակվի այդ իչխանութեան ինչպէս կինն իր ամուսնուն»։ Պատրիարքը օրհնեց մատանին և դաժը ձգեց այն՝ ծովի մէջ, ասելով՝ «Ծով, մենք քեզ հարսնացնում ենք ի նչան մեր կատարեալ և յաւիտեան իչխանութեան»։ Ահա այս ծօնն է, որ այնպէս սիրուն կերպով պատկերացրել է Տիէպօլօն մի այլաբանական նկարով։

Ես զանց եմ անում միւս ոչ պակաս հետաքրքրքիր նկարները, կասեմ միայն, որ ամեն կողմում աչքի է ընկնում վերածնութեան դարի նկարչութեան առանձնայատկութիւններից գլխաւորը՝ սիւժէտների ընտրութեան մէջ իչխող այդ բացարձակ քմահաճոյքը, որ յատուկ է անցողական չրջաններին։ Այդ նկարների մէջ ոչինչ չի խնայված վարպետների կողմից, որպէս զի մերկ մարմինների փարթամութեան վրա գալարվող կոր գծերը հեչտագրգիռ լինեն. թեւում է, թէ վերածնութեան դարի նկարիչը մի առանձին հաճոյք է զգացել այդ չարժուն, գալարուն, թարմ մարմինների առաջ, որոնք այնպէս համայիչ խորհրդաւորութեամբ լողում են սպիտակ չամանդաղի մէջ և այս միջնորտը դարձնում մերկ ու դրգռիչ։ Ջուտ կրօնական սիւժէտներն անգամ, ինչպէս մարտիրոս կանայք, նկարված են որպէս յունական կրքոտ դիցուհիներ իրանց կանացի մարմինների դրաւչութեան ամբողջ փայլով։

VIII

Դօժների պալատի այն մասը, որ ամենից աւելի խորհրդաւոր է և ամենախոր հոգեկան ցնցումն է պատճառում այցելուին,—ներքին յարկում գետնի վրված պատմական բանտն է «Հառաչանքի կամուրջով»։

Այս բանտը հռչակված է ոչ այնքան սովորականն, որքան քաղաքական յանցաւորների տխուր պատմութեամբ, անօրինակ տանջանքներով։ Վենետիկում, երբ իչխող օլիգարխիան ժողովրդից կտրվեց և նրա իրաւունքները ոտի տակ տրորեց, բանտերը լցվեցին քաղաքական յանցաւորներով, ինչպէս լինում է ամեն տեղ, ուր տիրում է բռնակալութիւնը։ Շվէյցարիայում երբեմն բանտի վրա սպիտակ դրօչակ են բարձրացնում, յայտարարելով, թէ ոչ մի յանցաւոր չը կայ. Թիւրքիայում անթիւ բանտերում տառապող դժբաղդներին տեղ չը կայ։

Դօժների պալատի երկրորդ յարկի պատչգամբի վրա բացված մի փոքրիկ դուռ է այդ բանակ մուտքը։ Դուռը բացվելուն պէս՝ խաւար միջանցքից մի սառն հով է զարկում մարդու դէմքին իր խոնաւ չնչով. ապա սանդուխները աստիճանաբար

իջնում են ցած դէպի աւելի և աւելի թանձրացող խաւերը։ Այստեղ լոյս չէ թափանցում և ոչ մի կողմից. վերևդմանական մռայլ է ու քար լռութիւն. տեղ տեղ դրված են սլլալան ճրագներ, որոնք հազիւ լուսաւորում են հրեշների երախի նմանող մռայլ խորչերը։ Նեղ ու ցածր նրբանցքների քարէ կամարների տակ չնչել չի լինում. աջ ու ձախ բացվում են նեղլիկ դռներ դէպի մութ խոռոչները, որոնք կոչվում են Pozzi—ջրհոր։ Այս անունը միայն բաւական է ցոյց տալու համար, թէ ինչ են եղել այդ բնակը։ Սրանից մէկին մանաւանդ, որ կոչվում է Fornetto—«փոքրիկ հնոց», անկարելի է նայել առանց սարսափի. ասում են, որ այնտեղ կատարվել են անլսելի ոճիրներ բանտարկեալների վրայ։ Անհնար է առանց սարսափի դլուխ ներս տանել այդ գնդանների դռներից. մութ է, բան չէ երևում, վառում ես մի լուցկի՝ մարում է, վառում ես երկրորդը՝ աչքիդ ներկայանում է մի քարաչէն խոռոչ, հատ ու զանգուածային պատերով, որոնք իրանց ամրութեամբ մահվան անյուսութիւնից են խօսում։ Եւ այդ պատերը ճչմարիտ որ համր չեն, նրանց վրա տեղ տեղ երևում են փորագրված անուններ, արձանագրութիւններ, մի դժբաղդի անէծք, մի անյոյս բողոք. դահիճները վաղուց անյայտացել են, զոհերը դեռ մրմնջում են յաւից՝ մութ կամարների տակ. ահա մի նմուշ, որ IX-րդ գնդանի պատի վրա է՝

«Թող Աստուած պաշտպանի ինձ իմ բարեկա-

մից, որին հաւատում եմ. ինքս կարող եմ պաշտպանվել իմ թշնամուց, որին չեմ հաւատում»։

Այս գնդանին մօտիկ ցոյց են տալիս մի ուրիշը, ուր, ինչպէս ասում են, քաղաքական յանցաւորներին խեղդում էին մեռաքէ կապով։

Մեր առաջնորդն իջնում է անդադար, և մենք հետևում ենք նրա ճրագի երերուն լոյսին, որ կարծես այս խաւարից փախչում է դուրս։ Քանի ցածանում ենք, օդն այնքան սառն ու խոնաւ է դառնում. քարէ կամարներն աւելի և աւելի մուգ են, յատակը նամանում է և մարդ զգում է պաղ գաղջութիւնը իր ոտների տակ։ Ջրանցքը մօտ է. բանտը ջրի մակերևոյթին հաւասար է և տեղ տեղ նրանից էլ ցած։

Ահա այն դուռը, որից դուրս էին տանում բանտում խեղդամահ եղածների դիակները, ահա պատի տակ երկու փոքրիկ ծակ, որոնցից, ասում են, պլոատվածների արիւնն է հոսել ներքև։ Ո՛րքան ոճիրներ են կատարվել այս լուռ ու խոնաւ կամարների տակ, որքան հառաչանք է լսվել, որքան արցունք ու արիւն հոսել այստեղ։ Տանի խորհրդի հարցաքննական ամենաստոր ական եղանակը տանջանքներով խոստովանութիւն կորզելն է եղել մեղաւոր, թէ անմեղ բանտարկեալներից և պետական ինքվիզիցիան նրա տրամադրութեան տակ է դրել այս գնդաններն իրանց արգելաններով, պարաններով, օղերով, չիկացած չամիւրներով, դահիճներով։ Այդ բոլորը այժմ անյայտացել են, բայց մարդ զգում է դեռ նրանց ներկայութիւնը. թեև

է, թէ դեռ լավում են հառաչանքները, թէ պատերը ճչում են հին ոճիրների մասին...

«Ճշմարիտ է, բանտում տանջում էին,—վկայում է մի պատմիչ,—բայց նախ քան տանջելը բժշկական քննութեան էին ենթարկում զոհերին՝ իմանալու համար, թէ նրանք կարող են տանել տանջանքները: Մի եղբայրութիւն կար, որ խնամում էր բանտի վիրաւորներին ու հիւանդներին»: Այս փաստերը մէջ են բերում իբրև մեղմացուցիչ հանգամանքներ կառավարչական բարբարոսութեան, բայց որքան ցինիզմ կայ այս տողերի մէջ...

Դէպքեր են եղել, երբ այս զարհուրելի բանտում մէկին խեղդամահ են արել դժոխային տանջանքներով, և տարիներ, նոյն իսկ ամիսներ յետոյ նրա անմեղութիւնը յայտնվել է: Այսպիսի դէպքերից ամենատարածականը Անտօնիօ Ցասկարինիի դատապարտութիւնն ու մահն է: Այս դըժբաղդը տոհմական աղնուականի զաւակ էր և սենատոր. 1616-ին իր անձնական թշնամին սեղադրեց նրան պետական գաղտնիքներ օտարներին վաճառելու մէջ: Չը նայելով նրա բազմամեայ անձնուէր ծառայութեանը, նրա անբիծ անցեալին, նրան բանտարկեցին, դատեցին ու դատապարտեցին և բանտում խեղդելուց յետոյ՝ նրա դիակը մի ոտքից քաշ արեցին հրապարակի վրա կախաղանի սիւներից: Հազիւ մահվան պատիժը կատարված էր, երբ լուր տարածվեց, թէ Ցասկարինին անմեղ էր: Սուտ մեղադրանքի հեղինակը բռնվեց, խոստովանեց իր ոճիրը և նոյնպէս կախվեց. դո-

ծածված զարհուրելի անարդարութիւնը մեղմելու համար մեծ խորհուրդը 1623-ին հրատարակեց Ցասկարինիի անմեղութեան վճիռը, հրամայեց նրա դերեզմանը բանալ և դիակը նորից թաղել հանդիսաւոր չքով և նրան արձան կանգնեցնել: Ցայտնի չէ միայն, թէ ինչ էին զգում այդ ժամանակ խեղճ Ցասկարինիի ոսկորները...

Փոքր է համարվել այս բանտը, թէ մի այլ պատճառով, միայն հանրապետութիւնը հարկ է տեսել 1589-ին կառուցանել մի երկրորդ բանտային շինութիւն, առաջինի դէմ ու դէմ, ջրանցքի հակառակ ափին, որ այժմ էլ ծառայում է իբրև քաղաքային բանտ: Այս հին և նոր բանտերը միանում են իրար հետ հռչակաւոր «Հառաչանքի կամուրջով», որ ձգված է ջրանցքի վրա մօտ 7—8 մետր բարձրութիւնից:

Այս կամուրջը արտաքուստ նման է մի հին դամբարանի, որ չը գիտես ինչու է կախվել ջրերի վրա, իսկ ներքուստ նա ոչ այլ ինչ է, եթէ ոչ քարէ կամարներով մի նրբանցք, որ միացնում է նոր բանտը դօժերի պալատին: Դէպի ծովը նայող կողմում նրա պատի վրա չինված են փոքրիկ վանդակապատ լուսամուտներ, որտեղից կարելի է նայել առանց երևալու: Այս լուսամուտների առաջ թոյլ էր տրվում դատապարտեալներին կանգնել մի րոպէ և մահից առաջ վերջին հայեացք ձգել վենետիկի ու Ադրիատիկ ծովի վրա և վերջին հառաչանքն արձակել աշխարհից բաժանուելու համար.

ահա թէ ինչու նա կոչվում է «Հառաչանքի կամուրջ»։

Բանտը առհասարակ չարիք է, երբեմն անհրաժեշտ չարիք, թող այդպէս լինի, բայց երբ նա չինված է մարդկանց բնակարանների տակ, երբ նրա վերևում, մի յարկ բարձր, մարդիկ ապրում են, շրջում են, զուարճանում և կեանք վայելում հանդստութեամբ, լաւ իմանալով, որ իրանց ոտների տակ լսվում են ամեն րոպէ հոգևարքի նըվիւոյներ, հառաչանք ու անէծք, որ գոհերը չանդուում են քարէ կամարները,—այն ժամանակ երևւոյթը դառնում է կրկնակի սոսկալի։ Ով կարող է իր ազատ կամքով ապրել մի այդպիսի դժոխքի վերին յարկում առանց ամլնչվելու, առանց խըղճահարութեան, նրան համարձակ կարելի է ցած բերել և փակել սոսրին յարկում իրրև ոճրագործ։ Ահա այն մարերը, որոնք ակամայ պաչարում են այցելուի գլուխը, երբ նա դժոխքի պալատի չքնղ կազմուածքը, գեղարուեստական աննման զարդերը, քանդակները, արձանները, նկարները դիտելուց յետոյ իջնում է ցած և տեսնում է «Հառաչանքի կամուրջը» և այս զարհուրելի բանտը, որի վրա ամբողջ դարեր Վենետիկի հանրապետական անուանված կառավարութիւնը, իր մեծ խորհրդով, իր ինքվիզիտօրներով, իր գուբսով դարձել է արդարութեան և ճշմարտութեան անունով։

Զարմանալի չէ, որ 1797-ին այդտեղ կրկնվեց Բաստիլի պատմութիւնը։ Երևի այդ թւին լաւ հասաւ, թէ գիներալ Բօնապարտ հանրապետական

Ֆրանսիայի անունից խաղում է Վենետիկի վրա. մեծ յեղափոխութեան հովերով պատրաստված ժողովուրդը ոտքի կանգնեց իր սեփական կառավարութեան դէմ, կազմակերպվեց նոր, դեմօկրատ կառավարութիւն, վանքերը, եկեղեցիներն ու միաբանութիւնները կողոպտվեցին և նոյն թւի յունիսին 4-ին, կատաղած ամբոխը ներս խուժեց ասելի բանակը, քանդեց հռչակաւոր Pozzi-ները, արձակեց բանտարկեալներին, վրերց այն քարէ առիւծները, որոնց բերանում ձգվում էին մատնութեան թղթերը, դոգեական պալատը կողոպտեց, դուրս հանեց այնտեղից հռչակաւոր ոսկէ օրինադիրքը—Libro d'oro, դոգեական պատուանշանները, տասնի խորհրդի և ինքվիզիտօրների արխիվը և այս բոլորը այրեց ս. Մարկոսի հրապարակի վրա ազատութեան ծառի տակ, ուր խմբված ժողովուրդը պարում, ուրախանում էր, իր ցնծութիւնն էր արտայայտում, որ վերջապէս կարողացաւ ազատվել ամբողջ դարեր իր մէջքին ծանրացած մի բուռն պարազիտների լծից։

Հին կառավարութիւնն իր բէժիմով, իր բանտով այնքան զզուելի էր դարձել ժողովրդին, որ վերջինս իր վրէժխնդրութեան մէջ մոռացել էր անգամ, թէ սեփական կառավարութիւնն է խորտակում՝ Ֆրանսիայի դիրքն ընկնելու համար։ Օտարի լուծը գերադասվում էր սեփական ինքվիզիտօրների լծից։

Ո՞վ էր մեղաւորը, ով էր սեփականը ասելի դարձրել։

IX

Օտարականը, Վենետիկ հասնելով, իջևանում է հիբրանոցի վերածած մի հին պալատում, ուր նրա տրամադրութեան տակ են ժամանակակից ճոխ կեանքի ամենանուրբ պահանջներին բաւականութիւն տուող ամենատեսակ յարմարութիւններ: Սակայ նա վերցնում է ուղեցոյց դրքոյկը, իջնում է դռանը սպասող չքեղ գոնդոլի մէջ և շրջում է քաղաքը: Ինչ ասել կուզի, որ ոչ մի ուղեցոյց կազմող, որ անշուշտ վենետիկցի է, այնքան միամիտ չի լինի, որ պալատներից, թանգարաններից, եկեղեցիներից և այլ հետաքրքիր չէնքերից դուրս՝ ուրիշ բան յիշատակի իր դրքում, և ճանապարհորդը այդ ուղեցոյցով դիտում է միայն այս դարմանալի քաղաքի աքանչելիքները, գեղեցկութիւնները: Բաւական է միայն անցնել մեծ ջրանցքով, դուրս գալ ս. Մարկոսի հրապարակը՝ Վենետիկն այլ ևս յաւիտեան չը մոռանալու համար. էլ ինչ զարմանք, որ օտարականը հեռացած է հեռանում Վենետիկից և գնում է աչխարհում տարածելու հինաւուրց քաղաքի հռչակը:

Պատկերի միւս կողմը՝ Վենետիկի այս հրաշալիքների արտաքին փայլն, այս քանդակաւոր մարմարների տակ թաղնված ծայրայեղ խեղճութիւնն է, որ երբեմն դուրս է սողում ջրանցքների

տամուկ խաւարից՝ գունատ ու դողդոջուն, չարժվում է այն ոսկեզօծ ալիքների վրա և խախունջներ որսում, երերվում է հարուստ հիբրանոցների դրռների, լուսամուտների առաջ, փովում է պալատների աստիճանների վրա և իր երկրի արևի տակ՝ իր տեղը և իր սիրուն ջրանցքների ափին, իր փոքրիկ անկիւնն է խնդրում: Ծայրայեղ փարթամութիւնն ու ծայրայեղ խեղճութիւնն այստեղ կողք կողքի են ընթանում, առաջինը՝ վայելքն ու պերճութիւնը՝ օտարինն է մեծ մասամբ, երկրորդը՝ այս հիւծող աղքատութիւնը, տեղական է, պատկանում է իրան Վենետիկին, նրա ողորմելի զաւակներին: Վենետիկին իսկապէս ճանաչելու համար պէտք չէ չարունակ գոնդոլով շրջել և միմիայն պալատներն ու եկեղեցիները այցելել, կան նաև կամուրջներով իրար միացած, ցամաք փողոցներ՝ նեղ ու ոլորուն, կեղտոտ ու հոտած. ահա այդ փողոցները պէտք է շրջել ոտքով, պէտք է ներս մտնել բակերը, տները և տեսնել, թէ որ աստիճան նողկալի է այդ ամենը: Փողոցներ կան, ուր երկու հոգի իրար հանդիպած ժամանակ մէկը պատին պիտի քսուի միւսին ճանապարհ տալու համար. այդ բաւական չէ, երկու կողմից էլ տները բարձրանում են վեր-վեր և կատարում աւելի մօտենում իրար իրանց վառարանների ծխնելոյզների դուրս ցցած մասերով և այսպիսով կազմվում է մի հոտած, խաւար նրբանցք. այսպիսի փողոցներում լուսամուտներ կան դէմ առ դէմ՝ այնքան մօտիկ իրար, որ մէկից կարելի

է համարձակ ցատկել միւսի մէջ: Այս խուլ անկիւններում այնպիսի հոտած, ողբալի տներ կան, որոնք գարեր առաջ են չինվել, այնպիսի նկուղներ, դեռնափորներ, գարշահոտ բներ, որ մարդ ղղուանքով ու երկիւղով է ներս նայում, և սակայն այդ տեղերում մարդիկ են ապրում, վենետիկեան փարթամ, հզօր հանրապետութեան զաւակներ, միացած Իտալիայի քաղաքացիներ:

Ես մի այնպիսի ընտանիք տեսայ այստեղ, որ իր անօրինակ խեղճութեամբ յիշեցնում էր հայ գաղթականներին նրանց նոր հաստած ժամանակ. դա մի ողբալի կարաւան էր, հայր մայր և մի տաս տարեկան աղայ, երեքն էլ վախ, կեղտոտ, թըչուառ, ինչ որ ծռմռուած դէմքերով. այդ բաւական չէ, սրանցից իւրաքանչիւրն էլ գրկած տանում էր մի-մի մուժ, գղղած զանգուած՝ կմախք դարձած, հիւծած մի-մի երեխայ, և այս բոլոր կենդանի դիակները առանց յուղարկաւորների անցնում էին ս. Մարկոսի հրապարակով, մարմարէ պալատների առաջից, կուբացած սուրբերի հովանու տակից, ոսկեզօծ խաչերի մօտից, անցնում էին դանդաղ, ցաւոտ չարժումներով, ողորմութիւն չէին խնդրում, այլ քայլում էին սգի հանդիսաւորութեամբ. ոչ ոք չը նայեց նրանց,—երևի այդ սովորական էր—և ցաւի այդ փոքրիկ կարաւանը իր զարհուրելի բեռով դնաց ծածկվելու ողորմելի վաղոյնների անյայտութեան մէջ...

Երեկոները կամ ճաշին պէտք է մի բօսէ մըտնել աղքատ թաղերի էժան ճաշարանները. դա վե-

րին աստիճանի հետաքրքիր է և բնորոշ: Միս չը կայ, այլ կան տեսակ տեսակ ծովային կենդանիներ, որոնցից մի քանիսի տեսքն անգամ անսովոր մարդուն սրտխառնոց է պատճառում. ինչպէս երևում է, վենետիկցի ձկնորսը իր ցանցի մէջ ընկած կենդանիների վերաբերմամբ մի հատիկ միայն սկզբունք ունի, այդ այն է, թէ ինչ որ կենդանի է, չարժվում է, անպատճառ պիտի ուտվի: Մանր բլօճներից սկսած մինչև մեծ ձկները, խըխունչները, տեսակ-տեսակ խեցգետիններ՝ տապակած են ով պիտէ ինչ իւղով մեծամեծ պղնձեայ տաջերի մէջ և չարած են առանձին-առանձին, երեսի տարբեր գներով: Ներս են մտնում մանր երեխաներ, կանայք, կռացած պառաւներ, ամենքն էլ խեղճ ու կեղտոտ, և մեկնում են իրանց ձեռքի մի քանի սուն. խոհարարը արագ-արագ վերցնում է ձեռքովն փած կենդանիներից, փաթաթում թղթի մէջ և տալիս այցելուին, մի ուրիշը նրա կողքին բարակ թելով կարում է սիմինդրի հացից չերտեր և յանձնում է գնողներին. ահա վենետիկցի ժողովրդի կերածը: Հոչակաւոր մակարօնին, որ մեծ քանակութեամբ պատրաստվում է հէնց Վենետիկում, այն էլ անմատչելի է այստեղի աղքատ դասակարգին:

Տնտեսական ձախող պայմաններից ծագում առած այս խեղճութիւնը ժամանակի ընթացքում վենետիկի ժողովրդի մէջ առաջ է բերել մի քանի վերին աստիճանի անհամակրելի գծեր, որոնք քաղաքակրթ Եւրօպայում անհասկանալի են: Սեռարական այնպիսի բարքեր են ստեղծված, որոնք

մեր երկրի չարչի վաճառականներին կարող են զարմացնել. անպայման խաբէութիւնն այստեղ առևտրի հիմունք է կազմում: Ձը կայ ապրանք, որ ձեզ վաճառեն առաջին դնով. եթէ 5 ֆրանկ ասեն, անպատճառ կը տան $2^1/_2$—3 ֆրանկով, և եթէ անծանօթ էք, ձեղնից կը գ՚ղջեն՝ որքան կարող են, երբեմն երկու, երեք անգամ աւելի իսկական գնից: Օտարականը չուկայով անցնելիս բաւական է, եթէ հետաքրքրվելով մի ակնարկ ձգի խանութի վիտրինում դրված առարկաների վրա, անմիջապէս մէկ, երկու հոգի դուրս կը գան նրբան ներս հրաւիրելու ամենաատոր ձևերով և կը սկսվի մի կատաղի չարչիական բազար: Եթէ գնից դժգոհ նա դուրս է գնում, ապա սկսում են յետևից կանչել՝ պակասեցնելով կիսով չափ առաջին գինը, ճիշտ մեր երկրի պէս: Փողոցներով հանդիստ անցնելու համար՝ նախ հարկաւոր է թագցնել ուղղեցոյց կարմրակազմ գրքոյկը և հնար եղածին չափ արագ անցնել օտար լինելը ծածկելու համար, թէ չէ անօգուտ և ձանձրալի ծաղրութիւններ են, որ առաջարկում են ամեն կողմից, մէկը՝ ուղղեցոյց է, միւսը՝ չրջուն վաճառական, երրորդը՝ գօնդօլ ունի, ուրիշները՝ հէնց այնպէս մի բան են ուզում:

Լիդոյում՝ մեծ փողոցով անցնելիս մօտիկ ճաշարանի ծառան դուրս վազեց փողոց և ինձ «հրաւիրում էր» նախաճաշի. այսպիսի երևոյթ ամբողջ Եւրոպայում գուցէ միայն Վենետիկումն է հնարաւոր: Երկու բաւական մաքուր հագնված ե-

րեխաները տաք-տաք վիճում էին. ես դիտում էի, որովհետև նրանց լեզուն, շարժումներն ինձ հետաքրքրեցին. հէնց որ տեսան, թէ մի օտարական ուշադրութեամբ նրանց է նայում, վէճը թողեցին, վազեցին դէպի ինձ և մեկնեցին ձեռները, «սօլդ» խնդրելով: Ջրանցքի վրա գնդօլով անցնելիս ես տեսայ, թէ ինչպէս մի 10—12 տարեկան երեխայ մենակ թիակը և ձեռքը մեկնեց գոչելով՝ «սօլդ, սինիօրէ»: Բազմաթիւ մանուկներ հրապարակի վրա ոտաբոբիկ թափառում են, պատկերազարդ բայց նամակներ են վաճառում, նրանք չըրջապատում են օտարականին, առաջարկելով մի քան գնել. եթէ հրաժարվում է, անպատճառ դրամ են խնդրում, կամ ծխախոտ, և համարեա բոլոր մանուկները այստեղ ծխում են. դա սովորական է, ոչ ոք չէ արգելում, մեծերը նոյն իսկ կրակ են տալիս:

Այդ աղքատ մանուկների անտերասիրութիւնը երբեմն հասնում է յանդգնութեան. ես տեսայ մի անգամ, թէ ինչպէս գիւղից քաղաք եկած մի խեղճ քահանայ չը գիտէր ինչպէս ազատել իր պայուսակը մի քանի թափառաշրջիկ երեխաների ձեռքից, որոնք անպատճառ ուզում էին նրան օգնել այդ բեռը տանելու՝ մի քանի սու վաստակելու համար. միայն ոստիկանի միջամտութիւնը փրկեց գիւղական քահանային:

Լիդոյի ծովափին ծովային լողարաններ են և այնտեղ բնականապէս հարուստ օտարականների կենսրօնատեղին է: Աւազոտ ծովափին թափա-

ռում են խխունջներ և այլ ծովային կենդանիներ վաճառող վենետիկցիներ, որոնք առաջարկում են օտարականին հում հում ճաշակել այդ բլօճները: Նրանց հետևում են նաև աղքատ դասի աղջիկներ, ուրախ, ծիծաղկոտ. վերջիններս ձեզ խնդրում են իրանց համար գնել այդ կենդանիներից և, եթէ այդ չնորհն անէք, նրանք ուտում են մեծ ախորժակով և ձեր զղուանքի վրա կուչա կուչա ծիծաղում: Խեղճութիւնը հնարագէտ է. որպիսի միջոցների են դիմում նրանք մի քանի սու ճարելու համար. նրանք խնդրում են օտարականին մի սու ձգել ծովը, որ իրանք կերթան հանելու, ուր և լինի նա: Աղջիկներին ջրի մէջ տեսնել մերկ սրտունքներով ու ազդրներով,—ինչ աւելի մեծ հաճոյք Վենետիկում թափառող հարուստ օտարականի համար, և սուերը ձգվում են ծովի մէջ...

Այստեղ աւազի վրա առաւօտից երեկոյ թափառում են ոտաբոբիկ, կիսամերկ մանուկներ, որոնց զբաղմունքն է ողորմութիւն խնդրել, կամ ծովը ձգած պղնձէ դրամները գտնել հանել ջրից. յաճախ մի քանիսը միանգամից են ծովը նետվում և իրար խեղդում ջրերի մէջ, մինչև որ մէկն ու մէկը աջողեցնում է փախցնել դրամը: Ես երբէք չեմ կարող մոռանալ մի տեսարան. հինգ մեծ ու փոքր երեխաներ չրջապատել էին մի տարիքաւոր հարուստ պարոնի և խնդրում էին սու ձգել ծովը. կենսասէր կօմիկը սաստիկ զուարճանում էր տեսարանով. բայց աւելի հետաքրքիր դարձնելու համար՝ նա աւազի վրա ձեռնափայտով մի փիծ քաշեց, կարգով կանգնացրեց մանուկներին այդ գծով և մի բուռը սուեր ձգեց միաժամանակ աջ ու ձախ. չկշռած մանուկներն իրար խառնվեցին, մէկը դէպի աջ, միւսը դէպի ձախ վազեց, ի վերջոյ իրար վրա ընկան, աշխատելով խլել դրամները. փոքրերը ոտքի տակ մնացին, ճղլվելով, ճչալով, իսկ «ողորմած» պարոնը հեռուից պինդ հռհռում էր իր հանճարեղ գիւտի աջողութեան համար:

Երեխաներից ամենից տրտմվածը մի փոքրիկ սիրունատես, կայտառ արարած էր. նրա գլուխը մի քանի անգամ խառնեցին աւազի հետ, քիթ ու բերանը տրորեցին փոչու մէջ, բայց և այնպէս աջողացրել էր մի սու ճանկել. ամենից չատ այդ մանուկն ինձ հետաքրքրեց. մօտեցայ, խօսեցրի, անունը հարցրի և բաղդի մի տարօրինակ հեգնութեամբ այդ փոչիների մէջ թաւալած, քաղցած, զղված մուրացիկ մանուկը կրում էր իտալական արքայի անունը,—նա կոչվում էր Հումբերտօ. նա այնպէս երջանիկ էր իր սուով, որ չը նայելով իր բաւական խղճալի արտաքինին, հորթի պէս ցատկոտում էր աւազի վրա և պինդ պինդ ծիծաղում, ցոյց տալով իր փոքրիկ ատամների չարքերը: Տանջանքի maximum-ով ձեռք բերած վայելքի այդ minimum-ը, ինչպէս բոլոր դժբաղդներին, նոյնպէս և փոքրիկ Հումբերտօին երջանիկ էր դարձրել. նա ծիծաղում էր սրտանց. ծիծաղում էր նաև դրամ չպրտող վայելչասէր բուրժուան. որքան մեծ տարբերութիւն կար այդ երկու ծիծաղների մէջ:

Ծովին նայեցի. հեռու հեռու հօրիզոնից մեծ

ու փոքր ալիքներն, իրար հրհրելով, գալիս էին դէպի ափերը, դուրս էին ձգվում, լիզում աւազները, ապա յետ գնում քրքիջով՝ թողնելով ափին զանազան կենդանիներ. մանուկները այն էլ էին հաւաքում, բայց էլ չէին խեղդում իրար,—բնութեան տուրքն առատ էր, ասենքն էլ բաժին ունէին, բնութիւնը մայր է, նա հեղնել չը գիտէ, մարդն է դահիճ իր նմաններին, նա է հեղնում խեղճութիւնը։

Վենեսիկում մուրացկանութիւնն այն աստիճան զարգացած է, որ մի քանի պարապմունքներ, որոնք ուրիշ երկիրներում պատուաւոր ձևով հայց վաստակելու միջոց են ծառայում, այստեղ սերտ կերպով միացած են մուրացկանութեան հետ։ Ծաղկավաճառ կինն այստեղ իր փունջը պատուաւոր կերպով չէ առաջարկում, այլ համարձակ մօտենում է և առանց մի բան ասելու՝ ամբացնում է օտարականի կրծքին ու լուռ սպասում է իր տասը սանտիմին։ Գօնդօլավարները, որոնք այստեղի կառապաններն են, հեռուից են կանչում օտարականին. նրանց կոչքին միշտ պատրաստ և նրանց օգնական թափառաշրջիկ մարդկանց մի դասակարգ կայ, որոնք երկար կոթով կեռ երկաթեն ուսերին, կանգնած են ծովափին և օտարականին գօնդօլաները ցոյց տալով, օգնում են նրան նստելու, ապա դվխարիկը մեկնած սպասում են իրանց մի քանի սուին, սրանք էլ համարակիր մետալէ նշան ունեն ուսերին և չը նայելով դրան՝ ասես ողորմութիւն են խնդրում և ոչ վարձ։

Մի մի մուրացկանների խմբեր են այստեղի բնակիչները և ուղեցոյցները, որոնք խօսում են գերմաներէն, անգլիերէն և ֆրանսերէն՝ զանազան աղգերի ճանապարհորդներին ծառայութիւն մատուցանելու համար։ Վարժված աչքեր ունեն հարիւրաւոր մարդկանց մէջ օտարականին որոշելու և նրան իրանց որ և է ծառայութիւնը առաջարկելու համար. նրանք իսկոյն հասկանում են, թէ չը լողող օտարականն ինչ կարիք ունի. եթէ դուք պօստային արկղն էք փնտռում, մէկ էլ կը տեսնէք մէկը ձեր կողքով քայլում է և ձեզ ցոյց է տալիս ձեր փնտռածը պատի վրա և ապա վարձը պահանջում մուրացկանի ձևով։ Եթէ լրջօրէն որ և է տեղեկութիւն էք հարցնում, նա ձեզ կը տանի կը պատացնի հեռաւոր փողոցներ, ճանապարհը դիտմամբ կերկարացնի՝ աւելի դրամ վաստակելու համար։ Անհնարին է մի փողոց հարցնել, մի հաստատութիւն փնտռել առանց մի քանի սու ծախսելու. ում և դիմելու լինէք, իսկոյն նրա կողքին կը յայտնվեն այդ առաջնորդները իրանց խիստ կասկածելի արտաքինով և չանձն կառնեն ձեզ ուղեկցել. փոյթ չէ նոյն իսկ, եթէ ձեր փնտռած փողոցը այնքան մօտիկ է, որ նա մատով կարող է ցոյց տալ և անցնել։

Եւ որչափ կեղտոտ է այստեղի ժողովուրդը. սրանց ճաշարանները, սեղանները, բաժակները երբեմն անտանելի են։ Եթէ այդ նկատում ես, ծառան քեզ հետ համաձայնում է ամենայն առատասրտութեամբ։

—Այս բաժակի ջրից հոտ է գալիս, ասաց մի անգամ ճաշարանի ծառային։

—Այո, պարոն, չատ անպիտան հոտ է գալիս, ասաց նա, հոտոտելով բաժակը, և ցած դրեց ու հեռացա է։

Պէտք եղաւ նորից կանչել նրան և ջուրը փոխել տալ։ Յայտնի ճաշարանում անգամ սեղանի սփռոցներից և անձեռոցիկներից սապոնի հոտ է գալիս։ Մի պանսիօում, ուր ճաշում էին նաև մի քանի ծովային օֆիցէրներ, երբեմն այնպիսի անձեռոցիկներ էին տալիս, որ անհնարին էր չըրթունքներին մօտեցնել առանց զզուանքի. բաժակները հօ անտանելի էին։ Մի քանի անգամ վէնետիկում լուացված սալտակիզէնը հազիւ թէ հապնել կարելի լինի, այն աստիճան գեղնվում են։ Աղքատութիւնն ու կեղտոտութիւնը եղբայրներ են. աղքատ, մչտապէս կարօտ ժողովուրդը մաքուր լինել չէ կարող։

Այս անվերջ մուրացկանութիւնը, խարէութիւնը, չորս կողմում տիրող այս կեղտոտութիւնը բնականապէս զզուանք և զայրոյթ են պատճառում, բայց երբ մարդ մի փոքր աւելի սառն է դատում, այս տխուր երևոյթները դադարում են վրդովեցուցիչ լինելուց և միայն ցաւ են պատճառում։ Ծայրայեղ կարօտութիւնը և ծայրայեղ հարբատութիւնը դէմ առ դէմ կանգնած՝ բնական է, որ մէկը դառնայ ձեռք մեկնող, աղերսող, մուրացող, իսկ միւսը՝ գոռող և արհամարող. իսկ հզօրի, ունևորի մչտական լուծը զարգացնում է խեղճերի

մէջ ամենատարբ տրամադրութիւններ, ամենայնից հակումներ։ Եւ ճշմարիտ, եւրօպական ոչ մի քաղաքում դուք այնքան մուրացիկներ, ձեռք մեկնողներ, խաբեբաներ չը կան, որքան վէնետիկում։ Թւում է, թէ մարդ այստեղ պաշարված է կողոպտողներով, խաբեբաներով, աւազակներով. այստեղի ժողովուրդը նման է մեծ ախտատեղիների մօտ ապրող պորտաբոյծ գիւղական ժողովուրդներին, որոնց աչքը չարունակ ուրիշի ձեռքին է։

Դարերի ընթացքում սովորած նախ ապրել իրանց բռնակալ իշխան ազնուականների ողորմութեամբ, նրանց հովանու տակ, նրանց սեղանի փշրանքներով, այժմ էլ դարձեալ կարօտ, դարձեալ աղքատ, նա նայում է հարուստ ճանապարհորդներին, նրանց է դիմում ամենաանպատիւ միջոցներով իր ողորմելի գոյութիւնը պահպանելու համար։ Մի ժամանակ իր հարստութիւնը, իր աչխատանքի արդիւնքը իր նախկին տէրերի, ձրիակեր ազնուականների ձեռքին էր, այժմ էլ իր ամենամեծ արդիւնաբերութիւնը (ապակեղէնի գործարանները) հարուստ անգլիական ընկերութեան է պատկանում, որ իր ահագին վաճառանոցն ունի ս. Մարկոսի հրապարակի վրա, հանրապետական վէնետիկի հին պալատներից մէկում։ Եւ ժողովուրդը չարունակում է մնալ մուրացիկ, քաղցած։ Դարերի խեղճութեան ու կարօտութեան մէջ այս ժողովուրդը կորցրել է իր արժանապատուութեան հասկացողութիւնը և դարձել է մուրացիկների մի

բանակ, սովորել է մի կերպ գլուխ պահել, քչով չաո քչով բաւականանալ։

Ես յիշում եմ մեր գաղթականների կեանքից մի դէպք, որ դուցէ աւելի քան բնաւորիչ է բոլոր նման երևոյթների համար։ Գաղթականի անունը Սերոբ էր. նա չորս հինգ մանր երեխաներ ունէր. նպաստ էինք բաժանում, չորեր էինք տալիս խիստ ցրտերից պաշտպանվելու համար, բայց որ մէկին,—կարիքը ծով էր, իսկ օգնութիւնը չընչին։ Սերոբին էլ տուինք, ինչ որ հնարաւոր էր, յետոյ ես վշտով իմացայ, որ նա ինձ խաբել է և աւելի է տարել։ Սերոբին կանչեցի և յանդիմանում էի իր արածի համար, և խիստ էի յանդիմանում, որ նա չէ կամեցել հասկանալ, թէ իր խաբէութեան չնորհիւ զրկվում է իր ընկերներից, իր հարևաններից մէկն ու մէկը։ Նա ցաւոտ, կարմրած աչքեր ունէր, որ երբէք վեր չէր բարձրացնում. ես դեռ յիշում եմ այդ խեղճ աչքերը, այդ կախած գլուխը, այդ ջարդած վիճակը։ Նա դառնութեամբ ու համբերութեամբ լսեց իմ բոլոր ծանրը խօսքերը, ապա ձեռքը ճակատին տարաւ, կաւես իր ամօթը ծածկելու համար, և արտասուքից խեղդված ձայնով ասաց,—«Քո ոտաց մեռնիմ, արդար կասես, ամա մենք մեր խեղճութենէ կը խաբենք, մեր ջանին խօշխ»...

Նա իրաւունք ունէր և ես դլխակոր ու ամօթահար մնացի։

X

Ներանք, որոնք պատմութեան էվօլիւցիայի մէջ հերքում են իդէալական դրդիչները և իրերի ընթացքը բացատրում են լոկ չոր մատերիալիզմով, որոնք մարդկութեան կրած բիւրաւոր աբիւնոտ զոհողութիւնների մէջ ոչինչ չեն տեսնում, բայց եթէ սեփական ստամոքսի վուլգար հոգս, թուում է, թէ անդիտանում են այն կատարելապէս իդէալական զգացմունքը, որ կապված է ազատ ու անկախ հայրենիքի գաղափարին, այն աղնիւ գիտակցութիւնը, որ լցնում է անհատների ու ազգի սիրտը, երբ նա իր ուսին էլ չէ զգում մի խորթ ու ծանր ձեռք։ Ասում են, որ այդ աղնիւ, իդէալական համարված զգացմունքն էլ բղխում է նիւթական հաչիւներից, որ ժողովուրդները սեփական և անկախ հայրենիքի գաղափարին են կապել պատմական դառն փորձով իրանց ապահովութեան, իրանց նիւթական երջանկութեան խընդիրը։

Այդպէս է արդեօք. փորձեցէք Թիւրքիայի լուծը թօթափած ժողովուրդներին, օրինակ աղքատ Յունաստանին, նորից իր նախկին տիրոջի գիրկը ձգել, իրապէս կերպարանափոխելով անտեսական պայմանները, փորձեցէք աղքատ Իտալիան վերատին դնել Հաբսբուրգների իշխանութեան տակ։

Ժամանակակից Իտալիան աղքատ է, ժողովուրդը հեծում է ծանր հարկերի տակ, ամեն տարի հազարներով նրա երիտասարդ զաւակները խոյս են տալիս մայր երկրից և ցրվում ամբողջ աշխարհում, բայց որ տանջված, տոված իտալացու մըտքումն անգամ կանցնի, թէ Իտալիայի միութիւնը անտեղի էր, կրած զոհերն անօգուտ, սեփական հայրենիքն անհեթեթութիւն։ Մեղմ ու կարօտ ժողովուրդ՝ նա իր խեղճութեան մէջ հպարտ է իր աղատ հայրենիքով, զոհ է, որ իր սեփական տանը, իր սեփական յարկի տակ, հեռու անհամեստ օտար հայեացքից, չոր հաց է կրծում։ Դէպի չատ բարոյական հատկացողութիւններ անտարբեր այս ժողովուրդը իր հայրենիքի, միացեալ Իտալիայի անունը լսելիս սիրտը թունդ է առնում և աչքերը վառվում են ոգևորութեան կրակով։

Այսօր ճաշի ժամանակ հարցրի իմ հարեւանին, որ նոր էր վերադարձել Թրիեստից, թէ այդ քաղաքի բնակիչները բոլորն էլ իտալացիներ են, թէ աւստրիացիներ էլ կան։ Տանտէրը՝ մի լուռ ու տակաւախօս մարդ, որ մանաւանդ ճաշի ժամանակ չէր սիրում ձայն հանել, առանց սպասելու հարևանիս պատասխանին, յանկարծ մէջ ընկաւ բարձրաձայն բացականչելով՝

—Սի, սի, սինիօրէ, տուտտօ իտալիանօ. (այո. այո, պարոն, բոլորն էլ իտալացիներ են)։

Եւ վերջին այդ երկու բառը—«տուտտօ իտալիանօ»—նա այնպիսի հրճուանքով ու հպարտութեամբ արտասանեց, աչքերն այնպէս վառվեցին,

դէմքը մի այնպիսի անսովոր ոգևորված արտայայտութիւն ստացաւ, որ բոլոր սեղանակիցները զարմացած դարձան դէպի նա, լուռ նայեցին և ապա յանկարծական ծիծաղ բարձրացրին այս սովորաբար սառն իտալացու անսպասելի ոգևորութեան վրա։ Մարդը մի փոքր ճնշվեց, կարմրեց, բայց իրաւունք ունէր ոգևորվելու։ Խօսքը իր հայրենիքի մասին էր և նա հպարտ էր, որ «տուտտօ իտալիանօ»։

Եւ որչափ մարդկային զոհեր եղան, որքան արիւն թափվեց, մինչև որ մեծ Իտալիան բարձրացաւ աւերակների միջից, մինչև որ իրականացան նրա մելամաղձիկ ոգու՝ Լէօպարդիի երազները, մինչև որ հնարաւոր դարձաւ այսօրվայ իտալացու համար բացականչել՝ «տուտտօ իտալիանօ»։

Երբ միջնադարեան բարբարոսների՝ Ալարիքի վեստ-գոթերի և ապա Ատտիլլայի հոների միահամուռ հարուածների տակ Իտալիան ընկաւ խորխորատված ու արիւնաքամ իր յաղթողների ոտների տակ, վենետիկն էր միայն, որ ոչ միայն կարողացաւ, իր ճախճախուտ կղզիների վրա ապաստանած, մի անկախ պետութիւն կազմակերպել, հապա և հանդամանքների մի բացառիկ զուգադիպութեամբ միջնադարեան բաղդերի այն յեղյեղուկ շրջանում իր զօրութիւնը տարածել ամբողջ Միջերկրականի վրա, որպէս մի նոր Կարթագէն և իրաւամբ դարձաւ ծովերի թագուհի։ Իսկ երբ XIX-դ դարի առաջին կէսից համարեա ամբողջ Իտալիան աղատվելով օտարների լծից հետզհետէ

միացաւ Պիեմոնտի թագաւորութեան հետ, Վենետիկն էր միայն, հին Հռովմի մեծութեան ու փառքի նախկին յաջորդը, այդ ծովերի թագուհին, որ չարունակում էր մնալ օտարի տիրապետութեան տակ։

Վենետիկը խորապէս զղում էր այս զարմանալի անախորժնիզմի բոլոր դառնութիւնը, իր վիճակի բոլոր ծանրութիւնը, բայց նրա փորձերը մայր ծնողի դիրկը նետուելու՝ բոլորն էլ անպտուղ անցան 1821 և ապա 1830 թուերին։ Այնուամենայնիւ նա չէր դադարում յուսալ և նրա հայեացքը չարունակ դարձած էր դէպի Պիեմոնտ, ազատ զաղափարների և ասպետ թագաւորների այդ երկիրը։ Ահա թէ ինչու, երբ 1848 թ. Պիեմոնտի կարլ-Ալբերտը կրկին զէնք բարձրացրեց Աւստրիայի դէմ, Վենետիկը մի մարդի պէս ոտքի կանգնեց և տուէլի աւստրիացիներին անմիջապէս հալածեց։ Բայց կարլ-Ալբերտի յոյսերը չիրականացան, նա յաղթուեց Նովարրում, Վենետիկը մնաց աւստրիական ահագին բանակների հանդէպ և անձնատուր լինելու փոխարէն գերագոյն պայքար սկսեց գեներալ Բադեցկու դէմ։ Դանիէլ Մանին, Վենետիկի մեծ հայրենասէրը, մի կրակոտ հանրապետական, զլուխ անցաւ այդ անօրինակ, հերոսական դիմադրութեան, որ ամբողջ չորս ամիս տևեց. վերջ ի վերջոյ պաշարված քաղաքն ընկաւ ծեր ու փորձված Բադեցկու հարուածների տակ, Մանին յուսահատ ու ջարդված փախաւ Ֆրանսիա և մինչև 1857 թիւը, իր մահը, մասնաւոր դասերով էր ապրուստ հայթհայթում։

Վենետիկը կրկին ընկաւ աւստրիական լծի տակ կարճատև և արիւնալուայ ազատութիւնից յետոյ. քնակիչներից ոմանք գաղթեցին, ուրիշները՝ սըրտերն արիւնով լի, մնացին աւեր հայրենիքում աչքերը ցաւով ու յոյսով դէպի Պիեմոնտ դարձրած, որ սակայն նրանց այնպէս դառն յուսախաբութիւն էր պատճառել։ Տարիներ անցան, թշնամու անողոք հարուածների վէրքերը կամաց-կամաց բժշկվեցին, բայց տուէլութիւնը զօրացաւ էլ աւելի, զայրոյթը կուտակեց և յոյսերն աճեցին։

Ահա այդ ժամանակ էր, որ Տէնն այցելեց Վենետիկը։ «Իմ խեղճ հինաւուրց գօնդօլավարը, գըրում է Տէնն, խօսելով ինձ հետ թշուառութեան մասին (Վենետիկի), աւելացնում էր մխիթարական կերպով «Գարիբալդին մի բան կանի»։ Եւ Գարիբալդին «մի բան արեց»... Եթէ այսօր Վենետիկը ժառ է իտալական մեծ հայրենիքի ծոցը, այդ մեծ գործն ստեղծեց այն զարմանալի երրորդութիւնը, որի ձեռքը Գարիբալդին էր, հոգին կաւուրը և գլուխը՝ Վիկտոր Էմմանուէլ։

Սադօվայի վճռական ճակատամարտով 1866-ին Աւստրիան ստիպված եղաւ յետ քաշվել այն երկրներից, որտեղից վաղուց պիտի յետ քաշվէր, եթէ արդարութեան չնչին զգացմունքը բիրտ ոյժին զուգընթաց լինէր, և Վենետիկը, որ բաժին էր ընկել Նապոլէօն III-ին, իբր իր չէզոքութեան վարձ, յանձնվեց Իտալիային Սալֆերինոյի և Նիցցայի փոխարէն։ Նոյն թուի նոյեմբերի 7-ին Վիկտոր Էմմանուէլ Վենետիկ մտաւ միացեալ Իտալիայի փա-

ռաւոր տօնը կատարելու է Վենետիկի ժողովուրդը զրկաբաց ընդունել պատասարար Թագաւորին։

Ահա այս յիշատակելի անցքերին է նուիրված այն վսեմաւոր արձանը, որ կանգնած է Վենետիկի ծովափին և այլաբանօրէն ու պերճախօս կերպով պատմում է դժբաղդ և երջանիկ օրերի պատմութիւնը։ Բարձր պատուանդանի վրա կանգնած է Վիկտոր Էմմանուէլը ձիով և սուսերաւոր. նրանից վար՝ պատուանդանի մի կողմում՝ Վենետիկի թեւաւոր առիւծն է չղթայակապ թաթերով և կատաղաբար կրծում է ժանիքներով երկաթեայ հատ օղակները, մինչդեռ նրա կողքին մի հսկայ կին, որ Վենետիկն է ներկայացնում, կանգնած է պինւորական դիրքով, մի ձեռքին ջարդված դրօշակ, աչքերից չանթեր են ցայտում և ամբողջ դէմքն արտայայտում է զայրոյթ ու յուսահատ կատաղութիւն։ Ներքևում մի վահանի վրա գրված է 1848. դա Վենետիկի ամբողջ ապստամբութիւնն է։ Պատուանդանի հակառակ կողմում նոյն կինն է և նոյն առիւծը, միայն այստեղ կատաղի գազանը փշրել է չղթաները, վիրիտոտ բերանն ու թեւերը բացած՝ նա յարձակողական դիրքի մէջ է, իսկ կինը մի կատարեալ սուր ու համածածան դրօշակ ձեռքին առել մղում է սարսափելի կենդանուն դէպի կռիւ ու կոտորած։ Այստեղ վահանի վրա գրված է 1866։ Դա ներկայացնում է Վենետիկի ազատութիւնը աւստրիական լծից—66 թուին։

Սրանից էլ աւելի գրաւիչ, էլ աւելի խորհրդաւոր է Գաբրիելլիի արձանը հասարակայ պար-

տէզում։ Սև մարմարեայ ժայռեր իրար վրա բարձրանում են վէր վէր, ասպիճանաբար նեղանալով դէպի կատարը։ Հէնց այդ կատարին կանգնած է այն բաղդաւոր մարդը, որ իր աչքով տեսաւ իր հայրենիքի վերածնութիւնը, որ իր ստեղծածն էր և իր փառքը միաժամանակ, այն մարդը, որի անունը կապվեց ազատութեան հետ ամբողջ աշխարհում, նա՝ որ աստուածն է բոլոր ըմբոստների, բոլոր խելագարօրէն մարտնչողների։ Ժայռի կատարին կանգնած է Գարիբալդին իր ամբողջ առնացի հասակով, ձախ ձեռքով սրին և աջով ժայռին յենված, նայում է հեռուն հայեացքի այն խաղաղութեամբ, որ յատուկ է մեծ ու խորհուրդ ոգիներին և ոյժի գիտակցութիւնն ունեցող և իրանց գաղափարի ու գաղի արդարութիւնն ըմբռնող ուժեղ բնաւորութիւններին։ Նրա ոտների տակ, ժայռի վրա, պառկած է բնական մեծութեամբ մի առիւծ, որ մարմնացնում է վերից նայող հերոսի անպրդուելի քաջութիւնն ու վեհութիւնը և կարծես հսկում է նրա թանկագին կեանքի վրա։ Հակառակ կողմում, ժայռի մի խորշի մէջ, մի պինւոր է, մի երիտասարդ կամաւոր, որ հրացանն ուսին սպասում է իր պետի նշանին խառնուրդի մէջ նետվելու համար։ Ժայռի կատարից ցայտում են վճիտ ջրերի ցնցուղներ և մեղմիկ կարկաչով, ժպտաւետ ձոռանքներով ցած են գլորվում, ողողելով մամուռներն ու քարերը, չորս կողմից և ներքևում՝ ժայռերի ստորոտում, կազմում են փոքրիկ աւազան, որ պատում է

արձանի չուրջը, դարձնելով նրան մի ժայռոտ կղզի։ Վարդերն ու մայառնները բուսել են քարե-րի ճեղքերից և պատում են ժայռերը չորս կող-մից։ Ամբողջ պատկերը վեհ է, իդիլլիական և ինչ որ գոռոզ բան ունի իր մէջ. մարդ զգում է իրան ամայի լեռան կրծքին, որի անմատչելի կատարից նայում է ազատութեան մեծ ախոյեանը, հեգնելով այժն ու բռնութիւնը։

Չէ մոռացված նաև Դանիէլ Մանին, հայրենա-սէր տարագիրը, որին չէր վիճակվել տեսնել իր նուիրական իղձերի իրականացումը, որի հերոսա-կան ջանքերն անմիջական արդիւնք չը տուին, բայց մեծապէս նպաստեցին 66-ի դէպքերին։ Պատ-մութեան մէջ ոչ մի կաթիլ արիւն առանց հետե-ւանքի չէ անցնում։ Ազատված Վենետիկը Մանիի և իր կնոջ դիակը Պարիզից տեղափոխեց հայրենի հողի վրա և այժմ ս. Մարկոսի հիւսիսային պատի տակ, սև գրանիտեայ դամբարանի մէջ, հանգչում է հայրենասէրը չորս բրօնզեայ առիւծների մէջքին։

Վենետիկցին, իտալացին պատկառանքով և հպարտութեամբ է նայում այս արձաններին ու դամբարաններին և իրաւունք ունի նա հպարտ լի-նելու, որովհետև այժմ նրանց չնորհիւ «ուուտո իտալիանօ», մինչդեռ սրանից 40—50 տարի առաջ, ինչպէս ասում էր Հիւգօն դիւանագէտների բեր-նից, Իտալիան ազգ չէր, այլ լոկ աշխարհագրա-կան անուն։

XI

Այսօր՝ մայիսեան պայծառ և ծեծաղկոտ եղա-նակով վերջին անգամ այցելեցի ս. Ղազարը և իմ վերջին նամակը Վենետիկից նրան եմ նուիրում։

Կղզին կտրված է մայր ցամաքից և նրան Ազ-րիատիկի ալիքներն են գուրգուրում. կղզու բնակիչ-ները կտրված են աշխարհից և իրանց կրօնական և գիտական խոհերով են ապրում միայն։ Ինչպէս հողի այդ փոքրիկ չերտը կարծես գոռոզ ծովից թողութիւն է հայցում իր գոյութեան համար, ճիշդ նոյնպիսի համեստութեամբ Մխիթարեան միաբանները իրանց տքնութիւններով և բեղմնա-ւոր աշխատանքով լի կեանքի համար անգամ ա-սես ճնշվում են աշխարհի առաջ,—այս է այն տը-պաւորութիւնը, որ գործում է ուշադիր ճանա-պարհորդի վրա իւրաքանչիւր միաբան։

Այստեղ կեանքը պարզ է ու ձանձրալի լինե-լու չափ միակերպ և սակայն այս արտաքին միա-կերպութեան տակ մի չարժուն, յարատև աշխա-տանքով բռնված ներքին գործունէութիւն կայ, որ վախցնում է ձանձրոյթը և որ իր առաջին մղումը ստացել է երկու դար առաջ և ընթանում է՝ ինչ-պէս մի լաւ կազմված և լաւ պահված մեքենայ։ Ինչեր կարող է անել մի լաւ կազմակերպված, ինքնաւար, հաւաքական մարմին, որ ղեկավար ու-

նի մի քանի սերունդների կտակած մեծ տրադիցիաները։

Այս համեստ մարդիկը, որոնց երիտասարդները ծերեր են և ծերերը՝ երիտասարդներ աշխատանքի մէջ, որոնք իրանց անհատականութիւնը հերքելու այդ զարմանալի կորովը ունեն և փառքը հեղնելու վսեմ հպարտութիւնը, այս խեղճ կրօնաւորները, որոնք պիտանականներ են, իրանց անցեալի հօրիզոնի վրա Մխիթարն ու Բագրատունին ունեն, իսկ աչքերի առաջ՝ Ալիշանը. դէպի այդ մեծ դէմքերն են դիմում մի համարեա ինքնաբոյս մղումով, մի տեսակ բնազդով, ուր փառասիրական ոչ մի նչոյլ կարծես դեր չէ խաղում, և ճգտում են, որովհետև այլ կերպ վարվել չեն կարող, ինչպէս որ մեղուն չէ կարող մեղրահիւթը հաւաքել, թռչունը չէ կարող չերգել, ալիքները չեն կարող իրար չը հրմրել։

Իսկապէս սա մի յանդուգն փորձ է իմ կողմից նրանց հոգեբանութեան թէկուզ հեռաւոր ուրուագծերը տալ, որովհետև այս սև հագած մարդիկ մի մի մութ առեղծուածներ են, չեն խօսում իրանց մասին, չեն բաց անում իրանց հոգին, չեն դատաստանում, չեն ուրախանում, չեն ախորժում, չեն հրճվում, որ մատնեն իրանց ներքինը։ Սրանք հարթ, հաւասարակշիռ, անյոյզ բնաւորութիւններ են։ Սրանց ճանաչելու համար պէտք է դուրս տալիներ անցկացնել վանքում, ասպիճանաբար դիտել՝ սկսած այն երկու խիստ կրօնական—պիտական չրջաններից, որոնցով անցնում է իւրաքան-

չիւր միաբան, նախ քան կնդղաւոր խեղճ փիլօնն իր ուսին ձգելը։

Այնտեղ՝ այն երկու դպրոցներում են դարբնվում այս բնաւորութիւնները։ Երեխան ընկնում է այնտեղ 10—12 տարեկան և Մխիթարեան միաբան դառնալու համար պատրաստվում է մինչև իր քառասն տարեկան դառնալը. այնուհետև միայն, ըստ իր կամքի, մնում է կամ հեռանում վանքից, բայց ով որ մնում է, նա լուծվում է ուխտի ամբողջութեան մէջ, դադարում է աչխարհին և իրան պատկանելուց,—զարհուրելի զոհաբերութիւն, որ որքան անախորժնիզմ է այս ժամանակներում, նոյնքան ապշեցուցիչ երևոյթ է և պատկառանք է ազդում, ինչպէս ամեն մի անձնուիրութիւն որ և է մեծ գաղափարի համար։ Ներկայ դէպքում մեծ զոհը բերվում է գիտական—կրթական մեծ միտքի համար,—ուրիչ raison-d'être այդքան խոշոր զոհաբերութեան համար անհասկանալի կը լինէր։

Սրանք ներկայով ապրող մարդիկ չեն. այդ նրանց քիչ է հետաքրքրում. նրանք անցեալն են փորփորում և այդ անցեալի ուսումնասիրութեամբ հեռաւոր ապագան պատրաստում։ Սա մի գործունէութիւն է, որ՝ որքան զարմանալի է իր բնաւորութեամբ, նոյնքան տարօրինակ է իր մեթոդով և որի միակ բացատրութիւնը պիտի փնտրել վանականութեան մէջ։ Այդպէս է կրօնական ազդեցութիւնը. այս աստիճան գործնական, կենսական նպատակ ունեցող ուխտն անգամ աւելի դէպի

Այո՛, քան թէ առաջ է նայում։ Հայ ժողովրդի ժամանակակից կեանքը խորապէս յուզող խնդիրներն անգամ, իբրև եռուն խնդիրներ, որոնք բնականապէս անմասն չեն փոթորկալի կրքերի ազդեցութիւնից, չատ էլ չեն զբաղեցնի Մխիթարեաններին։ Նրանք ասես վախենում են այն բոլորից, ինչ որ ցնցում է, ինչ որ տակն ու վրա է անում. փոթորկի ժամին ծածկվող մարդիկ են, բայց երբ փոթորիկն անցնի, երբ արևը վերստին փայլի, ոչ ոք նրանց պէս չէ կարող ցոյց տալ կայծակի հարուածի տեղը, ոչ ոք նրանց պէս ճիշտ չի իմանայ գոհերի թիւը, այրված տները, ոչ ոք այնպիսի մանրամասնութեամբ չի նկարագրի աշխարհաւեր արհաւիրքը։

Իրանց անդրդուելի դիտական-բարոյական հաստատակամութիւններն ու կարծիքներն ունեն, բայց չեն վիճում, խոյս են տալիս մանաւանդ՝ իրանց դիտական պաշարը փռել խօսակցի առաջ, աւելի ուսանում, քան ուսուցանում են՝ նոյն իսկ այն դէպքում, երբ իրանց դիմացինը ըստ ամենայնի աւելի ցած է կանգնած, քան իրանք։ Միանակաց կեանքի արդիւնք է այդ արդեօք, թէ հաստատութեան. ես տրամադիր եմ կարծելու՝ թէ մէկը և թէ միւսը. համեստ են և՛ իբրև իսկական դիտուններ և իբրև իսկական կրօնաւորներ։ Միակ դէպքը, երբ Մխիթարեան վարդապետը սիրով է բերան բաց անում, այդ այն է, երբ պէտք է պատմել Մխիթարի, Զամչեանի, Աւգերեանի, Բագրատունու, Հիւրմուզի մասին. իրանց համար խօս-

քերով ժլատ այդ մարդիկ պերճախօս են, երբ խօսում են իրանց նախորդների, անցեալ սերունդների առաքինութիւններից ու գործունէութիւնից։ Մարդ հաճոյք է զգում այդ ժամանակ լսել նրանց պատմութիւնները, յիշողութիւնները. յափշտակվում են՝ իրանց հայրերի մեծութեամբ աքանչացող զաւակների պէս։

Այս կղզին իր չինութիւններով, իր պարտէզով, իր միաբանութեամբ՝ մի բան ունի, որ գրաւում է իր խորհրդաւորութեամբ և որ բնաստեղծօրէն դիւթիչ է, մանաւանդ երազող հոգիների համար։ Այս հինաւուրց կամարների տակից ստուերի պէս մեղմով անցնող սև ու պատկերները, այս փոքրիկ սևազգեստ աշակերտները, որոնք, չը գիտես, որտեղից են յայտնվում և ուր ծածկվում, այս սիրուն պարտէզն իր մուգ նոճիներով, դասական պարզութեամբ սաղարթապատ վերանդան, հինաւուրց եղևնիները, որոնք բլրաձև ոստերով զանգակատան հետ ձգվում են դէպի իտալական մշտածիծաղ երկինքը, ծովի ալիքների չընջիւնը գիչեր՝ թէ ցերեկ, այս բոլորը ս. Ղազարի կղզին դարձնում են մի տեսակ լեգենդային, դիւթական վայր։ Չեմ զարմանում, որ Բայրօն, բանաստեղծական այդ մեծ և անհանդիստ ոգին, իր թախծալից, ցաւոտ երազների համար այս մենաստանն ընտրեց իբրև ապաստան։

Առաջին րոպէին՝ թւում է, որ սրանից աւելի բաղդաւոր անկիւն չէ կարող լինել յարատև ապրելու համար և որ միաբանների կեանքը այստեղ

նախանձելի է։ Բայց երբ մարդ օրերով է ապրում այստեղ, երբ մօտիկից զգում է այս ձանձրալի միակերպութիւնը, երբ տեսնում է միաբաններին տաղտուկ ապրուստը, նրանց միօրինակ կեանքը, որ յոյզերի աղբիւր չունի հետաքրքրելու համար, ուր արտաքին աշխարհի աղմկող երևոյթներն իրանց չար ու բարիով չեն գալիս երբէք խռովելու այդ սպանիչ խաղաղութիւնը, ուր կեանքի գոյութեան պայքարը չը կայ, որ մարդկային ճակատագիրը հետաքրքնում է կրքերի բաղխումով, այն ժամանակ մարդ չէ կարողանում մի առանձին յարգանք չը զգալ դէպի այս մարդիկ, որոնց կեանքը անձնազոհութեան և ոչն՝ խաղաղ, առանց ցնցումների, առանց վտանգի, առանց վայելքի անձնազոհութեան մի անվերջ չարք է։

Ես քաղաքից կղզին էի գալիս առաւօտեան ժամի 8-ից յետոյ. այդ ժամանակ վանական կեանքն արդէն իր կատարեալ եռման մէջ էի գտնում. վարդապետներից որը դպրոցում, որը լիցէօնում, որը խմբագրատանը կամ տպարանում, որը սեղանատանն իր գործով զբաղված է. ով որ էլ որոշ պաշտօն չունի՝ վակված է իր խցիկում, կռացած է գրասեղանի վրա, քրքրում է մի հին ձեռագիր կամ եւրօպական մագի մի նոր արտադրութիւն։ Այդ ժամին դժուար է պարապ միաբան ճարել. մարդ ցաւում է նոյն իսկ, երբ դէպի հիւրն ունեցած իրանց քաղաքավարի վերաբերմունքը ստիպում է դրանցից մէկն ու մէկին զոհել իր թանկագին ժամերը, մի բան, որ նրանք անում են

քաղցրութեամբ և առանց դժկամակութեան, չը նայելով, որ հիւրընկալ ունեն։

Հետաքրքիր է մանաւանդ այդ հիւրընկալը։ Այցելուի նաւակը կանգ է առնում վանքի դռանը. իտալացի ծեր դռնապանը վազում է վերև, թրքախօսում է մի դուռ. անմիջապէս մանուկի փութկոտութեամբ դուրս է գալիս մի ծերուկի, ճերմակ մազերը թափթփած պարանոցին, ճերմակ մրրուկը վռված կրծքին, դէմքը խիստ դրաւիչ, կարծես—հին նահապետներից մի բան է մնացել այդ դէմքի, այդ մեծ, սիրուն աչքերի վրա։ Նա կռացած է և այնքան նիհար, որ կարծես վերարկուի մէջ էլ մարմին չունի, այլ մի ստուեր է, որ չարժվում է։ Ըը նայելով իր ծերութեան՝ նա քայլում է արագ, երբեմն իր ընթացքի մէջ օրօրվում է, կարծում ես, թէ հիմա կընկնի, հիմա պատին կը կպչի. բայց ոչ, նա չէ ընկնում, այլ քայլում է չտապով, ցած է իջնում, ձեռքերը խաչաձև կրծքին ծալած՝ ներկայանում է սպասող այցելուին, որպէս մեղադրեալն իր դատաւորին և կարծես նեղողութիւն է խնդրում, որ իր ծերութեան պատճառով չը կարողացաւ աւելի չուտ հասնել նրա սպասին. ապա նա առաջ է ընկնում և սկսվում է այդ օրական ով գիտէ քանի անգամ կրկնվող և վաղուց, շատ վաղուց տարիներ առաջ արդէն ձանձրալի դարձած միակերպ չրջագայութիւնը։ Առանց դժկամակելու, առանց չնչին ձանձրոյթի արտայայտութեան, առանց յոգնածութեան նշոյլ ցոյց տալու, անխոյթ՝ այցելուի տարիքին, դիրքին,

սեռին, մի առաքելական հեզութեամբ մէկիկ-մէկիկ ցոյց է տալիս մեննատանի բոլոր բաժանմունքները, պատմում է, բացատրում է բոլորն՝ ինչ հարկաւոր է, ինչ որ հարցնում են, ինչով հետաքրքրվում են և այն՝ զանազան լեզուներով։

Այցելուն, ի հարկէ, խիստ գոհ է մնում, որ այս տկար, այս կծկված ծերունին կարողանում է նրան բաւականութիւն տալ իր մայրենի լեզուով այսքան և ուրիշ ոչինչ։

Այցելութիւնը վերջանում է, ճանապարհորդը հեռանում է չնորհակալութեամբ, հիացած՝ վանքից, դրատունից, տպարանից, պարտէզից, ամբողջ կղզուց, բայց չատ անգամ չէ էլ իմանում, որ այդ հիւրընկալը, այդ կծկված ծերունին, հայ ժողովրդի սիրելի նահապետն է, ինքը Ալիշանը։ Օ՜, ես երբէք չեմ տեսել աւելի վեհ տեսարան, քան այն, երբ այս մեծ ծերունին հեզութեամբ առաջնորդում է զանազան այցելուների, որոնք երբեմն չատ փոքր են, համեմատելով այդ պատկառելի գիտնականի, մի տարաբաղդ հայրենիքի այդ մեղմաչարթ երգչի հետ։ Սմեն մի այցելութիւնից յետոյ նա կրկին չտապում է իր խուցը, փակվում է և վերսկսում ընդհատած աշխատանքը, որպէսզի մի ժամ յետոյ կրկին դրիչը ցած դնի, կրկին ներքև վազի իր տատրակի քայլերով և անցնի նոյն միջանցքներով, նոյն սենեակներով, կրկնի մի և նոյն բանը և այսպէս անվերջ։ Երբ ես իմ զարմանքն ու ցաւը յայտնեցի խեղճ ծերունուն տուած այսքան նեղութեան համար, ինձ

հաւատացրին, թէ չատ անգամ ասել, խնդրել են, որ իր ոյժերը խնայի, բայց նրա պատասխանը եղել է՝

—Ես ձեր եմ, դուք երիտասարդ էք, մտքի կորով ունէք, մեղք է ձեր ժամանակը, թող ինձ խանգարեն, իսկ դուք աշխատեցէք։

Անցնում եմ առանձին միաբաններին։

XII

Հ. Ալիշանը, միաբանութեան աւագագոյն անդամը, որ ընդհանուրի յարգանքի և խնամքի առարկան է, այժմ 82 տարեկան է. նա վանքում անց է կացրել 72 տարի, անդուլ ու բեղմնաւոր աշխատանքով լի մի կեանք, որ քիչ է մնում դար լինի. սա մի երևոյթ է, մի փաստ, որ մենակ բաւական է պատկառանք ներշնչելու դէպի վաստակաւոր միաբանութիւնը. օտարներն անգամ հիացմունքով են նկատում այդ և այս զարմանալի գործունէութեան մէջ հայ ժողովրդի կենսունակութեան, քաղաքակրթական յատկութիւնների մի փայլուն ապացոյց տեսնում։

Երէկ, վանք գնալիս, ծովափին սպասող նաւակի մէջ նստած գտայ հ. Ալիշանին. նա այդտեղ էլ կարդում էր։

—Հայր նահապետ, քաղաք էք եկել։

—Այս տարի առաջին անգամն է,—եղաւ պատասխանը։

Այո, հ. Նահապետը քաղաք չէ գնում, նա Վենետիկի բնակիչ չէ, այլ ս. Ղազարի, ուր նա ապրում է իր երեսակայական հայրենիքում, իր կարմրերիկ Աւարայրում, ուր, աւազ, դարերը անընդհատ թարմացնում են արիւնը, իր Տղմուռի ափերում, որ հազար հինգ հարիւր տարի է՝ էլ վճիտ չէ հոսում, նա ապրում է իր զարմանալի խոհերով, որոնք թանձրանում, ծնունդ են տալիս «Սյուրատաին», «Սիսուանին», «Շիրակին», ուր աւերակների ծուխն աւելի թանձր է, քան թխպոտ երկնքի ամպերը և ուր արցունքն աւելի առատ է, քան ջրաշատ Հայաստանի աղբիւրների ջրերը։ Վաղ առաւօտից նա ոտքի վրայ է և երեքալով եկեղեցի է գնում՝ մրմնջելով Շնորհալու «Ջարթիքը» և ուշ գիշերին անկողին է մտնում՝ մրմնջալով իր այրված սրտի զեղմունքը.

«Ո՛վ դու ի վաղուց մոռցված հայրենիք,
Ո՛վ դու իմ սրտիս անմոռաց տեղիք...»

Բայց էլ չրթունքները չեն զօրում ասել... «Ահա գարունիկդ եկել է, հասել...» Մեծ ծերունուն ևս տեսայ իր սենեակում, ոչ, իր խցում. եթէ աչքովս չը տեսնէի նրան իր բնակարանում, դժուարութեամբ պիտի հաւատայի, թէ մեր նահապետն է այնտեղ ապրում, այն աստիճան պարզ, անպաճոյճ է այդ սենեակի տարբ ու կարգը. ոչ մի տարբերութիւն սովորական սարկաւագի սենեակից,—նոյն անկողինը, նոյն հասարակ աթոռը, նոյն սեղանը, աւելին այստեղ միայն գրքերն են։ Բոլոր նրանք, որոնք կրօնական պարզութիւնից, համեստութիւնից, առաքելական վարք ու փառքից են խօսում, բայց ճոխ վերարկուների աստառն էլ ատլասից են կարում և իրանց փարթամ սենեակներում քայլում են պարսկական փափուկ, թանկագին գորգերի վրայ, արժէ, որ գէթ մի անգամ այցելեն այս մեծ մարդու բնակարանը և տեսնեն, թէ գաղափարի մարդը ինչպէս կարող է կտրվել աշխարհի վայելքներից և թէ ինչպէս հնարաւոր է խօսքի և գործի ներդաշնակութիւնը, երբ առաքինութեան քարոզները կեղծ չրթունքների մրմունջ չեն միայն, այլ ազնիւ սրտի խորքերից են բըղխում։

Նպատակ չունեմ միաբանութեան անդամների բնորոշումը տալ առանձին առանձին. ասացի, որ նրանք չատ են նման իրար, իսկ եթէ մի քանիսի մասին, հ. Ալիշանից բացի, գրում եմ, պատճառն այն է, որ հանգամանքների բերմամբ նրանց աւելի մօտիկից տեսայ։

Միջին սերունդն է ներկայացնում հ. Բարսեղ Սարգսեան, ալեհառն կոլոր միրուքով, փոքր հասակով, եռանդուն, գիտնական վարդապետը (Շիրակեցի), որի «Ագաթանգեղոս և իւր բազմադարեան գաղանիքը» աչքի ընկնող գիտնական երկասիրութիւն է և արժանի գնահատութիւն ստացաւ հայագէտ օտարների կողմից, թողնենք նրա բազմաթիւ այլ աշխատութիւնները, որոնք իրրև մանագիտական գործեր չատ անգամ յայտնի չեն

դառնում ամենքին: Միաբանութեան երկհարիւրամեակի առիթով հ. Սարգսեան պատրաստում է մի նոր լուրջ աշխատութիւն, որով պիտի պատկերանայ ուխտի գործունէութիւնը սկզբից մինչև մեր օրերը: Հ. Սարգսեանին դժուար է մի վայրկեան պարապ գտնել. իր զբօսանքի կարճատև ժամերին անգամ նա անընդհատ կարդում է պարտէզի ծառերի տակ. վանքում միակ վարդապետն է դուցէ, որ ընթացիկ կեանքի վերաբերեալ վէճերում չուտով տեղի տալու սովորութիւն չունի, այս պատճառով նրա հետ խօսակցութիւնը միշտ ընդունում է կենդանի և հետաքրքիր կերպարանք:

Երիտասարդ վարդապետների մէջ ինձ վիճակվեց տեսնել խիստ համակրելի տիպեր, որոնք մեծ ապագայ են խոստանում: Հ. Թորոսեան, վանական լիցէօնի տեսուչը միանդամայն և ուսուցչապետը, մի աչքի ընկնող անձնաւորութիւն է թէ իր լայն կրթական պատրաստութեամբ և թէ իր վերին աստիճանի համակրելի արտաքինով և ազնուական ձևերով: Փիչ անգամ է վիճակվել ինձ տեսնել մի կրօնաւոր, որ այնքան յիշեցնէր մեր V դարի Թարգմանիչներին, այնպէս՝ ինչպէս մեր եւրոպական հաճելի է լինում պատկերացնել նրանց: Բարձրահասակ, սիրուն մի աղամարդ, աբեղեան չեչոված դիմագծերով, սև երկայն փառահեղ միրուքով և նազելի քայլուածքով մի կրօնաւոր, որի բոլոր չարժումները, խօսքի իւրաքանչիւր դարձուածքը, յայտնած իւրաքանչիւր միտքը հեզութեան կնիք են կրում իրանց վրա: Նա գիտէ եւրօպական բոլոր ժամանակակից գլխաւոր լեզուները, ինչպէս նաև կլասիկականները. վանքից դուրս իր ուսումը կատարելագործել է, եթէ չեմ սխալվում, Հռոմում և Գերմանիայում, ինչպէս նաև Հ. Սարգիս Սիրալիր բարեմտութեամբ առաջնորդեց ինձ իր խնամքին յանձնած լիցէօնը և ծանօթացրեց իր սանների հետ, տասնի չափ հայաստանցի երիտասարդներ, որոնցից մի քանիսը իմ այնտեղ եղած ժամանակ ուխտի մէջ մտան:

«Բազմավէպի» խմբագիրն է Հ. Սիմէոն Երևանեան, չիկահեր երիտասարդ վարդապետը, ամենիս աւելի մօտիկ ծանօթ ռուսահայ արդի դրականութեան և գործիչներին, գուցէ չնորհիւ իր պաշտօնի: Այդ ամբողջ թերթը, մանաւանդ գործի տեխնիկական մասը համարեա մենակ է վարում. ես նրան գտայ իր խցում, երբ մեն-մենակ համարներն էր ծրարում և նամականիշներ փակցնում: Հ. Երևանեան համեմատաբար նոր մարդ է և աշխատում է իր ղեկավարութեան յանձնված թերթին մի փոքր ժամանակակից գոյն տալ, գովելի ձգտում, որ որքան աջողվի, նոյնքան հետաքրքիր պիտի դարձնի գործը և նոյնքան յարգելի իր խմբագրին, իսկ դրա համար անհրաժեշտ է «Բազմավէպից» իսպառ դուրս ձգել թիւրքահայերին յատուկ քննադատական այն մեթօդը, ուր իրերի արժէքը որոշելու չափը չատ առաձգական է, և, միւս կողմից, ցաւալի երևոյթները պէտք չէ հեռաւոր, մեղմ ակնարկներով յայտնել, այլ անուն-անուն և

դառնացած չէշտով, այլապէս ընդհանուր խօսքերը անցնում են առանց խորը հետք թողնելու։

Տպարանի տեսուչն է Հ. Սարեան, որ առաւօտից երեկոյ իր պաշտօնատեղից չէ հեռանում։ Նրան կարելի է տեսնել մերթ չարուղի մօտ, մերթ սրբագրութեամբ զբաղուած, մերթ իր անվերջ հաչիւներով։ Տպարանում է նոյնպէս Հ. Սուքիաս Էփրիկեան, «Բնագիտարհիկ բառարանի» հմուտ հեղինակը։ Մշտապէս խոհուն այդ բոլորովին երիտասարդ մարդը՝ ծերունու լրջութիւն է կրում իր վերին աստիճանի համակրելի դէմքին. նա այնպէս մտաղբաղ է, որ կարծես տարված է մի մեծ պրօբլէմով, որի վճիռը նրա համար կենսական նշանակութիւն ունի. այդ պրօբլէմը իր սկսած մեծ գիտական գործն է, իր բառարանը, որի համար աշխատում է անդադրում. նրան տեսնելիս ինձ միշտ թւում էր, թէ մի նոր բան է գտել, որ վազում է չտապով գրի առնելու։

Հ. Եսայի Տայեցին, լայնաթիկունք, յաղթանդամ մի տղամարդ, ինչ որ լեռնական բան է բերել Տայոց լեռներից. նա՝ անխոնջ գրադարանապետն է. սիրալիր պատրաստակամութիւնը, որով նա աշխատում է գոհացնել գրադարանում զբաղվող հիւրերին, վկայում է նրա բուն արևելեան, բուն հայկական, աւելի կասեմ՝ հայ գեղջկական հիւրասիրութիւնը։

Ցերեկվայ ուղիղ 12 ժամին բոլոր միաբանները եկեղեցի են իջնում աշակերտների հետ. դասում, սեղանի առաջ, աջ ու ձախ տեղ են բռնում աշա-

կերտները, որոնք մի և նոյն ժամանակ երգիչներն ու փոխասացներն են, իսկ նրանցից ներքև, դասը բաժանող վանդակապատի առաջ—միաբանները։ Սկսվում է ճաշու ժամերգութիւնն իր անվերջ «ողորմեաներով», որ քաղցում են ցածր ձայնով, բայց արագ-արագ։ Ժամերգութիւնից անմիջապէս յետոյ դիմում են դէպի սեղանատուն. ամենքը հաւաքվում են սեղանատան նախասենեակում՝ սպասելով աբբահօրը, որը չուտով յայտնվում է. ողջոյն է փոխանակվում, նա առաջ է անցնում, միւսները հետևում են և լռութեամբ գրաւում իրանց տեղերը։ Աբբահայրն օրհնում է սեղանը մի բաւական երկար օրհնութեամբ, որ լսում են յոտընկայս, ապա նստում են և սկսվում է ճաշը կատարել լռութեան մէջ. միայն լսվում է մի աչակերտի ձայն, որ վերնատնից կարդում է ս. գիրքը։ Մխիթարեանների ճաշը նոյնպէս ուշագրաւ է. ինչ ասել կուզի, որ վանական ճաշ է, ճոխութիւնից չատ հեռու, բայց դրա հետ միասին մաքուր է, անդադար և ախորժելի։ Ճաշից յետոյ նոյն կարգով դուրս են գնում, դարձեալ սպասում աբբահօրը նախասենեակում, որի հետևանալուց յետոյ յետ են գալիս սեղանատուն իրանց մի-մի բաժակ սուրճը խմելու։ Ինձ թւում է, որ Մխիթարեանների սուրճի այդ կարճատև ժամը նրանց կեանքի ամենաուրախ, ամենահաճելի ժամերից մէկն է. այդ ժամանակն է, որ նրանք ուրախ-ուրախ խօսում են, կատակներ են անում, մի խօսքով զուարճանում, ինչպէս որ կարելի է զուարճանալ ս. Ղա-

զարում։ Ինչ յետոյ այլ ևս ոչ ոք չի երևում ոչ սեղանատանը և ոչ պարտէզում։ Լռութիւնը տիրում է չորս կողմում և աշխատանքը վերսկսւում է, և այսպէս օրեր ու տարիներ, այսպէս ամբողջ կեանքը։

Սիրում եմ հաւատալ, որ հռչակաւոր մենաստանի երկհարիւրամեայ տարեդարձին հայ ժողովուրդը ցոյց կը տայ, որ գիտէ գնահատել այս վաստակաւոր մարդկանց անձնուիրութիւնը, գիտէ վարձատրել արժանիքը, քայլերել եռանդը։ Միխիթարեան միաբանութիւնը երբէք ձեռք չէ մեկնել և նա երբէք էլ չի մեկնի, բայց նրան յանձնված իւրաքանչիւր լուման միշտ հայ ժողովրդի փառքին և նրա վերածնութեան գործին է ծառայել և, յուսանք, կը ծառայի։ Այս չը պէտք է մոռանալ։

XIII

Դարձեալ դէպի Իտալիա...

Ուղիղ մի տարի առաջ մեկնելով Վենետիկից, միանդամայն և Իտալիայից, ես չէի էլ կարող երևակայել, թէ հնար պիտի ունենամ վերստին այցելել Վիրգիլիոսի, Դանտէի, Լէօպարդիի և Գարիբալդիի հայրենիքը։ Այն ժամանակ ես ի սրտէ ցաւում էի, որ «Իտալիայում» խորագիրը կրող իմ նամակները միայն այդ երկրի հիւսիսային երկու քաղաքների չուրջը դարձան և ես անկարող եղայ

տեսնել նրա հարաւը, իր փարթամ բնութեամբ, իր հարուստ յիշատակարաններով։ Եւ այդ ցաւը հասկանալի է։ Եւրօպական ոչ մի երկիր իր զարմանալի պատմութեամբ և իր վերածնութեան գեղարուեստով այնքան չէ օրօրում երազող մանկութիւնը, յափշտակվող երևակայութիւնը, որքան Իտալիան։

Ժողովուրդներ կան, որոնց պատմութիւնը կարծես զարմանալի առեղծուածների մի շղթայ լինի, որոնք չը գիտես ինչ մի մոգական ուժով կապում են իրանց ճակատագրին այնքան օտար գոյութիւններ, երկնակամարից՝ երկնակամար բաղդեր են անօրինում, յաղթութեան արիւնոտ կոթողներ են կանգնեցնում այնքան դամբարանների վրայ և ի վերջոյ գնում են մեռնելու այնտեղ, ուր իրանցից առաջ այնքան ազգեր են թաղել իրանց մեծութեան և փառքի դինովութեան չրջանում։ Համաշխարհային ամբողջ պատմութեան մէջ չը կայ և ոչ մի երկիր, որի փառքի բարձրութիւնն այնքան բաղդեր տապալած լինի և որի անկումն այնքան սեծ և այնքան ողբերգական լինի, որքան Իտալիան։ Չը կայ և ոչ մի ժողովուրդ, որ փառքից յղփացած և տառապանքներից յոգնած մերթ ապրեան և մերթ կրօնական ու գեղարուեստական էկստազի մէջ իր հոգևոր և մտաւոր ամբողջ կազմութիւնը մաշած լինի, որպէս իտալական ժողովուրդը։ Ինչքան և հնար լինի Իտալիայի պատմական ճակատագիրը բացատրել մարդկային հասարակական կեանքը դեկավարող օրէնքների տրա-

մաքառումներուն, այդ երկրի աչխարհագրական բացառիկ դիրքով, իր կլիմայով և դրանց յարակից պայմաններով, այնուամենայնիւ նա կը մնայ բոլոր դարերի մարդկութեան համար որպէս մի զարմանալի երազ, որ սակայն այնքան իմաստուն դասեր է պարունակում դժբաղդ և երջանիկ ժողովուրդների համար։

Անչափ մեծութիւնն ու անչափ դժբաղդութիւնը, ամենագրաւիչ երգն ու ամենադառն արցունքը բաժին ընկան Միջերկրականի պառաւ թագուհուն, անցեալ փառքն ու ցաւը հաւասարապէս մեծ, անօրինակ դիւթում և քաշում են մարդուն որպէս դիւթական դաղտնիքներից խօսող հինաւուրց սիբիլաներ։ Ահա այդ փառքն ու ցաւը, այդ երգն ու արցունքը իրանց մամռապատ քարերի վրա կրող յիշատակարաններն էին դրաւում ինձ և բաղդին հաճելի եղաւ, որ ինձ համար նուիրական դարձած այդ իդձը կատարվի։

Դարձեալ դէպի Իտալիա։ Վերստին ողջոյն քեզ, հայրենիք նոր գեղարուեստի, նոր կեանքի, հայրենիք բոլոր նրանց, որոնք գեղեցիկին ու վսեմին են վնտռում, որոնք ճանաչելին փառքի աղնիւ հպարտութիւնը և անկման բոլոր դառնութիւնն ու ցաւը, որոնք անարդարութեան և այլ ոճիրների հանդէպ նուիրական ցասումն են կրում կրծքերի տակ, տառապում են քեզ ծանօթ, քո լացած ցաւերով և քեզ պէս դէպի վերածնութիւն, դէպի լոյս, դէպի իդէալն են դիմում, ողջոյն քեզ...

Ապրիլի սկիզբն է։ գարնան առաջին թափը Ֆրանսիայի հարաւում էքս-լէ-Բէնի և Մօդանի շրջակայքի լեռները ծածկել է կանաչով։ Դաչտանկարները գրաւիչ են, ճանապարհորդութիւնը հաճելի։ Գնացքը լիքն է Իտալիա գնացող ճանապարհորդներով. կայարաններում երբ լսում է անիւների դղորդը, լսվում է երգ, ծիծաղ, ուրախաձայն խօսակցութիւն. բնութիւնը տրամադրում է։

Ճանապարհորդները նման են աչնան տերևների, որ մի ուժեղ քամի պոկում է ծառերից, հաւաքում է մեծ ճանապարհի վրայ, խաղում է նրանց հետ մի առժամանակ, քչում է առաջ և առաջ և ապա կարծես ձանձրացած՝ ցրիւ է բերում չորս կողմում։ Եւ այդ տերևները տարվում են տարածութեան մէջ այլ ևս երբէք իրար չը հանդիպելու համար։ Եւ սակայն այս փախչող դէմքերը, ժամանակի մէջ անյայտացող այս ստուերները այնքան հետաքրքիր է դիտել իրանց չարժումներով, իրանց ժեստերով, խօսակցութիւններով, անգամ իրանց խաղաղութեան մէջ։ Ամեն մի մարդ մի աչխարհ է. տեսերի մի զոյգը՝ մի մարդկութիւն։

Ուղեկիցներս են երկու իտալացիներ, մի չատ ջահիլ կին և մի նոյնքան ջահիլ երիտասարդ, համարեա երկու երեխաներ, որոնց, ըստ երևոյթին, բաղդը կապել է իրար։ Դժուար է խմանալ՝ երիտասարդ ամուսիններ են արդեօք, թէ սիրահարներ, որոնք թափառում են երկրից երկիր և իրանց սէրը համեմում նորանոր հոգեկան ցնցումներով, ան-

ծանօթ վայրերի անսպասելի ծանօթութիւնների, անակնկալ դիպուածների պատճառած հաճոյքով։ Ով և լինեն՝ նրանք իմ աչքում ամուսիններ են, որովհետև սիրում են իրար ամենաքնքոյշ սիրով, իսկ սէրից դուրս ոչինչ չը կայ, որ կարողանայ արբագործել սեռերի կապը։ Բոլոր նախապաշարմունքները, մօրալի բոլոր թիւր հասկացողութիւնները, կեղծ վայելչութեան, խորամանկ, չահադրդռված փարիսեցութեան ստեղծած բոլոր արգելքները վերջ ի վերջոյ պիտի փշրվեն այն կարծր, անխորտակելի ժայռի վրայ, որի տակ միահեծան բնութիւնը գարընում է իր անյաղթելի օրէնքները և որի անունն է՝ «սէր»։ Առաջին սէրն է. իմ ներկայութիւնը հապիւ է մի փոքր չափաւորում հայեացքների բոցը, շարժումների պերճախօսութիւնը. նրանք նման են զոյգ սիրահար ազաւնիների, որոնք կղզում են անդադար, իրար կողքի են սեղմըվում, իրար են քաւում թևերով, որովհետև ուրիշ կերպ չեն կարող անել. բնութիւնն է խօսում։

Անծանօթ անդլիացուն և գերմանացուն պէտք է ներկայանալ մի ընդհանուր ծանօթի միջոցով. իտալացին ինքն է ներկայանում։

—Մենք Պարիզից ենք գալիս, չատ բաներ տեսանք, ասում է երիտասարդը առանց կանխաւ ծանօթանալու, գնում ենք Իտալիա. պարոնը երեի նոյնպէս գնում է Իտալիա, այնպէս չէ՞, միևչև Տուրին կարող ենք ընկերանալ։

Կինը ժպտում է, միանալով իր ամուսնու արտայայտած յանկութեանը։ Ես համաձայն եմ։ Ներ-

բանք անմիջապէս հետաքրքրվում են ինձանով, ինչ ազգից եմ, ուր եմ գնում, ապա իրանք են պատմում զանազան յիշողութիւններ իրանց կեանքից, միանգամայն անտարբեր, թէ ինձ հետաքրքրում է, արդեօք։ Ահա վրա է հասնում երկաթուղու գիշերը, բոլոր գիշերներից ամենաանախորժը, անխորհուրդ հակումի, անօգուտ չարչարանքի մի վատ գիշեր։ Իտալական երկաթուղին աւելի է ծանրացնում վիճակները. չոգեկառքը ցնցվում է, աղմուկը դժոխային է, օդն անտանելի, ամեն կողմ կեղտ ու մուր, և այդ բոլորի վրա աւելանում է քունը, անյաղթելի խեղդող քունը, որին չը դիտես ինչպէս բաւականութիւն տաս։ Ուղեկիցներս, երկու չատախօս թռչնիկների պէս, անդադար կըչկըչում են, բոլոր անյարմարութիւնները, բոլոր նեղութիւնները կարծես նրանց համար ոչինչ են. չէ՞ որ ջահիլ են ու սիրում են իրար։ Նրանք անդադար պատմում են ինձ Պարիզում իրանց տեսած թատրոնների, միւզէյների, բուլվարների, այգինների մասին՝ զարմացած երեխաների պէս. պատմում են, խիստ զուարճանալով, նաև փողոցային ձիճաղաչարժ երևոյթների մասին։

—Իտալիա, ցոյց տուր պարոնին մեր թռչունները։

Իտալիան ջահիլ կինն է. բարձրահասակ ու գեղեցիկ, թաւ, երկար մազերով, գալար ու նուրբ իրանով, իսկ և իսկ Իտալիա։ Չոգեկառքի ցածր առաստաղի տակ նրա հմայիչ սիլուէտը նմանում է այն արձանասիւներին, որոնք հին տաճարների

կամարներն են կրում իրանց գլուխների վրայ։ Նա ցած է բերում դարեկից մի չատ փոքրիկ վանդակ, ուր կծկված են մի զույգ չատ փոքրիկ թռչուններ, նոյնպէս սիրուն, նոյնպէս ճանապարհորդ, որպէս իրանց երկու տէրերը։ Դիպուածով են վերցրել այս թռչունները, թէ դիտմամբ, չը գիտեմ։ միայն աւելի սիրուն, աւելի գրաւիչ էմբլեմա չէին կարող ընտրել իրանց քնքոյշ, թափառական սիրուն։

—Հօլլանդական ծիծեռնակներ են, պարոն, բացականչում է սիրուն Իտալիան, տեսէք ինչպէս լաւն են, չատ սիրուն են, այնպէս չէ՞։

—Հօլլանդական ծիծեռնակներ ես երբէք չեմ տեսել, տիկին, բայց սրանք իրօք չատ գրաւիչ են, չատ սիրուն։

—Նրանք յետոյ փոքրիկներ կունենան, ասում է երիտասարդը ժպտալով. կինը նայում է նրան, յանդիմանող քնքշութեամբ, կամացուկ քաշում է նրա մազերը, բայց ինքն է կարմրում իր արածից և վանդակն իր առաջվայ տեղն է դնում։

Կէս գիշերն անց է, գնացքը որոտալով սլանում է անընդհատ, չորս կողմում իրար վրա թափթփված մարդիկ քնում են ինչպէս կարող են, ամեն մի ցնցումի ժամանակ, կամ երբ գնացքը կանգ է առնում, նրանք բաց են անում չուարած աչքերը, ապուշ-ապուշ նայում չորս կողմը, ապա կրկին քուն մտնում, գլուխները կրծքերին կամ ուսերին ծռած։ Իմ ուղեկից երիտասարդը գլուխը դնում է ջահիլ կնոջ ծնկանը, տեղաւորվում է ինչպէս կարող է. կինն էլ իր լայն թիկնոցով նրան

ծածկում է ամբողջապէս, ինքն էլ կռանում է նրա վրա և գլուխը թաղում նոյն թիկնոցի տակ և փորձում են քնել։ Բայց քունը հեչտութեամբ չէ մօտենում նրանց. կինը երկար ժամանակ ինչ որ փսփսում է ամուսնու ականջին, նրա մազերն է քաշում, կամացուկ ծիծաղում է, գլուխն է բարձրացնում, կրկին կռանում, ապա ամեն ինչ լռում է. նրանք մնչում են ինչպէս յոգնած թռչունները մի ճիւղի վրա թառած։ Գնում են... Երջանիկ զոյգ, վերև՝ դարեկի վրայ քնած են նաև զոյգ թռչնիկները, որոնք փոքրիկներ կունենան, յետոյ դարձեալ փոքրիկներ, էլի փոքրիկներ և այսպէս անվերջ։

Նայում եմ և ակամայ միտքս է գալիս Շօպենհաուէրը, նա որ սիրահարների չշուկի մէջ մարդկային սեռի դէմ դատաղրութիւն էր տեսնում. ասում են, սակայն, որ ոչ ոք այնքան խաուն չէ եղել այդ «դատադրութեան», որքան ինքը՝ այդ մռայլ, յոռետես փիլիսոփայութեան հիմնադիրը։ Շօպենհաուէր իր տիեզերական կամքի ոյժը աւելի փայլուն օրինակով հաստատել չէր կարող, իր փիլիսոփայական մօրալը և իր անձնական բարքը ամենասուր հակասութեան մէջ են եղել։ Ուրիշ կերպ չէր էլ կարող լինել. այս քնող զոյգն իսկ ամենազօրեղ հերքում չէ մարդկային բնութիւնը դատապարտող մօրալին։ Սա վաղվայ մարդկութիւնն է. տիեզերական կամքն իշխող է և հզօր, նա է փըսփսում սրանց ատք չրթունքներով, նա է իրար մօտ բերում և չաղկապում անքակտելի կապերով

երկու անձանօթ էակներ, նա է դնում սրանց չարժումների մէջ կեանքի այն յախուռն թափն ու եռանդը։

Առանց Տիւրինում կանգ առնելու, անցնում եմ Ջենովա, որտեղից պիտի սկսվի իմ իսկական ճանապարհորդութիւնն Իտալիայում և ուր կը մնամ մի քանի օր տպաւորութիւններ գրի առնելու համար։

Ճանապարհորդակից ընկերներս են դարձեալ երկու իտալացիներ, բայց այս անգամ կօնտրաստը կատարեալ է երէկուայ ընկերներիս հետ։ Սրանք երկու աղքատ թշուառականներ են, իտալական այն աղքատ, տանջված և ցաւոտ ամբոխի երկու մոլորված անդամներ։ Մէկը ջահիլ է մօտ քսան տարեկան, իսկ միւսը՝ երևի երեսուն հինգից քառասուն կը լինի։ Երկուսն էլ այն խաւար, անյայտ դէմքերից են երևում, որոնցից միլիոններ կարող են ապրել, տանջվել և անցնել, առանց որ և է հետք թողնելու մարախրոսութիւնների մեծ դրքի մէջ, բայց երկրորդը՝ տարիքովը մի այնպիսի բան ունի իր դէմքի վրա, որ իր խեղճութեանը տալիս է մի առանձին վտանգաւոր չէչտ, նա մի ըմբոստ է անչուչտ։ Նա մի անկիւն գրաւեց լուսամուտի առաջ, նստեց և իր ոսկրոտ ծնկների վրայի լայն կարկատանները սպառնալի կերպով ի ցոյց դրեց. կարծես ուզում էր ասել. «Թող նայէ, ով կամենում է, ես իմ խեղճութիւնից ամենևին չեմ ճնշվում». բայց այդ ծնկներին նայելն այնքան էլ ախորժելի չէր, գունաւոր կարկատանների տակ

այդ սեպաձև ոսկորները լաւ չէին։ Մարդը մի հայեացք ձգեց իր չուրջը, ապա մի աւերակ զամբիւղից դուրս քաշեց մի կեղտոտ, գզգզված կապոց, քանդեց թելերը, բաց արեց մի չարք փաթոյթներ և հանեց այնտեղից մի փունջ չորացած խոտ և սկսեց մէկիկ մէկիկ խտակել. դեղ էր արդեօք, թէ բանջարեղէն, ես հասկանալ չը կարողացայ, միայն մարդը մաքրեց մինչև վերջին չիւղը, ապա խնամքով փաթաթեց և դրեց նախկին տեղը, իսկ ինքը մնաց լուռ ու մտախոհ։ Միւսը՝ երիտասարդը պահում էր իրան միւս անկիւնում, ինչպէս մի բանտարկված, անհանգիստ գազան. նա նստում էր, վեր էր կենում. լուսամուտը բացում, փակում, ծխում էր չարունակ և մռմռում քթի տակ։ Նրանք խօսել սկսեցին նախ իրանց անկիւններից, ապա կամաց կամաց մօտեցան. ծխում էին և խօսում։ Եւ ինչ. այս ողբալի արարածները խօսում էին իրանց երկրի արտաքին և ներքին քաղաքականութիւնից, տնտեսական և հասարակական կացութիւնից։

Գուցէ և ոչ մի երկրում քաղաքականութեամբ զբաղվելն այնքան ժողովրդականացած, այնքան սովորական դարձած չէ, որքան Իտալիայում։ Մարքիավելը կարծես մաս մաս ապրում է հարաւի արևով տաքացած սրանց գանգերի տակ։

Իմ ուղեկիցները կամաց կամաց տաքանում են, ճչում են, սպառնալի կերպով ցնցում բռունցքները, կարծես պատրաստվում են մէկի վրա յարձակում գործել։ Մեր երկիրը փոքր է, ժողովուրդը

բազմաթիւ, հարկերի տակ խեղդւում ենք, մեր մինիստրներին կախել է պէտք, ահա թէ ինչ եմ լսում չարունակ, ապա Կրիսպի, Աբիսինիա, Թագաւոր և այլն և այլն: Տարիքաւոր մարդը իր յուզմունքի մէջ ոտքի կանգնեց, ծուխը քուլայ քուլայ փչեց դէպի վեր:

—Քանդել, քանդել է պէտք, բացականչեց նա դառնալով դէպի ինձ, մենք չատ ենք թչուառ էէ, չատ. ապա նա բառնգքով խփեց տախտակէ պատին, սկսեց քաշել դարեկը բոլոր թափով՝ կարծես ամէն ինչ ջարդ ու փշուր անելու համար, ընկերը նրան տոն էր տալիս և երկուսով էլ կատարելապէս համաձայնեցին, որ Իտալիայում ամէն ինչ պէտք է քանդել, տակն ու վրա անել: Տէնն իր ճանապարհորդութեան մէջ մէկ տեղ ասում է իտալացիների մասին. «Մարդն այստեղ բնութիւնից չունի արդարութեան զգացմունքը. նա չատ զօրեղ է, չատ կատաղի, չատ երևակայող, որպէսզի կարողանայ ընդունել և իր վրէն դնել որ և է սանձ. երբ նա իրան կարծում է կուի մէջ, նա կուի իր իրաւունքը ոչնչով չէ սահմանափակում»:

Զարհուրելի է իտալացու զայրոյթը. տպիտութիւնն ու ծայրահեղ խեղճութիւնը այստեղ աւերածի և ոճիրի հզօր գործօն է. այս երկրում ճանապարհորդելիս մարդ հասկանում է, թէ ինչու բոլոր երկրներում ըմբոստ գործողութիւններին խառն է գոնէ մի իտալացի: 1858 թւի յունվարի 14-ին Նապոլէօն III օպերա էր գնում, նրա կառքի մօտ մի ռումբ տրաքեց, որ դիակներով ծածկեց հրապարակը. երբ կայսրի կեանքի դէմ կատարված այս արիւնոտ փորձի լուրը Իտալիա հասաւ, կավուրը բացականչեց՝ «Երանի թէ յանցաւորը իտալացի չը լինէր»: Մեծ քաղաքագէտի նախազգացումը ճիշդ էր, նա ճանաչում էր իր ժողովրդին,—Օրսինին իտալացի էր:

XIV

Ջենովայում եմ: Սա արդէն հարաւ է, փարթամ բնութեամբ, ճոխ բուսականութեամբ, մշտածիծաղ, կապոյտ երկնքով հարաւը: Ապրիլի կէսն է, Ջենովայի ծովափը եզերող բլուրների չարքերը ողջ կանաչապատ են. բնութիւնը մի թափ ունի այստեղ, որ հեղնում է ձմեռն ու ցուրտը. ամէն ինչ խոչոր է, ծաղիկ ու տերև, ծառ ու խոտ և որքան կանխահաս են ամենը, կարծես չտապում են: Իտալիայի աւիերը ողողող ալիքները Աֆրիկայի դոլ չունչն ունեն, որ Միջերկրականի վրայից սուրալով անցնում է դէպի հիւսիս՝ մինչև Ջենովայի ծոցը և դաղջ մինոլորտ է պահպանում այս եզերքում: Այստեղ ծովն այժմ մառախուղ չունի, ալիքներն իրանց խաղերի մէջ մի ինչ որ քնքշութիւն ունեն, նրանց չառաչն աւելի ծիծաղի, քան մռնչոցի է նման. կապոյտը մոգ է և հմայիչ, նա երկնքի քոյրն է:

Ծովային մինոլորտի նուրբ թափանցիկութեան

միջից հեռու, հեռու ծրագրվում են գալարուն քը-
լուբները իրանց կապտաւուն քողերով, ձևերի նը-
կարչական կատարելութեամբ, մի հանգամանք՝ որ
հնարաւոր է դարձնում հարաւում գեղարուեստի
ծայրագոյն զարգացումը: Ինչ տեսարան կայ այն-
քան գեղեցիկ, որքան փոքրիկ առագաստաւոր նա-
ւակները հարաւի ջրերի վրա վաղ առաւօտեան,
չողշողարդ լուսաբացին կամ երեկոյեան վերջալու-
սին, երբ երկնքի գոյների բոլոր նիւանսները ար-
տացոլում են ծովի թափանցիկ մակերևոյթի վրայ,
երբ նաւակը, իր զոյգ սպիտակ առագաստներով
թեւում է հեռուն գոյնզգոյն լոյսերի մէջ լողացող
լուսաթաթախ հրեշտակ. ամենամեծ նկարիչը հա-
րաւում՝ ինքը բնութիւնն է և մարդը՝ անգամ,
հանճարեղ մարդը, նրա յաւիտենական աշակերտն
է իդէալին հասնելու յարատև և անյագ տենչով
բռնված:

Ջենովան Իտալիայի հիւսիս-արևմուտքի ծովա-
փին բազմած՝ ասես դեռ խէթ խէթ է նայում դէ-
պի արևելք, այնտեղ՝ ուր Ադրիատիկի վրա նստել
է ծովերի նախկին թագուհին՝ Վենետիկը: Երկու
քաղաքների տեղը բնութիւնից այնպէս է սահ-
մանված, որ մրցութիւնն ու կռիւը անխուսափելի
եղաւ նրանց մէջ: Ուժեղ ու բարգաւաճ այս եր-
կու հանրապետութիւնները, ծովային ընդարձակ
առևտրով, երկուսն էլ դէպի արևելք էին նայում,
հարուստ աւարի, վաստակաչատ առևտրի այդ աշ-
խարհը: Պատմութեան բոլոր ընթացքում Միջերկ-
րականը համարեա երբէք երկու տէր չէ ունեցել,

որ խաղաղութեամբ բաժանէին նրա տիրապետու-
թիւնը. նրա ափերին ազգերը հին դարերից արիւ-
նոտ պայքարի մէջ չափել են իրանց ոյժերը, մր-
թոտվել, ընկել են ուժասպառ, ինչպէս մի գեղե-
ցիկ կնոջ համար մաքառող հոմանի—ասպետներ:
Այդ դարաւոր մրցութիւնն էր, որ աւելի նոր ժա-
մանակներում վերսկսեցին Ջենովան և Վենետիկը,
երկու ազգակից, բայց ախոյեան հանրապետու-
թիւնները և արիւնոտ ընդհարումներով թուլացան,
ինչպէս Աթէնքն ու Սպարտան, և օտարի լծի տակ
ընկան՝ Իտալիայի մէջ վերստին փայլելու համար:

Իտալական շատ քաղաքներ իրանց արտաքին
տեսքով գեռ բաւական յիշեցնում են միջին դա-
րերը, նրանց վրայից ժամանակն անցել է առանց
հետք թողնելու, մինչդեռ Ջենովան՝ հինը պահելով
հանդերձ, նոր ժամանակներին, նոր քաղաքակըր-
թութեանը, կեանքի նորագոյն պահանջներին ան-
հրաժեշտ հարկն է տուել: Հին Ջենովայի կողքին
ևրոպական մտքով մի նոր քաղաք է բարձրացել
իր օդաչատ ու լայն ճեմելիքներով, իր բազմայարկ
տներով, որ իր փայլի տակ ծածկել, նահանջել է
հինը, ինչպէս մի տգեղ, նողկալի մարմնի վրա
ձգված թանկագին բեհեզ: Գեռ մնում են քաղաքի
հին մասերում միջնադարեան, նեղ, մանուածա-
պատ փողոցները, խաւար, զառիվայր և զառիվեր,
ուր բազմայարկ նեղլիկ տները դէմ առ դէմ այն-
պէս մօտ են կանգնած՝ կարծես գրկվում, համբուր-
վում են իրար հետ, որոնց լուսամուտներից լու-
սամուտ ցատկել կարելի է. գեռ մնում են այդ

նեղ փողոցների բարձրութեան վրա կախված կամուրջները՝ որոնք նեղ կարրիդօրներով կապում են իրար հետ երկու շինութիւններ, կանգուն են դքսերի և բարձր աղնուականութեան կառուցած չքեղ պալատները, հաստ, քանդակազարդ դռներով, արձաններով, մոզայիկներով, բայց այդ բոլորի չուրջը պատել են քաղաքի նոր թաղերը, նոր հրապարակները ու նոր փողոցները Մաձիննիի, Գարիբալդիի, Վիկտոր Էմմանուէլի անուններով։

Քաղաքի ոչ մի մասում հնի և նորի այդ մըրցութիւնն այնպէս աչքի չէ ընկնում, որքան չուկայում։ Նոր փողոցների վրա առաջ են եկել մեծ վաճառատներ ժամանակակից արդիւնաբերութեան նորագոյն արգասիքներով, բայց ծովափին կայ մի ահագին չուկայ, ծածկված փողոցի վրա զետեղված հին խանութների ամբողջ շարքեր իրանց նախնական վիճակում։ Եւրօպական և ոչ մի քաղաքում ինձ չէ վիճակվել տեսնել մի չուկայ, որ այնքան արևելքը յիշեցնէր, Կովկասի մեծ քաղաքներից մէկն ու մէկի մեծ վաճառանոցը։ Աւելի ուշագրաւն այն է, որ այստեղ վիտացող ամբոխն էլ արևելքի այն կեղտոտ, սև ամբոխն է յիշեցնում, դանդաղ ու մոլար, գարշահոտ ու աղմկալի։ Սա միջնադարեան Ջենօվան է, կարծես, և հեռու արևելքից եկող նաւերը զանազան ազգերի ներկայացուցիչներն են դուրս ձգել ափը, բազմալեզու և բազմատարազ, որոնք իրանց փէչերի վրա ման են ածում երկրէ երկիր իրանց վաճառքի հոտը, մի անախորժ միջնորդ։ Խանութներում էլ ապրանք-

ները դասաւորված են արևելեան ձևերով, պարապմունքի և աշխատանքի բաժանումը կարծես դեռ չեչաված չէ, մանրավաճառը երկաթեղէն էլ ունի, ածխավաճառը՝ պտուղներ, փականագործի կողքին չիթ վաճառողն է, պաչարեղէնի խանութի հարևանն է պայտհարը։ Այդ խանութների առաջ վաղ առաւօտից մինչև ուշ գիշեր եռում է իտալական ամբոխը. ոտաբոբիկ ու գլխաբաց, պատառոտուն երեխաներ, որոնք ձեռք են մեկնում օտարականին կամ գետնից ծխախոտի մնացորդներ հաւաքում. կեղտի մէջ կորած, առնացի դէմքով հաստամարմին կանայք, որոնք իրանց գլուխների վրա կրում են ահագին կապոցներ և քայլում են, աչխատելով հաստ պարանոցները ուղիղ պահել ծանր բեռի հաւասարակշռութիւնը չը կորցնելու համար. սա մի ընդհանուր երևոյթ է իտալական համարեա բոլոր քաղաքներում, մնացորդ երևի նախնական բարբարոս բարքերի, երբ կինը նկատւում էր իբրև բեռնակիր անասուն։ Շուկայում կարելի է տեսնել վատ և կեղտոտ հագնված տղամարդկանց ահագին բազմութիւն, անգործ, յօրանջող բանուորներ, երբեք չաչխատող դատարկապորտներ, որոնք չարված են իրար կողքի մի թմբի, մի պատի վրա, խօսում են, ծխելով և անվերջ թքում ոտների առաջ, ծխի իւրաքանչիւր քուլան վեր արձակելուց յետոյ։ Այստեղ են նաև բազմաթիւ հաչմանդամ կամ առողջ մուրացիկներ, կասկածելի պարապմունքների տէր ճարպիկ խաբեբաներ, ճանապարհորդներին զանազան անօգուտ ծառայութիւններ

առաջարկող աներես թշուառականների ահագին խմբեր։ Նաւամատոյցը հեռու չէ, իւրաքանչիւր նոր հասնող նաւ իր բերած ճանապարհորդներով և վաճառականներով գործունէութեան, աչխատանքի, վաստակի յարմար հող է ներկայացնում այս ամբոխի համար, հասկանալի է, թէ ինչու ամեն արհեստի, ամեն պարապմունքի մարդիկ, դատարկապորտներ և պատուաւոր վաստակով ապրող խեղճեր այստեղ են խմբվում։

Հին-Ջենովան իր նախկին տէրերի, կառավարիչների արձաններն ունի այս ու այն պալատում, այս ու այն հին սրահում երկու սիւների մէջ, մի դրան վրա, մի աստիճանի կատարին, իսկ նորը՝ իր Գարիբալդին, Մածձինին և Վիկտոր-Էմմանուէլը, Նոր-Իտալիայի մեծ որդիները, որոնք նրա միութիւնը գարձնեցին։ Ջենովան առանձնապէս հպարտ է իր Մածձինիներով, որ իր ծոցից ծնվեց և այժմ էլ իր ծոցումն է թաղվել. նրա արձանը իր գեղեցկութեամբ և գրաւած դիրքով գերազանցում է համարեա բոլոր միւսներին։ Հին և նոր արձանները իտալական բոլոր մեծ փոքր քաղաքների անհրաժեշտ զարդերն են. սա ամենալաւ ապացոյցն է այս երկրի գեղարուեստական ճաշակի։ Մինչև որ գեղարուեստը չդայլօրէն չը փռվի փողոցներում և հրապարակներում, նա չէ կարող մի ժողովրդի մասսայի, ամբոխի սեփականութիւնն դառնալ և իր իսկական դերը կատարել. ըստ իս՝ հրապարակի մի արձանը, մի քանդակազարդ ու գեղեցիկ աւազանը գեղարուեստական դաստիարակութեան

տեսակէտից մի միւզէ արժէ։ Իտալիայում իւրաքանչիւր հին տուն, պատի մի կտոր կրում է իր վրա սիրուն քանդակ, մի աչող կենդանակերպ, առիւծ, արծիւ, դրիֆֆօն կամ վիշապ։ Սրանց չուրջը, մանաւանդ արձանազարդ մարմարէ աւազանների ափերին, առաւօտից երեկոյ խաղում են մանուկները, ժամերով նստած են մնում հասակաւորները, դիտում են, վայելում և իւրացնում։ Թողնենք դեռ եկեղեցիներն ու բազմաթիւ միւզէները, որոնցից իւրաքանչիւրը գեղարուեստի անհուն գանձերն են պարունակում։ Նոյնն է Ջենովան. հին թէ նոր մասում բազմաթիւ են գեղեցիկ յիշատակարանները, ուշադրաւ չէնքեր, արձաններ, միւզէներ, բայց սրանց մասին յաջորդ նամակով. այժմ կուզէի խօսել մի կրօնական արձանի մասին, որ նոյնպէս ընդհանուր երեոյթ է ամբողջ Իտալիայում։

Կարծում եմ իւրաքանչիւր ճանապարհորդ նկատած կը լինի այն փոքրիկ, սիրուն Մադոննաները, որոնցով իտալացին սիրում է զարդարել իր բնակարանի պատը դրսից, փողոցի կողմից։ Այդ փոքրիկ արձանը նրա տան պահապանն է։ Երնստած է այնտեղ՝ պատի մի նեղ փորուածքի մէջ խեղճ Աստուածածինը—գրկած փոքրիկ Յիսուսին և հեզութեամբ նայում է վար՝ փողոցի անց ու դարձին, նայում է, կարծես չը գիտէ, թէ ինչու է ինքն այնտեղ, խեղճ, մոռացված։ Անձրևն է նրան ծեծում, ձիւնն է թափվում գլխին, արևն է այրում, բայց Աստուածածինն այնտեղ է, ինչպէս

մի զգաստ պահապան և թախծալից ու խեղճ իր յաւիտենական հսկումն է կատարում: Նրա վրա ոչ ոք ուշք չէ դարձնում, ոչ մի անցորդ չէ խա-չակնքում մօտովը անցնելիս, կարծես նրան դրել են այնտեղ և մոռացել, քամին փոշիով ծածկել է նրա գլուխը, անձրևը ցեխ է կաղմել նրա զգեստի ծալքերում, բայց ոչ ոքի փոյթը չէ և նա այնտեղ պիտի մնայ, քանի կանգուն է տունը: Ես մի այդ պիսի Աստուածածնին տեսայ փոշոտ ու մաշված, մոռացված ու խեղճ, այդ դեռ քիչ էր, առջևն էլ նոր լուացուած սպիտակեղէններ էին կախել թելի վրա չորացնելու համար և մի խիստ կասկածելի մաքրութեամբ վարտիկ փուած էր հէնց նրա քթի տակ և տարուբերվում էր քամու առջև: Եւ Աստուածածնի պաշտամունքի այս անսովոր եղանակը որքան ընդհանուր է այստեղ, այնուամենայնիւ օտարականին մտածել է տալիս: Արդարև. եթէ կրօնական զգացմունքից դրդված իտալացին դրել է այդ Մադոննան իր պատի վրա, ապա ինչպէս բացատրել այդ աւելի քան անպարկեշտ վերաբերմունքը դէպի իր տանու սուրբը, մտածում է դուրս է վրդովմունքով մի երկիւղած օտարական. Բացատրութիւնը, սակայն, պարզ է և վրդովվելու տեղիք չը կայ, իտալացին սիրում է և՛ կրօնը, և՛ գեղարուեստը, թէ մէկը և թէ միւսը պատմութեան ընթացքում նա հասցրել է հազուագիւտ զարգացման և չատ անգամ այդ երկուսը կատարելապէս խառնել է իրար: Ներկայ դէպքում նա սիրում է իր Աստուածածնին ոչ միայն իբրև սուրբ,

այլ և իբրև մի սիրուն արձան, գեղարուեստական մի գրաւիչ գործ, և անհրաժեշտ է գտնում այդ երկու հայեցակէտով, որ Մադոննան այնտեղ իր պատի վրայ լինի. նա կը նայէ, երբ ինքը կամենայ, կը մաքրէ, երբ ժամանակ ու տրամադրութիւն ունենայ, արձանը խօսք չի փախչի: Ո՛չ կրօնը և ոչ գեղարուեստը նա երբէք չէ դարձրել բացառիկ պաշտամունքի, մի տեսակ ֆետեշիզմի առարկայ, դրանք նրա բնութեան, նրա ոգու ամենասովորական պահանջների չարքն են անցել, ինչպէս որ հոգեկան մի ախորժելի վիճակում նա սիրում է երգել ուր և լինի, այնպէս էլ նա ուզում է, որ իր Մադոննան պատի վրա լինի և այդ արձանը սիրուն, գրաւիչ լինի: Եւ որքան անհրաժեշտ է այդ Մադոննան, նրա համար նոյնքան անհրաժեշտ և նոյնքան բնական է, որ իր սպիտակեղէնը նրա քթի տակ չորանայ, եթէ այլ յարմար տեղ չը կայ և դա ամենևին սրբապղծութիւն չէ նրա աչքում: Գեղարուեստն Իտալիայում կրօն չէ, բայց կրօնը գեղարուեստ է և երկուսը միասին կազմում են այն, ինչ կազմում է իտալացու հոգեկան աշխարհի հիմունքը—յաւիտականութիւն դէպի իդէալը և սէր դէպի գեղեցիկը:

XV

Իտալական հին քաղաքի միւզէները ընդհանրապէս կրկնակի հետաքրքրութիւն են ներկայաց-

նում, նախ՝ իբրև գեղարուեստական գանձերի հարուստ չեմարաններ, ուր մեծամեծ արուեստագէտները թափել են իրանց հանճարի պտուղները, և երկրորդ՝ իբրև հետաքրքիր անցեալից մնացած չքեղ յիշատակարաններ։ Դրանք մեծ մասամբ իտալական փոքրիկ հանրապետութիւնների դքսական գոռոզ պալատներն են, ծեր վիկաներ աւելի կամ պակաս խոշոր պատմական անցքերի։ Այդ չէնքերն անցնելիս՝ մարդ մի առ ժամանակ ապրում է անցած իրականութեան մէջ և դրքերում կարդացածը, երեւակայութեան ստեղծածն ու զարդարածը ընդունում է մի այլ կերպարանք, որ եթէ իսկականը, բացարձակ իրականը չէ, այնուամենայնիւ աւելի ճշմարիտ է, քան բոլոր պատմութիւնները։

Պատմական տեսակէտից հին չէնքերը ընորոշելու համար բանաստեղծական լեզուն ստեղծել է խօսքի մի բաւական բանաձ դարձուածք՝ «համր վիկաներ», որ սակայն կատարելապէս չէ համապատասխանում պարունակած գաղափարին. որ և է պատմութեան համար ինչ աւելի պերճախօս վկայ, քան որ և է յիշատակարան, մի պալատ, մի աշտարակ, մի բանտ կամ մի պարիսպ։ Չը կայ մի հին չէնք, որ կատարելապէս «համր» լինի։ Մեռնող սերունդը մի անդամ ընդ միշտ ասես կնքում է իր պատկերը, իր ամբողջ կեանքը մի չէնքի վրա և ապա անցնում, ահա թէ ինչու եզիպտական մի հատիկ բուրգը փարաւոնն է իր ստուկ ժողովրդով, Հռոմի ամփիթատրոնը՝ աչ-

խարհին հրամայող կայսրութիւն է, իտալական դքսերի պալատները միջին դարերի գոռոզ հանրապետութիւններն են։

Հին Զենովան էլ իր պատմութիւնը թողել է մի շարք պալատներում, որոնք այժմ վերածված են սիրուն միւզէների կամ դարձել են կենտրոնատեղի քաղաքային կամ պետական այս ու այն հաստատութեան։ Այս չքեղ չէնքերի բնաւորիչ մի գիծը ճարտարապետական տեսակէտից այն է, որ նրանք յարմարեցրած են գետնի զառիվայրերին, սկսւում են վարից և ձգւում են դէպի մի բարձրութիւն, բայց այնպիսի մի վարպետութեամբ, որ մարդ կարծում է, թէ բարձրանում է չէնքի երկրորդ յարկը, մինչդեռ իրօք մի բլրի վրա է բարձրանում։ Այս կողմից հետաքրքիր է մանաւանդ Զենովայի դքսական պալատը, որի չքեղ աստիճանները իրանց մեծութեամբ և փառաւորութեամբ բաւական են գաղափար տալու համար նրա անցեալ բնակիչների ոյժի և փարթամ կայուքեան վրա։ Այժմ այնտեղ զետեղուած են կառավարչական ինչ որ դրասենեակներ, համազգեստով մարդիկ յոգնած ու ձանձրալի վիճում են նախկին անմատչելի դահլիճներում, կամ կռացած յօրանջում են դրոշմած ու խոնացած թղթերի կոյտի վրա։ Շէնքի փառաւորութեան և իր այժմեան դերի մէջ չը կայ ոչ մի պատշաճաւորութիւն. բայց ինչ փոյթ. պատմութեան էվօլիւցիան անյաղթելի է. միայն միշտ իւրաքանչիւր ներկայի մարդն է, որ իր գործերը յաւիտենական կարծելու

երեխայական հաւատը և մխիթարիչ իլլիւզիան ունի։

Մի ւզէի է վերածուած Pallazzo Rosso-ն, ուր Տիսյիանի, Գիդ-Րընէի մի քանի գլուխ գործոցները տեսայ։ Առաջինը գրել է այստեղ իր «Մոգերի երկրպագութիւնը», և «Սպանիական Փիլիպոս II-ին», որ XVI դարի վերջին կրօնական պատերազմների մէջ այնքան տխուր հռչակ հանեց, և քաղաքականներն իրաւացի կերպով անուանեցին «Հարաւի սատանայ»։ Պատմական մի հետաքրքիր դէմք է այն, որ մարդկային խղճի վրա իշխելու խելագար փառասիրութեան համար իր հսկայական կայսրութեան բոլոր ոյժը և իր անսպառ եռանդը թափեց ամբողջ տարիներ և 1598 թուին մեռնելով՝ թողեց իր երկիրը աւերակ և հիւծված։ Եւ Սպանիան մեռնում է այսօր այդ ֆանատիկ և կոյր թագաւորի տուած հարուածից. մեծ ոճիրների քաւութիւնը նոյնքան մեծ ու ծանր է լինում։

Վանդիկն ունի այստեղ իր «Ջիաւոր խաչակիրը» և Գիդ-Րընէն մի շատ սիրուն «Սէն-Սեբաստիան», որ կրօնական խորին էքստազի մէջ աւելս չէ զգում իր մերկ մարմնի վրա ցցված նետերը։

Մի այլ միւզէում, որ Palazzo Bianco (Սպիտակ պալատ) է կոչվում, Վանդիկի մի այլ նշանաւոր գործը կայ—«Պարտ է հարկս տալ կայսեր»—աւետարանից։ Վանդիկը միշտ աննման է, երբ գլուխներ է նկարում, բայց այստեղ նա երեք գլուխներ է պատկերացրել, որոնք հիացմունք են չարժում։ Փարիսեցին, որ դրամն է ցոյց տալիս·



ՎԱՆ-ԴԻԿ *(1599—1641)*

(նկար 134)

որքան յանցաւոր, խորամանկ եռանդ կայ նրա դէմքին, մի այրուած, հարաւային դէմք, կնճռոտ, դեղին ճակատով և այնպիսի արտայայտութիւն ունի, որ կարծես ուզում է ասել՝ «պատասխանիր, թէ կարող եմ», և իր այդ հարցով կատարեալ յաղթանակ տանելու չարամիտ հաւանականութիւնն ունի։ Կիսախաւարի մէջ գծագրվող երկրորդ փարիսեցին նոյնպէս դրամ ունի ձեռքին և մռայլ է, որպէս ամբիր նիւթող մի չարագործ։

Զենօվայի ամենահետաքրքիր գեղարուեստական միւզէն կարելի է ասել Դիւրացցօ-Պալլավիչչինի պալատն է։ Վերածնութեան մեծագոյն վարպետների՝ Միքել-Անջէլօի, Տիցիանի, Րուբենսի հետաքրքիր գործերից կան այնտեղ զետեղված։ Համարեա բոլոր այդ նկարներն էլ այն հետաքրքրքիր չրջանին են պատկանում, երբ միջնադարեան միտքը յոգնած աստուածաբանական, մետաֆիզիքական ամուլ վէճերից, յետ յետ է նայում դարերի խաւարին և գնում է իր փրկութիւնը փնտրելու դասական ժամանակների ազատ քննադատութեան, յունական առողջ փիլիսոփայութեան, անեղծ զգացմունքի և բանականութեան վառվռուն թռիչքների մէջ։ Քրիստոնէական չրջանից ընտրած սիւժէներն անգամ դիցաբանական անցեալի ոգին և երևոյթն ունեն միանգամայն։ Տիցիանը մի հրաչալի «Մարիամ Մագթաղինացի» ունի այստեղ, դիւթիչ, բարեձև մարմնակազմով, ազատօրէն զարգացած. հարուստ կուրծքը, հաղիւ հագ աքօղված չքեղ մազերի թափանցիկ ծածկոյ-

թով, աչքերը կարմրած լայից և վառ այտերի վրա երկու սիրուն կաթիլներ և այդ կինն իբր թէ ազօթում է։ Երկու կաթիլ արցունք մի գեղեցիկ կնոջ այտերի վրա, իսրապէս վչտացած մի դէմք, մի չատ սիրուն դէմք, հեռուն, դէպի անհունը ուղղված մի կարօտակէզ հայեացք, ինձ թվում է, որ նոյն Տիցիանը ուրիշ կերպ չէր նկարի Կալվարիոյի սուգը իր մենաւոր կղզու վրա Ոդիսևսին կորցնելուց յետոյ։

Րուբենսն այստեղ ունի իր «վակխանդը», մի կին, որ այնքան նման է նկարչի կնոջը, չիկահեր ու հաստ, կրքոտ և ազատ իր չարժուձևերի մէջ։ Այս կինը կարելի է տեսնել Րուբենսի բոլոր նկարների վրա, ուր պէտք է եղել կանացի մարմին պատկերացնել և ամեն տեղ ձանձրացնելու չափ միակերպ նոյն հաստ ու մսոտ մարմիններն են երևում։ Վլամանդական նկարչի գեղարուեստական իդէալն է եղել վարթամ, համարեա անձանձ մարմինը իր ալիքաւոր ծալքերով, որոնք այնքան կիրք և միևնոյն ժամանակ այնքան կենսական զօրութիւն, կեանքի վայելք են թագցնում։ Գուցէ վերածնութեան վարպետներից և ոչ մէկը վրձինը այնպէս ազատ չեչտով չէ բողոքել մարդկային մարմնի ստորացման և անարգուելու դէմ, որքան Րուբենսինը։ Սա կարծես հաճոյք է զգում հեգնել արմատացած նախապաշարմունքները, արբագործել մարդկային բնութեանը յատուկ վայելքները, մերկ մարմնի կուլտը վերակենդանացնել և նրան հաւասար իրաւունք տալ հոգեկան այլ հա-



ՐՈՒԲԵՆՍ (1577—1640)

(տես 136)

կումների հետ, որոնք առաքինութիւն անուանն ևն կրում: Մի տեղ ևս տեսայ Բուբենսի «Սէրն ու նախանձը»—մի խիստ բնաւորիչ գործ. նկարիչն ինքն է գրկել իր չիկահեր, հաստամարմին կնոջը՝ կրքոտ, նոյն իսկ անհամեստ չարժումով. երկու դէմքերն էլ վայելքի իղձով բորբոքված, իսկ հեռուից նայում է նախանձի չար աչքը այս երջանկութեան վրա: Սա մի յանդուգն մարտահրաւէր է միջին դարերին, դա մի ըմբոստ ժեստ է, որով նկարիչը կարծես պայրացած թանձր խաւարի, անտանելի դարձած բարոյական բռնութեան դէմ, յետ է քաշում ընդունված պատշաճաւորութեան քողը և քանդում է դարերի մի ամբողջ չէնք: Յեղափոխութիւնները, ինչ չրջանում էլ կատարվելիս լինեն, երբեք առանց ծայրայեղութիւնների չեն անցնում:

Րիբերա նկարչին հաճելի է եղել դարերի խաւարի միջից դուրս քաշել երկու հնագոյն յոյն փիլիսոփաների՝ Հերակլիտի և Դեմոկրիտի դէմքերը: Առաջինը՝ Հերակլիտ, որ Հեգելեան փիլիսոփայութեան և անդուլ չարժման ու լինելութեան սիմեմի նախահայրն եղաւ, աչխարհի իրերի անկայունութեան և յարատև աւերածի առաջ կանգնած է թախծապատ մտահոգութեամբ և չրթունքները կարծես կրկնում են նրա մռայլ, յոռետես խօսքերը, որ նա արտասանել է երկու հազար հինգ հարիւր տարի առաջ. «ամեն ինչ փուլ է գալիս, ամեն ինչ քայլում է և ոչինչ չէ կանգնում. երկու անգամ մի և նոյն գետի մէջ իջնել չէ կարելի,

որովհետև ամեն անգամ այլ ջուր է մեր առաջը... Մենք իջնում ենք գետի մէջ և չենք իջնում, մենք կանք և չը կանք միաժամանակ»։ Անյուծելի պրօբլեմի առաջ մոայլված, նա կարծես լաց է լինում հոգու խորքերում աշխարհի անցաւորութեան վրա, ուր ոչինչ չը կայ կայուն, թէկուզ մի վայրկեան, ուր ամեն ինչ չարժվում, փախչում է, ինչպէս գետի ալիքները և չը գիտես ուր և ինչու համար։ Միւսը՝ Դեմօկրիտ, հեգնող ժպտով նայում է առաջը դրած գլօբուսին և կարծես զարմանում է մարդկային տգիտութեան վրա, որ գետ չը գիտէ աշխարհում ոչինչ չէ կատարվում առանց պատճառաբանութեան օրէնքի։

Իտալական միւզէներից յետոյ իբրև գեղարուեստական յիշատակարաններ ճանապարհորդների ուշադրութիւնն են գրաւում այս երկրի հին և նոր գերեզմանատները, կամ ինչպէս իրանք իտալացիներն են անուանում՝ campo santo-*ները (սուրբ վայր)։ Ես ստիպված եմ մի քանի խօսք ասել գերեզմանների կուլտի մասին ընդհանրապէս։*

Մեռած մարդկանց և առհասարակ գերեզմանների յարգը գուցէ նոյնքան հին է, որքան ինքը մարդը։ Կեանքի ամբողջութիւնը և բնութեան օրէնքները ըմբռնելու իր բացարձակ անկարողութեան մէջ՝ առաջին մարդը իր նմանի մահվան առաջ քար կտրած, ուրիշ բացատրութիւն չը գտաւ այս անօրինակ երևոյթին, բայց եթէ այն, որ աստուածների կամքով նա գնաց մի այլ աշխարհ, այլ կեանքով ապրելու։ Եւ գերեզմանը դարձաւ այդ անծա-

նօթ, խորհրդաւոր աշխարհի սկիզբը կամ դուռը, մշտական խնամքի և պաշտամունքի առարկայ կենդանի մարդու համար, որ զարդարեց իր մերձաւորի յաւիտենական բնակարանը արձաններով, զարթրեց նրան իր աստուածների տաճար ու սեղան։ Հին արիացիներից գերեզմանի պաշտամունքն անցաւ յոյներին և հռովմայեցիներին, ինչպէս և հայերին, որոնք իրանց բարոյական հասկացողութիւններից շատ շատերը, ինչպէս և իրանց հասարակական և ընտանեկան կեանքը պայմանաւորող օրէնքները հէնց մեռելների և գերեզմանների պաշտամունքի վրա հաստատեցին։ Քրիստոնէութիւնը, որ հեթանոսութեան չէնքից ընկած քարերի վրա դրեց իր հիմքը, եկաւ այլ կերպ բացատրելու և սրբագործելու մեռելների պաշտամունքը, բայց գերի աւանդութիւններով անված միտքը խապաո չը հրաժարվեց իր հնադոյն հասկացողութիւններից և մարդը չարունակեց պատել իր մեռելներին համարեա նախկին ձևով, չարունակեց նրանց հեթանոսական պաշտամունքը և զարդարեց գերեզմանները մեծ ածախս արձաններով, կրօնական քանդակներով և խորհրդանշաններով։ Գեղարուեստը հրաժարվեց գահընկէց աստուածների արձաններից և նուիրվեց ամբողջապէս մեռելներին ու գերեզմաններին, և կարծես որչափ զօրեղ եղաւ նոր կրօնի և նոր եկեղեցու ոյժը, նոյնքան աւելի զօրացաւ գերեզմանների պաշտամունքը և որպէս մի հակահարված հին հեթանոսութիւնն իր գեղարուեստով չարունակեց ապրել գերեզմանատներում,

մեռելների չուրջը, մեռելների համար։ Ոչ մի երկրում քրիստոնէական եկեղեցին աւելի հզօր չեղաւ, քան Իտալիայում և ոչ մի երկրում դերեզմաններն այնպէս զարդարված ու խնամված չեն, ինչպէս այս երկրում։ Իտալական campo santo-ները մի մի գեղարուեստական միւզէներ են, և չը կայ իտալական աւելի կամ պակաս յայտնի քաղաք, որ իր campo santo-ն չունենայ։ Այդ կողմից Զենովան առաջնակարգ տեղերից մէկն է բռնում։

Քաղաքից դուրս, բլրակների մէջ բացվում է մի լայնարձակ կանաչ հրապարակ՝ շրջապատված սիւնազարդ և կամարակապ սրահներով, որոնք ամֆիթէատրօնի պէս չուրջանակի բարձրանում են դէպի վեր, դէպի զառիվերը։ Քաղիւներով ու ծառերով պատած հրապարակը յատկացրած է սովորական չիրիմներին, որոնք զարդարված են աւելի կամ պակաս սիրուն խաչերով, պատկերով, դիրլեանդներով, իսկ շրջապատի կամարակապ սրահները, ուր զետեղված են Զենովայի հին և նոր յայտնի ընտանիքների չիրիմները ներկայացնում են մի-մի հետաքրքիր գեղարուեստական պալէրէաներ։ Ամբողջի տպաւորութիւնը վերին աստիճանի վեհ է և խորհրդաւոր։ Բոլորը, ինչ որ դարերի ընթացքում փորձել է մարդկային միտքը անմահութեան գաղափարն ըմբռնելու և մահ ու սարսափը թուլացնելու համար, այստեղ կրկնված է մի աննման արուեստով։ Մարմարի ծով է այս, ուր ճերմակ ալիքներն իրանց եւնէջների, իրանց ծալքերի մէջ կրում են քրիստոնէական սեռաֆիզիկայի


դիկայի, նրա դոգմայի բոլոր մանրամասնութիւնները։

Ահա մի վշտահար կին, որ զգուշութեամբ և յուզմունքով կամացուկ ծեծում է մի խորհրդաւոր դուռ, ծեծում է և սպասում, որ նա բացվի. դուռը չէ բացվում և կինը կանգնած է՝ կարծես վշտից քարացած։ Պատկերն այնքան ցնցող է, որ մարդ ցաւ է զգում այս մարմարէ զանգուածի հետ, կանգ է առնում մի րօպէ սպասելով՝ որ դուռը վերջապէս բացվի և խեղճ կինը ներս գնայ։ Իզուր։

Ահա երկու քոյրեր, երկու մատաղահաս, չքնաղ արարածներ. մէկը մահվան անկողնումն է. հանդերձեալ կեանքի էքստազը դէմքին, նա հրաւիրում է իր կողքին կանգնած քրոջը գալ իր հետ դէպի անմահութեան և երջանկութեան վայրերը և մի և նոյն ժամանակ աւեր երկուսովն էլ դողում են անյայտի առաջ։

Ահա մահը՝ կեանքերը հնձող գերանդին ձեռքին, սարսեցուցիչ ու նողկալի. իր չուրջը փռված են մի քանի դիակներ, իր զոհերը. յայտնվում է երկնքից անմահութիւնը՝ պսակը ձեռքին և մահը սարսափած թաւալվում է գետին՝ ընկճված ու խղճալի։ Դժուար էր աւելի բնորոշիչ օրինակ մեռաֆիզիկայի յաւակնոտութեան։ մահը՝ հաստատ, իրական մահը դողում, յաղթահարվում է մի երեւակայական անմահութեան առաջ և մարդը սիրում է, որ այդպէս լինի, ուզում է, որ այդ ճշմարիտ լինի, և հէնց նրա այդ ցանկութեան տակ է թաղնված մեռաֆիզիկայի ոյժը, բոլոր կրօնների արմատը։

Ո՞ր մէկը նկարագրել. բազմաթիւ են արտասվող որբերը, սգացող մայրերը, սիրոյդ կամ լացող հրեշտակները: Պատյտը տևում է ժամեր. վերջում իմ ուշադրութիւնն է գրաւում մի արձանախումբ, որ կրօնական-այլաբանական լինելով հանդերձ չօշափում է նաև մի զուտ հասարակական բարոյական խնդիր, որ քրիստոնէական վարդապետութիւնը վաղուց է բացատրել իր ձևով: Մարմարէ պատուանդանի վրա կանգնած է մի հարուստ ընտանիքի հայր, որ յաւակնութիւն ունի դէպի երկինք թռչել. պատուանդանի ոտքին նըստած է մի խղճալի աղքատ, վախ ու տանջուած դէմքով, պատառոտուն զգեստներով, նա մեկնել է իր ոսկրացած ձեռքը և ողորմութիւն է խնդրում: Մի քանի պճնված կանայք, անշուշտ մեռածի մերձաւորները, չրջապատել են այդ թշուառին ցուցամոլ ողորմասիրութեամբ և նրանցից մէկը մի սև դրամ է դնում աղքատի մեկնած ձեռքում և նրան ցոյց է տալիս դէպի երջանիկ հանգուցեալը ասել կամենալով՝ «աղօթիր նրա համար»: Ո՞վ է այս բաղդաւորը, որ իր ոտների տակ յաւիտենականապէս սողացող մի թշուառ ունի, արձանի վրա չը կայ գրված. բայց հաւանականաբար այն ընտրեալներից մէկն է, որոնց ճակատին գրված է ծնած օրից չաչխատել և վայելել ով գիտէ ինչ միջոցով ձեռք բերված մի հարստութիւն և որոնք նայում են աչխարհի քաղցածների ու խեղճերի վրա որպէս իրանց խիղճը ողորմութեան միջոցով հանգստացնելու մի միջոցի վրա: Այս գոռող մե-



ԿԱՄՊՕ ՍԱՆՏՕ (ԳԵՐԵԶՄԱՆԱՏՈՒՆ, ՋԵՆՕՎԱ)


(նչև ս 140)

ռելին անգամ իր գերեզմանի վրա հարկաւոր է եղել մի թչուառ, որ յաւիտեան լիզէ նրա ոտնաթաթերը, աղերսող հայեացքը նրա ձեռքին պահէ, և ոտկրացած ձեռներով նրա փէշերից կախվի։ Դժուար էր աւելի խորը կերպով անարգել մարդկային արժանիքը, աւելի անպատկառ կերպով պաշտամունք դարձնել դասակարգերի խտրութիւնը և հանդերձեալ կեանքում անգամ մերձաւորի խեղճութիւնն ու քաղցը չհագեցնելու յանդգնութիւնն ունենալ։ Մարդիկ չեն քաշվել անգամ մահի և գերեզմանի վեհութիւնից և ինչ զարմանք, երբ կրօնն է ասում՝ «Ողորմութիւն կամիմ և ոչ զոհս։ Ո՛վ և երբ չուռ կը տայ կրօնական-բարոյական այս տրտխուր, վհատեցուցիչ ֆօրմուլան և կը փոխէ ողորմութիւնը զոհով, իրական զոհով իր նմանի տանջանքը վերացնելու և ոչ չհագեցնելու ամենաատոր, ամենաանխիղճ կերպով. ո՛վ կասէ աշխարհին, որ զոհն է բարոյական և ոչ ողորմութիւնը, որ անձնուիրութիւնը, զոհը և միմիայն ճշմարիտ զոհը կարող է մի փոքր փայլ տալ, մի փոքր խորհուրդ տալ մարդկային այս սև գոյութեանը. ո՛վ կասէ աշխարհին՝ «Զոհ կամիմ և ոչ ողորմութիւն» իսկ մինչև այդ՝ ես սիրով կը վերցնէի աղքատին այդ գերեզմանի արձանախմբից և պղնձէ դրամի փոխարէն նրա ձեռքը կը տայի արխիմէդեան մի հակայական լծակ։

XVI

Ապրիլեան մի լուսնկայ գիշերով Զևնօվայից ճանապարհ ընկայ Պիզա։ Երկաթուղին սկզբում անցնում է հէնց ծովի ափով. սա մի վերին աստիճանի մխիթարիչ հանգամանք է գիշերային ճանապարհորդութեան ժամանակ օտար երկրում։ Ուշ երբ և իցէ վիճակվել է ամբողջ գիշերներ անցկացնել փոքրիկ վագոնի խեղդող և գարշահոտ մթնոլորտում, չոր տախտակների վերայ նստած, առանց աչք փակել կարողանալու, նա կը հասկանայ անշուշտ, թէ ինչ հաճելագիւտ բաղդ է ծովափի տեսարանը լուսնի չողերի տակ։

Կանգնած փոքրիկ լուսամուտի առաջ՝ նայում եմ դուրսը։ Երկրի ծանօթութիւնը, անընդհատ փոխփոխվող ու չարժուն առուերները առանձին խորհուրդ են տալիս ամեն մի երևոյթի, ամեն մի առարկայի. բլուրը՝ թուում է անտառ, հեռաւոր անտառը բլրի լանջին կարծես մակաղած հօտ լինի, գետակը սպիտակին է տալիս, ինչպէս մի ուլորուն ճանապարհ. իսկ լեռնային արահետը կարծես մացառների միջից իջնող վտակ լինի։ Այս բոլորը՝ անորոշ, իրար խառնված, բայց և գեղեցիկ և մանաւանդ խորհրդաւոր։ Տպաւորութիւնները պարզ և յարատև չեն, պատկերները փախչում են երևակայութիւնից, ինչպէս մթութեան և



ՊԻԶԱՅԻ ԹԵՔ ԱՇՏԱՐԱԿԸ

(Երես 146)

ատուերների հետ վախչող առարկաները, մտապատկերների ամբողջութիւն կազմել և մի փոքր ժամանակ վայելելը այնքան էլ հեշտ չէ, բայց և այնպէս մարդ նայում է, խուսափող պատկերների յետից, միտքը վազում է հապճեպով, թողնում է մէկը, բռնում է միւսը, փորձում է մի քանիսը կապել իրար, ամենքն են խուսափում, սկսում է նորից և այդպէս անվերջ։ Մտքի, երևակայութեան այս աշխատանքը յոգնեցուցիչ է, բայց այնքան դրաւիչ, այնքան դուրեկան։

Պիզա հասանք կէս գիշերից մի փոքր անց։

Պիզան իտալական թերակղզու արևմտեան ափին հաստատված մի փոքրիկ քաղաք է՝ մօտ 30 հազար բնակչով։ Առաջին անգամն է վիճակվում ինձ տեսնել Իտալիայում եւրօպական մտքով մի քաղաք, ուր մշակոյթը գարշահոտ չէ և փողոցները կեղտի մէջ կորած չեն։ Քաղաքը ձգուած է Արնօ գետի երկու ափերին և թէև բոլորովին հարթ, բայց գեղեցիկ տեղադրութիւն ունի։ Հարթ և մեծամեծ քարերով սալայատակած փողոցները իրանց մաքրութեամբ և փոքր քաղաքներին յատուկ չուռ խաղաղութեամբ մի առանձին դրաւչութիւն ունեն և ինչ որ բոլորովին անսովոր է մի իսկական իտալական քաղաքի համար, այստեղ լուսամուտներից կախկխած սպիտակեղէններ չը կան։ Պիզայի հին հանրապետութեան վայելչութիւնից մի բան կարծես դեռ մնում է ներկայ սերունդի վրա և օտարականը այստեղ չահախնդիր հետաքրքրութեամբ կամ սոսկ կողոպուտի առակայ չէ։

Միակ անախորժ հանգամանքը սակաւաթիւ կառապանների անտեսութիւնն է, որոնք հետևում են ճանապարհորդին, առաջարկում են իրանց կառքը, մերժում են ստանում, բայց գալիս են քայլ առ քայլ, գինը սակաւացնում, աղերսում, խնդրում, պահանջում, որ չնորհ անես իր կառքը նստել. սրանցից դուրս մի քանի պրօֆեսիօնել մուրացկաններ ճանապարհին կամ օտարականների յաճախած տեղերում ձեռք են մեկնում և այս է բոլորը. և դա ոչինչ է, համեմատելով ուրիշ քաղաքների անթիւ անախորժութիւնների հետ, որոնք դառնացնում են ճանապարհորդների իւրաքանչիւր վայրկեանը և որոնց մասին կը գրեմ յետոյ, յաջորդ նամակներով։

Պիզայում տեսնելու շատ բան չը կայ, բայց եղածներն իրանց տեսակի մէջ խիստ հետաքրքիր են։ Այստեղ է հռչակաւոր թեք աշտարակը, մի հին կաթեդրալ և մի մկրտարան (baptistère), երկուքն էլ միևնոյն հրապարակի վրա, իրար շատ մօտիկ, բուն քաղաքից դուրս՝ առանձնացած, որպէս քաղդակից սգաւորներ, որոնք լռութեան մէջ կարծես միասին ողբում են իրանց անցեալ փառքն ու մեծութիւնը։

Այս երկու ուշագրաւ յիշատակարաններից ինձ հետաքրքրում է մանաւանդ թեք աշտարակը։ Այցելութեան ժամին հետաւոր մանկութեան մի յիշողութիւն միտս ընկաւ, որ սերտ կապված է այս հռչակաւոր աշտարակի հետ։ Ծխական դպրոցում աշխարհագրութեան դասին ուսուցիչը մի օր ցոյց

տուեց այս քաղաքը քարտէզի վրա, ասելով. «Պիզա յայտնի է իր թեք աշտարակով»։ Մենք աշակերտներս զարմացած այդ բոլորովին անհասկանալի մնացած թեք աշտարակի վրայ, պատրաստեցինք դասը և յաջորդ ուսուցչի ներկայութեամբ կրկնեցինք յայտնի նախադասութիւնը, որ այնպէս հեշտացնում էր մեր գործը՝ «Պիզա յայտնի է իր թեք աշտարակով» և այդ ժամանակից մինչև այժմ Պիզան իմ երևակայութեան մէջ մնացել էր որպէս մի թեք աշտարակ միայն. զարմանալի չէ, որ ես այնքան անհամբեր էի տեսնել այդ հռչակաւոր ճարտարապետական գործը, որի համար միշտ լսել էի, թէ աշխարհի եօթ հրաշալիքներից մէկն է։ Եւ այդ աշտարակը աչքիս առաջն է. ես նորէն կրկնեցի հին օրերի դասական դարձած նախադասութիւնը՝« Պիզան յայտնի է իր թեք աշտարակով»։ Խեղճ վարժապետ, այդ լաւ չէր, որ դու քո մանուկ աշակերտների գլխում Պիզան դարձրել էիր միայն մի թեք աշտարակ, բայց դու իրաւունք ունէիր ասելու, որ Պիզայի աշտարակը մի իսկական հրաշալիք է։

Շէնքը բարձրանում է բոլորաձև բուրգի պէս և արտաքուստ զարդարված է իրար վրա ճաշակով չարված վեց յարկ նուրբ սիւներով, որոնք կազմում են ամեն մի յարկում մի մի չրջանադարձ գալլէրէաներ, տալով ամբողջին մի առասպելական, կլասիկ տեսք։ Բարձրութիւնը հասնում է մօտ 55 մետրի և այդ մարմարեայ ահագին զանգուածը ուղղահայեաց գծից դէպի հարաւ թեք-

ված է $4^1/_2$ մետր։ Այդ թեքութիւնը ստորոտից այնքան ակներև է, որ մարդ նայելիս ինքնաբաւպանութեան բնազդով յետ յետ է քաշվում նրա ուղղութիւնից. ամեն վայրկեան թւում է, թէ այդ մարմարէ արհեստական բլուրը անպատճառ կը խորտակվի և իր տակ կը թաղէ և այցելուին և չրջակայքի տները։ Եւ սակայն նա մնում է այդպէս ծռված, XIV-դ դարից սկսած. ժամանակն անցնում է, կայծակներն են ճայթում նրա գլխին, փոթորիկն է օրօրում նրա կատարը և զարմանալի արուեստը հեղնում է և աւերիչ տարերքը և սահող տարիները։

Զանազան ենթադրութիւններ են արված այս աշտարակի թեքութեան մասին. ոմանք ասում են, թէ այդ արված է դիտմամբ՝ ճարտարապետական արուեստի կատարելութիւնը և ոյժերի ծայրահեղ հաւասարակշռութեամբ նիւթի վրա մարդկային մտքի յաղթանակը ցոյց տալու համար։ Բայց այժմ համարեա ընդունված կարծիք է, որ չինութեան տեղի խոնաւութեան և անհաստատութեան պատճառով, կիսով չափ չինված աշտարակը թեքվել է դէպի մի կողմ, իսկ ճարտարապետները փոխանակ քանդելու և նոր հիմք ձգելու, չարունակել են կառուցանել վերին յարկերը, բայց այնպիսի հաշուով և ուղղութեամբ, որ ոյժերի հաւասարակշռութիւնը պահվել է և աշտարակը կանգուն է մնացել։

Արժէ բարձրանալ այդ աշտարակը. վերելքն էլ ծանր չէ։ Համարեա իւրաքանչիւր յարկում մար-

դու սարսափի մի զգացմունք է տիրում, երբ գալէրէանները պտոյտ գործելիս անցնում է թեքված կողմով և տեսնում է վերևում իր գլխի վրա սպառնալի կերպով կախված և համարեա ընկնելու մօտ կամարները, և այդ ժամանակ սեփական հաւասարակշռութիւնը պահպանելու համար պէտք է առանձին ջանքեր գործ դնել, որովհետև յատակը թեքված, կախված է դէպի վար։ Կատարից բացվում է խիստ գրաւիչ մի տեսարան ընդարձակ հորիզոնով. մի կողմում Սրնօ գետը, իր պղտոր ջրերը գալարելով, հոսում է կանաչ մարդագետիններով և գնում է թաւիվում ծովի մէջ լայն բացուածքով, միւս կողմում՝ Լիվօրնօի մօտ, Մօնդիներօ լեռների մի չարքն է ձգվում մերթ անտառներով պատած, և մերթ լերկ կողերը ինչպէս ահագին խոցեր, արևին դէմ արած։ Սրևմուտքում ծովն է փայլփլում արևի չողերի տակ և գուրգուրում է իր ծոցում Գօրգօնա կղզին։ Պիզայի չորս կողմում երևում է ընդարձակ և հարթ մարդագետինը ակօսված բազմաթիւ ապիտակ ճանապարհներով, որոնք կանաչի այդ միապաղաղ ծովի մէջ երևում են ինչպէս գալարուն, փայլուն օձեր։

Թէք աշտարակի դէմ ու դէմը մի և նոյն կանաչ հրապարակի վրա կանգնած է մի այլ գեղեցիկ չէնք՝ Պիզայի ահագին կաթեդրալը։ Սարդինիայի սարակինոսների վրա տարած յաղթութենից յետոյ 1083 թուին, Պիզայի հանրապետութիւնը հիմնարկեց այս եկեղեցին ի պատիւ ս. Կուսին, որ տուել էր նրանց այդ մեծ աղողութիւնը։

Երբ մի փոքրիկ հանրապետութիւն, որպիսին Պիզայինն էր, կառուցանում է մի այսպիսի հրաշալեայ մեծածախս չէնք, ասել է, որ վաճառականութեամբ կամ պատերազմներով օտար երկիրներից մեծ հարստութիւն, աւար է ձեռք բերել և չը պիտէր ինչպէս վատնել այն՝ իր փառքի դիմաց։ «պիզացիք, ասում է Վիսարի, իրանց մեծութեան և առաջադիմութեան գագաթնակէտին հասած, տէր Սարդինայի, Կօրսիկայի և էլբա կղզու. նրանց քաղաքը լի էր բազմաթիւ մեծ և հզօր քաղաքացիներով և ամենահեռաւոր երկրներից բերում էին անչափ պատերազմական աւար, կողոպուտ» *)։

Միջին դարերում իտալական բոլոր փոքրիկ հանրապետութիւնները մրցակից էին վաճառականութեան և աշխարհակալութեան մէջ, նմանապէս աշխատում էին իրարից յետ չը մնալ մեծածախս և գեղարուեստական վիթխարի չինուածքներով։ Վենետիկն իր պալատն ու աշտարակն ունի, Ջենովեզեան իրանը, ինչու Պիզան էլ չէր կարող ունենալ իրանը։

Իտալական շատ եկեղեցիներ և շատ պալատներ եմ այցելել, համարեա և ոչ մէկին այսպիսի փառաւոր ունի։ Իրար վրա չարված հինգ յարկ մարմարէ սիւները իրանց փոքրիկ կամարներով և սրահակներով, կախված հսկայ չէնքի ճակատից,

*) Taine: Voyage en Italie.

ծածկում, զարդարում են նրան մի անօրինակ ճաշակով։ Օդի մէջ կախված այդ բազմաթիւ սիւներն ու կամարները վերջալոյսի չողերի տակ փայլփլուն ճերմակութեամբ նմանում են մի կախված, դիւթական անտառի։ Թէ արտաքուստ և թէ ներքուստ, ինչպէս սրամիտ կերպով նկատել է Տէնը, այս եկեղեցին հեթանոսական մի բան ունի, որ միջնադարեան միստիցիզմի խեղդող խաւարից, չը պիտես ինչպէս, խուսափել է և ցցվել է այստեղ իր բոլոր վեհութեամբ։ Դասական առողջ և ժպտուն փիլիսոփայութիւնն է այս, կարծես, որ սիրտն ու միտքը հիւծող, չորացնող միջնադարեան աղօթքների մէջ յանկարծ հնչել է իր բոլոր ոյժով և համարձակ։ Այս կամարներն ու սիւները հեթանոսական տաճարի, Ապօլլոնի կամ Պալլաս—Աթենասի բնակարանի մնացորդներ լինեն կարծես և այդ հալածված աստուածների արձանները նրանց ներքոյ միանգամայն իրանց տեղում կը լինէին։ Եկեղեցին ներսից պակաս օրիգինալ չէ։ Շուրջ կարգ մարմարէ կօրնթեան սիւների և պատերի սպիտակութեան վրա հագցրած են սև մարմարէ քառակուսիներ և այսպիսով ամբողջն ստացել է խայտաճամուկ պատկեր։

Սեղաններից մէկի առաջ լուռ կարդում է մի քահանայ, նրա ետևում փոքրիկ, հազիւ 9—10 տարեկան երեխայ, կռացած մի ահագին գրքի ծանրութեան տակ, որ կրում է ուսին, երբեմն երբեմն սուր ձայնով սպասաւորի պարտքն է կատարում. այցելուները գրաւում են նրան, անհաս-


կանալի աղօթքներից երևի ձանձրանում է, անդադար չորս կողմն է նայում անպիր նախադասութիւնները կրկնելիս, չարժվում է կանգնած տեղում և իր մեծ ոտնամաններով աղմկում եկեղեցու խաղաղութիւնը։

Մայր եկեղեցուն բոլորովին մօտիկ կանգնած է մկրտարանը (baptistère), որ ոչ այլ ինչ է իր ձևով, եթէ ոչ հռոմէական եկեղեցու հսկայական գմբէթ, փոխանակ որ և է չէնքի վրա բարձրանալու, ուղղակի գետնի վրա ցցված, ինչպէս մի արուեստական, խաչապակ բլուր։ Ներսում ոչինչ չը կայ բացի Նիկօլա պիղացու մարմարէ քանդակազարդ մի ամբիօնից, մի չատ սիրուն գեղարուեստական գործ։ Առաջնորդ պահապանը, որ մեզ բաց է անում դուռը, կարծես կամենալով ցոյց տալ, թէ այս չէնքն այնքան էլ անհետաքրքիր չէ, որքան թուում է, երկու ձեռքը գնում է բերանի երկու կողմերում և մի բարակ, ղիլ ձայն է արձակում, որ գմբէթի վերին խոռոչներում կրկնվում է տասնեակ արձագանքներով, մօտ 5—6 վայրկեան։

Այցելութիւնս վերջացրած էի համարում երբ Արնօ գետի ափին մի փոքրիկ երեխայ մեկնեց ինձ պօստային պատկերազարդ կարտեր.

—Գալիլէի տունը, պարոն, չէք կամենալ գնել։

Կարտը գնեցի և անմիջապէս գնացի վնտրելու գիտութեան, ազատ մտքի, ազատ խօսքի նահատակի տունը։ Քաղաքի կենտրօնից բոլորովին հեռու, մի կորած փողոցի չատ ընկած անկիւնում գտայ երկյարկանի մի փոքրիկ չինութիւն երկու լուսա-



ՄԿՐՏԱՐԱՆԸ, ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՒ ԹԵՔ ԱՇՏԱՐԱԿԸ (ՓՐԱՅԻՒՄ)
(Երես 150)

մուտներով, և դրան ճակատին փորագրված մարմարի վրա կարդայի՝ «Այստեղ ծնվեց Գալիլէյ 1564 թվին, փետրվարի 18-ին»։ Կանգնած նայում եմ մոախոհ, նոյն ժամանակ լուսամուտներից մէկը բացվեց, մի թխված քնաթաթախ դէմքով մարդ յայտնվեց, որ տեսնելով օտարականին, կարծեմ մրթմրթալով փակեց փեղկերը և հեռացաւ, երևի վաղուց հետէ ձանձրացած այցելուների օտար դէմքերից, օտար հայեացքից։

Ինձ Գալիլէյ. երբ քարացած դօգմայի երկաթէ կապանքների տակ, խոնաւ բանտերի խաւարում արտասվում էիր դաղանացած ու ապուշ կըղերի տգիտութեան վրա և հնար էիր փնտրում քո մեծ գիւտը աչխարհին կտակելու քո անուան ու քո նուիրական դատի հետ, մտածում էիր, արդեօք, որ երեք դար յետոյ քո աղքատիկ տնակը կը դառնայ ուխտատեղի անգամ հեռաւոր արևելքից հասնող մի ճանապարհորդի համար, կարծ էիր յուսալ, որ փոքրիկ մանուկն անգամ քո հայրենի քաղաքում, քո անունով կը պարծենայ, մինչդեռ քո անաւանցած դահիճները մոռացութեան և յաւիտենական անարգանքի կը դատապարտվին։

Պատմութիւնը դարերի միջից թաւալվում է ոճիրներով ու արիւնով ծանրաբեռնված։ Միտքը մերթ կոխկռտված ու ջարդված, մերթ յաղթական ու փրկարար, յամառ կերպով իր ճանապարհն է հարթում, բոլոր այդ դիակներից, բոլոր այդ արիւնից, բոլոր այդ ոճիրներից բարձր։ Ապագայ սերունդները դառնութեամբ ողբում են հայրերի սը-

խալները և նախատինքով կնքում չիշատակը խղճի և մտքի ազատութեան թշնամիների, բայց մի արտասուելի անհետևողականութեամբ տարբեր ձևերով և տարբեր միջոցներով չատ անգամ չեն քայվում նման ոճիրներ, նման բռնութիւններ գործելուց։ Աչխարհում այժմ հազիւ գտնվի մի երկիր, ուր Գալիլէյի անունը պատկառանքով չը յիշվի, բայց ով կարող է ասել, թէ միտքը և խիղճը, որոնց նահատակն է այդ մեծ մարդը, ազատ են այդ մի և նոյն երկրներում։ Սխոլիչ և յուսատուն այն է միայն, որ դիտութեան, մտքի և ազատութեան գործը թէև դանդաղ է, բայց աներկբայ և ժայռի հիմքը կրծող ալիքների նման լուսաւոր բանականութիւնը խաւարի դարաւոր չէնքն է քանդում ժամ առ ժամ։ Ո՞վ կարող է երկբայել, որ այդ դարաւոր պայքարի մէջ յաղթանակը ի վերջոյ Գալիլէյներինն է, յաղթանակը ազատ մտքին է պատկանում։

XVII

Ապրիլի կէսն է, չտապում եմ դէպի Հռօմ։ Ծոգնած ճանապարհորդի համար երկաթուղին աւելի և աւելի ձանձրալի է դառնում, բայց երկու միխիթարութիւն ունեմ, նախ՝ որ չուտով տեսնելու եմ յաւիտենական քաղաքը, որի պատմութիւնը

այնքան խաղացել է իմ մանուկ օրերի երևակայութեան հետ, և երկրորդ՝ մօտենում եմ բուն հարաւին, որի բնութիւնը այնքան գրաւչութիւն ունի տարվայ այս եղանակին։

Ժամ առ ժամ դէպի հարաւ, դէպի Աֆրիկայի ափերն իջնելու գիտակցութիւնը մի ախորժելի տրամադրութիւն է բերում մարդու վրա. հաճելի է երևակայել այն վայրերը, ուր արեգակի չողերն այնքան թափ ունեն և այնքան ողորմած են, ուր ձիթենին, նարինջը և կիտրոնն են ծաղկում, ուր մարդը միշտ բնութեան մէջ է, նրա մի մասն է կազմում, ուր անտառները մշտականաչ են և լեռները միշտ ծաղկապատ։ Այս գրաւիչ պատկերները, հարաւի բնութեան կենսական թափը, կարծես, կամաց-կամաց աւելի յախուռն է դարձնում արեան պտոյտը մարդու երակներում, ապրելու ցանկութիւնը կրկնապատկվում է և նեղքին ոյժն աճում։ Հարաւի բնութիւնը կեանքի անապատ աղբիւր է։

Լուսաբաց էր, երբ մօտեցանք Հռօմին։ Հարթ ու խոնաւ մարզագետիններ ձգվում են հեռու, հեռու. արտեր չը կան կամ չատ սակաւ են, դրանց փոխարէն երևում են ձիթենու ծառեր հատ-հատ կամ խումբ-խումբ։ Վաղ առաւօտից՝ արևի առաջին չողերի տակ քանի մի վախտ ձիեր և այլ անասուններ արածում են մարգագետիններում տըխուր ու մոլորված կերպարանքով. ահա մի մարդ, որ վար է անում, մի խումբ զինուորներ, որոնք վաղորդեան վարժութիւններն են կատարում։ Տեղ

տեղ հարթութիւնն ակօսվում է խորը, ճահճային վտակով, որ զալարվում է իր պղտոր ջրերով թումբերի պէս փոքրիկ բլրակների և կանաչազարդ մարդերի միջով։ Դաշտանկարը հարուստ չէ, բայց ինչ փոյթ։ Հոօմի չրջակայքում մարդ քնութեան տեսարաններ չէ փնտրում, այլ մի ուրիշ բան, որ խօսէր մի զարմանալի անցեալից. այն էլ տարօրինակ է, որ այնքան լէգէօնների և ալպերի կատարից հեղեղի պէս թափվող անթիւ բարբարոսների կոխած տեղերում տակաւին խոտ էլ է բուսնում։ Ամբողջ հին աշխարհը եկաւ այստեղ մեռնելու և այս թմբերից իւրաքանչիւրը կարծես մի ժողովրդի դերեզման լինի։ Անասուններն հօտերն ու աշխատող մարդիկ անգամ այս տեղերին չեն պատչաճում։ Երկաթուղին անցնում է դաշտերից, ակսվում են բանջարանոցներ, ահա և փոքրիկ խուղեր, տեղ-տեղ երևում են հին աւերակների մնացորդներ, որոնք արագութեամբ փախչում են աչքից. ահա և Հոօմը։

Ես սիրում եմ նոր քաղաքի առաջին տպաւորութիւնը գրի առնել. ճշմարիտ է, այդ ժամանակ մարդ հեչտութեամբ չափազանցութեան և թիւրիմացութեան ենթակայ է, բայց այն՝ ինչ զգացվում է առաջին ժամերին, այլ ևս երբէք չէ կրկնվում, արտաւոր, ուշագրաւ երևոյթներն անգամ կամաց-կամաց դառնում են սովորական և խուսափում են դիտողութիւնից։

Հոօմի առաջին տպաւորութիւնը յարուցանում է մի անօրինակ յուսախաբութիւն, որի աղբիւրը պատմութեան ստեղծած պատրանքների մէջ պէտք է փնտրել։ Գրքերից քաղելով, մարդ Հոօմ անուան հետ կապել է այնպիսի մտապատկերներ, որոնք դարերից ի վեր արդէն չքացել են՝ այլ ևս երբէք չվերադառնալու համար։ Ինձ թւում է, որ Հոօմ ասելով երևակայութեան և զգացմունքի մարդը երբէք նորը չէ հասկանում, այլ միշտ հինը և միայն հինը և հետևապէս երևակայում է յաւիտենական քաղաքը իր կապիտօլիով, պալատներով, կրկէսներով, իր զարմանալի ծօրումով, ուր սառնարիւն ցեներով, իր զարմանալի ծօրումով, ուր սառնարիւն ցեներ զօրները, կօնսուլները, սենատօրներն ու տրիբունները միահեծան ժողովրդի հետ աշխարհին օրէնքներ էին խմբագրում և կեսարների ոտքերի տակ փռում ազգերի բաղդը։

Եւ այս բոլորի փոխարէն ճանապարհորդի աչքի առաջ ներկայանում է մի աւելի կամ պակաս չափով ժամանակակից քաղաք իր պարտէզներով, ծառուղիներով, կառքերով, ելեքտրական հանրակառքերով, բազմայարկ տներով։ Երևակայածի և իրականի տարբերութիւնն այնքան ցնցող է, որ մի րոպէ մարդ դժուարանում է հաւատալ, թէ այս է Կատօնների, Պօմպէոսների և կեսարների քաղաքը։ Սակայն մի քանի ժամվայ դիտողութիւնը բաւական է, պատմութեան ստեղծած պատրանքը չէ դիմանում հաստատուն իրականութեանը, հին մտապատկերները չքանում են արագութեամբ և նրանց տեղը մնում է մի տեսակ ափսոսանք, կուզէք ասեմ ցաւի պէս մի բան, որ ճնշում է մարդու սիրտը այս պարզ, անմեղ յուսախաբութեան համար։

Մի հանակ կայ, երբ մարդ հաւատում է դիցաբանական բոլոր աստուածների գոյութեանը, երևակայութեանը հետ խաղացող առասպելական քաջերի սխրագործութիւններին և Հերկուլէսին ու Վահագնին, Արամազդին ու Պրոմէթէոսին, երբ մարդ ընակեցնում է երկինքը բազմաթիւ թևաւորներով, ապրում է նրանց հետ, սիրում է նրանց և ուզում է տեսնել նրանցից մէկն ու մէկին։ Բայց մինչև որ իր իղձը կատարվի, տարիներն անցնում են, տանելով այդ բոլոր աստուածներին իրանց առասպելներով և զարթնող բանականութեան այս առաջին յաղթանակը թողնում է մանուկ սրտերում կիզիչ յուսախաբութեան ցաւը, մի դատարկութիւն, մի ախտանանք։ Ճիշդ այսպիսի բնաւորութիւն ունի Հոօմի ներկայ իրականութեան առաջ բերած յուսախաբութիւնը. մարդ տեսնում է, որ այնպէս չէ, ինչպէս ինքն էր երազում, գիտէ էլ, որ ուրիշ կերպ չէր կարող լինել, բայց այնուամենայնիւ ցաւում է, որ իր երևակայած Հոօմը չը կայ այլ ևս, որ հին աստուածները առասպելների պէս անցել են ժամանակի հետ, տեղ տալով նոր կեանքին, նոր պատմութեանը, որի էվօլիւցիան ոչինչ չէ խնայում, ինչպէս որ զարթնող բանականութեանը չէ դիմանում ոչ մի ֆիկցիա, ոչ մի առասպել, ոչ մի սուտ աստուածութիւն, լինի նա երկնքում, թէ երկրի վրա։

Հին Հոօմը ընկել է, ինչպէս մի վիթխարի հըսկայ, և նրա յաղթ անդամները ջարդ ու փշուր եղած՝ փռվել են նոր քաղաքի բոլոր անկիւններում։

Այդ բեկորները պէտք է փնտռել մէկիկ-մէկիկ այս ու այն փողոցում, այս ու այն աւերակի մէջ, հիւսել իրար հետ նրանց պատմութիւնը, և եթէ հնարաւոր է, մի ամբողջութիւն ստեղծել՝ աբստրակցիա անելով ներկան իր իրականութեամբ։ Ես առաջին օրը նուիրում եմ ընդհանուր չրջագայութեան ամբողջի մօտաւոր տպաւորութիւնն ստանալու և ապագայ այցելութիւններս որոշ չափով դիւրացնելու համար։


Հոօմում հին ու նորն այնպէս են խառնվել իրար, որ այլ ևս դժուար է ասել, թէ ուր սկըսվում է մէկը և վերջանում է միւսը։ Նոր չինութիւնները բարձրանում են հին աւերակների չուրջը, ինչպէս մանրացած սերունդներ մեծ պապերի գերեզմանների չորս կողմը բոլորած։ Մեծ հրապարակները սակայն նոր հոսանքների առաջ աւելի ըմբոստ են մնացել. նրանք չարունակում են պահպանել մի բան, որ յատկութենապէս բողոքողի խառնուածքն ունի։ Այնտեղ են չէն կամ աւեր հին պալատները. այնտեղ են բարձրանում օբէլիսկները, զանազան արձաններ, այնտեղ են նաև հնադոյն աւազանները։

Հոօմում համարեա ամեն ինչ օրիգինալ է, ընդունված ձևերից ու հասկացողութիւններից մի փոքր տարբեր։ Ահա մի չատ սիրուն սիւն, որ բարձրանում է մի փղի մէջքի վրա. ահա մի աւազան, որ ներկայացնում է մի նաւակ, որի ցոուկից և չետևի մասից ջուր է ժայթքում։ Կենտրօնական կայարանի առջև մի աւազան կայ, որի

նմանը, իբրև օրիգինալ գործ, ոչ մի՛ այլ քաղաքում գտնել չէ կարելի կարծեմ. մրրկված ծովի ալեգօրիկ պատկերն է ներկայացնում. չորս գեղեցիկ, մերկանդամ կանայք, իւրաքանչիւրը նըստած մի ջրային կենդանու վրա, ալիքների հետ դէպի տարածութիւնը նետվելու պատկերն ունեն, մանաւանդ երբ թրջված են վզից վայր թափվող ջրի ցնցուղներով: Նրանց նայելիս անկարելի է չը յիշել փոթորկված, տակն ու վրա եղած ծովը իր ուռած ալիքներով, այն աստիճան նրանց դիրքը, դէմքերի արտայայտութիւնը և հեծած կենդանիները տարերային են:

Փլիրինալի արքայական պալատի առաջ մի մարմարէ արձանախումբ կայ.—դա մի հսկայ է, որ զսպում է անօրինակ մեծութեամբ մի ձի: Սոսկում է պատում մարդու այդ զոյգին նայելիս, այն աստիճան վիթխարի են այդ մերկ, ջլուտ մարդն ու կատաղած, հսկի ոտների վրա բարձրացած կենդանին: Դա արդէն գեղարուեստ չէ, այլ մարքի մի խօլական, աստանեցուցիչ վիժմունք, որ սակայն զարհուրանքի հետ նաև հիացմունք է զարթեցնում: Կենդանական ոյժը խողխողող հսկիւռ տղամարդի յանդգնութիւնն աւելի բուռն կերպով ներկայացնել անհնարին էր:

Բարբարինիի հրապարակում մի տարօրինակ աւազան կայ, որ միայն Հռոմում կարող է լինել. չորս դելփիններ գնչերի վրա կանգնած՝ բարձրացնում են պոչերի ծայրին մի ահագին խխունջի պատեան, որի մէջ նստած է ծովի աստուածը և



ՓԼԻՐԻՆԱԼԻ ԱՐՔԱՅԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԸ (ՀՏՄ. 160)

զուարճանում է դէպի երկինքը ջուր փչելով։ Երբէք մի ծովափնեայ ժողովուրդ աւելի զեղեցիկ կերպով չէ ընդօրինակել ծովի բնութիւնը։

Մի օբելիսկ տեսայ, որի չորս անկիւններից չորս եգիպտական առիւծներ ջուր են փչում, իրանց երախներից հայրենի երկրի յիշատակարանի վրա հակելով։ Եգիպտական օբելիսկը եգիպտական առիւծների յաւիտենական հսկողութեանը յանձնել, որքան զեղեցիկ, որքան իսկական զեղարուեստական գաղափար։

Ճչմարիտ է, հին Հռոմի մեծ մասը տարածվում է այժմեանի հարաւում և արեւմուտքում. այդ տեղերում են եօթ բլուրներից Պալատինը, Կապիտօլը, Էսքիլէնը, Նանիկուլը, այդտեղ է Ֆօրումը, Կօլիզէյը, Կոստանդիանոսի յաղթական կամարը, բայց և քաղաքի բոլոր մասերում հինն ու նորը խաճվել են իրար։ Անցնում ես մի փողոցով, նեղ է, կեղտոտ, մայթ էլ չունի, թէև շինութիւնները նոր են, բայց ահա մի անկիւնում, մի պատից յետոյ առաջդ է ցցվում մի կորինթեան սիւն, պարըսպի կամ կամարի մի կտոր, մի աւերակ, կամ չէն պալատ։ Այնտեղ՝ ուր բարձրանում է Տրայանոսի մարմարէ սիւնը (27 մետր բարձրութեամբ), ներկայացնում է քառակուսի հրապարակ, որ չորս մետր աւելի խորն է, քան այժմեան մակերեսոյթը. այդ խորութեան մէջ թաղվված են Տրայանոսի տաճարի սիւնները, որոնց մեծութիւնն ու կարծրութիւնը մարդու չուարեցնում են. դրանք սիւներ չեն, այլ ինչ որ տիտանեան աշտարակներ

միակատուր քարից, որոնք չը գիտես՝ ինչպէս են բարձրացել և ինչպէս թաւիվել։

Պապերը դարերի ընթացքում արել են, ինչ որ կարողացել են, որպէս զի հնթանոս աշխարհի վաւքի մնացորդները կամ քրիստոնէական տաճարների չինութիան ծառայեն իբրև նիւթ կամ հին յիշատակարանների մէջքերին դրել են մի բան, որ քրիստոնէութեան յաղթանակը յիշեցնէր։ Բազմաթիւ են հին պալատները, որոնք խոպան կամ մասնաւոր ձևափոխութեան ենթարկված՝ այժմ եկեղեցիներ են։ Տրայանոսի կոթողի կատարից 1587 թուին ցած է բերվել կայսրի արձանը և նրա տեղը բռնել է լուսապսակ դևիով Ս. Պետրոսը։ Մարկոս Աւրելիոսի գեղեցիկ կոթողը՝ որի բարելիէֆները ներկայացնում են ասօիկ կայսրի պատերազմները մարկոմանների և գերմանական այլ ցեղերի դէմ, նոյնպէս զգում է իր կատարին քրիստոնէութեան յաղթանակի թանձրութիւնը—Սիքստոս Բ-ենը նրա գլխին դրել է 1589 թուին Ս. Պօղոսի արձանը։

Հռոմում չրջագայութեան ժամանակ ես շատ հետաքրքիր, շատ օրիգինալ գեղարուեստական կամ պատմական ու կրօնական յիշատակարաններ տեսայ, բայց կապուցինեան կրօնաւորների գերեզմանատունը որքան ապշեցուցիչ է իր տարօրինակութեամբ, նոյնքան, դուցէ և աւելի, նողկալի է թէ իր պատկերով և թէ իր նպատակով։ Սկեղեցու ներքին յարկը բաժանված է բազմաթիւ մանր կամարակապ, մռայլ խցիկների, որոնք ամենքն էլ իրար հետ կապված են մի երկար նրբանցքով։ Այդ


խցիկներն այցելելու համար մի փոքր առողջ ներվեր և նոյնքան էլ առողջ թոքեր պէտք է ունենալ, որովհետև նրանցից իւրաքանչիւրում պատերի տակ բաց-բաց չարված են, ով գիտէ քանի ժամանակից ի վեր, կրօնաւորների կմախքները։ Սմբողջ ամիսներ և տարիներ սուրբ հայրերը երեւի կատարել են այստեղ մի անտանելի աշխատանք, պէտք է համարվել կմախքները բաժանել առանձին, առանձին մասերի, և գանգերից, բազուկներից, ոտներից և կմախքի այլ կտորներից, իրար վրա գեղարուեստօրէն չարելով, պատրաստել սիւներ, կամարներ, բարելիեֆներ. աւելի մանր ոսկորները, օրինակ մատների խաղերը, որոնք անյարմար են եղել կամարներ կազմելու, ծառայել են աւելի նուրբ գործերի. նրանցից պատրաստել են գիրլեանդներ, որոնք ցանցի պէս կախկիվել են պատերից, մեծ ու փոքր չահեր, կախված առաստաղներից և այլ զարդեր։ Խոռոչների մէջ, դանդաչէն կամարների տակ պառկած են յայտնի փերձների կմախքները կրօնաւորների սև զգեստով և մի աղօթագիրք ձեռքերին, դէմքերը քայքայված, աչքերի, քթի, բերանի խոռոչները հրէշաւոր, նայելն անգամ ծանր է։ Օդն այստեղ անտանելի է. թարմ ոսկորների վրա տակաւին երևում են մսի բարակ չերտեր, որոնց նեխումը անչուշտ չարունակվում է. փտող ոսկորներից բարձրացող գազերով ծանրաբեռնված մթնոլորտը կուրծք է ճնշում, բայց կոյաեր տեսայ, որոնք ա-

զօթում էին կմախքների այս զազրելի չեղջակոյտերի առաջ ծունկ չոքած։

Մահվան միւզէյ, մահվան գեղարուեստ, որի գաղտնի հմայքը ճաշակելու համար պէտք է կատարելեան կրօնաւոր լինել և այս դիակներով լեցուն, հոտած ներքնայարկերի ապականած օդը չնչած լինել։

XVIII

Տարվայ այս եղանակին ճանապարհորդողները քաղաքիս են Հռոմում։ Կառքերի մէջ նստած՝ բեզեկները ձեռներին, նրանք նորեկների զարմացած հետաքրքրութեամբ աչ ու ձախ նայելով՝ դանդաղութեամբ անցնում են չէն փողոցներով, խոյս են տալիս չէն, բազմամարդ թաղերից և ծածկվում են կորած-մոլորած անկիւններում։ Շէն ու կենդանի քաղաքի մէջ այդ մարդիկ աւերակներ են փնտռում, ուր քան և հինգ և աւելի դարերի պատմութիւն կայ թաղված։ Այնտեղ՝ այն աւերակների տակ է Հռոմը, հին, կործանված Հռոմը, որ նոր չէնքերի, նոր պալատների, նոր փողոցների կողքին յամառաբար իր տեղն է պահում և արևից մի փոքր լոյս, աւերակների գունատ ցոլքեր է աղերսում։ Պառաւած անցեալը մաս-մաս ապրում է ներկայի մէջ, ինչպէս զառամեալ հայրերը չարունակում են երերալ իւ-



ԿԱՊՈՒՑԻՆԵՐԻ ՍՏՈՐԵՐԿՐԵԱՅ ԳԵՐԵԶՄԱՆԱՏՈՒՆԸ (ՀՌՈՄՈՒՄ)

(Նրկս 163)

բանց կորովի և երիտասարդ չառաւիղների մէջ։ Պատմութեան չղթան երբէք չէ կտրւում, նրա էվոլիւցիան թռիչքներ չէ սիրում, հինը չաղախ է դառնում նոր կեանքին և այսպէս անվերջ։

Ծօրմւմ, կօլիզէ. չեմ կարծում թէ Հռօմ հասնող իւրաքանչիւր ճանապարհորդ ամենից առաջ Ծօրումը, կօլիզէն տեսնելու չը վազէ։ Պէտք է անցնել մի չարք չատ անախորժ փողոցներից, ուր ոտաբոբիկ և կեղտոտ մանուկների խմբեր չրջապատում են օտարականին և բազմաթիւ ձեռքեր կարկառում. պէտք է ականջ խցել, չը լսել չորս կողմից ծառայութիւն կամ ապրանք առաջարկող ձայները, զգուշութեամբ քայլել ուղ տեղ՝ նաբինջի կեղևների վրա չը սայթաքելու համար, որպէսզի մարդ կարողանայ Ծօրում հասնել։

Դա մի ընդարձակ քառակուսի հրապարակ է, գնանի մակերևոյթից մի երկու մետր խորութեամբ և չրջապատած ցանկով։ Տպաւորութիւնը ցնցող է, չը նայելով աւերածի բոլոր խստութեանը։ Պալատինայի և Կապիտօլի ստորոտում փըռված այդ ահագին հրապարակը կարծես մի պատերազմի դաշտ լինի մեծ ճակատամարտից անմիջապէս յետոյ։ Այստեղ մի տրագիքական անկարգութեամբ ցաք ու ցրիւ փռված են, ինչպէս դեռ նոր չարդված մի բանակ, բազմաթիւ քանդակված քարեր, կորինթեան սիւների մասիվ թակաղաղներ, խոշոր բարելիեֆներ, փշուր փշուր ընկած արձանների մնացորդներ, կիսով չափ կանդուն, այլանդակված սիւներ, գրանիտ, մարմար և

սովորական քարերը իրար խառնված սպիտակին կամ սևին են տալիս հեռաւորութեան մէջ և ամբողջ հեռապարակը կարծես խորհուրդը է ցաւով՝ ինչպէս լեռնալանջի վրա ուշ գիշերին մոռացված վիրաւոր։ Այս է Հռոմի հռչակաւոր Ֆորումը, ուր այնքան դարեր հին աշխարհի բաղդն էր վճռվում և ազգերին օրէնքներ թելադրվում։

Այս ընդարձակ աւերակների վրա, որպէս հսմբը սգաւորներ, դեռ կանգուն մնում են Սատուրնի տաճարի ութ սիւները կորնթեան զարդերով, որոնցից մի քանիսի մէջքը պնդված է երկաթէ օղակներով, ինչպէս ծեր մէջքերը պատող գօտիներ։ Սրանցից մի քիչ հեռու երեում են վեսպասիանոսի տաճարի երեք սիւները, ողջ կուռ մարմարից, և նայում են իրանց բաղդակից սիւնների մի այլ երբորդութեան՝ մնացորդ կաստորի տաճարի։ Ֆորումի մի ծայրում բարձրանում է Տիտոսի այս աչխատաւոր կայսրի յաղթական կամարը, որ կառուցվեց 70 թուին հրէաների վրա տարած յաղթութիւններին ի յիշատակ. միւս ծայրում, դառնալինին համարեա հանդիպակաց, կանգնած է Սեպտիմ-Սեվերի յաղթական կամարը, որ 203 թ. չինվեց ի պատիւ նրա երկու որդիների՝ Կարակալլայի և Գեդի, որոնցից առաջինը եղբօրն սպանելուց յետոյ նրա անունն էլ ջնջեց յիշատակարանի վրայից։ Այս երկու կամարները Ֆորումի չինութիւնների մէջ ամենալաւ պահվածներն են, մի փառքի և զօրութեան դառող սիմ-


վօլներ, այժմ լոկ աւերակների վրա հսկող ծեր, մռայլ պահապաններ լինեն կարծես։

Կանգուն են նոյնպէս Կոստանդինի բազիլիկի երեք կամարները. քիչ անգամ աւերակները կարող են այդ աստիճան գոռող լինել իրանց աւերածի և անկման մէջ։ Այդ կամարների բարձրութիւնն ու լայնութիւնը այնպիսի չափերի է հասնում, որ այդ չէնքի ամբողջութիւնը, որքան և չքեղ ու զարդարուն լինէը նա, սոսկումից դուրս ուրիշ զգացմունք զարթեցնել չէր կարող մի ոչ հռոմայեցու սրտում։ Սրանցից բացի՝ բազմաթիւ ուրիշ տաճարների կամ տեղն էր ցոյց տալիս կամ անհչան մնացորդները։ Ամենից պարզ և որոշ երեում է «Սրբազան ճանապարհը» (Sacra Via) Ֆորումի ամենամեծ և ամենաբանուկ փողոցը. դեռ մնում է նրա մարմարէ սալայատակը և երկու կողմերում պարզ նչմարվում են իրանց կատարներին նախկին կամարները կրող սիւների չարքերը։

Անհնարին և անօգուտ է նկարագրել բոլորը Ֆորումի վրայ անկիւն չկայ, որ որ և է յայտնի կամ մեծ անուան հետ կապված չը լինի։ Մեծ Կատոն, Օգոստոս, Տիտոս, Կարակալլա, Ներոն, Կոստանդին—բոլորն էլ իրանց մասն ունեն այս չինութիւնների մէջ, բոլորն էլ իրանց անկիւնն ունեն այստեղ։ Հանրապետութիւնն սկսեց նրա չինութիւններն ու զարդարանքը և կայսրութիւնը չափսնակեց անընդհատ։ Եւ որքան երկար ու մեծածախս եղաւ նրա չինութիւնը, նոյնքան էլ երկար և դանդաղ եղաւ նրա աւերումը։

Հռոմի անկումից յետոյ, մինչև VI դարը, Ֆորումը չէն մնայ այնուհետև ամբողջ դարեր, նրա քարերն ու քանդակները կամաց կամաց կողոպտում էին քրիստոնէական եկեղեցիների և դանազան պալատների համար։ XIX դարում նա այնպէս էր աւերված և ծածկված հողով, որ Ֆորումի անունն անյայտացել էր և նա կոչվում էր Campo vaccino, «Կովերի հրապարակ», որովհետև ծառայում էր իբրև անասունների կայան։ Միայն անցեալ դարում այստեղ փորուածքներ սկսվեցին և այս աւերակները լոյս աշխարհ ընկան մի քանի մետր հաստութեամբ հողի տակից։ Պեղումները դեռ չառունակվում են, բազմաթիւ սայլեր անընդհատ հող են դուրս կրում և նորանոր կամարներ ու չէնքեր են դուրս ցցվում գետնի տակից։

Գուցէ ուչ մի հին յիշատակարան այնպէս չէ պատկերացնում Հռոմի ահագին փառքն ու մեծութիւնը և նրա զարհուրելի անկումը, որպէս այս Ֆորումը։ Ամեն ինչ այստեղ հակայական է և հաստաբեռ, ասես երկաթէ մատներով և խոլական ուժով է կառուցված։ Թւում է, թէ մի հսկայ է խորտակվել և իր անդամները ցաք ու ցրի փռել այս հրապարակի ամեն կողմերում։ Հռոմն է այս, ահաւոր իր մեծութեամբ և նոյնքան ահաւոր իր անկումով։ Հիւսիսի բոլոր բարբարոսների ոտքերի փոշին է թափված այստեղ. նրանք անցան այս վայրերով, ինչպէս աշխարհաւեր փոթորիկ, և նրանց միանգամ խորտակածն էլ երբէք չը բարձրացաւ։



ՖՈՐՈՒՄԻ ԱՒԵՐԱԿՆԵՐԸ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԱՒՈՐ (ՀՌՈՄ)

(Տես և 165)


Ցօրումից հետու չէ Կօլիզէյը, որ հիմնարկեց Վեսպասիանոսը և վերջացրեց նրա որդին՝ Տիտոս 80 թուին։ Սա Հռոմի հին թատրոններից մեծագոյնն է և աշխարհի ամենայայտնի շինութիւններից մէկը։ Ես տեսայ նաև Վերօնայի ամֆիթատրոնը, որը չը նայելով իր մեծութեան կարող է մի քանի անգամ պարունակվել այս չէնքի մէջ։ Դրսից նա նմանում է մի ահագին միջնաբերդի, չրջապատած բարձր պարիսպներով, որոնք ժայռապատ լեռներ են յիշեցնում, իսկ ներքուստ՝ այդ լեռնաձև պարիսպների կրծքին ամֆիթատրոնով բարձրացող քարեայ աստիճանները, յօժանները թուում են անհաչիւ։ Հաւատացնում են, որ 40—50 հազար հանդիսատեսներ էլին տեղաւորվում այդ թատրոնում։ Այս վիթխարի շինութեան բացումը Տիտոս կատարեց 5000 գազանների կոտորածով, զանազան խաղերն ու արիւնոտ մրցութիւնները տևեցին հարիւր օր։ Եւ այնուհետև հին աշխարհի միակ սեփականատէրը դառնալուց յետոյ՝ այստեղ էր զուարճանում Հռոմը, այստեղ էր քրքջում իր հսկայ, արիւնոտ ծիծաղով։

Կանգուն է մնացել միայն $^1/_3$ մասը իր բոլոր մանրամասնութեամբ. պարզ երևում են գազանների դուռը, կայսերական լօժան, գլադիատօրների դուռը։ Մրցութիւնների և կռիւների ձուաձև հրապարակը ամբողջ է։ Չը նայելով իր աւերածին, չէնքի տպաւորութիւնը խիստ է և անգութ։ Երկաթէ ներվերի և արիւնոտ տեսարանների ծարաւ մի հասարակութեան պատկերն է այս։ Այդ

ժասիվ, ահագին քարերը իրանց համրութեան տակ կարծես ինչ որ սոսկումի պատմութիւն ունեն թագցրած, նստել են վրան և էլ չեն խօսում և չը պիտի խօսեն յաւիտեան։ Դա մի գաղան է, կարծես, հրէշաւոր ու վիթխարի, որ սառնութեամբ քաղմել է բիւրաւոր զոհերի վրա, խեղդել նրանց հառաչանքներն ու ճիչերը, գլուխը քաշ է ձգել և լռել։

Եւ այդ վիթխարին փլչում է, փլչում է ամեն օր. նա այնքան ահագին է, որ նրա նորանոր ճեղքուածքներն ու բացուածքները մարդիկ էլ փակել չեն կարողանում, ինչպէս բժշկական ոչ մի հնարութիւն չէ կարողանում վերակենդանացնել մի գառամեալ և դէպի գերեզմանը դիմող մարմին։ Հաւատացիք այստեղ վանեցին այն՝ ինչ կողոպտում էին հեռաւոր երկիրներում, հարիւրաւոր ազգերի վաստակն ու քրտինքը այս պատերի մէջ, այս աբիւնոտ հրապարակի վրա ոչնչացրին և իրանք էլ՝ արբշիռ ու կենսասէր՝ վերջ ի վերջոյ նրա աւերակների տակ իրանց գերեզմանը գտան։ Եւ Կոլիզէն Հռոմին արժանի գերեզման է. այս վիթխարի կամարները, երկինքն ու նրա զօրութիւնը հեգնող այս մռայլ բացուածքները, այս սև, սոսկալի անդունդները, այս այլանդակ ժայռերը հազիւ կարողանան ծածկել մի այնպիսի վիթխարի, որպիսին էր Հռոմը։

Այս Կոլիզէից մարդ դուրս է գնում մի ճնշող, խեղդող զգացմունքով և էլ երկրորդ անգամ չէ ուզում վերադառնալ, յետ նայել։



ՀՌՈՄԻ ԱՄՓԻԹԱՏՐՈՆԸ (ԿՈԼԻԶԷ) ԱՐԻՒ ՎԻՃԱԿՈՒՄ
(Տե՛ս էջ 169)

XIX

Հին Հռոմի յիշատակներից չէն ու կանգուն է մնացել միմիայն Պանթէօնը։ Դարերն ու բարբարոսները կարծես վախեցել են դիպչել գահընկէց աստուածների այս սրբավայրին։

Վենետիկեան հրապարակից նեղ ու գալարուն մի չարք փողոցներ պիտի անցնել հռչակաւոր տաճարը հասնելու համար։ Կեղտոտ տների առաջ, կեղտոտ պատերի տակ, նստոտած են աղքատ կանայք իրանց մանր երեխաներով և ձեռք են մեկնում օտարականին. տեղ տեղ անցնում ես կանաչիի խանութների առաջից, ուր մի քանի ոտաբոբիկ մանուկներ եռանգով կրծոտում են նարինջը կամ իրար քաչքչում։ Ահա և մի փոքրիկ հրապարակ, որի կենտրօնում բարձրանում է մի սիրուն օբելիսկ, որպէս զարդ իր չուրջը պատող աւազանին։ Այս ջրի չուրջը ծայլ-ծայլ նստոտած են մի քանի անխուսափելի առաջնորդներ՝ հնութիւնների ալբօմներ, կարտեր և զանազան կասկածելի իրեր վաճառողներ, որոնք օտարականի երեսլուն պէս իրար են խառնվում, մէկէն վրա են պրծնում կարծես կողոպտելու համար։ Երկու կառապաններ մի անախորժ սուլոց են արձակում և մատերը ցցում, իրանց անկոչ ծառայութիւնն առաջարկելով։ Մի քանի հոգի էլ նստած աւազանի չրթներին՝ ծայլ

ծոյլ նայում են օտար այցելուներին և վերստին ընկղմում են մի երանելի անգիտակից խաղաղութեան մէջ։

Այստեղ՝ այս մոռացված անկիւնում է բարձրանում այն հին սրբավայրը, ուր Հռոմի ինքնիշխան ժողովուրդը տիրապետած աղգերի աստուածներն էր դնում իր վերադոյն հովանաւորութեան ներքոյ։ Հին, պառաւած հսկայի պէս, կանգնած է Պանթէօնը իր կողերին զաճաճների պէս կպած տների մէջ, լայն կուրծքը խիղախօրէն բաց է արել ժամանակի առաջ և դարերը քմահաճօրէն արել են, ինչ որ կարող են, չանգուել են նրա ճակատն ու երեսը, որքան հնար է եղել։ Եւ միայն այդքան։ Շէնքի ամբողջութիւնը դեռ պահում է այն, ինչ տուել է նրան Հռոմը։

Դժուար է առանց յուզմունքի նայել հին աշխարհի այս պատկառելի յիշատակարանին. սա կարծես մի հին, խստասիրտ հռոմայեցի է, մի կատոն, մի Բրուտոս, որ չը գիտէ ինչու և ինչպէս դեռ կանգնած է իրան համար այս միանգամայն անծանօթ աշխարհում, ծեր գլուխը քաշ է գցել՝ յոգնած հսկայի պէս՝ և խորասուզվել է ծանր խոհերի մէջ։ Իմ բոլոր չրջահայեցողութիւնների ժամանակ Իտալիայում, ինչպէս և եւրօպական ուրիշ երկրներում, ես չեմ յիշում մի այլ շէնք, որ իր խիստ պարզութեամբ, իր անպաճոյճ վեհութեամբ կարողանար այս Պանթէօնի պէս միաժամանակ և հիացմունք և սոսկումի մի զգացմունք զարթեցնել։ Նոյն ձևով չինված Պարիզի Պանթէօնը սրա առաջ ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի փոքրիկ թոռը ծեր պապի առաջ։ Այստեղ ճարտարապետութիւնը իր արուեստով, իր գեղեցկութեամբ համարեա խեղդվում է իր տիտանեան կազմուածքի մէջ և էստետիկը չէ, որ մարդ վնտռում է, այլ մի ինչ որ ուրիշ բան, մի անօրինակ բան, որ դժուար է բառերով սահմանել։ Այդ տպաւորութիւնը կարելի է գուցէ մօտաւորապէս արտայայտել քնութիւնից վերցրած հոգի ընկճող, ցնցող պատկերներով, ինչպէս մի խորունկ ու մռայլ ձոր, մի հինաւուրց և կուսական անտառ, մի կատաղի ու յորձանուտ գետ կամ մի հսկայական ժայռ։

Կորինթեան գաւիթներ 16 սիւները, որոնք զարդարում են նրա ճակատը, արուեստով չինված ու չափազանց գեղեցիկ են, բայց իրանց մեծութեամբ, մասսիվ ծաւալով մարդու չփոթում են և պատկերների որոշ համաչափութեան սովոր երևակայութիւնը դժուարանում է նրանց պարտկել, դժուարանում է գեղեցիկը ճաշակել այս ահաւորութեան մէջ։ Այդ սիւներից իւրաքանչիւրը $12^1/_2$ մետր բարձրութիւն և $4^1/_2$ մետր շրջագիծ ունի. այդ քարէ բլուրների վրա հինաւուրց չէնքը, մի գահընկէց ծեր արքայի պէս, յինել է իր պառաւած ճակատը և դարերի միջից նայում է իր շուրջը յեղյեղվող կեանքի փոթորիկներին, նայում է և լռում։

Ներքուստ ամբողջը ներկայացնում է մի ահագին շրջանաձև գահլեզք, որ վրանաձև բարձրանում է հէնց գետնի մակերևոյթից, երկնակամարի պէս։

Լոյսի խուրձերը իջնում են այդ վիթխարի կամարի հէնց կատարի վրա բացված մի հատիկ կլոր անցքից, և բարձրից իջնող այդ ճառագայթները բրգաձև պատերի վրա գլխիվայր ստուէրներ կազմելով՝ տալիս են գմբէթին իրօք երկնակամարի ձև։ Անկասկած, կարելի է ասել, որ չինող ճարտարապետի նպատակն է եղել աստուածների բնակութեան յատկացրած այս չէնքին երկնքի ձև տալ և նա կատարեալ էլ ծառայել է իր նպատակին։ Կենտրօնում կանգնած մարդը, վեր նայելով, տեսնում է, թէ ինչպէս սպիտակ ամպերը պատառ պատառ գալիս են, մի վայրկեան կանգ առնում վերևում, ներս են նայում կտուրի բացուածքից, կարծես դեռ վնտրում են այնտեղ ապաստանած աստուածներին, ուզում են հին օրերի սովորութեամբ ողջունել նրանց, բայց յուսախաբված՝ գընում, կորչում են երկնքի անհունութեան մէջ՝ միւսներին տեղ տալու համար։

Պատերի տակ, ներքոյ ութ փոքրիկ կամարների ներքոյ ութ փոքրիկ մատուռներ կան, ուր հեթանոս Հռօմը չարել էր իր աստուածներին։ Յաղթված ազգերը աշխարհի բոլոր ծայրերից իրանց հարբսութեան հետ Հռօմ էին ուղարկում երբեմն նաև իրանց աստուածներին և Սենատը տեղաւորում էր նրանց այստեղ, իշխում և հրամայում էր նրանց։ Հռօմի համար խոտելի կրօն և աստուածութիւն համարեա չը կար աշխարհում, բոլոր համոզմունքները, բոլոր վարդապետութիւնները յարգվում էին միակ պայմանով, որ բոլորի վրա ինքն իշխէր արքայօրէն, իբրև միակ աստուածութիւն, միահեծան տէր տիեզերքի։


Այս տաճարը հիմնարկվեց այն ժամանակ, երբ Հռօմը երկու դարերի արիւնոտ յաղթութիւններից, տիրապետութիւններից ու ներքին կռիւներից յետոյ, հանդիստ ու խաղաղութիւն էր վնտրում։ Նա մերժեց Գրակկոս եղբայրների ժողովրդական բէֆօրմները, ինչպէս և Սիլլայի աղնւապետական կառավարութիւնը, և ներքին փոթորիկներից յոգնած ու զզված՝ սիրով յանձն առաւ Օգոստոսի կայսրութիւնը և նրա պարգևած խաղաղութիւնը 30—31 թւին։ Այդ իսկ թւին էր, որ Ակտիումի ճակատամարտը Անտոնիոսի և Կլէօպատրայի մահով և Օգոստոսի կատարեալ յաղթանակով վերջացաւ. կեսարի որդեդիրը միահեծան տէր էր Հռօմին։

Սգրիպպան, այդ վճռական ճակատամարտը վաստակող զօրապետը, որ և փեսայ էր Օգոստոսի և յիշատակ իր անուան հետ կապված այս մեծ անցքի՝ հիմնարկեց Պանթէօնը, որպէս նշան Հռօմի կայսերական—տիեզերական տիրապետութեան. նա մի երկինք չինել տուեց և այդ երկնքի տակ տեղաւորեց ընկճված աստուածներին։ Ցնծութեան և փառքի օրեր էին, որ Վիրգիլիոս այսպէս է նկարագրում.

«Երբեակ յաղթանակից յետոյ Հռօմ մտնելով, Օգոստոս ուխտից իտալական աստուածներին երեք հարիւր մեծ տաճարներ չինել քաղաքի ամեն կողմերում։ Ամբողջ ժողովուրդը թնդացնում էր փողոցները ուրախութեան աղաղակներով, խաղերով

և ծափահարությամբ։ Տաճարներում կանանց երգեցիկ խմբեր, իսկ սեղանների առաջ փռվել են ղոհված ցուլերը։ Ինքն էլ նստած փայլփլուն ֆոբիսի մարմարե չեմքի վրա՝ մեկ մեկ նայում է ազգերի ընծաները և կապում է աքանչելի սխնեբից։ Յաղթված ազգերը նոյնքան տարբեր զէնքերով և զգեստով, որքան և լեզուով, առաջանում են երկար չարքերով—թափառական ցեղեր, երկարազգեաց աֆրիկացիներ, լեվանդներ, կարեր, գալօններ՝ զինված նետերով, մօրիննները՝ հեռաւորագոյնները մարդկանցից՝ անզուսպ տահերը, և Եփրատը հոսում է հնազանդ և Սրաքաը՝ իրան ընկճող կամքի տակ ըմբոստօրէն ցնցվում»։

Վիրգիլիոսի յիշատակած այն երեք հարիւր տաճարներից, Օգոստոսի Փառքի բոլոր կոթողներից այս մեկն է մնացել կանգուն, այն էլ VII-րդ դարից սկսած Հռոմի պապերը վերածել են քրիստոնէական եկեղեցու. այդ բաւական չէ, չէնքի հեթանոսական վեմ պարզութիւնը մասամբ աղաւաղվել է նորանոր յաւելուածներով, որ քրիստոնէական բարեպաշտութիւնը դուցէ և քինոտ եռանդով պատուաստել է հեթանոսական ճարտարապետութեան այս գարաւոր ծառի վրա։ Սրահ մաղդի, Ազօլլօնի և Մարսի հին պատուանդաններին վրա այժմ բազմել են լացող մադոննաներ, խաչի վրա մեռնող քրիստոսներ և վիզերը ծուռ՝ աղօթող նահատակներ։ Սրանցից և ոչ մեկը, սակայն, ինքն իրան լաւ չէ զգում այս տաճարում, հեթանոսութիւնն այստեղից դուրս մղելն անհնա-



ՊԱՆԹԵՕՆ (ՀՌՈՄ)
(Երես 172)

րին է և փորձերն անօգուտ ու յանցաւոր։ Բայց աւելի վրդովեցուցիչ է Ուրբանոս VII-ի վարմունքը, որ ինչպէս հաւատացնում են, 17-րդ դարում Պանթէօնի ճակատը ծածկող բրոնզից Ս. Պետրոսի մայր սեղանի համար սիւներ ձուլել տուեց և այս բարբարոսութիւնը կատարվել է յանուն մի կրօնի, որ իր հալածանքի և անզօրութեան դարերում, երբ իր հետևողները սողում էին կատակօմբներում և խոնաւ քարերը լիզում երկնքի օգնութիւնը հայցելով դեռ բազոյն համբերողութեան ծարաւի հոգի էր ցոյց տալիս. յաղթութիւնը միշտ անբարոյականացնող է։

Կրօնական վարդապետութիւնները չարունակում են ծնվել ու մեռնել, տեղ տալով յաջորդներին, բարոյական հասկացողութիւնները դարերի միջից հետևում են իրար և մարդկութեան իրաքանչիւր սերունդ մի երջանիկ անգիտութեամբ չարունակում է հաւատալ, թէ ինքն է ընդգրկել երկնային ճշմարտութիւնը, թէ ինքն է լուծել յաւիտենական առեղծուածը։ Ո՛վ դիտէ, գուցէ և անհուն ժամանակներից տառապող մարդկութեան ծանր ճակատագիրը, նաև բաժին ընկած ցաւերի բեռը մասամբ թեթևանում է մտքի այդ յաւակնոտ պատրանքից, մինչև որ դառն յուսախաբութիւնը դալիս է յաջորդ սերունդներին պատմելու պապերի երջանիկ տգիտութիւնը, առանց սակայն որդիներին վրկելու նոյն ֆատալ պատրանքի գուցէ յաւիտենական իշխանութիւնից։

Սկսպէս թէ այնպէս՝ յաւիտենական ճշմարտութիւնն ընդգրկելու այդ երջանիկ և դառը հաւատն

է հիմունքը կրօնների և բարոյական հասկացողութիւնների կատաղի պայքարի, և այդ դարաւոր մրցութեան մէջ ոչ մի կրօն, ոչ մի վարդապետութիւն գերագոյն համբերողութեան կատարեալ օրինակ դեռ չը հանդիսացաւ։ Մէկ տեղ բիւզանդական Ս. Սօֆիան է դարձել մահմեդական մզկիթ, մի ուրիշ տեղ հին քրիստոնեայ ազգի փառաւոր տաճարն է խլվում այլ ձևով, այլ լեզուով աղօթելու համար։ Հռօմում էլ Ադրիպպայի հեթանոսական Պանթէօնն է դառնում քրիստոնէական եկեղեցի յանուն Ս. Մարիամի։ Բոլոր դէպքերում էլ յաղթական վարդապետութիւնը գործում է յանուն մի և նոյն երկնքի, մի և նոյն գերագոյն անըմբռնելի ղօրութեան, պատկերը նոյնն է և պայքարը կարծես անվերջ։

Ո՞վ կը գայ վերջապէս երկնքի և յաւիտենական ճշմարտութեան անունից խօսողներին հասկացնելու, որ Ս. Սօֆիան երբէք չը պէտք է բարբարոսաբար այլանդակվի մզկիթի վերածվելու համար, որ հեթանոս Պանթէօնը չը պէտք է չինուեր նրբի մատակարարէ քրիստոնեայ տաճարներին, որովհետև դա աննպատակ յանցանք է նոյն երկնքի և նոյն յաւիտենական ճշմարտութեան դէմ, որի անունով կատարվում են այդ վայրենութիւնները, որովհետև ամեն մի դար, ամեն մի սերունդ իր բաժինն է բերում դաղափարների, վարդապետութիւնների և պատմութեան տիեզերական չէնքը կատարելու և ոչ ոք իրաւունք չունի այդ չէնքի այս կամ այն մասն իսպառ ջնջել և անհետացնել։

XX

Ապրիլեան մի գեղեցիկ օր է. կատակօմբներն այցելելու եմ գնում Հռօմից դուրս։ Երկնքի վրա լողում են լայնատարած թափանցիկ ամպեր։ Արեւի շողերը փախչող ստուերների ետևից յայտնվում են այս ու այն կողմին, այս ու այն գմբէթի վրա, ապա սահում են ու անցնում գաղտագողի փութկոտութեամբ։ Հարաւի արեը զօրեղ է, նա կարծես ամպերի հետ խաղում է և նրանց միջից անդամ լոյս է տալիս։

Կառքն անցնում է նեղ, ստուերապատ փողոցներով, ուր վխտում է Հռօմի ամբոխը կեղտոտ ու անհոգ, մուրացիկ ու աղքատ։ Ոմանք անտարբեր կերպով նայում են դէպի ճանապարհորդ օտարականը, ուրիշները ուշադիր են նրան մի բան վաճառելու, նրանից մի բան ստանալու մտահոգութեամբ բռնված։ Համարեա իւրաքանչիւր փողոցում մի հին ուշագրաւ բան կայ. մի չաթաթ է առաւօտից երեկոյ թափառում եմ Հռօմում և դեռ ոտքան քիչ մասն եմ տեսել։ Այս քաղաքն ամբողջ մի հսկայական միւզէ է հետաքրքիր անձի համար։

Ահա դարձեալ կօլիզէն, որ երրորդ անգամն է տեսնում եմ, այնքան շատ բան է ասում նա հին մեռած աշխարհից, այնքան խոհեր յարուցանում իր ճնշող քարային զանգուածով։ Նրա մի կող-

մում երևում են մի աւեր չինութեան համարեա անձև բեկորներ—Ներօնի պալատն է. քիչ հեռու անցնում ենք Կոստանդինի յաղթական կամարի տակով, իսկ դէպի աջ՝ ֆօրումի վերջում երևում է Տիտոսի կամարը: Նոր քաղաքից բոլորովին դուրս ենք, այժմ մանում ենք աւերակների աշխարհը, այն զարմանալի տեղերը, որոնց հետ կապված են հին աշխարհի ամենանշանակալից անցքերը: Մեր առջև բացվում է մի լայն ծառազարդ փողոց Via S. Georgio, որի մի կողմում, բլրի վրա երևում են Ներօնի աքեդուկի մնացորդները չորս կամարներով: Ճանապարհը խուլ է և անմարդ: Երբեմն երբեմն պատահում են աղքակիր սայլեր, որոնց լծած են մի մի ջորի կամ էշ. քշում են մի կամ երկու հոգի, կեղտոտ ու ծոյլ մարդիկ, նայում են անցնող կառքին յօրանջելով և չրխկացնում են իրանց մարակը օդի մէջ: Կան և այնպիսիները, որոնք թաղված իրանց սայլակի աղբի մէջ, քնել են հանդիստ, ջորին քաշում է դանդաղութեամբ, իսկ նրանց հետևում է մի ուրիշը, նոյնպէս պառկած, որ նայում է սահող ամպերին և հանդարտ մրմռում է մի երգ: Անցնում է մի պառաւ կին, վախտ, կռացած, համարեա այլանդակ. նա մանքալով տանում է մէջքին դաշտերից հաւաքած ինչ որ բորբոսնած ցախի մի կոյտ. սրան հետևում է մի ուրիշը, աւելի ջահիլ, բայց նոյնպէս խեղճ, նոյնպէս կեղտոտ և տանում է գլխի վրա մի անորոշ կոյտ, երևի մի կապոց: Երկու փոքրիկ աղջիկներ վազելով հասնում են կառքին. նրանցից մէկը

ձգում է մեղ մի փոքրիկ ծաղկէ փունջ և ձեռք է մեկնում. դա մուրացկանութեան մի փոքր տանելի, սկակված ձևն է Իտալիայում: Պէտք է անպատճառ մի քանի սանտիմ ձգել, եթէ չես ուզում, որ այդ փոքրիկ, փխրուն արարածը փոչու միջից, կառքի հետից մի կէս կիլօմետր վազէ: Նրանց հետևում են երկու ուրիչ երեխաներ՝ նոյնպէս ծաղկէ վինջերով. նրանցից առաջինը աշխատում է ներս ձգել փունջը, երկրորդը փորձում է նոյնն անել. առաջինը դժգոհ է, մանուկներն իրար են փաթաթվում և ծեծվում, գոյութեան կատաղի կռիւ, որի մէջ վարժվում են արդէն այս փոքրիկները: Կառքն այդ ժամանակ առաջ է անցնում և հետանում ենք ախուր տեսարանից:

Դէպի աջ ճանապարհը կիսախեղափակ և եղբայրասան Կարակալլայի պալատն է՝ մասսիվ ու մռայլ. աւերակները այլանդակօրէն ցցված են վեր բաղեղների և այլ խոտերի միջից: Աջ ու ձախ խաղողի այգիներ են. վերջապէս կարելի է լայն կրծքով օդ շնչել, այստեղ էլ չէ հասնում Հռոմի փողոցների գարշահոտութիւնը:

Ահա և Սցիպիոն Աֆրիկացու դերեզմանը: Համաշխարհային պատմութեան ամենամեծ անձերից մէկն է կապված այդ անուան հետ: Իջնում եմ կառքից և ներս գնում: Մի խաւար այր է, մի կատարեալ կատակօմբ. մոմ եմ վառում, մարում է, երկրորդն եմ վառում և կամացուկ ցած իջնում. էլի նորանոր նրբանցքեր, էլի խոռոչներ, էլի փոս և այնտեղ խաւարի մէջ պառկած է հին աշ-

խարհի ամենամեծ զօրավարի՝ Աննիբալի ոչ պակաս մեծ ախոյեանը՝ Սցիպիօն։ Յամայի վճռական ճակատամարտը Քրիստոսից երկու դար առաջ (202 թ. Ք. ա.) այդ երկու մեծ անուններն կապեց իրար և կարթագինացիների դամբարանը պատրաստեց։ Զարմանալի ժամանակներ էին, հռոմէական զօրութեան առաջին վարարումն էր և հէնց առաջին ալիքները մի հզօր ու բարգաւաճ ազգ խեղդեցին։ Կատոնի երկարէկ սերնդի ժամանակն էր (234—145 Ք. ա.), այն զարմանալի մարդու, որի համար Հռոմի մեծութիւնը մի ամբողջ ժողովուրդ, մի ծաղկած պետութիւն զոհ բերելը քաղաքացիական առաքինութիւններից մեծագոյնն էր։ «Բացի սրանից ես գտնում եմ, որ հարկաւոր է կործանել Կարթագէնը»—այսպէս էր վերջացնում այդ խստաբարոյ մարդը սենատում արտասանած իր իւրաքանչիւր ճառը և 146 թ. Ք. ա. նրա ցանկութիւնը կատարվեց, մի ուրիշ Սցիպիօն ջնջեց Կարթագէնը։ Մի տեսակ պատմութիւն կայ, որ այդպիսի ոճիրները փառք է համարում, բայց այդպիսի փառքերից միշտ մնում է միայն մի մռայլ դերեզման մոռացված մի խաւարում։

Թողնում եմ Սցիպիօնին իր խոնաւ դերեզմանում և նրա այրի խաւարում՝ Կատոնի յիշողութիւնները և վերսին առաջ եմ գնում։ Ահա և Via Appia-ն, այն մեծ զինուորական ճանապարհը, որ 312 թ. Ք. առաջ Ապպիուս Կլօդիուս կոնսուլը չինել տուեց։ Հին աշխարհի ամենամեծ ռազմական ճանապարհն էր այս, որ մի կողմից

իջնում էր մինչև Իտալիայի հարաւային ծայրը և միւս կողմից թերակղզու երկարութեամբ գնում տարածվում էր մինչև հեռաւոր գաղթականութիւնները։ Հռոմի զինուորական տիրապետութիւնների մէջ այս ճանապարհի դերը ահագին եղաւ։ Այստեղից էին գնում լեգէոնները աշխարհներ տիրապետելու և նոյն ճանապարհով էին Հռոմ բերվում գերի ընկած չղթայակապ արքաներն ու զօրավարները։ Դեռ տեղ տեղ մնում են այն սալերը, որոնցով փռված էր ամբողջ ճանապարհը և որոնց վրա այնքան անգամ կայծեր են արձակել լեգէոնների ձիերի սմբակները։ Սա այն ճանապարհն է, որով եկան Ալպերից իջնող գերմանական բարբարոսները տաս դարերի արեան հաշիւը պահանջելու և Ռօմուլոսի հիմնած այդ գոռոզ պետութիւնը 476 թ. թաղեցին աւերակների տակ։

Ահա և մի փոքրիկ մատուռ, սպիտակ և կոկիկ. նա կրում է գրան ճակատին հետևեալ մակագրութիւնը՝ «Quo vadis Domino». սա այն տեղն է, ուր ըստ աւանդութեան իբր թէ Քրիստոսը պատահել է Պետրոս առաքեալին և նրան փախուստից յետ դարձրել Հռոմ՝ խաչվելու։

Քիչ յետոյ կառքը կանգ է առնում մի ցանկապատ պարտէզի առաջ. այստեղ են կատակոմբները։ Ներս ենք մտնում, մեր առջև բացվում են սիրուն ծառուղիներ, մշակված մարգեր, փոքրիկ տներ, ուր ապրում են սևազգեստ կրօնաւորներ։ Կատակոմբները գտնվում են այս խնամված պարտէզի տակ. այդ սառնակրկեայ այրերը պիտի իջնել ա-

ռանձին անցքերով։ Մի տնակում, ուր խմբված են նաև ուրիշ այցելուներ, գերմանացի և անգլիացի կանայք ու օրիորդներ, մեզանից մի մի ֆրանկ են վերցնում մուտքի վճար։ Մի երիտասարդ կրօնաւոր բոլորիս բաժանում է մի մի մեղրամոմ, իսկ ինքը վերցնում մի երկար մահակ, որի ծայրին կծիկի պէս փաթաթած է նոյն մոմից՝ ստորերկրեայ խաւարը լուսաւորելու համար։

Ես երբէք չեմ կարող մոռանալ մեզ առաջնորդող այս կրօնաւորին, նա XX-դ դարի կաթոլիկ վարդապետի իսկական մի տիպ էր, հետաքրքիր և վերին աստիճանի ընտրող ժամանակակից ոգու հոգևորականի դերի ըմբռնողութեան և առհասարակ կրօնական տակտիկայի տեսակէտից։ Հայր Սեբաստիանօ, այսպէս էր նրա անունը. և նա այնքան հետաքրքիր անձնաւորութիւն թւաց ինձ, որ նախ քան կատակոմբների նկարագիրը, ես մի քանի խօսք կասեմ նրա մասին։ Մինչև որ մեր մոմերը կը վառենք, ստորերկրեայ անցքի առաջ կանգնած նա անդադար խօսում է և ուրախ-ուրախ հանաքներ է անում. խումբը, որ նա պիտի առաջնորդէ, ըստ երևոյթին խիստ ախորժելի տրամադրութիւն է բերել։ Նա ասում է, որ օրիորդներին առաջնորդելու է այնտեղ, ուր ամենից աւելի հաճելի է ապրել։ Նա հաւատացնում է ծիծաղելով՝ որ այստեղ՝ այս սիրուն պարտէզի մելանխոլիկ միայնութեան մէջ և մանաւանդ կատակոմբների մէջ կեանքը շատ զուարճալի, շատ ախորժելի է և ինքն իրան երջանիկ է զգում։

—Ի՞նչ էք կարծում այդ մասին, օրիորդ, դառնում է նա մի գերմանուհու։ Օրիորդը համաձայն է նրա հետ և պէր Սեբաստիանօն այս անգամ իրօք երջանիկ է։ Բայց նա յիմար մարդ չէ, տեսնում է, որ բոլոր հասարակութիւնը կանանցից չէ կազմած, ուստի վարպետ դարձուածքով փոխում է խօսակցութեան նիւթը և նոյն ժպիտով, նոյն տոնով փորձում է ինձ հետ խօսել կրօնի և փիլիսոփայութեան մասին։ Ես խոյս չեմ տալիս, այդ էլ հետաքրքիր է։ Նա կրօնաւոր է, մի լաւ պատրաստված կրօնաւոր, կենսասէր և ուրախ, աւելի չուտ էպիկուրեան, քան ստոիկ, և ես համոզված եմ, որ նա չէ հաւատում ոչնչի, բայց աշխատում է չը մատնել իրան։ Ամուսնաբաժանութիւնը սովորել է հիմնաւորապէս՝ ունայնութեան յանգելու համար, թէև Ս. Օգոստինոս, Թովմաս Ակուինացի չըթուղթների վրա են։ Խօսում է բայիօնալ փիլիսոփայութիւնից և անհաւատութիւնից. վերջինս գանում է հրէշաւոր, ձեռքերը թափ է տալիս կեղծ տրագիզմով, գլուխը թօթվում է, բայց այս բոլորը մի այնպիսի եղանակով, որ ոչ մի կասկած չէ մնում, թէ ինքն էլ չէ հաւատում։ Ընդունակ է նոյն վայրկենին լուրջից կոմիկի, դրամատիզմից հեգնութեան և կրօնականից ցինիզմի անցնել։ Մոմերը վառելիս, նա նկատում է, որ կուզէինք առաջ երթալ, ուստի նա առաջինը ցած է իջնում աստիճաններով և մեզ առաջնորդում է ինչպէս մի զօրապետ իր զօրքին։ Նա ասում է, որ մեզ տանում է ցոյց տալու le bon Dieu-ն և այս խեղճ

bon Dieu-ն այլ ևս նրա չրթունքներից ցած չէ ընկնում. պեր Սեբաստիանօն խաղում է նրա հետ, ինչպէս երեխան իր գնդակի հետ։

Բազմաթիւ քարէ աստիճաններով վար ենք իջնում. չորս կողմներս մութ է ու խոնաւ, մոմերը հազիւ լուսաւորում են և մեր ստուերները օրօրվում են պատերի վրա, ինչպէս այստեղ տանջված հին քրիստոնեաների ոգիները։ Այրերը բնական չեն թւում, կամ գուցէ յետոյ մեծացրած են, որովհետև խոնաւ քարերի վրա դեռ պարզ երևում են մուրճերի և քուլունգների հետքերը։ Փորել են ինչ ուղղութեամբ հնար է եղել և որքան խորը աջողվել է։ Բազմաթիւ են երկայն ու գալարուն միջանցքները, որոնք տեղ-տեղ մի փոքր լայնանալով, բացել են չրջանաձև հրապարակներ, ուր մի սրբի, մի նահատակի գերեզման է և մի փոքրիկ մատուռ։ Միջանցքների երկու կողմերում, բարձր պատերի վրա փորված են երկար խոռոչներ դարեկների պէս մէկը միւսի վրա. ինչպէս երևում է դիակները երկարութեամբ դրել են այդ փորվածքների մէջ և դրսից քարէ կափարիչով փակել և կրով այնպէս ծեփել, որ չը նկատվի, թէ այնտեղ գերեզման է։ Քարէ պատերի մէջ փորված այդ գերեզմանները բազմաթիւ են։

Սաոբերկրեայ այս մռայլ, հեղձուցիչ մթնոլորտով աշխարհը՝ ուր այնքան տարիներ, նոյն իսկ դարեր մարդկային խիղճը սողացել է մի գաղափարի փարած, ուր նա իր կրաւորական պայքարով ըմբոստացել է բռնութեան դէմ, ուր այնքան

ցաւած հոգիներ աղօթել են, լացել և մեռել, դեռ այսօր էլ ամենաանտարբեր սրտերում յարուցանում է մի պատկառանքի զգացմունք։ Ազգի ազատութեան համար մղված իւրաքանչիւր պայքար նուիրական է և ամեն մի մարդ, որ զոհվում է այդ կռւում, մեծ է ու յարգելի։ Շատ աւելի լաւ կը լինէր առանց ընկերի, առանց վկայի, առանց մատնաւանդ կրօնաւոր առաջնորդի թափառել այս մութ կամարների տակ, ապրել այդ տանջված հոգիների հետ և գաղափարական մարտի ամբողջ էքստազը ճաչակել միայնութեան խոհերով։ Բայց պեր Սեբաստիանօի հետ այդ անկարելի է. նրա կեղծ սգաւորի ձայնը, նրա անօգուտ ու սուտ-բրով համեմած բացատրութիւնները ու պատմութիւնները, նրա bon Dieu-ն, գաղափարների պատմութեան մէջ ամենախոչոր անյարքերի ամօթալի չահագործութիւնը, այս բոլորը, բոլորը փչացնում են այն տպաւորութիւնը, որ այս կատակօմբները կարող էին թողնել։

Առաջին անհակը, ինչպէս հաւատացնում է առաջնորդը, առաջին պապերի գերեզմաններն է պարունակում. այստեղ նա փոխում է իր ձայնը, երկիւղած ու սգաւոր տօնով պատմում է նահատակների կեանքը և մահը, իսկ երբ հասնում ենք ս. Սեբիլի այրին, պեր Սեբաստիանօն հասնում է կրօնական տաք էքստազի, խօսք չէ գնում մեզ պատմելու այդ աղնուական աղջկայ նահատակութիւնը II դարում, հրաչքների մի հէքիաթ։

Մի փոքրիկ քարէ տախտակի վրա երևում է

դեռ հին քրիստոնեաներին խորհրդանշան դարձած ձկան պատկերը։ Եկեղեցու հալածանքի այդ ժամանակներում, յայտնի է, որ ձուկը դարձաւ հաւատացեալների գաղտնի խօսակցութեան համար մի տեսակ երօգլիֆ, որովհետև յունարէն «ձուկ» բառը կազմված է հետեւեալ նախադասութեան բառերի սկզբնատառերից—«Ցիսուս, Քրիստոս, որդի Աստուծոյ՝ Փրկիչ»։ Անծանօթ հաւատացեալներն իրար ճանաչելու և իրար բացվելու համար դիմում էին ձկան նկարի օգնութեան։ Պատերի վրա տեղ տեղ երևում են նաև նկարներ ս. դրքից։ Դեռ մընում են մի քանի սարկօֆագներ մաշված ոսկորներով լցված։ Կան փոքրիկ սեղաններ, ուր մատուցվել է առաջին պատարագը։

Այցելութիւնը վերջանում է. մենք մօտենում ենք ելքի անցքին, դարձեալ քարէ մաշված, նեղ աստիճանների մի ահագին չարք պիտի բարձրանալ։ Փիլիսոփայութեան և կրօնի մասին վէճը վերսկսվում է։ Վերից թափանցող լոյսը առիթ է տալիս նոր խորհրդածութիւնների և վէճերի. վարդապետը պնդում է, որ կրօնը լոյս է. մէկը նրան պատասխանում է, որ լոյսը բանականութիւնն է և թէ կրօնը կատակօմբների բնակիչ է։

—Բայց հաւատն ու բանականութիւնը կարելի է հաշտեցնել, բացականչում է պեր Սեբաստիանօն արդէն վերջին աստիճանի վրա։

—Նրանք չեն հաշտվի երբեք, պատասխանում է հակառակորդի վճռական ձայնը։ Եւ մենք դուրս ենք գալիս լոյս աշխարհ, բանտարկվածների պէս լայն կրծքով, ագահօրէն ծծում են քօղը. աչքի չողերն այժմ այնքան գութեկան են, բնութիւնն ամբողջ այնքան գեղեցիկ։


Կատակօմբների պարտիզից դուրս ենք գնում։ Կառքը տանում է մեզ աւելի հեռու, դէպի լայնարձակ դաշտերը։ Հեռուից լսվում են մի խումբ աշխատող աղջիկների հնչուն մետալական ձայները. նրանք երգում են այնքան գեղեցիկ, այնքան քաղցր. եղանակը յիշեցնում է մեր երկրի «լէլէն». աւելի հեռու, դաշտերի կանաչաւուն հարթութեան վրա փռված են աւերակների չարքեր և այլ չէնքերի մասիվ այլանդակ մնացորդներ։ Մարդ նայում է հին աշխարհի թողած այդ տխուր մնացորդներին, այդ բաղեղապատ քարերին, այդ կիսափուլ կամարներին և մտածում է—մի թէ ճշմարիտ. աշխարհում ոչինչ չը կայ կայուն, ոչինչ չը կայ յարատև։

XXI

Ամէն առաւօտ դէպի Վատիկան և ս. Պետրոս տանող տրամվայները լիքն են կաթոլիկ աշխարհի զանազան ծայրերից այստեղ թափված կրօնաւորներով. բազմաթիւ են նաև ուխտաւոր աշխարհականներ և պարզ ճանապարհորդներ։ Ճանապարհն անցնում է Տիբր գետի վրայով, որ թաւալում է իր պղտոր ջրերը կեղտոտ ափերի մէջ անչքնաղ ու

դանդաղ։ Այս գետը ոչ մի գրաւչութիւն չունի. նրա երկու կողմում ախրութեամբ չարված են ողորմելի տներ, ուր ապրում է մի մութ ու խեղճ բազմութիւն, նոյնպէս մոլոր, նոյնպէս անզարդ, որպէս Տիբրը։ Աւերին ծառ ու կանաչ չը կայ, տօթից տանջված մարդն այնտեղ զբօսնելու չէ գնում, երեխաներն այնտեղ չեն խաղում. բազմամարդ քաղաքի մէջ դա մի անապատ է։

Անցնում ենք կամուրջով, էլի նեղ, գալարուն փողոցներ, ուր բարմաթիւ խանութներ լցված են բարեպաշտ կաթոլիկների համար պրաւիչ ապրանքով։ Վատիկանի թաղն է, այստեղ առևտուրն էլ կրօնական պատկեր և նպատակ ունի։ Ս. Պետրոսից վերադարձող ուխտաւորները այս խանութներից են գնում պէտք եղած յիշատակներ։ Հետաքրքիր են այդ վաճառանոցները. վիտրինների յետևից գնողների սպասելով՝ դէպի դուրս, դէպի փողոցն են նայում փոքրիկ աստուածածիններ մանուկը գրկերին, նահատակներ, առաքեալներ, կոյսեր, ճգնաւորներ—աղեբսողի, ագօնողի, լացողի, կամ մեռնողի տրագիկ դիրքերով։ Ահա մի Յիսուս, զարդարուն ու հեզ, որ ուխտաւորին ցոյց է տալիս իր սիրտը. ահա մի ուրիշը, որ մեկնել է իր խոցված թաթը, կամ փչէ պատկը գլխին կանգնած է արիւնաքամ։ Ամբողջ աւետարանն է այստեղ վերածնված սպիտակ արձաններով և արձանախմբերով։ Դրանց հետ միասին ահագին քանակութեամբ ծաղիկ ու մեծ խաչեր, տէրտղորմեաններ, փոքրիկ մեդալիոններ սուրբ նկարներով, աղօթագրքերով։



Ս. ՊԵՏՐՈՍԻ ՏԱՃԱՐԸ ԵՒ ՎԱՏԻԿԱՆԸ. (ՀՅՈՒՍԻՍ)

(Տե՛ս 191)

քեր և Վատիկանի միւզէի կրօնական պատկերների արտատպումներ: Այստեղ է նաև պապը զանազան դիրքերով: Եւ այդ սուրբ ապրանքը սոսկալի գնեբով արտահանվում է ամեն օր՝ խոռված հոգիների խաղաղութեան համար և վաճառված Յիսուսներն ու աստուածածիննները գնում են աշխարհի ամեն ծայրերում վառ պահելու երկիւղած բարեպաշտութիւնը:

Ահա և ս. Պետրոսը. տաճարի առջև տարածվում է մի մեծ հրապարակ, որի երկու կողմերից քառակարգ սիւներով գալլերէաններ կիսաշրջան են կազմում և միանում ճակատի երկու անկիւններին. երկու գեղեցիկ չատրուանները այս չրջանաձև հրապարակի զարդն են կազմում: Բազմութիւնն այստեղ ահագին է. ոմանք դէպի տաճարը և ուրիշները դէպի միւզէն կամ Սիքստինի հռչակաւոր մատուռն են դիմում: Սկսում եմ ս. Պետրոսից:

Դժուար է արտայայտել այս տաճարի թողած առաջին տպաւորութիւնը. մարդու միտքը չփոթվում է, գլխում ստեղծվում է տարբեր պատկերների մի բազմազան խառնուրդ, ուր ոչինչ որոշ չէ և ամեն ինչ ապշեցուցիչ: Ինձ թւում է, որ անօգուտ փորձ է որ և է ճանապարհորդի կողմից դրի առնել այս չէնքից ստացած տպաւորութիւնները. մարդկային ձեռագործներ կան, որոնք բնութեան հաղուագիւտ ու վեհ տեսարանի են նման և որոնց առաջ լեզուն համր է մնում, միայն հոգին է սաւառնում պատկերների անորոշ քաոսի մէջ: Գուցէ աւելի հեշտ լինի նկարագրել մի ծով,

քան ս. Պետրոսի տաճարը։ Ծովի այս ու այն կողմը թէև փոփոխական, բայց մի վայրկենական և հետևողական միութիւն է ներկայացնում, որ հպատակվում է, դէթ մասամբ, երևակայութեան և լեզուի օրէնքներին, իսկ այս տաճարը թէև անփոփոխ ու սառած, բայց այնքան դրութիւններ է ներկայացնում, որ անհնարին է տպաւորութիւնների և պատկերների մէջ ամբողջութիւն, միութիւն ստեղծել։ Յաջորդական դարերը, կրօնական երկիւղածութիւնը կամ կապրիզը, փառամոլ զօրութիւնը, կամ գեղարուեստի սէրը, միացած կաթոլիկ աշխարհի ոսկու հետ, ս. Պետրոսի տաճարը դարձրել են մի չտեսմարան արուեստի և հարստութեան։ Ճշմարիտ է, ինչպէս առհասարակ բոլոր կաթոլիկ եկեղեցիները, նոյնպէս և ս. Պետրոսը չատ է պճնված, արուեստը խեղդվում է ոսկու և արծաթի փայլի մէջ, բայց և այնպէս ամբողջը վեհօրէն ցնցող է և կասկած չը կայ, որ նա կարող է բռնել կաթոլիկ մարդու հոգին, չպրտել նրան տպաւորութիւնների խորագոյն անդունդները, օրօրել դիւթական երազների, ֆանտաստիկ պատկերների, խօլական երևոյթների մի հմայիչ աշխարհում։

Այս զարմանալի չէնքի մէջ ժամեր թափառելուց յետոյ մարդ դուրս է գնում, համարեա բոլորովին չը յիշելով իր տեսածները, բայց և այնպէս մտածում է՝ ինքն էլ չի իմանալով որոշապէս ինչի մասին։ Չը նայելով իմ խորին ուշադրութեանը, այժմ, երբ գրում եմ այս տողերը, տպաւորութիւն-



ՄԱՐՄԱՐԻ ԱՐՁԱՆԱԽՈՒՄԲ ՄԻՒՒԷԼ-ԱՆՋԵԼՕԻ
(Ս. ՊԵՏՐՈՍԻ ՏԱՃԱՐՈՒՄ)

(նկաս 193)

նների ահագին ժխորից իմ գլխում մնացել են միայն չորս պատկեր։ Ես յիշում եմ մայր գմբէթը, որ Միքել-Անջէլօի հանճարի հրաշալիքներից մէկն է, և երկնակամարի պէս իջնում է տաճարի կատարին այնքան բարձրից, որ ներքևից նայելն անգամ դժուար է։ Յիշում եմ նաև մեծ արուեստագէտի մարմարէ Աստուածածինը, մեծ մուրճից դէպի ձախ մի վոքրիկ մատուռի սեղանի վրա։ Նստել է այնտեղ սգաւոր Աստուածամայրը և իր թուլացած ծնկների վրա պահում է իր մեռած որդուն, խաչված Քրիստոսին, ալ ձևոքը թիկունքին և ձախով նրա կախ ընկած թևը բռնած։ Նա կարծես զրկել է դիակը և ցոյց է տալիս մի աներևոյթ բազմութեան գործված մեծ ոճիրը՝ ցաւի մի անհուն չեչտուվ։ Այս անկիւնի միատիկ կիսախաւարի մէջ, այս վշտոտ մայրը, որ կուսութեան կնիքը պահում է դեռ, աշխարհի համար մեռած այդ որդին մենակ ու քարացած, կարծես տէր են տիեզերքի, գաղափարների տիեզերքի և խօսում են մարդկային հոգուն նուիրական ցաւի վսեմ լեզուով։

Չեմ մոռացել նոյնպէս Կլեման XIII-ի արձանի մօտ կանօվայի «մահվան հրեշտակը»։ Արուեստագէտը կարողացել է այդ դեղեցիկ մարմնի մէջ արտայայտել մի այնպիսի բան, որ չը նայելով առնական բոլոր իրականութեանը, չօշափելի նիւթին, մարդու բաժանում է աշխարհից և երկնային խոհեր ներշնչում։ Այս հրեշտակի դէմքի արտայայտութիւնն այնպէս է, որ կարծես ինքն իր արածի վրա խորապէս վշտացած է, անիծում է իր պաշ-

ածնը, անիծում է իր ճակատագիրը, որ յաւիտենականապէս կապված է մահվան և արցունքի հետ։

Անկարելի է մոռանալ Ալէքսանդր VII-ի արձանի առաջ այլաբանօրէն մահ ներկայացնող մի ֆանտաստիկ մարմարէ գործ։ Մի կմախք, մահատեսիլ և ցուրտ, իր խողովակաձև բազուկներով բարձրացնում է կարմիր մարմարէ լայնատարած քողը, որով պատած է ահագին արձանի պատուանդանը։ Այդ կմախքը, որի միայն բազուկներն են երևում, այդ կարմիր քարէ քողը, որ հարուստ ծալքերով բացվում, տարածվում է, ինչպէս փայլուն բևեռ, այն աստիճան խորհրդաւոր են, որ մարդ ակամայ սպասում է, թէ հիմա կը բարձրանայ այդ քողը և այնտեղից դուրս կը գայ սարսափը մեռելութեան և ոչնչութեան։

Ուրիշ ոչինչ չեմ յիշում, կամ աւելի ճիշդ անկարող եմ դրի առնել։ Պէտք է տեսնել այն տաճարը կաթոլիկութիւնը հասկանալու համար իր փառքի զօրութեան չրջանում։ Սա այն համր պերճախօս յիշատակարաններից է, որոնց պատմածը միշտ աւելի ճշմարիտ է, քան տասնեակ հատորների բովանդակութիւնը։ Մեծածախս և փառաւոր չինութիւնները, ուր և լինեն նրանք, միշտ արդիւնք են ոյժի, կարողութեան մի յաւելուածի, որ մարդիկ չեսպում են մաչել մի այնպիսի միջոցով, որ օտարի զարմանքը չարժէ, երկիւղ ու պատկառանք ազդէ, եթէ այդ օտարն անկախ է ու թշնամի. միևնոյն ժամանակ հպատակութեան, մշտական հնազանդութեան զգացմունք ներչնչէ



«ՄԱՀՈՒԱՆ ՀՐԵՇՏԱԿԸ», ԿԱՆՕՎԱՅԻ, Ս. ՊԵՏՐՈՍԻ ՏԱՃԱՐՈՒՄ (ՀՌՈՄ)

(Երես 193)

տիրապետութեան ներքև գտնվածներին, քանի որ արտաքին, առարկայական նչանը ներքին անզուսպ, կարող ոյժերի պոռթկումն է։ Եգիպտական բուրգերը պէտք է որ չինված լինին այն ժամանակ, երբ փարաւոններն իրանց զօրութեան ապօգէումն էին գտնվում. Վերսալը միայն Լիւդովիկոս XIV կարող էր ձեռնարկել, Սէֆէնքի ամենափառաւոր չինութիւնները մօտաւորապէս V-րդ դարում (Ք. ա.) պարսկական պատերազմներից յետոյ կառուցվեցին, այն փառաւոր ժամանակներում, երբ այդ փոքրիկ սիտէն իր ծովային կայսրութիւնը հիմնեց և կղզիների վրա հեգեմոնիան հաստատեց։ Ս. Պետրոսի տաճարն էլ կաթոլիկութեան, պապականութեան ամբարված ոյժի մի հզօր պոռթկումն էր, որ պիտի պատկառանք և հնազանդութիւն ներշնչէր այնքան իշխանների, թագաւորների, կայսրների, այնքան ժողովուրդների։

Սովորաբար կենսական ոյժերի մի այդպիսի հզօր թափից համարեա անմիջապէս յետոյ վրա է հասնում ւևկադանսը, շատ անգամ անդարձ անկումը. Սէֆէնքի ծովային զօրութեան և իր անկման սկիզբը մի դարով միայն հեռու են իրարից. Հռոմի կայսրները իրանց ճոխ պալատների հետ կայսրութեան գերեզմանն էին չինում արդէն, իսկ ս. Պետրոսի տաճարի հետ համարեա միաժամանակ հիւսիսում՝ որպէս չանթալից ամպ Լիւտերի հզօր ու կենդանի խօսքը ճայթեց։ Հռոմէական կայսրութեան ժառանգ հանդիսացած այս իշխի

աշխարհական իշխանութիւնը, որպէս երկաթէ օղակ սղմում է անխնայ և կարծես խեղդել է ուզում Գրիգորիոս VII-ի, Յուլիոս II-ի և Աղեքսանդր X-ի յաջորդին։ Որպէս անցած զօրութեան մի նշան, որ կարիկատուրի կերպարանք է ստացել, դեռ երևում են մի քանի տաճնեակ հրացանաւոր պահապաններ իրանց կարմիր-դեղին զգեստներով. չերտաւոր ու խայտաճամուկ, որ այնպէս յիշեցնում են ցիրկերի կլօուններին։ Քվիրինալի արքայական պալատի կառարին փողփողող դրօշակին և Եանիկուլի բլրի բարձրութիւնից վնհօրէն հսկող Գարիբալդիի ձիաւոր արձանին խէթ-խէթ է նայում ս. Պետրոսի վիթխարի գմբէթի փայլփլուն խաչը. պապը չարունակում է իր հօտի կրօնական զայրոյթը յուզելու համար իրան բանտարկված հռչակել Վատիկանում և խոոված մնալ միացած Իտալիայի թագաւորի հետ, բայց այդ ոչն անզօր է և եկեղեցու աշխարհական իշխանութիւնն անդառնալի։

XXII

Իտալիայում ճանապարհորդելիս մարդ ամբողջ օրեր և չաբաթներ ապրում է այն մեծ հոգիների հետ, որոնք այդ երկրի միտքն ու գեղարուեստն են ներկայացնում։ Միքել-Անջէլօ, Բաֆայէլ, Դանտէ և ուրիշները կարծես ընկերանում են ճանա-



Միքիլ Անջելօ (1475—1564)
(Երես 197)

պարհորդին, նրա հետ թափառում իրանց յիշատակներով լի վայրերում և փսփսում են նրա ականջին վսեմ խոհեր, դիւթիչ ներշնչումներ։ Անկարելի է իտալական գեղարուեստի մասին թէկուզ մի քանի տող գրել առանց երես առ երես հանդիպելու այդ մեծ դէմքերից մէկին ու մէկի հետ։ Սևենամեծ հաճոյքով եմ դրում այսօր Միքէլ-Անջէլօի և նրա հռչակաւոր Մովսէսի մասին։

Սրդարև զարմանալի է Միքէլ-Անջէլօի գեղարուեստական հանճարի բեղմնաւորունակութիւնը. Իտալիայի և մանաւորապէս Հռոմի որ կողմը դառնաս՝ նա թողել է իր մեծ անուան արժանի մի մեծ գործ։ Գեղարուեստի քանի ճիւղերի մէջ է նա դերազանցել։ Միքէլ-Անջէլօն գեղարուեստի Արիստոտէլն է։ Որքան բազմակողմանի, տիեզերական է մէկի խելքը իր ժամանակի փիլիսոփայութեան և դիտութիւնների բոլոր ճիւղերի համար, նոյնքան տիեզերական է միւսի հանճարեղ երևակայութեան թռիչքը գեղարուեստի բոլոր դլխաւոր ճիւղերի մէջ։ Եւ ոչ մէկում նա երկրորդական արուեստագէտ չէ. նա մեծ նկարիչ է, նոյնքան մեծ ճարտարապետ և դուցէ բոլոր դարերի մեծագոյն քանդակագործն է։ Գիտութեան հրաշալիքների մասին չատ բան է արվել, բայց ըստ իս, բնութեան հրաշալիքներից մեծագոյնը կը մնայ միշտ մի Միքէլ-Անջէլօի ծնունդը և նրան աչխարհ բերող բնական օրէնքները դուցէ միշտ մնան մի անբացատրելի գաղտնիք։ Սրդարև մի փոքր մօտիկից ծանօթանալով այդ մեծ դէմքի հետ, մարդ չէ կա-

բողանում հասկանալ բնութեան այդ ծայրայեղ չռայլութիւնը իր մի հասիկ ընարեալի վերաբերմամբ, որին մահկանացուների մէջ ասես աստուածութեան տեղ է յատկացրել։


«Զորս մարդ կայ, աստւմ է Տէն, որոնք գեղարուեստի և գրականութեան մէջ բարձրացել են բոլոր միւսներից այնքան վեր, որ կարծես մի առանձին ցեղի ծնունդ լինեն։ Սրանք են՝ Դանտէ, Շէքսպիր, Բեեհօվէն և Միքել-Անջէլօ։ Ոչ խորին իմաստութիւնը, ոչ գեղարուեստի բոլոր աղբիւրների կատարեալ տիրապետութիւնը, ոչ երևակայութեան բեղմնաւորութիւնը և ոչ իրանց օրիգինալ ոգին բաւական չէին նրանց այդ տեղը տալու համար. նրանք այս բոլորը տիրապետում են և այս բոլորը երկրորդական է նրանց համար։ Այն՝ ինչ որ բարձրացրել է նրանց մինչև այդ աստիճան, դա նրանց հոգին է, մի զահավէժ աստուածոյ հոգի, որ իր բոլոր էութեամբ, մի անյագ թիւրով ձգտում է դէպի մեր աշխարհին անհամաչափ մի աշխարհ։ Շարունակ պայքարի մէջ և փոթորկոտ, անկարող յագեցնել իր տենչը կամ ընկճվել վերջնականապէս, իր մենաւորութեան մէջ նա աշխատում է հանել մարդկանց առաջ վիթխարիներ նոյնքան խօլական, նոյնքան հզօր, նոյնքան ցաւագինօրէն վեհ, որքան իր անզօր և անյագ-դուրդ խղճը»։

Եւ այդ յարատև փոթորկված հոգին դուրս է թափել իր գերբնական երազների դիւթական պատուհները, ինչպէս մի հրաբխային լեռ՝ առատաձեռն

մօր, բարի ոգու վսեմ ինքնամոռացութեամբ։ Համայնքներ ու քաղաքներ, եկեղեցիներ ու հասարակական այլ հաստատութիւններ աշխատել են մատն ունենալ հակայ հանճարի թափած գանձերից։ Եւ ով մի բան ունի Անջէլոից, ում աջողվել է որ և է կերպով նրա մեծ անունը կապել իր անուանը, նրա դուռն այսօր թակում է դեղարուեստասէր ուխտաւորների մի բազմութիւն. Հռոմում Saint Pierre aux liens մի սովորական եկեղեցի է, բայց ամենայն օր լի է ուխտաւորներով, որովհետև այնտեղ է Միքել-Անջէլօի հռչակաւոր «Մովսէսը»։

Իմ այցելած օրը՝ մի անձրևոտ խոնաւ օր, եկեղեցում բազմաթիւ օտարականներ կան։ Ամեն մի նոր մտնող առանց ուշը դարձնելու եկեղեցու ճոխ զարդերի վրա, ուղիղ դէպի մայր սեղանի աջ կողմն է դիմում, ուր նստել է Մովսէսը՝ անապատների իշխանը, այնպէս՝ ինչպէս նա ներկայացել է Միքել-Անջէլօի երևակայութեանը։ Այցելուները նստած կամ կանգնած՝ ակնապիշ դիտում են արձանը, հազիւ լսելի փսփսուկով յայտնում են փոխադարձ տպաւորութիւնները կամ ժամերով մնում են քարացած այս համրօրէն պերճախօս մարմարէ զանգուածի առաջ։ Սրդարև Մովսէսը գաբերի խաւարի միջից դուրս է սողացել և ցցվել է այնտեղ իր իշխանական և մարգարէական բոլոր վեհութեամբ։ Անապատների թափառական ցեղերի ծեր ու վիթխարի նահապետը պատրաստվում է վեր կենալ նստած տեղից, արդէն ձախ ձեռքով

հաւաքել է իր վերարկուի լայն փէշերը և աջով բռնել է տաճառաքանեայ պատուիրանի տախտակները, կիսով չափ յենվել է մի ոտքին, որ ծալվել է թեթև կերպով։ Դա մի իսկական հովիւ է, յաղթ իրանը ծածկված է մի երկար թիկնոցով, որ հարուստ ծալքերով իչխում է ծնկների վրա, բայց թողնելով աջ ոտքը ծնկից վար. սրունքի վրա երևում է զանկապանը։ Բազուկների և ձեռքի թաթերի վրա անատոմիական ճշդութեամբ գծագրվում են մանուածապատ երակները, իսկ ջլուտ կուռը ասես ձուլված է երկաթից։ Նայելով նրան, մարդ ապատում է, թէ ահա նա կը վերկենայ, ոտքի կը կանգնի, որոտալով դուրս կը թափէ, ինչ կուտված է սրտում, ինչպէս մութ ամպերից ճայթող փոթորիկ։ Նրա զայրացած ու մռայլ դէմքը դարձած է դէպի ձախ և նա նայում է այնպիսի չեչտով, աչքերի մէջ այնքան զայրացկոտ կենդանութիւն և եռանդ կայ, որ մարդ ակամայ նայում է դէպի նոյն կողմը, ուր նրա չեչտակի հայեացքն է ուղուած։ Թուում է՝ թէ այնտեղ, դաշտավայրի հեռաւոր հօրիզոնի վրա պիտի երևան հրէաները, անհաւատ ու արծաթասէր, որոնք աստուածային օրէնքներն ու երկիւղը դրել են ոսկէ հորթի առների տակ և անկման, ամօթի և գարչութեան ճօճն են կատարում։ Եւ անկարելի է մի քանի անգամ չը նայել դէպի այն կողմը, ուր նայում է Մովսէսը։ Պատրանքը զարմանալի է. փոյթ չէ, որ եկեղեցու կամարների տակ դաշտ ու հօրիզոն չը կայ, բայց էլի նայում ես ճիշտ այնպէս, ինչպէս



«ՄՈՎՍԷՍ», ՄԻՒՔԷԼ ԱՆՋԵԼՕԻ (ՀՌՈՄ)

(երես 199)

մարդ նայում է մի կողմ նայող բազմութեան հետ, կամ անգիտակցաբար վազում է ւիախչող ամբոխի հետ։

Հարուստ ու թաւ միրուքը, որ թափվել է մինչև ծնկները, կախկխվել է ոլոր, ոլոր, հաստ պատրոյգներով, իսկ դէմքն ասում է, թէ այդ ծեր սրտի մէջ այնքան զայրոյթ է կուտակած, որ բաւական է զսպելու ամենախելագար ամբոխի ամենաանարդ դժուբիւնները։ Եւ այդ զայրոյթը վուլդէր, թեթեւամիտ բռնկումն չէ, որ յատուկ է երիտասարդ, անչրջահայեաց գլուխներին. դա պիտակցական է ու ահաւոր և ամբողջ դէմքը կարծես ուզում է ասել՝ «էլլի... ահ թշուառականներ»։

Դա մի հովիւ է, բայց միևնոյն ժամանակ մի մարգարէ, մի դատաւոր, մի արքայ։ Ամբողջ հրէութիւնն է նա, աննկուն, անխորտակելի, որ քաշ է տալիս իր գոյութիւնը կեանքի անապատներում, ինչպէս Մովսէսն իր այս բազմածալ վերարկուն, երբէք չը յոգնելու, երբէք չը ձանձրանալու համար։ Դա այն դէմքերից մէկն է, որոնք մի դերագոյն ներշնչումով զարհուրելի ու աքանչելի պարտքն են յանձն առնում երկնքի առաջ երջանիկ դարձնել մի ժողովուրդ՝ հակառակ այդ իսկ ժողովրդի կամքի։

Եթէ ճշմարիտ է, որ մի մարդ կարող է իր մէջ մարմնացնել մի ամբողջ ժողովուրդ, նրա հոգին, նրա բոլոր առաքինութիւններն ու թերութիւնները, պայքարող եռանդն ու անընկճելի կամքը գոյութեան կռւի մէջ, անսիրտ, երկաթէ խստութիւ-

նը իր գոյութեան ուղին հարթելու համար, աւերածի անողոք վճռականութիւնը, երբ պէտք է վերցնել մէջտեղից արգելքներ գերագոյն նպատակին հասնելու համար, ապա համարձակ կարելի է ասել, որ Միքել-Անջէլօն դրել է իր Մովսէսի մէջ ամբողջ հրէական ազգի էութիւնը, նրա հոգին։ Արդարև ծեր նահապետի այս զարմանալի դէմքը կրում է իր վրա հրէայ ժողովրդի եռանդը՝ յամառ, յարատև, անընկճելի. զգում ես, որ այդ վիթխարի ծերունին հարիւր անգամ կարող է զայրոյթից փչրել իր տախտակները, որ ձեռք է բերել այնքան նեղութիւններով և հարիւր անգամ Սինայ կը բարձրանայ նորերը բերելու. և նա կը սանձէ, կը վրկէ իր ժողովուրդը, միայն չէ, եթէ էլի մի քանի կարմիր ծովեր բացվեն իր առաջ։ Միքել-Անջէլօի Մովսէսը հրէական ազգն է և իր անապատների խստասիրտ, վրէժխնդիր Եհովան միաժամանակ։

XXIII

Անցեալ անգամ գրեցի Միքել-Անջէլօի «Մովսէսի մասին» նրա քանդակագործութեան վրա մի գաղափար տալու համար։ Մեծ արուեստագէտի դէմքն աւելի բևեռից դարձնելու համար, այժմ կը

խօսեմ նրա մի պատկերի՝ «Վերջին դատաստանի» մասին, որ ոչ պակաս հիացմունք և զարմանք է չարժում, իբրև մի գեղարուեստական չեդեւռ։

Վատիկանի մի-ւղէին կից մի փոքրիկ մատուռ կայ՝ Սիքստինի մատուռ անունով, (chapelle Sixtine), որ 1473 թ-ին չինեց Սիքստին IV, իսկ XVI-րդ դարում Միքել-Անջէլօն զարդարեց իր զարմանալի որմանկարներով։ Այստեղ է նրա «Աշխարհի ստեղծագործութիւնը»՝ նկարված 1508—1512-ին և «Վերջին դատաստանը» 1534—1541-ին։ Իմ այցելած օրը բազմութիւնն ահագին է. մատուռը բառի բուն նշանակութեամբ լիքն է օտարազգիներով. միայն ամպը պատել է մթնոլորտը և առանց այն էլ կիսախաւար մատուռը այսօր ամպոտ եղանակի պատճառով էլ աւելի մռայլ է։ Բոլոր այցելուները վերև են նայում, որովհետև Միքել-Անջէլօն իր անմահ գործերը նկարել է առաստաղի վրա և առանց գլուխը ծռելու, վեր նայելու ոչինչ չէ կարելի տեսնել։ Այցելուների համար դժուարին կացութիւն է ստեղծված. պարանոցները գալարուում են, աչքերը չռում, նայում են բերանաբաց ու հևալով, գլուխները ցած ձգում, հանգստանում և վերստին սկսում։ Ոմանք ձեռքերին հայելիներ ունեն, որ ուղղում են առաստաղին, իրանց աչխատանքը դիւրացնելու համար, այդ էլ չատ չէ օգնում. իմ կողքին մի կին չատ չարչարվեց իր հայելիով մի բան տեսնելու համար, երբ ջանքերն անօգուտ անցկացան՝ նստեց հանդարտութեամբ, իր սեփական պատկերն է դիտում հայելու մէջ և

ուղղում պլխարկի վերջույրը—կինը կին է նաև Սիքսթինի մատուռում՝ Անջէլօի պատկերների առաջ: Աւելի յամառները դիրքերն են փոխում, այս պատի տակից այն կողմն են անցնում, թամբերի վրա բարձրանում, թեք նայում, նոտում, վեր կենում, համբուրում, կրկին հեռանում, մոմուում, դժդոհում, որ մեծ վարպետը իր հրաշակերտը դրել է այդքան անյարմար տեղ, առնս մարդկանց անմատչելի դարձնելու մի անհասկանալի նախանձով: Ինչո՞ Անջէլօ, հրեշտակաբարոյ մարդ, համարեա մի սուրբ, որ իր մեծ գործերը սիրում էր լայնասիրտ բարութեամբ, մտքովն անգամ չէր կարող անցկացնել իր հանճարի արդիւնքի համար ժլատ լինել, նա մատուռն է զարդարել, իսկ դրա համար անհրաժեշտ էր նաև առաստաղը նկարել: Եւ նա նկարել է ի վեր՝ իր մեծ գործերի, որոնք պատերի ծակի վրա կամաց-կամաց մեռնում են խոնաւութիւնից, մինչդեռ անմահ կարող էին լինել:

Այսպէս թէ այնպէս, ցաւելով պիտի ասել, որ այդ նկարները չատ քիչ են երեսում վարից. սրա տես աչք, պայծառ օր և չատ լաւ հայելի է հարկաւոր լաւ տեսնելու համար: Այլ է «վերջին դատաստանը», որ բռնել է ամբողջ ճակատի պատը և ուշադիր աչքը եկեղեցու կիսախաւարի և փոշու մէջ անգամ կարող է տեսնել: Միքել-Անջէլօն բոլորովին ծեր՝ վաթսուն եօթ տարեկան էր, երբ սկսեց այդ գործը և նրա վրա աշխատեց ամբողջ ութ տարի: Զը նայելով իր մեծ տարիքին՝ Միքել-Անջէլօն կարողացաւ տալ իր ամենամեծ

գործը և հանճարեղ երեակայութիւնը գործեց երիտասարդական հակայ թռիչքով:

Ժամանակը և մի քանի դարերի խնկի ծուխը մի մութ չղարչ են ձգել այս զարմանալի գործի վրա, բայց այսպիսով պատկերն ստացել է աւելի խորհրդաւոր տեսք: Միքել-Անջէլօն զարմանալի արուեստով դրել է պատի վրա այն, ինչ որ հանճարեղ Դանտէն իր խօլական երազների մէջ տեսել և իր գերբնական, վեհ յայտնութիւնների մէջ նկարագրել է: Աստուածային վրէժխնդրութեան և մահկանացուների գերագոյն սարսափի օրն է այս: Միմիայն կրօնական հաւատը իր բոլոր խորութեամբ անկարող պիտի լինէր արտադրել գեղարուեստական մի այսպիսի խիզախ գործ: Միքել-Անջէլօի ծեր հանճարը, ականատես իր հայրենիքի թշուառութիւններին, իբար բաղխվող չբկամութիւններին, նենգութիւններին, սորութիւններին, սիրտը լի ցաւումով և ցաւով նրանց դէմ, որոնք թշուառութիւնների ծովի մէջ խեղդեցին XVI դարի պատառ-պատառ Իտալիան, կարծես կամեցել է պատկերացնել իր վայելչացած վրէժխնդրութեան օրը, երբ մի փրկիչ կը գայ իր հայրենիքի թշնամիների և դաւաճանների դատը տեսնելու և արժանի պատիժը տալու:

Դանտէն իր դժոխքի սարսափների մէջ տեսաւ իր և իր հայրենիքի թշնամիներից չատ չատերին *),

*) «Ո՞վ ես դու, որ գալիս ես տարաժամ.—Դանտէն. եթէ գալիս եմ չեմ մնայ, բայց դու ով ես, որ այդքան տգեղացել ես.

ինչո՞ւ չենթադրել, որ այս կիսախաւարի մէջ լողացող պատկերներից չատերը ներկայացնում են Անջէլօին ծանօթ և սեւելի այս կամ այն անձնաւորութիւնը, որի չարագործութիւնները խակապէս վիրաւորել են նրա մեծ հոգին։

Եւ արդարև, լոկ կրօնական էքստազը, հոգևոր խոհերն ու պատկերները, սատանաներով ու կպրի կարասներով մեզած միստիկ երևակայութիւնը երբեք չը պիտի կարողանային այդ աստիճան իրական, հոգեբանօրէն այդքան ճիշտ կենսատու երևոյթները պատկերացնել, մարդկային կրքերի, յոյզերի, ցնցումների այս ժխորը արձանացնել համայիչ և ահաւոր վեհութեամբ։ Այս համեմատաբար փոքրիկ պատի վրա իրար խառնված մարմինները ասես թիւ չունեն և մի զարմանալի կատակլիզմի հանդիսած՝ ամեն մէկն աշխատում է վրկել իր գլուխը, ինչպէս կարող է։ Նայեցէք այս սուրբերին, այս մարտիրոսներին, որոնք գալիս են կարծես մի բան ձեռք գցելու տենդոտ փութով և իրաքանչիւրը չալական բերում է իր չարչարանքի գործիքը, որպէս վկայ իր անյողդողդ հաւատին ու առաքինութեանը։

Այս դատապարտուածները, որոնք գալարվում են կծիկ-կծիկ և իրանց ջղաձգական չարժումների

—Տեսնում ես, մէկն եմ նրանցից, որոնք լալիս են.—Դանտէն. Երգունքների, սուզի մէջ կաց և մնա, ով անիծեալ դու հոգի, թէև բոլորովին ցեխոտ ես, բայց քեզ ճանաչում եմ։ (Դանտէ. Դժոխք VIII-դ երգ)։

և ցնցումների մէջ կարծես կորցրել են մարմինների ֆիզիկական օրէնքների բոլոր հաւասարակշռութիւնը. ոմանք չանգռում են երեսները, կամ զարհուրելի պռոյաններով գլորվում են չը դիտես ուր. կան՝ որ օձերի պէս խառնվել են իրար և ներկայացնում են գալարված ձեռքերի, ոտների, պարանոցների մի ահաւոր զանգուած, մի հրէշ, որի զանազան կողմերից չուած աչքերի մէջ երևում է անհնարին սարսափի մեծութիւնը։ Ոմանք իրար են քաչքչում, ինչպէս լայնարձակ ծովում նաւի խորտակումից յետոյ մի հատիկ մակոյկի վրա փրկութիւն որոնողների մի խելագար բազմութիւն։ Երկու կողմից իրար վրա կուտակված՝ ձեռքերը ցաւով մեկնած, աչքերն ապերսող, երկիւղը, սարսափը, ոչնչութիւնը, վերադոյն ոչնչութիւնը դէմքերին, նայում են կենտրօնում կանգնած Քրիստոսին, ծայրագոյն դատաւորին. նայում են նրա չըթունքի չարժումներին, սպասում են նրա ժեստին։ Եւ այդ դատաւորը սպառնալի է և արդար, զեղեցիկ է և ահաւոր. նրա ամբ ձեռքի չարժումը, որ այնքան չնչո ու թափ ունի իր մէջ՝ սասանեցուցիչ է։ Տիեզերքի համար վրէժխնդրութեան օրը և «կատարածից» յետոյ յայտնվող մի դատաւոր աւելի ահաւոր և աւելի աստուածային լինել չէր կարող։

Յարութիւն առածները թիւ չունեն. և դեռ գալիս են, գալիս են։ Ձը դիտես ինչ մի զերբնական գաղտնիք է ունեցել հանճարեղ նկարչի վրձինը, որ այս փոքրիկ տարածութեանը կարողա-

ցել է տալ անհունի պատկեր: Մարգկային երևակայութիւնը չէ կարողանում կանգ առնել այս նկարի եզրին և հոգին ակամայ ալանում է հեռու, թափանցում է անհունի խորքերը, որտեղից անասելի թափով դուրս են վիժում այս մարմինները՝ երբէք վերջ չառնելու համար: Մարդ որչափ երկար է նայում, պատկերն այնքան ձգվում, երկարանում է և բազմութիւնն այնքան մեծանում, երևոյթներն աւելի բազմազան են դառնում: Եւ երկու կողմի անդունդներից դուրս սողացողները աղմկում են իրար վրա, ձգվում են դէպի դատաւորը՝ հազարգլխանի հրէշի պէս, իրար թիկունքի, ուսի, պարանոցի վրա բարձրացած, իրար կախկռռնելով, քաշկռտելով՝ բերում են իրանց մեղքերի ծանրութեան ու առաքինութեան նշանները, վերկութիւն կամ ներողամտութիւն գտնելու յոյսով: Բոլոր այս չարժումների, գալարումների, ցնցումների մէջ և ոչ մէկն է բնական ու խաղաղ, ոչ մէկը, որ անասելի սարսափ, յոյզ, յոյս կամ կիրք չարտայայտէր:

Ո՞ր դրկակում, որ իշխանական պալատում է տեսել Անջէլօն մի զոյգ թշուառներ, որոնք ոչնչացած ու անզօր նայում են իրանց խստասիրտ ախրոջ չրթունքներին, սպասելով կեանք կամ մահ: Այդ է, որ նա պատկերացրել է Բրիատոսի ոտների ներքև կծկված այս երկու թշուառականների դիրքի մէջ, որոնք կարծես սարսափով սպասում են իրանց գլխին ժայթող վոտքերին: Սպասողական կացութեան յոյզը, հոգեկան խեղդող անհանգստութիւնը դուցէ երբէք աւելի տրագիկական, աւելի սպանիչ չէ եղել:

Վերջնականապէս դատապարտվածներ կան, որոնք բռունցքներով, թաթերով, բազուկներով ծածկում են երեսները իրանց ոտների տակ բացված անդունդը չը տեսնելու համար. կան՝ որոնք գլուխները թաղել են երկու ծնկների մէջ և ներկայացնում են մի անորոշ կոյտ, որ սարսափի և ոչնչութեան պատկերն ունի. կան՝ որ երեսի վրա են ընկել և տորմվում են տեղնուտեղը՝ ասես եղունգներով փոս են չանգռում երկրորդ անգամ թաղվելու: Ամբողջ պատկերը ներկայացնում է մի աւերիչ մրրիկ, որ իր ոլորտների մէջ ահագին թափով, չը դիտես որտեղից, խլում է մերկ ու գալարուն մսերի ամբողջ կոյտեր և չպրտում է անդունդները՝ ոլորելով նրանց հազար ու մի ձևերով:

Ամենից վար Ախերոնն է կամ Ցաւերի գետը, որի վրա չողում է Քարօնի նաւակը, որ մի ափից դէպի անդառնալին և յաւիտենական սարսափն է տեղափոխում անցաւոր աշխարհում ժամանակաւոր մեղքերի մէջ թաթախված մի անգիտակից մարդկութիւն: Դժոխքի դուռն է այս, այնպէս՝ ինչպէս այն պատկերացրել է Դանտէն իր դժոխքի III երգի սկզբում:

«Աղէտաւոր քաղաքն ինձանից են անցնում,
«Դէպ յաւիտենական ցաւերն ինձանից են անցնում,
«Դէպ դատապարտված հոգիներն ինձանից են անցնում»:

Այս խօսքերը Դանտէն գրված տեսաւ մի դրան

վրա, ներս մտաւ Վիրգիլիոսի հետ և այն, ինչ որ նա տեսաւ դժոխքի ներսում, կատարելապէս համապատասխանում է Անջէլօի «Վերջին դատաստանին». «Այնտեղ հառաչանք, ողբ ու ճիչեր բարձրաձոչ թնդում էին աստեղազուրկ օդի մէջ... կերպ կերպ լեզուներ և քստմնելի բարբառներ, վշտի մրմունջներ և կատաղութեան սուր չեչտեր, բարձր ու կերկերվող ձայներ, ձեռքերի չառաչներ այնպիսի աղմուկ էին հանում մշտագիշեր ու խաւար այն օդի պտոյտների մէջ, ինչպէս աւազը, երբ մրրկում է փոթորիկը... Եւ յետոյ մի դուռնդ էր գալիս այնքան երկար, որ ես դժուարանում էի հաւատալ, թէ մահը երբ է այդքան մարդ լափել... Եկայ հասայ այնտեղ, ուր դադարում է ամեն լոյս, որ մռնչում է մրրկող ծովի նման, երբ ծեծվում է հակառակորդ հողմերից»*): Միքէլ-Անջէլօի «Վերջին դատաստանը» Դանտէի դժոխքի մի պատկերն է կարծես և մեկը առանց միւսի անհասկանալի է: Դանտէն և Անջէլօն երկւորեակներ են, երկու հակայ երևակայութիւն, մեկը գրիչով և միւսը վրձինով:

XXIV

Վատիկանի միւզէն մեծագոյնն է Հռոմում: Սրճաններն այնքան բազմաթիւ են և այնպէս խիտ

*) Դանտէ՝ Դժոխք երգ III և V.

առ խիտ իրար կողքի չարված, որ այցելուն ինքն իրան կարծում է մի ամբոխի մէջ, կենդանի ամբոխի, և այդ պատրանքի հաճոյքը ահագին է: Ամբողջ հեթանոս աշխարհն է այստեղ, բոլոր այն ժլուխները, որոնք դոգման չը ճանաչեցին, ապրեցին, բանականութիւնն ունենալով առաջնորդ և որոնց մօրալը երբէք հոգի չը խեղդեց:

Եւ այս հեթանոս աշխարհի, այս հին աստուածների, այս փիլիսոփաների մէջ փառահեղօրէն բազմել է ս. Պետրոսի տաճարը և այսպիսով ստեղծվել է մի անօրինակ խառնուրդ, ուր հին կրօններն ու վարդապետութիւնները խճճվել են քրիստոնէութեան հետ: Ո՞րն է յաղթական, ո՞րն է ստոր ծաղրածած, դա մի հարց է, որ զանազան ճաշակներ զանազան կերպ են վճռում. փաստ է սակայն՝ որ Ցուլիոս II և Լեւոն X՝ վերածնութեան այս երկու մեծ ախոյեանները աւելի շուտ հեթանոս էստէտիկներ, հին, դասական մտքի, դասական վարդապետութեան աշակերտներ էին, քան քրիստոնէական եկեղեցու պետեր:

Միայն ս. Պետրոսը չէ, որ իր տաճարն ունի Վատիկանի մօտ. դասական աստուածներից ամեն մեկը իրն ունի միւզէի այն մասում, որ կոչվում է «Բելվեդերի բակ»: Չեմ կարող հաւատալ, թէ աշխարհի մի այլ մասում մի միւզէ ունենայ այսպիսի մի բան: Այդ բակը յիշեցնում է հռոմէական աղնուականների տան փոքրիկ պարտէզը: Կենտրօնում մի փոքրիկ չատրուան անուշիկ կարկաչիւնով յուրտ ջուր է ցայտում, այնքան մեղմ,

այնքան զգույշ, որ կարծես դա մրմունջն է այդ հին ոգիների, որոնք կծկված են իրանց արձանների ետևում: Այս խաղաղիկ ու մելամաղձոտիկ պարտեզի չուրջը կամարակապ խցիկներում չարված են գաւառական աչխարհի տէրերը, պարտասից հալածված աստուածները: Այս միւզէի այցելութիւնը մի հրաշալի ըրօսանք է. մարդ խօսում է աստուածների դիւթական լեզուն, ապրում է նրանց հետ և ենթադրում է հին օրերը, երբ մարդն ու անմահները կազմում էին մի ընտանիք, միևնոյն կրքերով, միևնոյն յոյզերով էին ապրում, լալիս, խնդում, սգում ու զուարճանում:

Այստեղ է հռչակաւոր Ապօլլօն-Դը-Բելվեդերը, որ կատարելատիպն է ներկայացնում առնական գեղեցկութեան այնպէս՝ ինչպէս այն ըմբռնում է հին յոյնը: Մերկ ձևերի կատարելութիւնը, միացած մի փոքր քնքոյշ առնայութեան հետ, դիմագծերի արտայայտիչ ու վսեմ ներդաշնակութիւնը մարմնոյ ամբողջութեան հետ, դարձնում են այդ արձանը ընդհանուր հիացմունքի և գեղարուեստական բարձր հաճոյքի մի անսպառ աղբիւր: Մարդ նայում է մի անգամ, նայում է դարձեալ, մնում է ակնապիշ և չի կշտանում: Զգում ես, որ մարմինն և նրա բնական յոյզերն ու կրքերը սըրբագործող կրօնով ոգևած մի հեթանոս երևակայութիւն կարող էր արտադրել մի այսպիսի գործ: Երբ մի քրիստոնեայ արուեստագէտ իր գեղարուեստական գործերի մէջ հասնի այսպիսի կատարելութեան, ինչպէս, օրինակ, մի Միքել-Անջէլօ—



ԲԵԼՎԵԴԵՐԵԱՆ ԱՊՕԼԼՕՆԸ (ՎԱՏԻԿԱՆԻ ՄԻՒԶԷ)
(Երես 212)

նոր աշխարհի այս Փիդիասը, ապա վստահ կարելի է ասել, որ նա քրիստոնեայ հեթանոս է, որ նա սնված է այն գաղափարներով, այն հասկացողութիւններով, որոնցով սնված էր յոյն Փիդիասը կամ Պլատոն։

Այստեղ է Մերկուրը՝ աստուածների բանբեր հրեշտակը և միևնոյն ժամանակ պերճախօսութեան, վաճառականութեան և գողերի աստուածը։ Զարմանալի են հին յոյներն իրանց ըմբռնողութեամբ։ Սրևեքի վաճառականութիւնը միշտ եղել է մի իսկական դողութիւն, իսկ լաւ խաբելու համար անհրաժեշտ է նաև լաւ խօսելու արուեստը՝ ապրանքը գովելու, յաճախորդին չկացնելու համար. և եթէ սրա վրա աւելացնենք վաճառականների լուր տանել բերելու հեշտութիւնը, ահա քեզ Մերկուրի իդէան. նա մի հանճարեղ գող է, որովհետև պերճախօս վաճառական է։ Նա մտածկոտ է, ինչպէս հաշիւներով զբաղված մի առևտրական, որի գործերը վատ չեն գնում և որ իր գործի աջողութեան և վաստակի դիտակցութիւնն ունի։

Այստեղ է Պերսէն, Մեդուզայի գլուխը կախած ձեռքին՝ սպառնալից ու յաղթական։ Բայց անցնենք Լաոկօօնի արձանախումբը տեսնելու, որ հին աշխարհի դեղարուեստական հրաշալիքներից մէկն է։

Լաոկօօնի լեգենդան աստուածային վրէժխնդրութեան մի զարհուրելի օրինակ է։ Զարմանալի է, մարդկային միտքը դեռ երբէք չէ յղացել Աստուծոյ մի իդէա, որ պատկերացնէր բացարձակ բարութիւն, բացարձակ ողորմածութիւն։ Սրա-

մազդը իր չանթերն ունէր, միւս աստուածուԹիւններից իւրաքանչիւրն իր տրամադրուԹեան տակ ունէր երկնքի և երկրի բոլոր չարագործ ոյժերը՝ պատժելու ողորմելի մահկանացուների չնչին յանցանքները անլուր պատիժներով։ Եհովան վրէժխնդիր էր, որպէս խանձված անապատների մի ցասկոտ իշխան։ ՔրիստոնէուԹիւնն այդ բոլոր հին և նոր աստուածային վրէժխնդրուԹիւններից ու պատիժներից հիւսեց իր զարհուրելի դժոխքը, որ բարեբախտաբար Դանտէն միայն երազող երևակայուԹեամբ տեսաւ։ Հին և նոր սերունդները աստուածների ամենաեսասէր հակումներ տալու մէջ իրարից յետ չեն մնայ։ Մարդը մարդու մէջ յաճախ է դիւուԹիւն և ներողամտուԹիւն վնտռում կամ պահանջում գոնէ յանցանքի և պատժի մէջ որոշ համաչափուԹիւն. բայց երկինքն ու երկիրը բռնակալներով լցնող ստրուկ միտքը սասանվում է և համբերուԹեամբ է դիտում պատիժների և յանցանքների մէջ իշխող անարդար անհամաչափուԹիւնը, երբ դատաւորն իր ինկ ստեղծած մի աստուած է երկնային կամ երկրաւոր։

Շատ անգամ «ողորմած» աստուածների զայրոյթը տարածվում է նաև անմեղների վրա. Եհովան եօթ սերունդ էր պատժում հայրերի յանցանքի համար։ Ապօլլօն կոտորեց տասն և չորս անմեղ երեխաներ, որովհետև նրանց մայրը՝ Նիօբէն՝ հպարտ էր իր զաւակներով. ահա և Լաոկօօնի օրինակը, երկնքի անարդարութեան մի վրդովեցուցիչ փաստ։ Պրիամոսի և Հեկուբայի որդի Լաոկօօնը քուրմ է Տրօվադայի Ապօլլօնին։ Այս աստուածը մի չնչին առիթով դժգոհ է իր ծառայից և իբրև պատիժ երկու ահագին օձեր է ուղարկում և նրան իր երկու որդիների հետ խեղդում։ Ահա այս երկնային վրէժխնդրութեան լեգենդան է, որ հանճարեղ արձանագործը պատկերացրել է մի աքանչելի արձանախմբով։

Երկու հսկայական օձեր իրանց երկաթէ օղակների մէջ բռնել են հօրը երկու որդիների հետ և այնպէս են խճճվել նրանց բազուկների և ոտների մէջ, որ այլ ևս չարժվելու, փրկութեան ոչ մի հնար չը կայ։ Երկու որդիներից մէկը բոլորովին մանուկ է, միւսը՝ պատանի է, իսկ հայրը՝ մի պատկառելի ծերունի։ Փոքր որդին, որի կողքին կպել է զզուելի սողունը իր ահագին երախով, ցաւի մի աննկարագրելի արտայայտութեամբ աջ ձեռքը դրել է օձի տափակ գլխին և կարծես փորձում է դուրս քաշել իր մսի միջից նրա թունալից ատամները։ Այդ փորձն անզօր է նրան փրկել և մանուկը բերանը կիսաբաց, աչքերը խուփ, մարում է և քաշ ընկնում օձի օղակների մէջ։ Միւս որդին, որի ձախ ոտքը և աջ ձեռքն են գալարների մէջ բռնված, բարձրացրել է միւս ձեռքը, անհնարին ատամուիով նայում է հօրը և կարծես վերջին վայրկենին իր եղերական օրհասի մէջ հարցնում է իր ծնողին թէ՝ «ինչո՞ւ»։ Երկու դժբախտ որդիների մէջ մնռնող հայրը իր դիրքով, մարմնի ցաւոտ գալարներով, վզի թեքուածքով, դէմքի արտայայտութեամբ ներկայացնում է մի անհուն

արագիւմ. գուցէ դեռ երբէք ֆիզիքական ցաւն աւելի հզօր կերպով արտայայտած չէ եղել մի մարմնի մէջ: Նա ալ ձեռքով չզածգօրէն բռնել է օձի մի օղակը, բարձրացրել է գլխից վեր, ամբողջ մարմինը կծիկ կծիկ է դարձել, երակներն ուռել են իր վիրաւորեան ճիգի մէջ, մազերն ու միրուքը խռիւ, բերանը ցաւագնօրէն բաց, զգում ես, որ նրա հառաչանքից քարը կարող է ճայթել: Ամբողջը ներկայացնում է ցաւի զերագոյն արտայայտութիւնը:

Մարդկային մարմնի ֆիզիքական ցաւն ու տանջանքը ներկայացնող այս մարմարէ արձանախմբի առաջ մարդ ինքն էլ քար է կտրում և սարսափից ու կարեկցութիւնից մնում է բերանաբաց, ապրում է այդ դժբախտների ցաւով, կուզէր մի բան անել նրանց փրկելու. միտքը գործում է և հնար է մտածում, որ, օրինակ, աւագ որդին կարողանայ իր կիսով չափ օղակից դուրս քաշած ոտքը խնայել մահաբեր գալարներից. կուզէր, որ հայրը սկսէ սեղմէ օձի օղակը, գուցէ սողունը խեղդվի, թուլանայ, կուզէր հազար ու մի բան անել, որ իր նմանն այս անհուն ցաւը մենակ չը տանէր: Եւ իր անզօրութեան մէջ ըմբոստ երկնքի առաջ, մարդ անարգում է այդ անողորմ աստուածութիւնը, որ իր ետսիրութեան մէջ իջել է մինչև ամենավատթար չարագործը:

Եւ այս բոլորն ստեղծել է ինքը մարդը. նա դարերի ընթացքում հաւատացել է, որ այդպէս լաւ է, որ երկինքն իրաւունք ունի այդպէս չա-



ԼԱՕԿՕՕՆ (ՎԱՏԻԿԱՆԻ ՄԻՒԶԷՈՒՄ)

(Երես 213)

բագործ ու խստասիրտ լինել դէպի իր ճակատագիրը. մարդը հաւատացել է, թէ երկու օձերը, որոնք աչխարհի չարիքն են ներկայացնում, ճակատագրապէս անհրաժեչտ են իր մարմինը խոցելու համար, որ երկինքն արդար է, որովհետև այժ ունի, ինչպէս արդար են և բոլոր նրանք, որոնք բիւրաւոր խեղճերին արիւն արցունք են քամել տալիս, որովհետև այժ ունեն։ Թէ երկինքը դատարկվի բռնակալ աստուածներից, երկիրը բեղմնաւոր և հարուստ կուրծք ունի նորերն արտադրելու. թըչուառ, խարխափող միտք, երբ պիտի ազատվես։

XXV

Ես մինչև այժմ ոչինչ չասացի Միքել-Անջէլօի մեծ ժամանակակից և ախոյեան Բաֆայէլի մասին։ Այդ յապաղումը մոռացութեան արդիւնք չէ, այլ կանխամտածած։ Որ և է մեծութիւն բնչնեփ և իր իսկական չափով տեսնելու համար, նրան իր նմաններից զատելն անօգուտ չէ։ Բաֆայէլ և Միքել-Անջէլօ,—երկուսն էլ այնքան մեծ են, որ նրանց կողք կողքի դնելը չատ է ճնչող։

Տարօրինակ ժամանակներ էին XV-դ դարի վերջերը և XVI-ի սկիզբները։ Ամբողջ դարեր խաւարի, ամուլ վէճերի, դատարկ աքօլաստիկայի մէջ ճմռված միտքը, լեթարգիական քնից

յանկարծ արթնացածի պէս, տեսնելու և դիտենալու ծարաւով բռնված, աշխատում է միանգամից, մի հզօր ջանքով ընդգրկել այն, ինչ նրանից ծածկված էր այնքան ժամանակ։ Եւ յոգնած ու տառապած՝ նա յետ յետ է նայում, աշխատում է վերարտադրել դասական ժամանակները, որպէս մի մոռացված երազ, որպէս մի քաղցր վերյուշքերում է այն օրերի տպաւորութիւնները, երբ երևակայութեան ազատ թռիչքը ոչնչով խափանված չէր, երբ բանականութիւնը գործում էր իր բոլոր զօրութեամբ։ Այնտեղ՝ այն կոյս ժամանակների կոյս ոգու մէջ ներշնչումներ էր փնտրում, ինչպէս դիչերային խաւարում արթնացած մանուկը շրթունքների հպումով փնտրում է մայրական կենսատու սրինքը։

Եկեղեցին էր, որ իր աբօլատիկայով, իր երկաթէ զօրմայով չորացրել էր սրտերը, քամել նրա կենսական նիւթը, խեղդել երևակայութիւնը. այժմ երկու պապեր էին՝ Յուլիոս II և Լեւոն X, որոնք երես էին գարձնում իրանց նախորդների ընթացքից, խզում էին կապը քարացած և քարացնող անցեալի հետ և չէին քաչվում քահանայապետական գահի բարձրութիւնից դուրս կանչել հեթանոս միքն ու գեղարուեստը։ Ժամանակին, մեծ գաղափարներով յղի որ և է մեծ էպօխայի ոյժը միշտ անօրինակ մետամօրֆոզների է ընդունակ։ Յուլիոս II և իր յաջորդը՝ Լեւոն X կարծես պապեր չէին, այլ երկու աշխարհական իշխաններ, միջնադարեան երկու հարուստ ազնուականներ, կենսասէր, ու-



ՐԱՖԱԷԼ (1483—1520)
(երես 217)

բախ, զեղաւէր, որոնց պալատները ներկայացնում էին թափառական երգիչների, բանաստեղծների, նկարիչների, քանդակագործների բարձր ազատ տարան։ Թէ մինչև որ աստիճան XVI-դ դարի սկզբում հեթանոս զեղարուեստն իշխում է՝ այդ երևում է նրանից, որ երբ Յուլիոս II գտաւ Լաոկօօնի հռչակաւոր արձանախումբը, հրամայեց Հռոմի բոլոր եկեղեցիներում զանգահարել։ Քրիստոնէական տաճարների կատարներից հնչվող այդ զօղանջիւնը աւետում էր մարի վերածնութիւնը, աւետում էր լոյսը երկարատև, մռայլ գիշերից յետոյ։

Յուլիոս II և Լեւոն X և նրանց հովանաւորած երկու հսկայ արտիստները՝ Անջէլօ և Բաֆայէլ, չորս ժամանակակից անուններ են, որոնք էլի մի անգամ ապացուցին, որ անհատի դերը պատմութեան մէջ ահագին է, որ անհատը իր գործունէութեան, իր մարի, իր բնաւորութեան դրօշմն է դնում այս կամ այն էպօխայի վրա, բայց վերադարձապէս ինքը, նոյն անհատը իր ժամանակում երևան է գալիս որպէս արտայայտական անհրաժեշտութիւն պայմանաւորված հեռաւոր և մօտաւոր անցեալի անթիւ փակտօրներով։ Ժամանակն ու անհատը կազմում են մի ամբողջութիւն և նրանց բաժանել իրարից կը նշանակէ ստեղծել մի անլուծելի դիլեմա։ Բայց թողնենք այս, դառնանք մեր խնդրին։

Վերածնութիւն ասելով՝ մարդ իակոյն չիշում է երկու պապերին և նրանց ժամանակակից երկու մեծ վարպետներին, որոնք վերջացրին, կամ աւելի

չուա պահպեյին Դանտէից սկսած մտաւոր և գե-
ղարուեստական չարժումը և իրանց անունը տուին
այդ իրապէս մեծ ժամանակին։ Անջէլօ և Րափայէլ
գեղարուեստի երկու արեգակներ են, որոնք իրանց
փայլի տակ համարեա խեղդել են մնացած բոլոր
մեծ վարպետներին։ Այդ բռնակալութիւնը դեռ
չարունակվում է. որ միւզէում, որ եկեղեցում, որ
պալատում նրանց մի գործը կայ, յաճախորդներն
անպակաս են։

Սէն-Լուկայի գալլերէյում Րափայէլի մի որմա-
նկարը տեսայ՝ 5—6 տարեկան մի փոքրիկ երե-
խայ, ո՛չ, մի հրեշտակ, և դա միայն բաւական է,
որ իւրաքանչիւր տուրիստ այն միւզէին այցելու-
թեան գնայ։ Այնտեղ կան և ուրիշ բազմաթիւ
նման գործեր, որոնցից ամեն մէկը կարող էր մի
միւզէի զարդ լինել։ Տիցիան ունի իր գլուխ-գոր-
ծոցը—«պարտ է հարկս տալ կայսեր, թէ ոչ»,
բայց Րափայէլի երեխան աէր է այնտեղ, նա մե-
նակ է իչխում, նա մենակ է գրաւում։ Այդ նկարի
կատարելութիւնը ոչ միայն հիացնում, այլ և չփո-
թում, խռովում է մարդու։ Մի փոքրիկ ճիւնա-
թոյր մարմին, մանկական մի դէմք, սիրուն, լիքը
այտերով, երկու աչքեր, այնքան կենդանի, որոնք
նայում են դիտողին չեչտակի, մի աքանչելի ճա-
կատ՝ եղերված սիրուն խոպոպներով, այսպէս է
այն երեխան, բայց այս չէ բոլորը. նայում ես և
սպասում, թէ ահա նա դուրս կը գայ չրջանակից,
ցած կիջնի, կը վազէ յատակի վրա, կը ժպտայ,
կը խօսի և ով գիտէ ինչ մի անօրինակ գերբնա-



ՈՐՄԱՆԿԱՐ ՐԱՓԱՅԷԼԻ (ՍԷՆ-ԼՈՒԿԱՅԻ
ԳԱԼԼԵՐԻՅՈՒՄ. ՀՌՈՄ)
(նբևս 220)

կան բան կասէ։ Այդ երեխան մի հրաչք է, և գեղարուեստը՝ Աստուած։

Հռովմում Րաֆայէլի չատ գործերը տեսայ, ի միջի այլոց, նրա «Պսիխէն և սէրը» (Amour et Psyché), *մի գրաւիչ լեգենդա, որ այնքան կենսական ճշմարտութիւն է պարունակում և այնպէս բնլիեֆ կերպով պատկերացնում սիրոյ և գեղեցկի փիլիսոփայութիւնը, անմեղութեան յաղթանակը։ Բայց ոչ մի տեղ վերածնութիւնն այնպէս աչքի չէ ընկնում իր բնորոշ գծերով, որքան Վատիկանի մուզէի այն մասում, որ կոչվում է* Gallerie et loges de Raphael—*«Րաֆայէլի գալլէրէա և սենեակ»։ Ես մի վոքր կանգ կառնեմ այդտեղի որմանկարների վրա, որովհետև այդտեղ է վերածնութիւնը, այդտեղ է և ինքը մեծ արտիստը։*

Վատիկանի մուզէում Րաֆայէլի բազմաթիւ որմանկարներից չիշեմ գոնէ երկուսը. «Պարնաս» և «Աթէնքի դպրոցը»։ Սրանցից առաջինը, Պարնասը, ներկայացնում է բանաստեղծութեան, մեծագոյն բանաստեղծների և առհասարակ գեղարուեստի ապօթէօզը։ Կենտրօնում կանգնած է Ապօլլօնը, քնարը ձեռքին, չրջապատված ինն մուսաներով, Իւպիտերի և Մնեմօզինի ինն աղջիկներով։ Դէպի ձախ կանգնած է հին աչխարհի մեծագոյն բանաստեղծը՝ Հոմերոս, կոյր հսկայ ծերուկնին, սպիտակ ալիքները գլխին ցաք ու ցրիւ վսեմ անկարգութեամբ, կոյր աչքերը դէպի վեր, դէպի անհունը յառած, ուր կարծես ներչնչումներ է փնտրում աչխարհին հաղիւ հասկանալի։ Նրա կողմ-

քին կանգնած է Դանաէն, գլուխը պսակված, սուբ դէմքով, սուբ քիմով և այն տարօրինակ, երազող արտայայտութեամբ, որ նրան տալիս է գերբնական տեսք. գժոխքի խորքերը փորփրած մի ոգի ուրիշ կերպ լինել չէր կարող: Ապոլլոնի աջ կողմում հանգիստաւոր պողաներով կանգնած են Պինդարոս, Սաֆո, Հօրացիոս և Պետրարկ:

«Ադէնքի գլորոցը» ամբողջ դասական անցեալն է: Դժուար է աւելի կենդանի կերպով ցոյց տալ, թէ ինչ էր ներկայացնում վերածնութեան դարի մարդու հոգին: Թուում է, թէ մարդիկ գարձել են մի տեսակ տեսողներ, երազում են ինչ որ բաներ, դէմքեր, պատկերներ, որ վաղուց, չատ վաղուց են անցել, բայց այնքան գեղեցիկ են, այնպէս դիւթիչ, որ չեն մոռացվել, խորագոյն հետքեր են թողել և մարդն աշխատում է վերյուշերով իր գլխում այդ բոլորը վերակենդանացնել, վերարտադրել իրանց ամբողջական փայլով: Այդ է վերածնութիւնը, այդ վերադարձն է դէպի դասական անցեալը, դէպի բանականութիւնը, դէպի զգացմունքի արթութիւնը, դէպի կատարեալ, չը խեղաթիւրված, չը կաղապարված մարդը, և գաղափարներով ու արտայայտիչ ձևերով հարուստ ժամանակները: Տանն և վեցերորդ դարի սկիզբն է և երկու հազար տարի առաջ անցած մի աշխարհ Բաֆայէլի վրձինով վերակենդանացել է այստեղ: Պատկերի կենտրոնում երևում են Պլատոն և Արիստոտէլ, մարի երկու իշխանները, որոնք առաջացել են մինչև բեմի առաջնամասը և կանգնել

վեհօրէն: Պլատոնը՝ այդ իդէալիստը, այդ էտեռիկը, գեղեցիկ կուլտի առաջին քուրմը, մատով երկինքն է ցոյց տալիս, նրա համար ամեն բան այնտեղ է, անհունութեան մէջ, ուր սաւառնում են անտեսանելի «մայրերը», անհատների օրիգինալները, նիւթական առարկաների իդէաները: Արիստոտէլը, այդ բնագէտ փիլիսոփան, դեպի երկիր է նայում, կարծես ասել կամենալով, թէ մարդն այդտեղից չէ կարող հեռանալ: Երկու մեծ փիլիսոփաների մեծ վարդապետ Սոկրատը, այդ ճաղատ գլխով բարեմիտ ծերունին, որ ժպիտն երեսին խօսում է մի պինդուորականի՝ Ալքիբադէսի կամ Քսենոֆոնի հետ: Ուսուցանողի դիրքով կանգնած է նա՝ այդ պղտիկ մարդը, որ սոփեաների դէնքն իրանց դէմ գարձրեց, առաջին անգամ մօրալն իբրև ուսմունք առաջարկեց և գրանով այնքան թեթեացրեց բարոյական պատասխանատուութեան ծանրութիւնը անդէտ կամ տգէտ գլուխների վրա: Այստեղ է Սրիքի մեծ օրէնսդիր փիլիսոփան, Բարիի և Զարի կրօնի հիմնադիր Զրադաշատը, պարսկական դէմքով, երկար միրուքով, երկար գլխարկով արիացին, որ արևելեան տեմպով ինչ որ պատմում է՝ նայելով իր ձեռքի գլօբուսին: Պլատոնից և Արիստոտէլից վար աստիճանների վրա կիսամերկ ընկած է Դիոգէն ցինիկը և կարծես ոչ ոքի չէ տեսնում, արևի առաջ հանգարտ տաքանում է: Այդտեղ են ուրիշ չատ փիլիսոփաներ. ամենից վերջը՝ դրան մօտ՝ երևում են Բաֆայէլ և իր ուսուցիչ Պերուջին:

Միննոյն չէնքի պատչգամբը ներկայացնում է մի տեսակ գալլերէա, որի առաստաղը նկարել է Րաֆայէլ, ինչպէս Սիքստինի մատուռը նկարել է Անջելօն: Նկարները բազմաթիւ են և ամենը միասին ներկայացնում են Աստուածաշնչի պատմած յաջորդական անցքերը. սա է որ յայտնի է «Րաֆայէլի Աստուածաշունչը» անունով: Այդ բոլոր որմանկարներից իմ գլխում նստած է Հայր Աստուածը՝ ըստեղծագործութեան առաջին օրում: Դա մի հսկայ ծերունի է, որ սաւառնում է դատարկ անհունութեան մէջ, դժգոհ ու տխուր իր միայնութիւնից և կարծես կարիք ունի տիեզերքին, կարիք ունի իրանից դուրս այլ կենդանի արարածների: Նրա ձեռքերի լայնատարած չարժումը, որով կարծես գրկում է անհունը և կանչում է դէպի երևոյթ՝ աներևոյթ ոյժերը, այդ փառահեղ միրուքը, որ ծուել է դէպի մի կողմ, թաւ յօնքերի տակ այդ զարմանալի աչքերը, բոլորը, բոլորը միասին տալիս են նրա դէմքին, նրա ամբողջ պատկերին մի ապշեցուցիչ, համարեա անըմբռնելի խորհուրդ: Եթէ Աստուած մարդկային պատկեր ունի, նա ուրիշ կերպ լինել չէր կարող:

XXVI

Այսօր դիպուածով Հռոմի յիշատակարաններին նուիրուած մի գրքում ի միջի այլոց կարդացի՝

«couvent arménien»—հայկական վանք: Մի կաթոլիկ կրօնաւոր տալիս է ինձ խնդրածս տեղեկութիւնները և հասցէն: Դուրս է գալիս, որ այստեղ՝ Հռոմում կան մի քանի հայ-կաթոլիկ եկեղեցականներ և երկու եկեղեցի: Շտապում եմ այցելել հայ կրօնաւորներին: Սէն-Նիկոլայ փողոցի վրա ոսոխականը ցոյց է տալիս ինձ մի կաթոլիկ եկեղեցի և ասում է՝ թէ դա է couvent arménien: Յարանախացի ծառան բաց է անում դուռը, ցոյց է տալիս սեղանները, մատուռները և հաւատացնելու համար, թէ հայ եկեղեցի է, իմ առջև է գնում մի քանի կրօնական գրքեր հայ լեզուով: Շէնքի տպաւորութիւնը չատ գեղեցիկ է. բաւականին ընդարձակ, կոկիկ մի եկեղեցի է, ներքուստ պատած դունաւոր մարմարով և սիրուն նկարներով: Մայր սեղանի վրա որոշ փոփոխութիւններ են կատարված հայկական եկեղեցու ձևին մօտեցնելու համար: Երկու կողմերում խորաններ պէս բան կայ:

Ծառայից տեղեկանում եմ, որ հայ կրօնաւորները ապրում են եկեղեցուն կից չինութեան մէջ և դիմում եմ այնտեղ: Եպիսկոպոսը և երկու վարդապետները սիրալիր ընդունելութիւն են ցոյց տալիս հեռաւոր երկրից եկած հային: Ռուպէան արքազանը մի փառահեղ ծերունի է, արևելեան մի չքեղ տիպ, որ այնքան պատկառելի է դառնում, երբ սպիտակ, հարուստ միրուքը զարդարում է կուրծքը: Ինչպէս յետոյ իմացայ, արքազանը նախկին Հաւատնեանն է, վաղուց յետէ հաստատված Հռոմում. աղմկալի և տխուր օրերի յիշողութիւն-

ներից պահվում է այստեղ Հասունի նկարը, որ կախված տեսայ ընդունարանի պատին։ Բացի կրօնաւորներից վանքում ապրում են նաև քանի չափ հայ աշակերտներ։ Երիտասարդ վարդապետը՝ Տէր-Աբրահամեան (ալէքսանդրապօլցի) ինձ նորից եկեղեցի է առաջնորդում, ցոյց տալիս նրան կից շինութիւնները, ննջարանը, սեղանատունը, պարտէզը, որ մշակում են աշակերտները և միևնոյն ժամանակ տալիս է հարկ եղած բացատրութիւններն ու տեղեկութիւնները։ Նա ի միջի այլոց ինձ հաղորդում է, որ եկեղեցին իր չքնաղագեղ շինութիւններով մի միլիօնից աւելի արժողութիւն ունի և նուիրել է ներկայ պապը ի նշան իր առանձին համակրութեան դէպի հայերը։ Միաբանութիւնը իր աշակերտներով, որոնք բոլորն էլ դիչերօթիկ են, պահպանվում է միմիայն եկեղեցուն կից շինութիւնների տուած արդիւնքով։ Իմ առաջնորդն այնուհետև չատ բան է պատմում ցոյց տալու համար, թէ որքան բարի ղեգացմունքներ է տածում պապը դէպի հայերը։ Իր առածներին իբր ապացոյց նա ցոյց է տալիս ինձ եկեղեցու պատից կախված մի կօնդակ, որով Լեւոն XIII խստիւ պատուիրում է կաթօլիկ դպրոցներում չը խորթացնել հայ մանուկներին իրանց ազգային եկեղեցու ծէսից։ Կօնդակը ես տեսայ և կարդացի Թովմա առաքեալի պէս մատս վրան դնելով, բայց չը գիտեմ Ջնդոյեան և նմանները իրանց Շարմբոտանով ծանօթ են նոյն հայրապետական դրութեանը և թէ ծանօթ են, ուր վնտրել դառն իրա-

կանութեան ներկայացրած առեղծուածի լուծումը։

Ինձ հետաքրքրում է մանաւորապէս աշակերտների վիճակը. վարդապետը հաւատացնում է, որ նրանք մեծ մասամբ թիւրքահայեր են, կան և մի քանի ռուսահայեր։ Հայ կաթօլիկ աշակերտներ Հռոմում միչտ եղել են, բայց նրանք նախկին տարիներում սովորել են միմիայն կաթօլիկ կօլլեժներում և զուրկ են մնացել ազգային որ և է կրթութիւնից։ Այս վանքն իր չինութիւններով ձեռք բերելուց յետոյ, այստեղ հիմնել են մի դպրոց, որ կոչվում է Լեւոնեան։ Գնան աշակերտներ այստեղ ապրում են իբրև պիչերօթիկներ, վարդապետների ձեռքի տակ ուսանում են հայերէն, հայ պատմութիւն և հայ երգեցողութիւն. բացի դրանից յաճախում են Հռոմի կրօնական կօլլեժները։ Այս բոլոր տեղեկութիւնները ինձ հաղորդում է վարդապետը։

Ես ցաւում եմ, որ աշակերտները բացակայ են և անկարող եմ նրանց հետ տեսնվել, խօսել, և սեղմելով հիւրասէր վարդապետի ձեռքը, մի ուրիշ հայրենակցի հետ հեռանում ենք վանքից։ Փողոցում հանդիպում ենք մի խումբ սևազգեստ պատանիների։ Նրանց վերարկուները արևելեան ձև ունեն, լայնեզր թևերով, ամենքն էլ թուխ են և օտար երկրում մոլորվածի մտաղրաղ տեսքն ունին։ Արևելցի են, կասկած չը կայ, բայց հայեր են արդեօք. Հռոմում արևելցի աշակերտներ չատ կան զանազան կրօնական դպրոցներում։ Նրանք քայլում են իրար յետևից զոյգ-զոյգ. մենք անցնում ենք նրանց կողքից խօսելով.

—Ծո, հայերէն կը խօսին. բացականչում են նրանք լսելով մեր խօսակցութիւնը, վայրկենապէս իրար են խառնվում, չարքերը չլռթվում են, մեզ շրջապատում են չտապով և բազմաթիւ ձեռքեր են մեկնվում դէպի մեզ։ Վանքի հայ աշակերտներն են։

Այո, «հայերէն կը խօսինն, իմ խեղճ հայրենակիցներ. ձեր բացականչութիւնը որքան դառնութիւն և որքան խորը ազգային ցաւ է պարունակում։ Մեր աղէտալի պատմութիւնն ինչպէս մի աշխարհաւեր մրրիկ իր արիւնոտ ոլորտներով դուրս չպրտեց հային դէպի աշխարհի ամեն ծայրերը, ուր հայ երկրի զաւակը տարաւ իր հետ մի անյողդողան, ժամանակաւոր սէր դէպի իր լեզուն, մի տխուր դուռնատ սէր, որ վաղ մաչվեց օտարի դըռներում. նրա ճակատը կնճռվեց իր երկրի կարօտով, բայց դէմքի մռայլը երկարատև չեղաւ. նա չատ չուտ ընտելացաւ նոր պայմաններին, իր նոր կացութեան, նոր հայրենիքի և լեզուի խորթութեանը։ Երբէք, երբէք չը ստեղծվեց ամուր հիմքերի վրա կանգնած մի հայրենիք, ուր հայը ընդմիշտ հայերէն խօսէր, որ նրա հոգին զարգանար բնական պայմաններում և ուր ցեղի հանճարը կարողանար լրիվ ներդաշնակ դառնալ։ Եւ՛ հայրենիք, և՛ ազգային լեզու, և՛ ազգային միութիւն, որ ուժեղ ձեռքի տակ ի մի ծնիլէր կենտրոնախոյս տարրերը, այս բոլորը, բոլորը մեղանում միայն սկսված եղան, երբէք չը հասան այն անհրաժեշտ կատարելութեան, որ ապահովում է և մի ժողովրդի ձեռքերը ազատ է թողնում քաղաքակրթական մեծ գործի համար։

Հայը չատ տեղեր իր հայրենիքից դուրս հայերէն խօսել և անյաւ. այժմ էլ չատ են հայեր, որոնք հայերէն են խօսում Եգիպտոսում, դուցէ Հնդկաստանում, Եւրոպայի զանազան անկիւններում, հեռաւոր Ամերիկայում, բայց մինչև երբ, էլի քանի՞ տարի։ Լեզուն ապրում է այնտեղ, ուր ստեղծվել է, հայրենիքից դուրս նա արմատախիլ բոյս է, որ մեռնում է թառամած։

Խեղճ պատանիներ. նրանք զոյգ-զոյգ քայլում են Հռօմի Սէն-Նիկօլայի փողոցով դէպի վեր, դանդաղ, յոգնած ընթացքով. նրանք մռայլ են ու դուռնատ և կարծես խորապէս զգում են, որ օտար են և մենակ այս բազմամարկ քաղաքի մէջ, ուր ոչինչ, ոչինչ չը կայ հարազատ, որ խօսէր սրտին, որ պատմէր մանկութեան երազները, որ հայրենի յիշատակների վերյուշերը զարթեցնէր։ Տխուր բան է օտար լինել, բայց օտարութիւնը կրկնակի ցաւալի է դառնում, երբ մանուկն է օտարութիւն կրողը, այդ բնիկ պոկված ոստը, որ կաթիլ-կաթիլ արտասուք է թափում իր վէրքից։

Մէկիկ-մէկիկ նայում եմ այս դէմքերին, ինձ ընտանի դէմքերին, ծանօթ ու սիրելի, հայ ցեղի դրոշմն են կրում վրանները. այդ ան յօնքերի տակ վայլող աչքերում վառվում է ցեղի կրակը, պատմական իմացականութիւնը, որ բիւրաւոր արիւնալի արկածների միջից կարողացել է քաշ տալ և մեզ հասցնել մի զարմանալի գոյութիւն, որ օտարները առեղծուածական են համարում. նայում եմ, ծանօթ եմ այդ դէմքերին նկարված պատմա-

կան թախիծին, որ դարերն են դրել մեր ճակատին. այդ յարատև մռայլ ու յարատև յուսացող դէմքերը ինքը հայ ժողովուրդն են ներկայացնում, տառապանքի ու արցունքի մէջ անորոշ կերպով յուսացող, հարուածների տակ ճկուն, հարուածելիս մտածկոտ, անվճռական, վարանոտ:

Պատանիներ են կանգնած իմ առաջ, բայց արդէն ծերեր են, մանուկ-ծերեր, որոնք իրանց կեանքի արշալոյսին արդէն ապրել են իրանց յետի ապրած ցաւոտ վերջալոյսը և կեանքի ճանապարհի հէնց սկզբում արդէն յոգնած են ու կուացած: Ազգային պատմութեան պակաս թողածը լրացրել է անհրապոյր, դաժան օտարութիւնը և ես ցաւով եմ նայում այս գունատ պատանիներին:

Մենք արդէն բարեկամներ ենք. փոխադարձաբար սղմում ենք իրար ձեռք մի ջերմութեամբ և սիրով, որ կարօտի չէտ ունի. օտար երկնքի տակ անծանօթ հայրենակիցները, մանաւանդ երբ նրանց միացնում է ցաւի ժառանգութիւնը, միչտ հին ծանօթների պէս բարեկամներ են: Խօսելով նրանց հետ վերսին բարձրանում ենք դէպի վանքը: Գալում ենք դանդաղութեամբ, նրանք մեզ վրա են թափում հարցերի մի տարափ. ամենքը միասին են խօսում, որովհետև ամենքն էլ խօսել են ուզում, երկար խօսել, հետաւոր հայրենիքի մասին խօսել, հայ մարդի հետ խօսել: Նրանք կուզէին, որ մենք վերսին վանք մտնենք, որ ամբողջ օրն անցկացնենք իրանց հետ, մատնակցենք իրանց զբօսանքին, այն ժամանակ որքան չատ բան

կը հարցնեն, որքան չատ բան կասեն, սրտերը կը քանան, մանուկ-զարիբների սրտերը: Խեղճ ծաղիկներ, գունատ ու թօշնած. մենք անկարող ենք կատարել նրանց ցանկութիւնը, սղմում ենք ձեռները և հեռանում: Նրանք նայում են հեռացող հայրենակիցներին, որպէս հայրենիքի հովիւ, որոնք աւերային և անցան անյագուրդ թողնելով այրող կարօտը:

Մենք հեռանում ենք, բայց սևազգեստ պատանիների այն տխուր չարքը, այն գունատ, մոլար դէմքերը մի վայրկեան չեն հեռանում իմ մտքից. ես չարունակում եմ աչքիս առաջ տեսնել այն մռայլ պատկերները, որոնք սև ուրուականների պէս մի թանկագին բան կորցնողի մտաղրաղ տեսքով բարձրանում են դարիվեր փողոցով, բարձրանում են դէպի մի եկեղեցի: Ի՞նչ են ուզում պատրաստել սրանցից, որ իմ գլխում դառնում է, ինձ զբաղեցնում է: Կրօնաւորներին իրանց կրթական հաստատութիւնների մասին հարց տալու կուսակից չեմ, որովհետև պատասխանը պատրաստ է, հին պատասխան, ինչպէս պատրաստ է ամեն մի հարցի համար, որ վերաբերում է մետաֆիզիկային, հաւատը կայ, պրծաւ գնաց: Անկերկայ եմ, որ ինձ կը պատասխանէին, թէ նրանց պատրաստում են ազգի հոգևոր մխիթարութեան համար. հէչտ պատասխան: Ա՜խ այդ հոգիները. աչխարհում գուցէ չը կայ մի ժողովուրդ, որի հոգու համար զանազան եկեղեցիներ այնքան հոգ տարած լինեն, որպէս հայ ժողովուրդն է. և չը կայ մի այլ ժո-

զովուրդ, որ նրա պէս թշուառ, նրա չափ հալածված լինի, նրա արիւնոտ ճակատագիրն ունենայ: Ո՞ւր և ում կը կրթէ մի սերունդ, մի զօրեղ սերունդ, որ վերջապէս մի փոքր էլ այդ չարատանջ ազգի, այդ վաստաքաղդ ժողովրդի մարմնի մասին մտածէր, այդ խոցոտված, վիրաւոր, արիւնաքամ մարմնի:

XXVII

Կաթոլիկ աշխարհի ամեն ծայրերից Հռոմ է թափվել ուխտաւորների անապին բազմութիւն. ապրիլը ուխտագնացութեան ամիս է. երևի բնութեան հետ կրօնական զգացմունքներն էլ ջերմ հաւատացեալների սրտերում զարթնում են գարնանը: Յատուկ գնացքներ կան, որոնք ամեն օր ս. Պետրոսի աթոռակալի ոտքն են թափում հազարաւոր օտարականներին կաթոլիկ երկրներից: Գալիս են խմբեր կազմած, ինչպէս տարափոխիկ թռչունների երամներ և ամեն մի խումբ առաջնորդ ունի իր երկրացի մի կրօնաւոր, որ չարունակ նրանց հետ է, Վատիկանում, թէ դուրսը, որ ցոյց է տալիս, բացատրում կրօնական յիշատակարանները, սովորեցնում զանազան պաշտօնական ցերեմոնիալներ և մի տեսակ պատասխանատու հանդիսանում ս. աթոռի առաջ իր բերած հօտի ջերմեռանդութեան: Կան կրօնական

կարգերի ամբողջ դպրոցներ, որոնք ամեն օր ս. Պետրոսի տաճարը և նրա յաջորդին տեսնելու են գնում: Հռոմի փողոցներն այժմ լիքն են կրօնաւորներով: Երեկ երեկոյ Պինչիօի ծառազարդ բարձրութեան վրա—որ Հռոմի յայտնի զբօսավայրն է և բարձր դասակարգի սիրած տեղը—երիտասարդ կրօնաւորների այնպիսի բազմութիւն կար, որ նրանց սև ու կարմիր վերարկուները, նրանց ծոպաւոր գօտիները իշխում էին ամբողջութեան վրա և առանձին գոյն տալիս պատկերին: Ամեն մի նստարանի վրա, ամեն մի ճեմելիքում նրանցից մի քանի հոգի կանգնած էին, անբաժան աղօթագրքերը ձեռներին, ոմանք խորասուզված կարդում էին լատիներէն սաղմոսները, չը մոռանալով աչքի տակով երբեմն երբեմն դիտել գրաւիչ, ճկուն սիլուէտները, ականջ դնել կանացի զգեստի հաճելի խշխշոցին, ուրիշները խմբեր կազմած վիճում էին, կամ հետևում երաժշտութեանը: Ամենից աւելի ջերմեռանդը թուաց ինձ մի երիտասարդ նեգր, իր վերարկուից աւելի սև դէմքով, գանգուր և գլխին կապած ձիւթանման մազերով, հատ չըթռնքներով, որ մենակ մի ծառի տակ հանդարտ քաղում էր իր գիրքը: Աֆրիկան էլ մարդ է ուղարկել Հռոմից փրկութիւն առնելու:

Պապը չաթաթը մի անգամ եկեղեցի է իջնում հաւատացեալներին օրհնելու. յարմար առիթ է տեսնելու Լևոն XIII, բայց այդ օրը մուտքն ազատ չէ. դռան առաջ չարվում են երկու կարգ զինուորներ և ներս են թողնում վկայուած ուխտաւորնե-

բին յատուկ այդ օրուայ համար պատրաստված տոմսակներով։ Բայց Հռոմ գալ և պապին չը տեսնել... հարց ու փորձ արի, թէ ինչ հնարով կարելի է տոմսակ ճարել։ Գաւթի կամարների տակ մի անկիւնում սուրբ առարկաներ վաճառող մի մարդ ցոյց տուին ինձ, դիւնեվաճառի պէս հաստ, դէմքը իւղոտ, աչքերը խորամանկ. սիրտը ծանօթ էր ինձ Պարիզից, ուր օպերայի և միւս մեծ թատրոնների չուրջը սրանց նմանները վխտում են տաննեակներով և օտարականին չը դիտես ինչպէս ձեռք բերած տոմսակներ առաջարկում այն ժամանակ, երբ կասայում յայտնում են, թէ էլ չը կայ։ Կասկածելի մարդիկ, մութ արուեստով պարապողներ, որոնց առաջ ես ինձ միշտ այնպէս էի զգում, ինչպէս մի խուլ ձորում առաջդ դուրս եկած կասկածելի թշուառականին։ Պարիզում ես երկար գլուխ ճաքեցրի հասկանալ թատրոնի և այս մարդկանց յարաբերութիւնը, վերջ ի վերջոյ անկարող եղայ։ Երևակայել չէի կարող, թէ Հռոմում, ս. Պետրոսի տաճարում, այս նուիրական համարված վայրերում ինձ համար կօչմար դարձած պարիզեան տիպերը կը դանեմ բոլորովին նոյն դերում։ Հաստ, իւղոտ մարդը սաստիկ ուրախացաւ, որ ես տոմսակ եմ վնտռում, սիրալիր կերպով ինձ ներս տարաւ եկեղեցի, ցոյց տուեց պապի գալու առիթով չինված տախտակեայ ցանկապատերը, հասկացրեց, թէ որտեղից պիտի անցնէ թափորը, ուր պիտի կանգնէ, ահն է բուն ուխտաւորների տեղը, ահն է աղաւ հանդիսատեսնե-

րինը և ի վերջոյ իմ տեղը որոշեց։ Այդ բոլորը լաւ, բայց մարդը չը մոռացաւ աւելացնել, որ այդ հաճոյքն ինձ կը նստի հօթը ֆրանկ, որ նա պահանջեց իբրև տոմսակի գին։

—Ինչո՞ւ այդքան թանգ։

—Մենք վերցնում ենք կարդինալից, պարոն, նրան մի բան վճարում ենք չէ՞, մի բան էլ մեզ պիտի մնայ, այնպէս չէ՞։

Այդպէս է, մտածեցի ես, բայց քեզ հօթ ֆրանկ չեմ տայ։ Պապի տեսութիւնը լաւ է, բայց իմ դրպանի վրա այդքան ծանրանալը չատ էլ հաճելի չէ ինձ։ Անյարմար կացութիւնից ինձ ազատեց Հռոմի հայ-կաթոլիկ միաբանութիւնը, և չնորհիւ վարդապետների, նոյն օրը իմ տրամադրութեանս տակ դրվեց ցանկացած տոմսակը։

Պէտք էր եկեղեցում տեղ բռնել առաւօտեան ժամի 11-ին։ Ժամանակին ճանապարհ եմ ընկնում։ Կառքերի և հանրակառքերի ահագին բազմութիւն իրար ետևից ուխտաւորներ են թափում ս. Պետրոսի լայնատարած հրապարակում, ուր անցուդարձ ու կենդանութիւն է տիրում։ Լեզուների կատարեալ խառնակութիւն է, ամեն բարբառ լսվում է, ամեն ցեղերից տիպեր կան։ Այստեղ են մշտածիծաղ ֆրանսիացիներ ու ֆրանսուհիներ, կենդանի ու բարեհաս. գերմանացիներ՝ բարձրահասակ ու չիկահեր, հաստատուն ու ծանր քայլուածքով. անգլիացիներ, օրիգինալ ճանապարհորդական զգեստներով, ճակատները միշտ բարձր, սակաւախօս և դիտող. այստեղ են բելգիացիներ,

հօլանդացիներ, սպանիացիներ, և այլ հեռաւոր երկրներից հասած հետաքրքրվողներ կամ ջերմեռանդ կաթօլիկներ. արևելքն էլ իր ուխտերն է ուղարկել, որոնք հատ հատ երևում են իրանց մեծ քթերով և խոհուն աչքերով։

Եկեղեցու ներսում էլ տեսարանը պակաս հետաքրքիր չէ։ Զանազան լեզուներով խօսող բազմութիւնը մի խուլ մռմռոց է բարձրացնում, սպասելով պապին, որ քիչ յետոյ պիտի յայտնվի։ Կրօնաւորներն այստեղ իրանց տանն են. նրանք դանդաղութեամբ չրջում են լայնարձակ տաճարի զանազան մասերում, քաշ տալով իրանց հետից մի հլու և ուշադիր բազմութիւն, որին բացատրում են, պատմում են ինչ որ բաներ։ Այդ ժամին նրանց դէմքի արտայայտութիւնը հանդիսաւոր է և ամեն մի ուշադրաւ յիշատակարանի, արձանի, կամարի, քանդակի առաջ կանգնելիս այնպէս են նայում իրանց հօտին, որ կարծես ուզում են ասել. «տեսնում էք, թէ մենք ինչեր կարող ենք արտադրել»։

Եկեղեցու զինաւորեալ բանակը սակայն ամբողջապէս սև չէ. կան, որ կապ-կարմիր վերարկուներ ունեն հագած, կան, որ սև կապաների վրա ծիրանի կամ կանաչագոյն լայն գօտի ունեն կապած, որի երկու ծայրերը կախվում են մինչև գետին, կայ սև հագած երեխաների բաւական մեծ բազմութիւն, ապագայ զինաւորներ եկեղեցու, որոնցից մի խումբ լայնաթև վերարկու և արևելեան տիպ ունի. յոյն-կաթօլիկ դպրոցի աշակերտներ են։

Բազմութիւնը սկզբում խառնիխուռն ու անհոգ, կամաց-կամաց յուզվում է, աշխատելով տեղ բռնել այն անցքի երկու կողմերում, որտեղից անցնելու է պապը։ Հանդիսաւոր թափորին յատկացրած ճանապարհի երկու կողմերում չարված են հրացանաւոր պահակները, դեղին-կարմիր խայտաբղէտ զգեստներով և սաղաւարտների վրա դուռնաւոր զինուորական ցցունքով, որ սպառնալի կերպով օրօրվում է ուխտաւորների գլուխներից բարձր, հէնց ս. Պետրոսի բրօնզեայ արձանի դէմ ու դէմ, որ կարծես նայում է իր մետաղեայ աչքերով այս բոլոր պատրաստութեան, նայում է և հասկանալ չէ կարողանում։ Արդարև, այս խաչված, հեզ քրիստոնեների, լացող մագդաննաների, վիզը ծուռ՝ նահատակվող սրբերի, մանաւանդ այս խեղճ Պետրոսի առաջ այս սուիններով փայլը, օրօրվող ցցունքները, այս զինուորական սարքն ու կազմը մնում են որպէս մի հոգի ճնշող, անախորժ հանելուկ։

Ժամը 12-ն է արդէն, բայց դեռ պապը չը կայ. բազմութիւնն էլ աւելի մեծանում է. ոմանք տեղ են բռնում այս ու այն մատուռի աստիճանների վրա, ուրիշները չատպում են իրարից կախկըխվելով, չանգռելով մի կերպ տեղաւորվել մարմարէ սիւների բարձր պատուանդանների վրա։ Անգլիացի կանայք իրանց ցեղի գործնական ոգին տանում են ամեն տեղ, նրանցից երկուսը հետներն ունեն մի մի ծալվող աթոռ, որոնց վրա նրստում են, ինչպէս իրանց տանը, իսկ երբ պապը

յայտնվի, անչուշտ, չը բաւականանալով իրանց բարձր հասակով, կը բարձրանան աթոռների վրա՝ լաւ տեսնելու համար: Ամենքը նայում են դէպի դուռը, ամենքը յուզված են, բայի մի անդլիացուց, որ մարմարից տաշած արձանի նման կանգնել է իմ կողքին և յամառ կերպով նայում է բարձր եկեղեցու գմբէթին: Յանկարծ մուտքի առաջ կանգնած ամբոխի առաջին չարքերը երերալ սկսեցին, մի չշուկ անցաւ տաճարի մի ծայրից մինչև միւս ծայրը, բոլոր գլուխները մի կողմ դարձան, պահակների ցցունքները աւելի արագ և աւելի սպառնալի կերպով երերացին. ապա հեռաւորութեան մէջ հնչվեց՝ «վիվա պապա, վիվա պապա»: Աղաղակը բերանից բերան անցաւ, կրկնվող արձագանքներով մեծացաւ, տարածվեց և հազարաւոր կոկորդներից դուրս հնչվող վիվաները դարձան ալիքների մռունչներ և դնացին մեռնելու բարձր կամարների տակ:

Հեռու եկեղեցու կիսախաւարի և փոշու մշուշի մէջ ամբոխի գլխից բարձր մի բազկաթոռ է օրօրվում հանդիսաւոր դանդաղութեամբ և նրա մէջ նստած է պապը՝ Լեւոն XIII-դ: Ես քիչ անգամ եմ տեսել մի ծերութիւն, որ անգամ փիլիքապէս այդ աստիճան մանկութեան մօտենայ. մօտ մի դար ապրող այդ մարմինը այնքան է մաշվել, այնպէս փոքրացել, որ կարծես մի մանուկ լինի բազկաթոռի մէջ և այն համարեա անկենդան մանուկ: Նա դունատ է, որպէս մոմից չինված մի արձան, երբեմն երբեմն կարծես իր կենդանութիւնը վկայե-

լու համար բարձրացնում է իր վտիտ փոքրիկ աջը, խաչակնքում է հօտին գլուխներից բարձր, չրթունքները օրհնութիւն են մրմնջում, ապա նա ժպտում է ծերի բարի, խեղճ ժպտով, որ այնպէս խօսում է գերեզմանից: Տարիները սակայն դեռ իսպառ անկարող չեն դարձրել այդ փխրուն փոքրիկ մարմինը. հին եռանդի և կարողութեան մի մնացորդ կայ և նա խաչակնքելիս երբեմն յենվում է բազկաթոռի մի թևի վրա, մի փոքր բարձրանում է տեղից, ժպտում է աւելի երկար և այդ ժամանակ ամբոխն էլ ուրախանում է, ոգևորութիւնն աճում է, հազարաւոր բերաններ աւելի եռանդով են ճչում «վիվա պապա, վիվա պապա»: Կանայք օդի մէջ ճօճում են սպիտակ թաշկինակները, տղամարդիկ գլխարկները, կղերականները, որոնք մի փոքր դիրիժեօրի դերի մէջ են, միչտ ձեռքերը բարձրացնում են օդի մէջ և ջազեզօրէն չարժում: Իմ կողքին մի կին կայ, որ գրկած ունի երեք տարեկան մի երեխայ. «վիվա պապա» ճչում է մայրը. «վիվա պապա կրկնում է մանուկը փոքրիկ մատը մեկնելով դէպի բազկաթոռի մէջ չարժվող փոքրիկ սուրբը: Նայում եմ անգլիացուն, մէկը նրան բացատրում է թափորը, ցոյց է տալիս պապին, անուանում է կարդինալներին. մինաւորը երևի ջերմեռանդ կաթոլիկ է, նա չէ խնայում իր սերձախօսութիւնն ու գիտութիւնը, իսկ անգլիացին ի պատասխան այդ բոլորին՝ բարձրից թարթում է իր կապոյտ աչքերը, նայում է սառնութեամբ և կրկնում՝ «իես»:

Եւ բազկաթոռը այդ փոքրիկ մարմնով անցնում է դանդաղութեամբ չորս կրօնաւորների ուսերի վրա, և պապը չարունակում է խաչակնքել դողդողջուն ձեռով, չարունակում է ժպտալ յոգնած, բայց ժպիտով, որ այնպէս ողորմելի է դարձնում նրա փոքրիկ ածիլած դէմքը, իսկ ամբոխը չարունակում է ճչալ՝ «վիվա պապա, վիվա պապա»։ Ահա բազկաթոռը հասաւ մայր սեղանին. պապին իջեցնում են, նա տեղաւորվում է հայրապետական գահի վրա, ապա վեր է կենում, աղօթում է իր հօտի համար. ամբոխը ծունկ է չոքում մի մարդու պէս, գլուխները կռանում են վար, հազարաւոր չրթունքներ մրմնջում են ինչ որ խորհրդաւոր խօսքեր, եկեղեցին իր պատով թաղաւորում է այս գլուխների ծովի վրա. զգում ես, որ այստեղ էլ բազմութիւն չը կայ, այլ կայ միմիայն ոչնչութիւն, մի հասիկ ողորմելի հոգի, որ սողում է երազների մէջ անորոշութեամբ և առեղծուածներով պաշարված. եկեղեցու, կրօնի յաղթութիւնն է այս երկու հազար տարվայ պայքարով ձեռք բերված։ Աղօթքից յետոյ ուխտաւորներից աւելի արտօնեալները մօտենում են, խմբով ծունր ընկնում պապի ոտների առաջ և յետ դնում։ Թափորը վերակազմում է և նոյն կարգով, նոյն ճանապարհով պապը թողնում է եկեղեցին վիվաների և ծափահարութիւնների մէջ։ Այժմ նա աւելի յոգնած է, աւելի թոյլ, եւ չէ փորձում բարձրանալ բազկաթոռի մէջ։

Գիտութեան մի զգացմունք է զարթնում մար-

դու սրտի մէջ դէպի այս քայքայված հարիւրամեայ ծերունին, որ կատարեալ հանգստութեան և խաղաղութեան գերագոյն իրաւունքն ունի, և որին չը գիտես ինչու զրել են բազկաթոռի մէջ և ճօճելով քայլել տալիս ամբոխի գլուխների վրայից փոչու ամպի միջով։ Բայց սև բանակին հարկաւոր է իր ոյժի և կարողութեան մարմնացումն ի յոյց դնել, իսկ խաւար ամբոխին էլ հարկաւոր է մի չարժուն, կենդանի արարած, որ նրա կրօնական երազների, ֆանատիկ երևակայութեան պարապը լցնէ։ Անհասկանալի, երևակայական զօրութիւնն ըմբռնելու իր յուսահատ անկարողութեան մէջ ողորմելի մարդը դարերից ի վեր բռնեց իր նմանի փէչերից և նրա մէջ մարմնացրեց այդ զօրութիւնը։ Դիւցազնացած մի հերոս, հերոսացած մի իշխան, մի նահատակ, մի սուրբ, մի արքայ, վերջապէս մի պապ, հետզհետէ եկան հոգու մէջ իշխող դարաւոր պարապը բռնեցին։ Այսօր էլ նոյնն է, ինչ որ դարեր առաջ. գաղափարական սկզբունքը չէ փոխվել, մարդկային անհանգիստ, յարատև դէպի անյայտը ձգտող հոգու ցաւոտ գալարումներն են կազմում կրօնների հիմունքը և նրանց յաղթանակը։ Հին ֆիզիքական, նիւթական զոհի տեղ նոր կրօնները պահանջեցին և հաստատեցին բարոյականը, մարդկային արժանիքի, նրա մտքի, հոգու ազատութեան զոհաբերութիւնը։ Առողջ բանականութիւնը կայ, սակայն, որ տակաւին իր վերկարար առաքելութեան վախճանին չէ հասել։

XXVIII

Այսօր ապրիլի 25-ն է. տասն օրից աւելի է, որ այստեղ եմ. ամեն օր մօտ ութ ժամ չրջում եմ միւզէները և պատմական չէն ու անչէն յիշատակարանները տեսնելու. ինչ ասել կուզէ, որ էլի չատ բան կայ, որ չեմ տեսել։ Պատմական և գեղարուեստական ուսումնասիրութիւնների համար յատուկական քաղաքը անսպառ նիւթ է պարունակում, իսկ մի տուրիստ 10—12 օրով էլ կարող է բաւականանալ։ Մեկնում եմ Նէապոլ։

Երեկոյ է. հարաւի մի տաք չողազարդ երեկոյ, երբ գոյներն այնքան չատ են և բնութիւնն այնպէս պերճ։ Կայարանից անմիջապէս յետոյ, երկաթուղու գծին զուգընթաց, անցնում են բարձր աքեդուկների անվերջ չարքեր։ Նրանց կամարաձև բացվածքներից երևացող դաշտանկարը գեղեցիկ է, կանաչի մի ծով է բացվում հայեացքի առաջ։ Տեղ տեղ այդ կանաչազարդ հարթութեան վրա անկարգ, ցած ու ցրիւ երևում են հին սիւների կտորներ, կիսավուլ մի պատ, մի կամար, մի քանդված բուրգ, տխուր մնացորդներ որ և է անցեալ մեծութեան, փարթամ չինութեան։ Հեռաւորութեան վրա երևում են նաև հատ հատ ծառեր, կարծեմ ձիթենիներ և այդ բոլորը, և մարգագետինները, և ծառերը, և աւերակները ասես

արագութեամբ վախչում են դնացքի հակառակ կողմը, իբար յետևից վազվզող մանուկների պէս, վայրկենաբար ցոյց են տալիս իրանց դէմքերը աքեղուկների կամարների տակից, ապա գնում են ծածկվում հեռաւորութեան մէջ։ Բանի հեռանում ենք Հռոմից, դաշտերն աւելի մշակված և տեսարաններն աւելի բազմազան և աւելի գրաւիչ են դառնում։ Սէա բազմաթիւ բակլայի արտեր, ուր քաղհան են անում իտալացի գեղջուկներ՝ երկարաթոթ ուրագները ձեռներին և լայնեղր ծղնօտի գլխարկը գլուխներին։ Ճանապարհն այժմ անցնում է կանաչազարդ բլրակների միջից, որոնք ծածկված են հարուստ արտերով և խաղողի այգիներով. աւելի հեռուն՝ ծովի եզրով ձգվում են բարձր լեռներ՝ տեղ տեղ անտառներով պատած։ Բայց ահա արևը մայր մտաւ, գեղեցիկ վերջալոյսից յետոյ մառախուղն իջաւ և ամեն ինչ ծածկվեց։

Ուշ գիշերով Նէապոլ եմ հասնում և բազմաթիւ դժուարութիւններով կարողանում եմ տեղաւորվել մի հիւրանոցում։ Յաջորդ օրը վաղ առաւօտից, հարաւի մի տաք ու պայծառ առաւօտ, փողոցից այնպիսի ձայներ, այնպիսի աղմուկ է լսվում, որ անծանօթ մարդը չուարած հարցնում է, թէ ինչ է պատահել։ Եւ սակայն առանձին ոչինչ չէ պատահել, դա սովորական, ամենօրեայ Նէապոլն է, որ զարթնում, չարժվում է և հարաւի լայն ժեստով ձգձգվում, մռմռում։ Հարաւում բնութիւնը այնքան չռայլ է, այնպէս ողորմած, որ փողոցային կեանքը բռնում է տանու կեանքի

տեղ. այնտեղ բայց երկինքը կարծես մի հակայական վրան լինի և նրա տակ է յեղյեղվում, առանց ուրիշ ծածկոցի, հարաւի ժողովուրդների հասարակական և ընտանեկան կեանքը իր յախուռն, իր կրքոտ թափով: Այդ կողմից իտալական ոչ մի քաղաք չէ կարող հաւասարվել Նէապօլին: Վաղ առաւօտից փողոցներում այնքան բազմութիւն կայ, որ մարդ կասկածում է, թէ աներում մնացողներ լինեն. կարծես արշալոյսի առաջին շողերի հետ Նէապօլի ամբոխը դուրս է վազում առանց նախաճաշելու, առանց լուացվելու անգամ, որքան հնար է չուտով արեւի մի ճառագայթ, երկնքի գոյների մի խաղ չը կորցնելու համար, որովհետև այդ գեղեցկութիւնները իր սեփականութիւնն են կազմում, երկնքի տակ նա իր տանն է, իր սեփականութեան մէջ: Դեռ խնդիր է նոյն իսկ, թէ ամենքն էլ յարկի տակ են քնել, թէ բացօդեայ: Ապրիլի վերջն է և գիշերները այստեղ տաք են ու գաղջ, իսկ հարաւը բայց երկնքի և վառ աստղերի սիրահար է, առաստաղները խուփի պէս ճընշում են այնտեղ մարդու կուրծքը:

Ո՞վ չէ լսել Նէապօլի նեղ, գալարուն փողոցների մասին, ուր երգն ու սէրը, երաժշտութիւնն ու մուրացկանութիւնը եղբօր պէս են ընթանում: Փողոցն ու մայթը այստեղ բոլորովին այլ նշանակութիւն, այլ խորհուրդ ունեն, քան աշխարհի այլ մասերում: Երբեմն մարդն այստեղ, բառի բուն նշանակութեամբ, ապրում է փողոցում և միայն փողոցում. և այն ինչպիսի կեանքով—անկարդ,

լայնաբաշակ, անհոգ, ինչպէս պատահի, ուր պատահի: Տեսել էք ամարային առաւիկ չոքի ժամանակ մի յոգնած մարդ, որ չէտ է արել իր զգեստի բոլոր կոճակները, մի թևը հագել, միւսը կախ ձգել, կուրծքն ու պարանոցը բաց, գլխարկը չէտ տարել ճակատի վրայից, փէշերը այս ու այն կողմ փռած՝ մի ծոյլ անկարգութեամբ,—ահա Նէապօլի կեանքը:

Փողոցները մեծ մասամբ նեղ են ու գալարուն, մայթերը պատած նարինջի և այլ պտուղների կեղևներով և կանաչի մնացորդներով, այս ու այնտեղ պատերի տակ, անկիւններում, խոռոչներում կասկածելի թացութիւն, որից գարշահոտութիւն է բարձրանում: Մթնոլորտն այդ տեղերում խեղդող է. անների զանազան յարկերից անցորդի գլխի վրա կախված են կեղտոտ պատչամբներ և նրանց վրա փռված ապխտակեղևներ. այնտեղ երբէք չէ փչում որ և է ախտահանող, մաքրող քամի:

Եւ այս անօրինակ փողոցում վխտում է մի նոյնքան անօրինակ ամբոխ, կեղտոտ, գարշահոտ ու ծոյլ, որ ուտում է չը գիտես ինչ և երբ, կըծոտում է իր առողջ սպիտակ ատամներով ինչ պատահում է և ուր պատահում է: Այստեղ բազմութիւն են ոտաբոբիկ երեխաներ, որոնք վազվզում են իրար ետևից, խլխլում են իրարից կաղամբի, նարինջի, պապիրոսի, հացի կտորներ. այստեղ են գնչուների պէս կանայք, թուխ դէմքով, չարաճճի աչքերով. նրանց գլուխների վրա կրում են բանջարեղէնի մեծամեծ կոյտեր, հնչում են բոլոր

կրծքով, սուր, անախորժ մի ճիչ։ Պառաւներ կան, և որքան չատ են նրանք, այլանդակ, վհուկների տեսքով, ցնդոտիների և աղբի մէջ կորած, որոնք չը գիտես ինչու պէտք են համարել նստել մի խուլ փողոցի խիտ կեղտոտ մի անկիւնում։ Պառաւը նստել է այնտեղ ինչպէս մի կասկածելի անորոշ կոյտ, նստել է էլ չէ վեր կենում, կարծես էլ երբեք էլ չէ վերկենալու. անորոշ հայեացքը դէպի մի կողմ ուղղած նա անշարժ է, կամ պառաւած ծնօտներով կրծում է մի բան։ Սւելի կենդանի, մարդաչատ անկիւններում երևում են բազմաթիւ աղջկիկներ, գլխաբաց, սև մազերը ցաք ու ցրիւ, ածխանման սև աչքերով, սև յօնքերով, թեթև հագնըված, անհոգ դէպի համեստութեան և ամօթխածութեան ընդունված սովորութիւնները, իրանց չարժումների, ձևերի մէջ ազատ, նրանք կամ քայլում են օրօրվելով մի առանձին եղանակով, որ հարաւի կօկետութիւն է. թուխ, ծիծաղկոտ դէմքերը միշտ պատրաստ են որ և է սիրային արտայայտութեան համար, սպիտակ, առողջ ատամների չարքերը միշտ բաց։ Նրանք հեգնող են և յանդուգն, ճկուն են և չարաճճի. այս ու այն անկիւնում, այս ու այն պատերի տակ չահել երիտասարդների հետ ի մի խմբված՝ հարաւի ժողովուրդների բաց, երբեմն այլանդակ կինիզմով հանաքներ են անում, իրար խեղդում, քաչքչում կամ փողոցներում վազվզում հոհոալով։

Տեղ տեղ կարելի է տեսնել իսկ և իսկ արևելքի, հարաւի մի բնորոշ տեսարան։ Փողոցի մայթի վրա


նստել է մի կին, տեղաւորված ինչպէս իր սեփական տանը. նրա առաջ կանդնած է իր հարևանուհին և առանց ճնշվելու անցուդարձից, առանց ոչինչ անյարմարութիւն զգալու օտար հայեացքների առաջ, սանրում է նստողի գլուխը, ձգձգում, յարդարում է նրա սև երկայն մազերը, հայելին առաջն է բռնում, ծիծաղում, ծիծաղեցնում և երկսով էլ երջանիկ են, երկսով էլ գոհ։ Մի այլ անկիւնում, նրանցից ոչ հեռու, նստել է մի հաչմանդամ, երկու փայտերը կողքը դրած՝ անդադար ինչ որ մտմտում է, ձեռքը մեկնում անցորդներին և մէջ ընդ մէջ կրծում որ և է պտուղ կամ այլ ուտելիք։ Եւ որքան չատ են այսպիսի հաչմանդամներ, կոյրեր, խեղճեր, մուրացիկներ։

Մեծ փողոցների և հրապարակների պատկերն էլ այլ է և ոչ պակաս հետաքրքիր։ Մայթերի վրա մարդիկ ոչ միայն քայլում են, այլ և ամենայն պաղարիւնութեամբ նստած են, նայում են անորոշ կերպով, ճանճերն են քչում, կամ պառկած են գլուխները սալայատակի վրա դրած։ Եւ երբէք չեմ կարող մոռանալ մի տեսարան, որ միայն Նէապօլին յատուկ կարող է լինել. քաղաքի ամենայայտնի, ամենալայն փողոցներից մէկում, առաւօտեան 11 ժամին, երեսի վրա ընկած, խորը քնած էր մի 10—12 տարեկան տղայ։ Անչուչա մի աղքատ տղայ էր, որովհետև գլուխը բաց էր, մազերը փոչոտ ու խոիր, պատառոտուն չորերի տակից տեղ տեղ երևում էր մարմինը։ Մի չարաճճի երեխայ մօտեցաւ նրան, հէնց նրա ականջի տակ

մի քան տրաքեցրեց. քնողը մի վոքր չարժվեց, գլուխը բարձրացրեց, անորոշ հայեացքով չուրջը նայեց և վերսին քնեց. մօտեցաւ մի պառաւ կին, նրան հրեց, քաշքշեց, երեխան մռմռաց, բայց չը վերկացաւ։ Պառաւը յուսահատված հեռացաւ, և-րեխան նորից քնեց, իսկ փողոցի բազմութիւնը չարունակում էր իր անցուդարձը միանգամայն անտարբեր դէպի քնող փոքրիկը, որ իր մարմնով փակել էր մայթի մի մասը։

Փողոցներում առևտուրը այնքան կենդանի է, այնքան բազմակողմանի, որ կարծես Նեապօլում խանութներ կարող էին չը լինել. և ինչպէս են կանչում, ղիլ, անախորժ ձայնը ականջ է ծակում, բազմաթիւ կոկորդներից դուրս եկող զանազան եղանակներ, զանազան այլանդակ հնչիւնները միախառնվելով՝ փողոցները դարձնում են արևելքի մի մեռելատուն։ Այդ անճոռնի ձայներն են, որ վաղ առաւօտից, արևածագից չատ առաջ, բարձրանում են, ներս թափանցում բոլոր յարկերի դռներից, լուսամուտներից, տարածվում կտուրների վրա և անսովոր մարդին խոր քնից անգամ զարթեցնում։

Այստեղ ճանապարհորդը ենթակայ է բազմաթիւ անախորժութիւնների. հիւրանոցում, ճաշարանում, փողոցներում, նոյն իսկ արամվայների վրա նա անդադար լսում է ձանձրալի առաջարկութիւններ կամ ուղղակի պահանջներ։ Մի ճայլ ժամանակ ևս առիթ ունեցայ ճաշարանում իրար հետից տեսնել մի քանի կատեգօրիայի մարդիկ,



ՆԵԱՊՕԼԻ ՀՆԴԿ. ՏԵՍԱՐԱՆԸ ԵՒ ՎԵԶՈՒՎ. ԼԵՌԸ
(Նկ. տե՛ս 243)

որոնց գոյութիւնն այսպէս թէ այնպէս կապված է վողոցի հետ. չրջիկ երաժիշտը ներս եկաւ իր դրծիքով և առանց հրաւէրի ածել սկսեց. պատկերազարդ կարտեր և այլ մանր իրեր վաճառողը ճաչի սեղանի վրա, ափսէների կողքին, ամենայն համարձակութեամբ վռնց իր ապրանքը. խխունջներ և այլ ծովային կենդանիներ վաճառողը հրամեցրեց մեզ զանազան միջատներ, որոնց միայն տեսքը կարող էր ախորժակ փակել, և վերջապէս պատկերը կատարեալ դարձնելու համար՝ դռնից մի քանի ողորմութիւն խնդրող ձեռներ ներս ցցվեցին:

Հրապարակներ կան, ուր բոլ երկնքի տակ հաստատված են ժողովրդական խոհանոցներ. թէ ինչ է եփվում այնտեղ, այդ սովորական հասկացողութեանը համարիա անըմբռնելի է: Մարդ ու կին, ծերեր ու երեխաներ իրար խառնված՝ չրջապատել են ինչ որ արհեստական թմբեր, որոնց վրա հաստատված են օջաղներ. կաթսաները եռում են, խոհարարներն անդադար դուրս են հանում ամաններից զանազան ծովային կենդանիներ, խխունջներ, ամենատեսակ ձկներ, կանաչեղէններ, և ամբոխը կեղտոտ, սոված ու ծիծաղկոտ, անհոգ ու բիրտ, չրջապատել է այդ ծխացող թումբերը. ոմանք ճչում են, պահանջում են, ուրիշները հայհոյում կամ հեգնում, ծիծաղում են, իրար հրհրում, աղմուկն ահագին է: Երբ քաղցը յագեցայ, և ստամոքսը նուազ պահանջող դառնայ, մի մի նարինջ էլ կը ճարեն, և կրծելով, կեղևները չորս կողմ-

ները վռելով, կը հևռանան, կը փռվին պարտէզ-
ների ծառերի տակ, կամ մայթերի վրա, պատերի
ստուերներում, որպէսզի երեկոյեան նոյնը կրկնեն,
ապա սկսեն դիշերային կեանքը—երգ, պար, քըր-
քիջ։ Տարօրինակ քաղաք, տարօրինակ ժողովուրդ։

Փողոցներում երթևեկում են էլէքտրական
տրամվայներ, կան նաև կառքեր, բայց և դրանց
հետ միասին բազմաթիւ են անասելոր սայլեր, և
սայլակներ, որոնց լծված են մի էշ, մի ջորի և
մի ձի միասին։ Սայլապաններըը կեղտոտ, պատա-
ռոտուն, բիրտ, բայց միշտ ուրախ, միշտ աղմկող.
նրանք դոռում են, կանչում են, հայհոյում են,
երգում են բոլորը միասին։ Իտալիայում և ոչ մի
քաղաք այսքան խղճալի, այսքան կեղտոտ չէ։ Մու-
րացկանութիւնն այստեղ արհեստ է, աղքն ու
կեղտը միանգամայն սովորական։ Այստեղ մարդ-
կանց երկու դասակարգ կայ, որոնք կուշտ են և
լաւ հագնված. նախ զինուորականները, որոնք ի-
րանց փայլուն համազգեստով այս խղճալի քաղաքի
տխուր հակապատկերն են կազմում և երկրորդ՝
հաստատիւոր սևազգեստ կրօնաւորները։ Սրանք են
բարեկեցիկ, կոկ հագնված, մնացած բազմու-
թիւնը կարծես քաշ է գալիս աղքի, գարշահոտու-
թեան մէջ, անվում է ինչով որ կարող է, որպէսզի
զինուորականների կոճակները միշտ փայլուն և
կղերականների փորերը միշտ կուշտ լինեն։

XXIX

Նէապօլիտանական նախկին թագաւորութեան
մայրաքաղաքը, Նէապօլ՝ իր բնակիչների թիւով, որ
հասնում է 540 հազարի, առաջինն է ամբողջ Ի-
տալիայում. (Հռօմ 510 հազար բնակիչ միայն ու-
նի)։ Սա աշխարհիս հնագոյն քաղաքներից մէկն է
և կարծվում է նոյն իսկ, որ չինված է Քրիստոսից
XI դար առաջ յոյն գաղթականների ձեռքով։ Հռօմի
տիրապետութեան չրջանում—(326 թ. Ք. ա.) նա
միշտ հաւատարիմ մնաց մայրաքաղաքին. անգամ
Աննիբալի և Պիւրռոսի պատերազմների ժամանակ,
երբ այնքան հպատակ քաղաքներ դաղտնի կամ
յայտնի աջակցեցին թշնամիներին, Նէապօլը մնաց
անսողդողդ։ Կայսրութեան ժամանակ Հռօմի բարձր
աղնւականութեան սիրած վայրը դարձաւ Նէապօլ,
ուր չատ պատրիցիաներ վիլլաներ ունէին և անց
էին կացնում տարվայ մի մասը։ Հռօմի վերջնա-
կան անկումից յետոյ Նէապօլի անունը Իտալիայի
պատմութեան մէջ միշտ առանձին արտասանվեց
թէ իբր անկախ պետութիւն և թէ բարբարոսների
իշխանութեան ներքոյ։ Տիլզիտի ճակատամարտից
յետոյ՝ 1808-ին, երբ համարեա ամբողջ Եւրոպան
Նապօլէօնի ոտների տակն էր և երբ այս հանճա-
րեղ parvenu (դուրս պրծածը) գահեր էր բաժա-
նում իր եղբայրներին և մօտիկ ազգականներին,

Նեապոլի թագաւորութիւնը Ժոզէֆ Նապոլէօնից յետոյ բաժին ընկաւ մարշալ Միւրատին։ Բռնատիրացիան Նեապոլի գահի վրա հաստատեց նախկին տիրոջը, Ֆերդինանդին և դժբախտ Միւրատը՝ կալաբրիայում յաղթված՝ գերի ընկաւ և դնդակի բռնվեց 1815-ին։ Այնուհետև Նեապոլի անկախ գոյութիւնը չարունակվեց մինչև 1859 թ., երբ Սօլֆերինօի ճակատամարտից յետոյ միացաւ Իտալիային Վիկտօր-Էմմանուէլի իշխանութեան ներքոյ։

Նեապոլի ընդհանուր տեսքը հեռուից տգեղ չէ։ Նրա խիտ առ խիտ իրար վրա թափված տները սկսում են մի չարք կանաչ բլրակների ստորոտներից և ամֆիթէատրով իջնում են դէպի վար և կարծես իրար հրհրում են ծովը թափելու համար։ Երեկոները, մանաւանդ Սէն-Մարտինի բարձրութիւնից, վերջալոյսի փայլով Նեապոլն իր չրջակայքով ակնապարար տեսարան է ներկայացնում։ Շրջապատի կանաչազարդ բլուրները, մանիչակագոյն երկինքն ու ծովը, Նեապոլի ծոցն իր բազմաթիւ նաւերով, որոնց կայմերը ծովի վրա անտառ են յիշեցնում, աւելի հեռուն կանաչ դաչտանկարը, այս բոլորը միասին մի գրաւիչ ամբողջութիւն են կազմում քաղաքի հետ։ Պատկերը դառնում է իրապէս ցնցող, երբ աչք ես դարձնում դէպի արևելք, ուր բարձրանում է Վեզուվը, վհատիտ ու սարսափելի, որի կատարին ծխի և գոլորշու ամպը անդադար բարձրանում է, գալարվում, ձևափոխվում, կամ յանկարծ ցրիւ գալիս։

Այս բոլորը, այո, դեղեցիկ է, բայց բուն քաղաքը համարեա ոչնչով չէ արդարացնում Նեապոլիտանցիների հռչակաւոր ասացուածքը՝ «Vedi Napoli e poi muori»—տեսնել Նեապոլը և ապա մեռնել։ Այս քաղաքը ոչ միայն մի առանձին գեղեցկութիւն չունի, այլ և հետաքրքրութեան արժանի պատմական, գեղարուեստական յիշատակարաններ էլ չունի, եթէ չը հաչուենք չրջակայքի հին պատմական այրերը և մանաւանդ Նեապոլի միւզէն։ Վերջինս ճշմարիտ որ չափազանց հետաքրքիր է չնորհիւ Պօմպէյի և Հերկուլանումի յայտնի մի դըժբաղդութեան, որովհետև այդ քաղաքների աւերակներից դուրս հանված բազմաթիւ հետաքրքիր առարկաներ այդ միւզէի մէջ են ժողովված. արժէ այցելել, արժէ տեսնել գեանի տակից հանված այդ աշխարհը։

Իտալական ոչ մի միւզէ ինձ վրա այնքան խորը, այնպէս անջնջելի տպաւորութիւն չը թողեց, ինչպէս որ Նեապոլինը։ Ամբողջ 4—5 ժամ մարդ այնտեղ թափառում է սենեակից սենեակ, կանգ է առնում բազմաթիւ հին որմանկարների առաջ, որոնք բերված են աւերակ քաղաքներից և դարձեալ դուրս է գնում ախտոտանքի ու չը յագեցած հետաքրքրութեան մի զօրեղ զգացմունքով։ Պատկերների և առհասարակ այստեղ ի ցոյց դրված առարկաների գեղեցկութիւնը չէ, և ոչ էլ նրանց պատճառած գեղարուեստական հաճոյքը, որ համայում է մարդու այս անօրինակ միւզէում, այլ մի ուրիշ բան, մի ցնցող, մի յուզիչ բան։ Երկու հազար տարի առաջ անցած մի կեանք իր ամենասովորա-

կան և ամենաբարձր արտայայտութիւնների մանրամասնութեամբ այստեղ վուլում է մարդու առաջ և այնպէս մտածել տալիս։ Պօմպէյ և Հերկուլանում են այստեղ, այն դժբաղդ քաղաքները, որոնք ամբողջ քսան դարեր Վեզուվի մոխրէ պատանով գետնի տակ մնալուց յետոյ վերջապէս լոյս աշխարհ եկան սարսափի լուռ պերճախօսութեամբ իրանց թշուառութիւնը, ինչպէս և իրանց անդարձ կերպով անցած երջանկութիւնը պատմելու յետագայ սերունդներին։ Բոլորը, ինչ գտնված է վատաբաղդ քաղաքների աւերակների մէջ, այստեղ է, ահա թէ ինչու հետաքրքիր է այս միւզէն, ուր մարդ ամբողջ ժամերով կարողանում է ապրել դարերի խաւարի մէջ թաղված մի անցած կեանքով, նայում է և չէ կշտանում, ինչպէս հրաշքով յանկարծ մի անծանօթ, փանտաստիկական երկիր ընկած։ Մարդկային ճակատագրի, բնութեան անխուսափելի օրէնքների, առհասարակ քաղաքակրթութեան և բարոյական հասկացողութիւնների էվօլիւցիայի մասին ունեցած իր գաղափարները բաղխում են այս նոր տպաւորութիւնների հետ, որոնք սակայն այնքան հին են—և անորոշ ցաւի զգացմունքից և յոռետես ընդհանրացումներից միտքը խուսափել չէ կարողանում։ Երկու հազար տարվայ մէջ որքան քիչ բան է աւելացած, մտածում է մարդ տխրութեամբ, այն քաղաքակրթութեան վրա, որով այնքան հպարտ են նոր ժամանակները։ Ի՜նչ, այնքան զոհեր, այնքան աբիւնոտ ճակատամարտներ, այնքան աղգեր ոչն-

նած, չարչարված և անյայտացած, մտքի քսան դարերի երկունք, և այսքան քիչ արդիւնք։ Երկու հազար տարի առաջ ապրող մարդու կեանքն ու նիստ ու կացը քիչ է հետու մերինից, քաղաքակրթութիւնը կրիայի քայլերով է ընթացել։ Եւ եթէ մարդկային բոլոր ճիգերի, բոլոր մեծ երազների վախճանն այս է, ինչու պայքարել, մտածել, աքնել. ինչ ասել է այս կարճատև և ցաւերով լի կեանքը, ինչու համար է տառապանքը, այս անյայտութիւն, հսկայական իղձը մեր այսքան փոքր կրծքի տակ, ուր ենք գնում, դէպի ո՞ր մութ, անհունի մէջ լողացող նպատակներն է տանում մեզ բնութիւնը։ Բայց անցնենք միւզէի մանրամասնութիւններին վօլտերի հետ կրկնելով՝ cultivons notre jardin, «մշակենք մեր պարտէզը» անմռունչ և հնազանդ մեր մարդկային ճակատագրին։

Ամենից հետաքրքիրն այս միւզէում Պօմպէյի շինութիւնների պատերից հանված որմանկարներն են, որոնք խնամքով չարված են բազմաթիւ դահլիճներում։ Պօմպէյացիք իրանց առանին և հասարակական կեանքը, իրանց բարոյական և կրօնական հասկացողութիւնները ներկայացնող պատկերներով զարդարած են եղել իրանց բնակարանների պատերը։ Ահա քաղաքի ընդհանուր տեսարանը, մի գեղեցիկ ընդհանուր որմանկար, որ քսան դարեր մոխրի տակ պահվել է ապշեցուցիչ մաքրութեամբ և բոլորովին անեղծ։ Տները քառակուսի են, յունական ճաշակով շինված և զարդարված արձաններով։ Իրար վրա տերրասներ

կազմող հարթ կատուրներ, ուր հարաւի բնակիչները սիրում են դիչերներն անցկացնել, սիրուն փողոցներ, մերթ ուղղաձիգ ու լայն, մերթ գալարուն ու նեղ, փոքրիկ պարտէզներ, ճեմելիներ հովասուն ծառերով, քարէ գեղեցիկ կամուրջներ երկու կողմից քանդակազարդ ճաղաւոր ցանկով պատած, մի խօսքով դրաւիչ, սիրուն հարաւային քաղաք, ուր ամեն ինչ վկայում է կիրթ ճաշակ, նրբացած պահանջներ, կեանքի հեչտութիւններ, որ այնպէս յատուկ են բոլոր ժամանակների բարձր քաղաքակրթութեանը:

Հետաքրքիր է Պօմպէյի չուկան. ահա բազմաթիւ վաճառողներ և գնողներ. այս մէկը, որ ձեռքից կախել է զգեստներ և միւսը՝ որ սակարկութիւն է սկսել, նրանք երևի դեռ չեն համաձայնել և ձեռքով համոզիչ չարժուձեւեր են անում մտաղրաղ դէմքերով: Ահա մի ուրիչը, որ նստել է իր պաշարեղէնի առաջ սպասելով յաճախորդների. ահա մի հայր, մի ձեռքից կախել է մի զամբիւղ և միւսով բռնել է իր փոքրիկ երեխայի աջը, եկել է չուկայ պաշարեղէն գնելու. ինքը գործի մարդ է, ուստի վերադառնալու չէ մինչև ճաշ, մինչև երեկոյ, երևի երեխան պիտի տանի մօրը յանձնելու այդ օրվայ պաշարը: Այսքանով չէ վերջանում չուկայի կեանքը, հրապարակն ընդարձակ է և նրա ամեն կողմերում իր առօրեայ հոգսերով պաշարված մի ամբոխ է եռում:

Այստեղ է հացագործի խանութը, համարեա այնպէս, ինչպէս լինում է այսօր: Սեղանի տախտակի վրա դարսված են կոլոր հացեր, խորքում երեւում է բոցավառ հնոցը, իսկ գնողները, չարված փողոցում, սպասում են իրանց հերթին:

Ամենից ուշագրաւը այս դպրոցն է, ուր իշխում է ձեռի մեթոդը. խստասիրտ ուսուցիչը կանգնած է իշխանական դիրքով. նրա առաջ մի երեխայ չալակել է միւսին—երևի մի ծոյլ, կամ յանցաւոր աշակերտի—և երրորդը դալար ճիպոտով հարուածում է երկրորդին, որ ցաւից ոռնները ցնցում է վերև ներքև և ի հարկէ մի պինդ էլ ճչում: Այստեղ են երկու նկարիչ կանայք իրանց արուեստի պարագաներով: Սեղանի հետուն մի ջահիլ ու գեղեցիկ կին, սիրատանջ ու թչուառ, որ տխուր նըստել է մի անկիւնում և լուռ սգում:

Բազմաթիւ են նաև կենդանիների և բոյսերի պատկերներ. մի աքաղաղ, մի հատ ծառ, սողուններ, գազաններ և համարեա ոչ մի դաչտանկար, ոչ մի բլուր, լայնարձակ հորիզոն, երկինք, ծով: Դասական ժամանակների մարդու գեղասէր հայեացքը սովորաբար բաւականանում էր զատ զատ պատկերներով, ինչպէս կրօնական բարոյական հասկացողութիւնների, նոյնպէս գեղարուեստի մէջ միտքը չէր հասել այն լայնութեան ու կատարելութեան, որ առանձին երևոյթներից ընդհանուր սինտեղներ ստեղծէր ու ամբողջութիւններ ըմբռնէր: Գեղարուեստը կատարեալ էր և վեհ, երբ իբր առարկայ ունէր մարդկային մարմինը, կենդանի, թրթռուն մսի ալիքաւոր բարեձեւութիւնը, ոյժ և ճարպիկութիւն ներկայացնող առնացի չարժուձեւե-

րը, պարզութեան մէջ կանացիութեան և զեղեցկութեան ամբողջ հմայքը ներկայացնող մերկութիւնը:

Ես դանց եմ առնում նկարագրել այս միւզէի օրիգինալ զեղարուեստական բաժնի մնացած առարկաները, որոնք պակաս հետաքրքիր չեն և անցնում եմ երկրորդ բաժինը, ուր զետեղված են կործանված քաղաքներից հանված կահ կարասիներ և զարդեր: Իրար յաջորդող մի չարք մեծամեծ դահլիճներ, ուր սեղանների վրա, ապակիների տակ չարված են բազմաթիւ զէնքեր, զարդեր, թանկագին մետաղներից զեղեցիկ ապարանջաններ, մանեակներ, մատանիներ, ականջօղեր, մեծ մասը զեղարուեստական սիրուն և հետաքրքիր գործեր, վրանները քանդակված բոյսեր ու կենդանակերպեր: Ահա մի ամբողջ խոհանոց, իր բոլոր պարագաներով, երկաթէ օջաղ, ունելիք, մետալէ մաններ, քամիչներ, գդալներ. ահա ննջարանի սարքը, սեղանատունն իր բոլոր յարմարութիւններով: Մի դահլիճում ապակիների տակ է դրված պալարեղէնի մնացորդներ, ցորեն, ընկոյզ, լօբի, հացեր, ձուեր և այլն, ամենքն էլ քարացած և սև, ինչպէս ածուխը, բայց տակաւին պահում են իրանց ձևը մինչև ամենաւիորը մանրամասնութիւնները: Երևում են պատուհների վրա նուրբ գծերը, նրանց խորդուբորդը, հացի վրա դեռ նշմարվում են թխող ձեռքի հետքերը. մի պարան կայ, մի ալ քարացած պարան, որ կարծես քիչ առաջ միայն ոլորվել է:

Այս բոլորը այնքան հետաքրքիր է, այն աստի-

ճան տպաւորիչ, որ մարդ անտարբերութեամբ դանց է առնում միւզէի նոր զեղարուեստական բաժինը, որ բաւական հարուստ է աչքի ընկնող նկարներով ու արձաններով և իր բոլոր ժամանակը նուիրում է կործանված քաղաքների յիշատակներին, նրանց պատմութեանը: Այս այցելութիւնից յետոյ Պոմպէյը իր չրջակայքով, իր աւերակներով ամբողջապէս բռնում է իմ ուշն ու միտքը և ես չատպում եմ ժամ առաջ ճանապարհ ընկնել տեսնելու Վեզուվը և նրա ոտների տակ յաւիտենականապէս մնած, անկենդան քաղաքները:

XXX

Ապրիլեան մի ամպոտ ու տաք առաւօտ է: Պոմպէյ եմ գնում: Գնացքը լիքն է: Օրը կիրակի է. բազմաթիւ իտալացիներ, ոմն օրվայ հանգստից օգտվելով, երկրի զանազան կողմերից գալիս են աւերված քաղաքները տեսնելու և նէապօլին այցելելու: Դժբաղդ վայրերը դարձել են մի տեսակ ուխտատեղիներ զուարճութիւն փնտռող ամբոխի համար: Խօսում են բարձրաձայն, ուրախ, եռանդոտ չեչտով. հարաւի ժողովուրդները, մանաւանդ լեռնային երկրների բնակիչները կամաց խօսել չը գիտեն: Մի տեղից լսվում է ժողովրդական երաժըշտութեան ձայն, նուագում են վագոններից մէկում: Գնացքն ուշանում է. նոր բան չէ, իտա-

լական երկաթուղիներին յատուկ մի երևույթ է. մարդիկ այստեղ սովորաբար չեն չտապում, ժամանակ կունենան. քնութիւնը՝ հարուստ և բարեբեր, քնաւորութիւնների մէջ դրել է երևի ժամանակից չը վախենալու այդ անհոգ գիծը. հիւսիսն իր ձմեռն ունի, անողոք հրամայող ձմեռը, այնտեղ չտապել է պէտք և այն էլ ինչպէս. բայց հարաւը չէ վախենում ժամանակից, քնութիւնն այնտեղ խորթ մայր չէ, ինչու չտապել նոյն իսկ երկաթուղու վրա, ժամանակ կունենան հասնելու։

Եւ սպասում ենք։

Ներս է մտնում մեր վագոնը մի փերեզակ, տեղաւորվում է, բայ է անում իր արկղը և դուրս է հանում այնտեղից զանազան էժանագին իրեր, մէկ մէկ բարձրացնում է, ցոյց տալիս նստողներին, գովաբանում է իր բոլոր ճարտարախօսութեամբ։ Գնացքը վերջապէս չարժվում է և չոգեմեքենայի ու անիւների աղմուկի մէջ դեռ չարունակվում է լսվել ճարպիկ փերեզակի ձայնը. ճանապարհորդները սկզբում լսում են լուռ ուշադրութեամբ, ապա կարծես ամենքը խօսք մէկ արած՝ մի մի բան են վերցնում վաճառողից, նայում, զննում. մէջ են ընկնում և կանայք, երեխաների պէս գրաւվում նոր իրերով և չուտով առևտուրը կատարեալ է դառնում։ Մի քանի րոպէում վաճառականը ցրվում է իր ապրանքը և արդէն յաջորդ կայարանում ցած է իջնում գնացքից և գոհ սրրտով հեռանում։ Ուրիշ երկրներում էլ ես հանդիպել էի չրջող մանրավաճառների կայարանում և

նոյն իսկ գնացքի մէջ, բայց որ այսպէս ճանապարհորդութեան ժամանակ առևտուր լինի, այս ես ոչ մի տեղ պատահած չեմ, և դա արդէն զուտ իտալական կեանքի երևոյթ է։

Յաջորդ կայարանում մանրավաճառի փոխարէն ներս է մտնում մի կոյր ժողովրդական բանաստեղծ. նա ոչ նուագարան ունի, ոչ էլ երգում է. նա պարզապէս «ասող է», հին լեգենդաների պատմող։ Առաջնորդը նրան տեղաւորում է վագոնի կենտրոնում, ինքն էլ տեղ է բռնում կողքին. մի որ ժամանակ այդպէս մնում են, ապա յանկարծ բանաստեղծը ոտքի է կանգնում և իր մարած աչքերը անորոշ կերպով ցածր առաստաղին յառած՝ ասում է մի քարոզող մարգարէի չեչտով. «Ով զուք Պօմպէյ և Հերկուլանում գնացող ուխտաւորներ, թոյլ տուէք ձեզ խօսել Պետրարկից և Դանտէից»։ Ամենքը երեսները դարձնում են դէպի բանաստեղծը. խօսքն ու ղրոյցը դադարում է և իտալական ամբոխը մի երկիւղած լռութեամբ սպասում է, թէ ինչ է ասելու երգիչը Դանտէից և Պետրարկից։

Եւ երգիչն սկսում է. նա կտորներ է ասում երկու բանաստեղծներից, բայց ինչ լեզու է, որպիսի արտասանութիւն, որքան քնքոյշ. կարծես նա չէ խօսում, այլ երգում է, այն աստիճան գալարուն և հարուստ են հնչիւնները, այն աստիճան երաժշտական և քաղցր է ձայների հիւսուածքը։ Կամաց կամաց բանաստեղծն ինքն էլ է ոգևորվում. յուզմունքից նրա դէմքը կարմրում է, աչ

քերը դէպի ցածրիկ առաստաղը յառած՝ նա անդադար ցնցում է գլուխը ազդու կտորների հետ, և կարծես փոքրիկ վագոնը անկարող է պարտադրել նրա երևակայութիւնը, նրա յոյզն ու ոգևորութիւնը։ Իտալացի ժողովուրդը, անգամ նրա ան ամբոխը լսում է թափառական երգչին, հասկանում է և աքանչանում իր երկու ամենամեծ բանաստեղծներով, իր սեփական լեզուի քաղցրութիւնը, մայրենի բարբառի նրբութիւնը ճաչակում, լսում է և հմայված է։ Այդ կենդանի, վառվռուն ամբոխը, որ լռել չը գիտէ, որ խաղաղ նստել չը գիտէ, այժմ այս վագոնի խեղդող մթնոլորտի մէջ նստել է լուռ, քարացած. ճակատներ կան՝ որոնք մի կէտի յառած երազում են մի ամբողջ պատմական անցեալ և լաւ է, հոգու համար պարարիչ է այս բոլորը։ Բանաստեղծը լռում է, բանւորներն էլ, երկրագործների կոշտ ձեռքերը սանտիմներ են թափում մէջտեղ բերված պնակի մէջ։ Երգիչը դուրս է գնում գոհութեամբ։ Բազմութիւնը դեռ լուռ է. Դանտէի և Պետրարկի յարուցած պատկերները, հին յուշերը դեռ դերել են ամենքի երևակայութիւնը, բանաստեղծի ձայնը դեռ հնչվում է կարծես, մարդիկ ապրում են մի այլ կեանքով, որ բարձր է իրականութիւնից։

Կալաբրիայից եկած մի իտալացի, որ իմ դէմ ու դէմն է նստած, գլուխը բարձրացնում է, ինձ նայում և պէտք է զգում մի բան ասել. ես այդ հասկանում եմ, մարդը յուզված է։

—Լսեցիք, պարոն, Դանտէից և Պետրարկից կտորներ արտասանեց, ինչպէս գտաք։

—Անհնարին բարեկամ, ինչքան քաղցր է ձեր լեզուն։

Նա ժպտում է ազգային ինքնաբաւականութեամբ, նայում է դարձեալ մի բան ասելու ակնարկ ցանկութեամբ, բայց էլ չը գիտէ ինչ ասել և չոաւրած աւելացնում է.

—Կալաբրիայից եմ գալիս, գնում եմ Պօմպէյ, դեռ չեմ տեսել, միշտ ասում էի մի օր կը տեսնեմ, ուշացայ, դուք երևի հեռուից էք գալիս։

—Այո, շատ հեռուից, ես հայ եմ։

Դուք հայ էք, կրկնում է նա մեքենաբար և լռում. երևի հայ անունը նրան շատ ծանօթ չէ, Կալաբրիան հեռաւոր, խուլ անկիւն է։

Ես էլ եմ լռում, որովհետև խօսելու շատ էլ ցանկութիւն չունեմ. ես չեմ մոռանում Դանտէից և Պետրարկից խօսող ժողովրդական բանաստեղծին և այս դէպքն ինձ համար շատ բան է բացատրում։ Ահա մի ժողովուրդ, որ հաւաքվել է Իտալիայի զանազան ծայրերից, որ դեռ երեկ քաղաքականապէս բաժան-բաժան իր առանձին մասերում ապրում էր տարբեր, ինքնուրոյն կեանքով, իւրաքանչիւրն իր առանձին ճակատագիրն ունէր. դժբաղդ օրեր էին, լացի, սեւի, սգակութեան օրեր։ Դեռ մի դար չէ անցել այն օրից, երբ իտալացին, Բայրօնի բողոքող հանճարի հետ կարող էր կրկնել. «Ահա Իտալիան, աղգերի Նիոբէն։ Անզաւակ, անթագ, իր ցաւերը պատմելու ձայնից զրկված, իր

խոչտանգված ձեռներում բռնել է մի դատարկ վազ, որի աճիւնը նուիրական՝ դարերը սիրեցին աչխարհի ամեն կողմերը։ Սցիպիոնների գերեզմաններն էլ աճիւններ չունեն, չիրիմներն էլ կորցրել են իրանց հերոս հիւրերին... Իտալիա, Իտալիա, դու ստացել ես գեղեցկութեան ճակատագրական չնորհքը, տխուր ժառանգութիւն, աղբիւրը քո ներկայ և անցեալ դժբաղդութեան... Երանի թէ քո մերկութեան մէջ դու նուազ գեղեցիկ կամ աւելի հզօր լինէիր... Գուցէ այն ժամանակ կը ներչնչէիր մի փրկարար սարսափ, կամ կը լինէիր պակաս ցանկալի և համեստօրէն կը վարէիր խաղաղ օրեր. այն ժամանակ էլ չէր լինի մարդկանց այն հեղեղը, որ անընդհատ թափվում է Ալպերի գագաթից, օտարի սուրը չէր լինի քո միակ և տխուր պաշտպանը և դու՝ յաղթված կամ յաղթական չէիր լինի սորուկ բարեկամների կամ թշնամիներիս։ Այսպէս էր Իտալիան երեկ. այսօր պատկերը փոխված է, Բայրօնի երգած դժբաղդ Իտալիան այժմ տէր է իր ճակատագրին, Ալպերից մարդկային հեղեղն էլ չէ իջնում ոտի տակ տալու, ճխլելու մի ամբողջ ժողովուրդ. հրաչք է կատարվել կարծես և այդ փրկարար հրաչքն ինձ բացատրում է Դանտէից և Պետրարկից խօսող իտալացի երգիչը։ Իրարից հեռու ընկած, տարբեր կլիմայական աչխարհագրական պայմաններում ապրող, չատ անգամ պատմական ուրոյն ճակատագիր ունեցած այս ըստ երևոյթին տարամերժ տարրերը այսօր Իտալիայի ծանազան ծայրերից ի մի խմբված, կանգ-

նել են իրար կողքի, աչքերը սևեռել են մի մարդու չրթունքներին, ականջները դարձրել են մի ձայնի և լսում են չատ դարեր առաջ ապրած երկու հանճարեղ բանաստեղծների անմահ երաչները, հոգու ցաւերն ու յոյսերը, լսում են, հասկանում են և այն միանգամայն նոյն ձևով, մի և նոյն զգացմունքով, մի և նոյն անխաուն, բարձր հաճոյքով, որովհետև հեռաւոր անցեալում հնչված այդ նուիրական ձայները իտալացի ամբողջ ժողովրդի հոգու արձագանքներն են, նա ինքն է, որ խօսում է, լալիս, երգում, հառաչում։ Եւ այդ միայն այսօր չէ, դեռ չատ դարերից ի վեր, սարկութեան և խեղճութեան օրերից էլ առաջ իտալացիները գիտէին յուզվել մի հատիկ ձայնով, հասկանալ, սիրել մի հատիկ լեզու, որ պատմում էր նրանց հին ու նոր ցաւերը, որ նրանց հին ու նոր կեանքի սինտեզն էր ներկայացնում, պատմական անցեալն էր գրկած բերում դարերի յաղկեղումների միջով։

Սիրում ենք ասել և այն պատմութիւնն է սովորեցրել—թէ Իտալիայի միութիւնը ստեղծեցին Գարիբալդի, Կավուր և Վիկտոր-Էմմանուէլ. ոչ, նրանք չը ստեղծեցին այդ միութիւնը, նա ստեղծվեց այն օրվանից, երբ Դանտէն առաջին անգամ իր «Աստուածային կատակերգութիւնը» տուեց իր ժողովրդին, երբ Պետրարկի երգերը իտալական խրճիթներում հնչվեցին. Գարիբալդի, Կավուր և Վիկտոր-Էմմանուէլ միմիայն նիւթական, առարկայական արտայայտութիւնը տուին բարոյական միութեանը, միլլիոնների հոգու մէջ մաս մաս ապ-

րող այդ իրականութեանը, որ դարերից ի վեր անխորտակելի կերպով հաստատված էր մի ամբողջ ազգի հոգեկան աշխարհի, նրա էութեան, նրա պատմութեան վրա։ Երբ միլիոնաւոր մարդկային բանականութիւններ—որքան և բաժան բաժան լինեն իրարից—կաղղանում են հասկանալ մի Դանտէին կամ Պետրարկին, ապրում են նրանց երգերով, խօսում են նրանց մեղրածորան լեզուով, փարում են նրանց սիրելի անուններին, ինչպէս իրանց ամենանուիրական փաստին, ուրախանում և լալիս են նրանց հետ, նրանց պէս, ապա վստահ կարելի է ասել, որ նրանց միութիւնն ու ամբողջութիւնը դուրս է վտանգից. քաղաքական չհաղթուած ախտաւորութիւնները անկարող են հերքել մի այնքան պերճերիկ դոյութիւն, որ արևի տակ, աշխարհի վրա իր անժխտելի իրաւունքներն ունի։

Իտալիան ինչ փայլուն օրինակ է պատմական այս ճշմարտութեան. անթիւ անգամ խորտակվեց նրա փոքր ու մեծ միութեան առարկայական կապը, բաժան բաժան եղած ու յօշոտված, նա աղաց ու ճմլվեց յաղթողների բիրտ ոտների տակ, բայց Դանտէն ու Պետրարկը փախսում էին նրա ականջին դարերի միջից, պատմական հարուստ ու զարմանալի անցեալը իր աքանչելի լեզուի մէջ ամեն վայրկեան արտայոլում էր և կենդանի վանդնում նրա աչքի առաջ. իտալացիները իրանց երջանկութեան, ինչպէս և իրանց դժբաղդութեան օրերում չարունակեցին իրար հասկանալ, չարունակեցին ապրել միևնոյն հոգեկան յոյզերով և

նրանց լացն ու հառաչանքը յուսահատի չեղան, այլ բողոքողի, յուսացողի և ըմբոստի։ Կալաբրիացին ընդհատում է իմ մտքերի թելը.

—Դանտէին և Պետրարկին մեր երկրի ամեն կողմում ճանաչում են, հասկանում և սիրում, մենք ամենքս անգիր կտորներ գիտենք նրանցից։

—Ինձ թւում է, որ ձեր միութեան գործում էլ Դանտէն ու Պետրարկը ձեզ զօրավիգներ եղան, աւելացնում եմ ես, ուրախանալով որ խօսակցութիւնը դառնալու է ճիշդ նոյն նիւթի չուրջը, որով ես զբաղված էի։

—Այո, չնորհիւ նրանց, մենք իտալացիներս իրար հասկանում էինք, թարգմանի պէտք չունեցանք ընդհանուր գաղափարը ըմբռնելու համար։

Իտալացին իրաւունք ունի. կարէէյ մի տեղ հարցնում է, թէ ով է այն մեծ թագաւորը, որի անունը կապում է ովկիանոսների և ծովերի մէջ սփռած բոլոր անգլիացիներին՝ լինեն նրանք Բրիտանիայի հպատակ՝ թէ ոչ, և պատասխանում է՝ Շէքսպիր. եթէ հարցնելու լինեն, աւելացնում է նա, որից լաւ է հրաժարվել, Շէքսպիրից, թէ Հընդկաստանից, ես չը գիտեմ, թէ ինչ կը պատասխանեն լօրդերն ու համայնքների ժողովը, բայց ես կասեմ՝ վերցրէք Հնդկաստանը և թողէք մեզ մեր Շէքսպիրը։

Դանտէ՝ Իտալիա, Շէքսպիր՝ Բրիտանիա, մըտմտում եմ ես և իմ մտքերը հեռաւոր աշխարհից թռչում հասնում են հայ ժողովրդին, հայ պատմութեանը, հայ բանաստեղծութեանը և մեր պատ-

մական ճակատագրին։ Դանտէ և Շէքսպիր չու-նենք, չենք ունեցել երբէք, չէինք էլ կարող ու-նենալ, բայց էլի անուններ ունենք, որոնք հին օրերում և նոր ժամանակներում խօսեցին մեր սրտից, մեր հոգուց, մեր ցաւերից և ուրախու-թիւնից, մեր փշոտ, արիւնոտ փառքերից, բայց հայ ժողովուրդը փարեց այդ անուններին, հաս-կացաւ նրանց։ Քանի հայ իր լեզուն դիտէ, ինչ-պէս որ պէտք է և կարող է իմանալ։

Գնացքը կանգ է առնում, հասել ենք Պօմպէյ և ես ցած եմ իջնում։

XXXI

Վեզուվի ստորոտումն եմ։ Երկու հազար տարի առաջ այստեղ մի չէն ու բազմամարդ քաղաք էր փռված, եռուն կեանքով, անսանձ վայելքներով, ճակատագիրն ու բնութիւնը հատուկ արտա-նող մարդկանց մի բազմութիւն։ Եւ այդ քաղաքն այլ ևս չը կայ. նրա տեղ բարձրանում են այժմ կանաչ բլուրներ, որոնք իրանց գեղեցիկ արտա-քինի տակ թագցնում են անգնահելից այնքան մարդ-կային վշտեր և ներկայացնում այնպիսի անորոշ տա-րաապի, որ վրանները քայլելն անգամ դժուար է. սրանք Պօմպէյի ամերակներն ու մոխրակոյտերն են։ Դժբաղդ քաղաքի մի փոքր մասը միայն բաց-ված է, ուր ամերակները, գերեզմաններից դուրս

քաշված կմախքների պէս, իրանց դատարկ խոռոչ-ներով նայում են երկնքին և կարծես հարցնում են՝ «ինչու՞»։

Տառապող մարդկութեան չրթունքներից կախ-ված յաւիտենական հարց, որի պատասխանը բնու-թեան գաղտնիքներից դերագոյնն է, բայց և այն-պէս մարդը անյագորէն վճռեցուցիչ լուծման հան-դէպ ըմբոստ՝ դարերից ի վեր չէ դադարում հար-ցընել՝ «ինչու՞», մանաւանդ՝ երբ մի նոր կատա-կլիզմ գալիս է նրան յիշեցնելու անխուսափելի կերպով նրա գլխին ծանրացած ցաւերի բաժինը։

«Ինչու՞»... Ընդան իր ժպտուն փիլիսոփայու-թեամբ Պօմպէյի մեծ կատաստրոֆից 18 դար յետոյ գտնում էր, որ այդ մահաբեր ձախորդութիւնը «մի անգնահատելի դիպուած էր հին աշխարհը ճանաչելու համար»։ Սարսափելի փիլիսոփայու-թիւն, սարսափելի դիտութիւն, որ կարող է հիմ-նըվել և ապրել այնքան հազար մարդկային էակ-ների անօրինակ դժբախտութեան վրա։ Տարա-բաղդաբար, առանց Ընդանի այդ մարդկայնօրէն խստասիրտ որոշման դէպի բնութեան և պատմա-կան անցեալի գաղտնիքները թեակոխող մարդը ստիպված է անընդհատ քայլել գոհերի միջից և ապագայ սերունդների յարաբերական երջանկու-թիւնը հաստատել բազմաթիւ կամաւոր, գիտակ-ցական և ակամայ ու անգիտակից գոհերի վրա։ Որքան թանկ է նստում մարդկային սեռի բնու-թիւնից խլած իւրաքանչիւր գաղտնիքը, իւրաքան-չիւր դիւտը։ Ցաւն ու արցունքը ասես կապված


են մարդկային ճակատագրին և բնութիւնը, անտարբեր դէպի իր ծոցում լսվող այնքան հառաչանքները, մեծամեծ կատակլիզմներով մղում է իր էվոլիւցիան դէպի անյայտը պատճառականութեան անողորմ, անխուսափելի օրէնքով։ Վեզուվը իր Պօմպէյով, Պըլէ լեան իր Սէն-Պիեռով լոկ վայրկեաններ են այդ էվոլիւցիայի պատմութեան մէջ և մարդկային ճակատագիրը նոյնքան տեղ է բռնում յարատև չարժուն, յարատև աւերող և ստեղծագործող բնութեան դիտումների մէջ—եթէ նա ունի դիտումներ—որքան այն չիկացած քարը, որ դուրս է չպրտվում վուլկանի կոկորդից, որքան մոխրի մանրամաղ փոշին, որ խեղդում է այնքան կենդանի էակներ։

Բայց թողնենք այդ հարցը, որի վրա մարդկութեան մեծագոյն խելքերը, Սոկրատից սկսած մինչև Կանտ և Հեգել, մաշել են իրանց մտաւոր կարողութիւնները մետաֆիզիքական սիսեմներ հնարելով և մենք անցնենք դիտելու այն՝ ինչ մըննացել է նախկին չէն և բարգաւաճ քաղաքից։

Վեզուվի այդ յայտնի հրաբխային ժայթքումը տեղի ունեցաւ 79 թ. ք. յ.։ Հռոմայեցի երկու նշանաւոր հեղինակների՝ Պլինիոս աւագ և Պլինիոս կրտսերի անունները կապված են Վեզուվի հետ։ Առաջինն իր ժամանակին յայտնի բնագէտ, հեղինակ մի «Բնական պատմութեան», զոհ գնաց Վուլկանին, իսկ երկրորդը՝ առաջինի եղբօրորդին, դրականագէտ, նկարագրեց այդ զարհուրելի բնական երևոյթը։ «Սեպտեմբերի 9-ին էր, ասում էր

Պլինիոս կրտսերը, մօտ ժամը 7-ին անսովոր մեծութեամբ և տարօրինակ ձևով մի ամպ բարձրացաւ հօրիզոնի վրա, տիեզերքը կարծես իր տեսքը փոխեց, երկիրը ծածկվեց մոխրի մի հաստ շերտով, ինչպէս ձիւն»։ Ահա այդ մոխիրն էր, որ անձրևից ցեխ դարձաւ և իր տակ թաղեց ամեն ինչ։ Միայն XVII-րդ դարի վերջերին Պօմպէյի հետքերը գտան և 1743-ին առաջին անգամ սկսեցին փորվածքներ կատարել, փողոցները մաքրել և աւերակները լոյս աշխարհ հանել։ Մինչև այժմ բացված է քաղաքի մօտ $^2/_5$ մասը և ահա այս բացված մասն է, որ ամեն օր հարիւրաւոր հետաքրքրքիրներ գնում են այցելելու։ Երկու ֆրանկ վճարով ճանապարհորդին ընկերանում է մի պաշտօնական առաջնորդ պէտք եղած բացատրութիւնները տալու և մանաւանդ ուղեկցելու համար։ Նախ այցելում ենք մի փոքրիկ միւզէ, ուր զետեղված են աւերակներից դուրս հանված առարկաներ։ Այստեղ մի երկար դահլիճում բարձր սեղանների վրա չարված են մարդկանց քարացած դիակներ միևնոյն դիրքերով, որով նրանք գտնված են աւերակների մէջ։ Մարմինը մնացել է ամբողջ, ինչպէս ծածկել է մոխիրը, իր չեփին մանրամասնութիւններով. մէկի վրա նկատվում է նոյն իսկ հռոմէական տոնը։ Երկու հազար տարի յետոյ անգամ դժուար է առանց խորին ցաւի նայել այդ կարծր զանգուածների վրա, որոնք մի ժամանակ կենդանի մարդիկ են եղել։ Թէև կարծվում է, որ հրաբխային մեծ ժայթքումների ժամանակ կենդանիները թուղնատուր

գաղերով խեղդվում են լաւայի և մոխրի թափվելուց առաջ, բայց և այնպէս համարեա աներկբայ է, որ այս խեղճերը մեռել են սոսկալի տանջանքների մէջ։ Ոմանք երեսի վրա ընկած՝ ասես դեռ գալարվում են ցաւից, թաղելով երեսները մոխիրների մէջ, որ չը տեսնեն բնութեան անասելի արհաւիրքը, կրակի մրրիկը. ուրիշները մէջքի վրա են ընկած և իրանց քարացած մատների եղունգներով ասես դեռ չանգռում, բզկտում են կրծքերը, դէմքերի վրա անասելի սարսափը յաւիտեան կնքված։ Այս մէկը ցաւով բռնել է իր կողքը, կարծես չարունակում է մռնչալ ցաւից. միւսն իր փորն է սղմում, երևի մեղմելու համար սպանիչ գալարները. ահա մի կին, որ յղութեան վերջին ամսում քար է կտրել արգանդի երեխայի հետ. այդ մարմինը, քարէ անչունչ այդ զանգուածը այժմ էլ անախորժ է նայել։ Մի չուն կայ, մի խեղճ, փոքրիկ չուն, որ կծիկ կծիկ է դարձել ցաւից, գալարվում է իր պոչի վրա, կրծոտում է իր թաթերը, իր սեփական միսը։ Սմբողջ պատկերը չափազանց յուզիչ է. դժուար է անտարբեր նայել մարդկային այս թէկուզ քարացած տանջանքին ու թշուառութեանը, որ դարերի միջից անցել է և մեզ հասել կարծես ասելու համար, թէ դիտէք արդեօք մոռացութեան և խաւարի մէջ քանի քանի միլիօններ են լալիս, կսկծում, չունչեր փչում՝ կուրծքը պատռող տանջանքների մէջ, այնպէս որ յաջորդ սերունդները կը կասկածեն անգամ նրանց գոյութեան մասին։ Ծանր զգացմունքով հեռանում



Պոմպէյ. Ամֆիթատրոն
(Տես էջ 270)

ենք միւզէից, թողնելով այնտեղ քար կտրած մարդկանց իրանց քար վէտերի հետ։

Այժմ Թափառում ենք Պօմպէյի աւերակներում։ Փողոցները լոլորն էլ ուղղահայեաց են ու նեղ, ինչպէս լինում են իտալական հին քաղաքների փողոցները և աւելին էլ պատած կոկ սալայատակով։ Մաշված սալերի վրա դեռ պարզ երևում են անիւների հետքերը։ Ինչպէս այժմ, փողոցների երկու կողմերում շարված են տները և խանութները, բոլորն էլ մի յարկանի։ Խանութների ճակատին քարի վրա փորագրված դեռ երևում է որ և է նշան, առևտուրի կամ պարապմունքի տեսակը։ Ինչպէս երևում է այդ ժամանակ խանութների տուեցանակները ոչ այլ ինչ էին, եթէ ոչ խորհրդանշաններ. այսպէս, գնդատան պատի վրա երևում է մի մեծ գալարուն օձ. քանդակագործը մի սիրուն մոզայիկ ունի դրան ճակատին, նշաններ ունեն հացավաճառը, գինեվաճառը. անգամ հասարակաց տներն իրանց առանձին խորհրդանշաններն ունեն, որոնցից մի քանիսը դեռ մնում են այդ շէնքերի դռների առաջ կամ պատերի վրա։

Մի քանի փողոցներում դեռ մնում են քարէ աւազանները զարդարված որ և է այլաբանական արձանով։ Այդ աւազաններից իւրաքանչիւրն իր առանձին անուն ունի, որով կոչվում է նաև այն փողոցը, ուր գտնվում է աւազանը։ Մի քանի փողոցներում դեռ երևում են ջրատար խողովակները արտյրից, որոնցով քաղաքին ջուր է մատակարարվել և տների փոքրիկ պարտէզները ջրվել։ Առան-

ձին ուշադրութիւն է դրաւում հայ ալաճաճի փու-
ռը, որը ճիշտ այնպէս է, ինչպէս այսօր. տարբե-
րութիւնը այն է, որ այժմ հայթուխն իր ալիւրը
առանում է հեռուից, իսկ այն ժամանակ ցորենն
աղացել են հէնց վոխ մօտ: Երկու մասիվ, կարծր
քարեր իրար վրա են հաղցրած չարժական ձևով
և վերինի կատարի բացուածքից ցորենը լցվել է ներ-
կուսի արանքը. տարուկներն են անասուններին պէս
դարձրել բարձրի քարը հատիկներն աղալու հա-
մար: Այժմ էլ այնտեղ են այդ տարատեսակ քարե-
րը և այնպէս ծանր կերպով իրար վրա նստած,
որ մի մարդ հազիւ է կարողանում մի փոքր չար-
ժել. որքան դառնութիւն, որքան մարդկային քըր-
տինք է արժեցել իւրաքանչիւր հացը: Հաւատացը-
նում են, որ այս հայթուխի մօտ գանվել է մօտ
80 քարացած հաց—որոնցից մի քանիսը ես տեսայ
միւզէում—և մի փոքրիկ խոշ փոխ մէջ: Գիւնևա-
ձառի խանութի չրջապատից հանվել են մեծ թուով
թրծած հողէ կարասներ, որոնք մօտաւորապէս
մեր երկրի կարասների ձևն ունեն:

Մասնաւոր տները, անգամ պատրիցիանները, խիտ փոքր են, տնապատճառ քառակուսի և հարթ կտուրներով: Հին հռոմայեցիք, ինչպէս և յոյները առհասարակ տներում երկար չէին մնում, նրանք օրվայ մեծ մասը անց էին կացնում դրսում, հրապարակներում, հասարակական վայրերում, թատրոններում, կրկէսներում և բաղանիքներում:

Հին ազատ մարդը տնի մայր սիտէի անդամ էր, քան ընտանիքի, նա տնի քաղաքին էր պատկանում, քան իր տանը: Եւ հասարակական չինութիւնները իրանց գեղեցկութեամբ, փառահեղութեամբ ու մեծութեամբ դեռ այսօր էլ զարմանք են չարժում: Դասական աշխարհի փառքը, ինչպէս և գեղեցկութիւնը կազմել են ոչ թէ մասնաւոր չինութիւնները, այլ միմիայն թատրոնները, տաճարները, ֆօրումը, դատարանները և այլն: Պօմպէյում ևս այդ չէնքերն առաջին տեղն են բռնում և նրանց այժմեան չնչին մնացորդներով անդամ կարելի է դաղափար կազմել անցեալ փայլի և մեծութեան մասին: Իւպիտեր, Ապոլլօն, Մերկուր, Վենուս իրանց առանձին տաճարներն ունեն. այդ չէնքերի միայն հիմքերն են մնում, գոհի սեղանները և սիւները. քաղաքի երկու մասերում կիսով չափ չէն դեռ բարձրանում են երկու ատադին թատրոնները: Սա հին սիտէն է, դասական ժամանակների փոքրիկ հայրենիքը, երբ իւրաքանչիւր քաղաք մի պետութիւն էր, անկախ ու ինքնակալ, իր առանձին կարգերով, օրէնքներով. իր առանձնութեան մէջ նա պէտք էր համարում ունենալ այն բոլորը՝ ինչ անհրաժեշտ է մի պետութեան համար, որ անկարօտութիւնը իրաւացի կերպով հիմունք է ընդունում իրական ազատութեան: Ինչպէս յունական առն մի փոքրիկ քաղաք մի Հոմ է եղել իր տաճարով, իր աստուածներով՝ Արամազդով, Մարսով ու Վենուսով, որոնք միւս քաղաքների նոյնանման աստուածների պէս պաշտպանում, հովանաւորում էին իրանց խնամքին ապաւինած սիտէն, ճիշտ այնպէս, ինչպէս մեր

զանազան ս. Գէորգները, ս. Սարգիսները, Տիրամերները։

Դեռ կանգուն են քանի մի յայտնի քաղաքացիների՝ ինչպէս Վիտալի, Մարկո-Օլկանիսի անները, որոնցից առաջինը մանաւանդ խիստ ուշագրաւ է և ահագին լոյս է սփռում այն ժամանակվայ ճարտարապետութեան, ընդհանրապէս քաղաքակրթութեան, ճաշակի և մանաւանդ սիրապետող բարոյական հասկացողութիւնների վրա, չնորհիւ պատերի վրա գտնված հետաքրքրիր նկարների, որոնց մասին կը գրեմ յաջորդ անգամ։ Ես նկարագրելի այդ անների ընդհանուր կազմուածքը, բաժանմունքները. կասեմ միայն, որ դրանք բոլորովին նման են հռոմէական անեերին. նոյն մանր քառակուսի, ցածր աննեակները, նոյն ատրիումը, նոյն վոքրիկ, արձանազարդ պարտէզը զով չարուտանով, քարեայ կամարակապ բաղնիքը և այլն, որ այնպէս գեղեցիկ կերպով նկարագրել է Սենկեվիչը իր «Յո երթաս» վէպում։ Այդ անեերում ամեն ինչ այնպէս է յարմարեցրած, որ կիրթ ճաշակը բաւականութիւն առանայ, հարաւի արեի կիզիչ չոզերից մարդ պաշտպանվել կարողանայ և որ գլխաւորն է՝ երջանիկ առնաէրը օրվայ իւրաքանչիւր ժամին և իր չափած ձևած կեանքին մի պատշաճաւոր անկիւն ունենայ իր սեփական յարկի տակ, եթէ դուրս գնալու կարիք չէ առնում։

Աւերակների մէջ մեր պատյալը տեսում է ժամեր. առաջնորդը վերջում մեզ ցոյց է տալիս մի քանի փակ գռների ներքը էրօտիկ արձանների և

նկարների կօլլեկցիաներ, որոնցով լիքն էին Պոմպէյի, ինչպէս և միւս քաղաքների անները. ապա դուրս ենք գնում, տանելով մեզ հետ այս տարօրինակ աւերակներից այնքան յիշողութիւններ, այնքան տպաւորութիւններ։ Դուրս գալով, ես ակամայ հայեացք եմ ձգում աւերակների գլխին բարձրացած այս Վեզուվի վրա, որ անդոզ ու անտարբեր դէպի իր ոտների տակ փռված աւերածը, չարունակում է քուլայ քուլայ ծուխ արձակել։ Աւերիչ և մահաբեր լեռը հեռու չէ և ես վճռում եմ անպատճառ բարձրանալ նրա կատարը, մօտիկից տեսնել նրա ահաւոր կրատերը, և եթէ հնարաւոր է մի քանի վայրկեան ապրել նրա տարերային գժութիւնների, նրա խոլ ուժերի աչխարհում, այն ծխի ամպերի մէջ։ Ինձ հաւատացնում են, որ ժամանակը յարմար է. վերելքը ձիուում է յաջորդ օրվան։

XXXII

Պոմպէյի մասին խօսելիս, ես դիտմամբ կանգ չառայ նրա չատ տները զարդարող որմանկարների վրա, որոնց նմուշները տեսել էի նաև Նէապօլի միւզէում։ Այդ նկարները իրանց առանձին բնաւորութեամբ՝ գլխաւորապէս էրօտիկ, հետաքրքիր խորհրդածութիւնների նիւթ են մատակարարում և մեծ լոյս են սփռում հեթանոս աչխարհի բա-

բոյական հակացուցմունքների վրա։ Բոլոր այդ նկարները համարեա զգայասիրական նիւթ ունեն. ոչ մի դաշտանկար, ոչ մի լեռ, անտառ, դետ, այլ միմիայն մերկ մարմիններ՝ բարքերի տեսակէտից ամենաքննադատորիչ պօզաներով։ Այցելուն պատերի վրա չարունակ տեսնում է Բաքոսը՝ խելագար, զգայական վայելքների մէջ, Սատիրը՝ ամօթխածութիւնից և մօրալի ժամանակակից պահանջներից խիստ հեռու վիճակում, Սրամազդն՝ իր սիրային արկածներով, Վենուսն ու Ասօլլօնը՝ պատչոտ ու մերկ զուարճութիւններով բռնված, Սրիանը՝ իր նազելի մարկուիզուհու։ Այս պատկերները երբեմն հասնում են այնպիսի բացութեան, որ ոչ միայն նկարագրելը, հապա նայելն անգամ անկարելի է դառնում. կանանց ամօթխածութիւնը խնայելու համար առաջնորդն ստիպված է լինում վարպետ պատրուակներով երկու սեռի այցելուներին բաժանել իրարից և միայն տղամարդկանց ներս տանել այս կամ այն տունը, կանանց խընդրելով՝ որ մի փոքր ղբօսնեն փողոցում։

Այս որմանկարներին նայելով՝ բարքերի սանձարձակութիւնն այնքան մեծ է եղել Պօմպէյում, որ զարմանալի չի լինի, եթէ մի իսկապէս բարեպաշտ, խստակրօն քրիստոնեայ հոգևորական այս աւերակներն այցելելուց յետոյ, բարձրանայ մի բլրի վրա և բացականչէ. «Ահա մի քաղաք, որ կործանվել է իր մեղքերի համար՝ ինչպէս Սոդոմն ու Գոմորը», ապա մի փառաւոր ու երկիւղած ժեստով անիծէ աւերակների ու մոխրի տակ թաղ-

վածներին, որոնք իրանց մեղքերի չնչին պատճառ են եղել գոնէ քանի մի արդուզների մահվան։ Եւ սուրբ հայրը կատարելապէս իրաւունք կունենայ, որովհետև քրիստոնեայ է և հին մարդկութեանը չէ պատկանում. բայց նրանից էլ ոչ պակաս իրաւունք ունեն և պօմպէյացիք, հին աշխարհը, որոնց համար այս նկարները անգամ իրանց առօրեայ կեանքում, իրանց զուարճասիրական հաճոյքի համար առաջնակարգ տեղ են բռնել և անհրաժեշտ նկատվել։ Բարոյական իրաւունք ունի քրիստոնեան, իրաւունք ունի և հին հեթանոսը. ահա մի բան երևոյթին ծանր դիլեմա, որի լուծումը պիտի փնտրել հին և նոր աշխարհների, հին և նոր մարդկութեան, հեթանոսութեան ու քրիստոնէութեան բարոյական հասկացողութիւնների, բարոյական փիլիսոփայութեան մէջ, երկու ժամանակների մարդու, նրա ըմբռնած՝ կեանքի նպատակին վերաբերեալ գաղափարների սուր հակասութեան մէջ։

Ճշմարիտ է, հռօմէական բարքերի անկման չըջանում, որին վերաբերում են անչուչտ և Պօմպէյի տեսարանները, հին աշխարհի մի ծայրից մինչև իչխում էր մի ընդհանուր և ամօթալի սանձարձակութիւն բարքերի. առաքինի և զգաստ կատօնները պատմութեան սեփականութիւնն էին արդէն. տիեզերքի կողոպուտով իր տունը լցնող հռօմայեցին իր մարմնական վայելքներից դուրս կեանքի այլ նպատակ չէր ճանաչում. պոռնկութիւնը ու ծայրահեղ անպարկեչտութիւնը նոր-

կանք էին առաջ բերում հնթանոս մտածողների, բարոյագէտների և մանաւորապէս ստոյիկների մէջ, բայց և այնպէս ապացուցված ճշմարտութիւն է, որ հների հասկացողութիւնը մօրալի հարցերում միանդամայն տարբերվում էր մերինից: Նրանք ղեպական վայելքները, մարմնի ամեն տեսակ պահանջներին ամենալայն չափով բաւականութիւն տալը ամենևին չանցանք, մեղք, ամօթ չէին համարում, այլ նոյնքան բնական, նոյնքան հասկանալի, որքան մեր հասկացողութեամբ ամենանաև բելի, ամենաբնական պահանջները:

Քրիստոնէական մօրալն, ի հարկէ, կը դատապարտէ բարոյական այսպիսի հասկացողութիւնները, անբարոյական և սիղծ կը համարէ հին հնթանոսներին. բայց նրանք էլ, այդ խեղճ հնթանոսները, ծիծաղից կը թուլանային, եթէ կարողանային աչքարհ գալ նորէն և տեսնել իրանց անիծող, բայց վայելքների այնքան սիրահար դէր կուսակրօններին, որոնք այսօր էլ գատապարտում են այն, ինչի համար իրանց սրտերի խորքերում մի կսկծեցուցիչ կարօտ ունեն, և երբ խաւարն օգնում է՝ ամենալայն չափով մղումն են տալիս մարդկային բնութեան հրամայող պահանջներին և ապա չարունակում են նոյն քարոզները. նրանք ստատիկ կամաչէին տեսնելով՝ որ նոր ժամանակի մարդիկ, քրիստոնեանները չատ անգամ հնթանոս մօրալի հետևողներ են իրանց ներքին կեանքում, բայց դրսում առանց ամաչելու դատապարտում

են իրանց գաղտնի գործողութիւնները՝ երբ կատարողը ուրիշն է:

Հին և նոր աշխարհների, քրիստոնէութեան ու հնթանոսութեան բարոյական հասկացողութիւնների այս հիմնական տարբերութեան մէջ որինն է իրաւունքը, այդ թողնենք, որովհետև իւրաքանչիւր վարդապետութիւն ևր տեղն ու իրաւունքն ունի. այնքանը պարզ է սակայն, որ դասական տարրի մարդը իր առողջ բարոյական հասկացողութիւններով, մարդկային բնութեան իր ըմբռնումներով—եթէ աբստրակցիա անենք մեր ժամանակակից բարոյական հասկացողութիւնները և խնդրին նայենք զուտ օբեկտիվ տեսակէտից—ամբողջ էր, բարոյապէս և փիզիկապէս աւելի կատարեալ ներդաշնակութիւն էր ներկայացնում, քան մարմինն արհամարող մի միստիկ քրիստոնեայ, որ բարոյապէս ապրում է հանդերձեալ կեանքի համար, իսկ փիզիկապէս համարեա չի էլ ապրում: Վերցրեք, օրինակ, մի յոյն երիտասարդ. յիշեցեք նրա դաստիարակութիւնը, այն ահագին խնամքը, որով զարգանում էր նրա մարմինը առանձին կողմից. կրթվում էր և հոգին և մարմինը միաժամանակ, բայց այնպէս, որ մէկը միւսի վրա չը բռնանար: Այդպէս կրթված երիտասարդը պիտի վազել, ցատկել, մրցել կրկէսներում, առանց նեղվելու կրկ ցուրտն ու տաքը, ի հարկին դիմանալ աւելի ծանր դժուարութիւնների: Նրա մարմինը զղեցիկ է, բարեձև. մասերը համաչափ, առնականօրէն զարգացած բայց օդում, պայծառ երկնքի

տակ, լայնարձակ հրապարակներում. բնականապէս նրանում զարգացած է մարմնի և նրա զեղեցիկ, պլաստիկ ձևերի կուլտը։ Եւ դրա հետ միասին նրա հոգեկան այժերի մչակումը, գաստիարակութիւնը յետ չէ մնացել. նրա զեղապիտական ճաշակը, սէր դէպի զեղարուեստը, դէպի առհասարակ զեղեցիկը, դէպի իդէալը ծայրագոյն աստիճանի է հասել. նա աչակերտում է Սոկրատեսին, Պլատոնին, Արիստոտէլին, պատրաստ է նրանց ետևից քաշ գալ երկրէ երկիր նրանց լսելու, նրանցից սովորելու, նրանց նմանվելու համար։ Սա մի կատարեալ մարդ է և վայելում է կեանքը, սիրում է կեանքը իր ամբողջութեամբ, ուսած և իր հոգեկան ու մարմնական ոչ մի ձիրք, ոչ մի յատկութեան չէ։ Նա վայելում է և ըմբռնում է կեանքը նրա ամենալայն հասկացողութեամբ, որովհետև նրանից դուրս ոչինչ չէ ճանաչում, ոչինչ չէ սպասում. նրա փոյթը չէ, թէ հանգերձեալ աշխարհն ինչ է պահում նրա համար, գժոխք թէ արքայութիւն, տանջանք թէ անվախճան երանութիւն. այդ բոլորը նա վերջացնում է այս աշխարհում և կնքում է իր փառաւոր ու լիքը գոյութիւնը։

Այսպէս է հին հեթանոս աշխարհը։

Քրիստոնէութիւնը եկաւ, բարոյական հին հասկացողութիւնները գլխի վայր գարձրեց, որովհետև հին աշխարհի անկման չրջանում բարքերի սանձարձակութիւնը ծայրահեղութեան էր հասցրած. նոր վարդապետութիւնը իրերի բնական, տրամաբանական ընթացքով հանդիսացաւ բուռն հակահարուած տիրապետող գաղափարների դէմ և ընկաւ նոր ծայրահեղութեան մէջ։ Նա մարմնացած անցաւոր վայելքները հռչակեց մահացու մեղք և ս. Գրքի չատ անդամ անպարկեշտ պատմութիւնները, սեմական ցեղին յատուկ բնորոշ զգայական կեանքը ներկայացնող տեսարանները բացատրեց այլաբանօրէն։ Աչխարհային վայելքների տեղ նա խոստացաւ յաւիտենական երանութիւն. մարմինը իր գարաւոր իշխանութիւնից գահավէժ ընկաւ անհանդիստ ու մռայլ հոգու ոտների տակ և չտապկց ամօթի թանձր քողով և մեղքի պատանով ծածկել իր մերկութիւնը. երկնային երևակայական զեղեցկութիւնը բռնեց իրականի, առարկայականի տեղ։ Մարդկութիւնը, մռայլ ու տխուր, գագարեց ժպտալ, գլուխը քաչ գցեց, ճակատը կնճռեց և սկսեց կուրծքը ծեծել իր գործած և չը գործած յանցանքների համար. չէ որ ս. Գիրքն ասում էր, որ նա գեռ չը ծնված մեղաւոր էր, որովհետև մեղքով է յղացվել։ Միջին գարերն իրանց միսթիցիզմով, վանքերի խաւարում հիւծված ուղեղներն իրանց կրօնական առասպելներով ու հիւանդոտ զառանցանքներով կապարի պէս իջան հեթանոս մարի վերջին չողերի վրա, և մարդկութիւնը ինչպէս հազիւ չնչող մի հիւանդ մարմին կրօնական չղաձգութիւններով ցնցվեց, ասղաց ամբողջ գարեր մինչև վրա հասաւ վերածնութիւնը։

Ուչադրութեան արժանի մի հանգամանք է, որ վերածնութեան սմենասիալուն չրջանում, երբ

դասական միտքը, դասական գեղարուեստը, փիլիսոփայութիւնը եկան քանդելու միջնադարեան խաւար հասկացողութիւնների մղած բորբոնած չէնքը, կեանքը՝ քրիստոնէական ծիրանին վրան պահելով հանգերձ, հեթանոս ոգի և ձգտումներ ունէր։ Մարմնի կուլտը, գեղեցիկը նորէն սրբադործվեց, այդ գարի մեծ վարպետները մի-մի կատարեալ հեթանոսներ են հանդիսանում իրանց ընտրած սիւժէաներով, իրանց բարոյական փիլիսոփայութեամբ, որ առանց քաշվելու արտայայտեցին ամենաազդու չէշտով այնքան պլուս դորձոցների մէջ։

Բարոյական հասկացողութիւնները անչուշտ յարաբերական են իւրաքանչիւր ժամանակի, ինչպէս և ժողովրդի համար։ Սակն մի գար գալիս է իր բաժինը բերելու հնի վրա կամ իսպառ կերպարանափոխելու այն։ Մինչև այժմ մարդկութեան մեծագոյն խելքերը չանքեր են արել՝ տալ աշխարհին այնպիսի բարոյական օրէնքներ, որոնք բղխելով բնական օրէնքներից՝ անպայման պարտադիր լինէին բոլոր ժողովուրդների և բոլոր ժամանակների համար. այդ չանքերը ստեղծել են բազմաթիւ փիլիսոփայական սիստեմներ առանց պակսելու կատարեալ յաջողութեամբ։ Մօրալի այդ անընդհատ էվոլիւցիայի մէջ հիմնաւորը և ամեն յարատեւողը այն բարոյական գաղափարներն են եղել միշտ, որոնք չափից դուրս կոչտութեամբ չեն խանգարել, չեն այլանդակել մարդկային բնութիւնը, որոնք սուր հակասութեան մէջ չեն դրել հո-

գին ու մարմինը, որոնք այնպէս սերտ չաղկապված են, որ մէկի թերութիւնը ճակատագրական անդրադառնում է միսի վրա իր բոլոր ցաւալի հետևանքներով. ապացոյց միջնադարեան կիսակատարեալ, դիւահար կրօնական միաբանութիւնները, խաչակրաց արշաւանքները կազմակերպող գալիւցինացիայով բռնված խառնիճաղանճ ամբոխը, կրօնական հալածանքների հիւանդոտ հեղինակները և նրանց թափել տուած այնքան անօգուտ արիւնն ու արցունքը։ Քրիստոնէութեան նեղ, տգէտ ըմբռնումը միշտ ամենաարատաւոր հետևանքներ է ունեցել ընտանեկան և հասարակական կեանքում, անհատական և ազգայնական յարաբերութիւնների չրջանում։ Ուշադրութեամբ դիտելով ժամանակակից կեանքը, ժամանակակից քաղաքակրթութիւնը, որի մէջ այնքան խոշոր բաժին ունի վերածնութիւնը՝ մարդ նկատում է, որ հեթանոս միտքը բարոյական հասկացողութիւնների որոշ չրջանում իրապէս իշխող է դեռ. նոյն իսկ մարմնի կրթութիւնը, նրա փիզիկական դաստիարակութիւնը, որ այնպէս յատուկ էր հին յոյնին՝ այսօր չատ քաղաքակիրթ հասարակութիւնների համար կենսական պահանջ է նկատվում։ Այսպէս, ինչ որ անում էր հին յոյնն ու հռոմայեցին, մեր ժամանակներում տարբեր եղանակով, տարբեր պայմաններում և տարբեր հասկացողութեամբ կատարում է անպիսի երիտասարդը, այդ առողջ կենսունակ սերունդը, որի կամքի հաստատութիւնը, քաղաքական առաքինութիւնները, անհատական ձեռ-

ներէցութեան յանգուցն ոչին կարող են օրինակ ծառայել դուցէ չատ ազգերի երիտասարդներին։

XXXIII

Մի խումբ ճանապարհորդների ընկերակցութեամբ այսօր Վեզուվի կատարը բարձրանալու եմ գնում հրաբուղիը դիտելու համար։ Վաղ առաւօտ է։ Երեկ երեկոյ մի անձրեւ փորձ արինք չնորհիւ մեր առաջնորդների. երկինքում խիտ ամպեր կային, Վեզուվը համարեա ծածկված էր, բայց առաջնորդները մեզ հաւատացրին, թէ այդ ամպերն անձրեւաբեր չեն և թէ չուտով եղանակը կը պարզվի, իրանք ծանօթ են երկրի կլիմային։ Հաւատ ընծայեցինք և ճանապարհի կէսից սպիտակած եղանք վերադառնալ լաւ թրջված։ Ո՜հ, այս առաջնորդները...

Այս առաւօտ Վեզուվի կապոյտ մասնան ծրագրվում է պարզ հորիզոնի վրա. ամպերի մի հատիկ կարաւան պատմաններ է գործում նրա կատարի չուրջը, որանցից քուլայ-քուլայ բարձրացող ծուխն այսօր աւելի թանձր է և աւելի առատ։ Մեզ հաւատացնում են, որ կրատերն այսօր չատ հեռաւորքրիր պիտի լինի, որովհետև գործում է անսովոր եղանակով։ Մենք չատապում ենք։

Ճանապարհի մի մասն անցնում ենք կառքով։ Տօրր-Անունցեատա փոքրիկ քաղաքում, որ յայտնի

է մակարօնիի գործարաններով, մանուկները ահագին խմբեր վազում են մեր յետևից «սօլդօ, սինիօրէ» ճչալով. այս իտալական քաղաքներում մանուկների խմբերն իրօք ձանձրալի են դառնում իրանց անվերջ «սօլդօներով»։ Շուտով հասնում ենք մի փոքրիկ գիւղ, Վեզուվի սաորատների վրա, Բօսկօտրեկազա, ուր մեր կառքերը փոխանակում ենք ձիերի։ Հետաքրքիր գիւղ է այս Բօսկօտրեկազան. կարծես քնակիչներն այստեղ ուրիշ պատմունք չունեն, բայց եթէ սպասել Վեզուվ բարձրացող ճանապարհորդներին, նրանց որ և է ծառայութիւն առաջարկել մի կերպ չահվելու համար։ Մօտ 7—8 առողջակազմ երիտասարդներ առանց հրաւէր ստանալու չտապում են թամբել մեր ձիերը, երեխաները ծպիլիներ են ճարում և վազվազ բերում մեզ առաջարկում և ձեռք մեկնում. ճարվեց նաև մի չարաճճին, որ դուրս բերեց մի խողանակ և բոլոր եռանդով սկսեց մեր կօշիկների և չորերի փոշին սրբել, գտնելով որ մենք խիստ փոչոտ ենք, կարծէք թէ անչարմար լինէր Վեզուվի կատարը բարձրանալ փոչոտ կօշիկներով և չոքերով։ Դրամ չորթելու բոլոր միջոցները, որոնց դիմում են այս խեղճերը, նկարագրել անհնարին է. եթէ չատ սիրալի չը լինէր ամեն մի երեսյթ, որ ստորացնում է մարդկային էակին իր նմանի առաջ, այս մանուկների և այս դատարկապորտ մեծերի արածները կարող էին խիստ ծիծաղելի լինել։ Բայց անկարելի է առանց ցաւի նայել չուրջդ պատյա պատյա անող այս սիրուն, խելօք աչքերով, ան

մազերով, բայց եռանդուն դէմքով երեխաներին, որոնք մուրացկանութեան, ուղեկանութեան ամենատարաձայնիչ ձևերը գիտեն արդէն։ Զայրոյթ են յարուցանում մեծերը, այս աննկուն երիտասարդները, որոնցից 5—6 հոգի մի ձի է թամբում, և տասը միասին չը կատարած, չը խնդրած աչխատանքի համար «պուրբուար» են ուզում (նավօդկի)։ Ամենամեծ անհնարին է, սոխալած ես տալ մի քանի սուր։ Ես երբէք չեմ կարող մոռանալ այդ երիտասարդներից մանուանդ մէկին, որ ձի նստելու բօպէին հասաւ, մեզ մօտեցաւ և պահանջում էր ոչ աւել, ոչ պակաս, ուղիղ մի ֆրանկ. ծիծաղս եկաւ և հետաքրքրվեցի իմանալ, թէ նա ինչ ծառայութեան համար է պահանջում։ Պատասխանի փոխարէն նա նայեց ձիուն, թամբին, սանձին, ասպանդակներին և չը կարողացաւ պատշաճաւոր պատասխան գտնել. չրջապատողները հռհռացին նրա չփոթութեան վրա, իսկ մենք քշեցինք ձիերը և արագաւ հեռացանք վերջապէս ազատվելու համար։

Բօսկօտրեկազայից բարձրանում ենք ձիերով, իսկ առաջնորդները, որոնք պիտի ընկերանան մեզ մինչև կատարը, հետևում են ոտքով։ Ճանապարհը սիրուն է, երկու կողմը այգիներ ու կիտրօնի և նարինջի ծառերը կռացել են իրանց գեղին պտուղների ծանրութեան տակ և չոգ երկրում մի առանձին հաճոյք են պատճառում իրանց զովացուցիչ տեսքով։ Այդ խիտ ու խիտ իրար կողքի չարված ծառերի պատկերն այնքան գրաւիչ է, որ բոլոր

ժամանակ լուռ ու սառն անպլիացին մի անգամ մեկնում է իր երկայն մատը, ցոյց է տալիս կիտրօնի ծառերը և անյոյզ դէմքի վրա բաւականութիւն և թեթև զարմանք արտայայտող գծեր է չինում։

Ափսոս, սակայն, որ այս հետաքրքիր երկրում չկ մի էսթետիկական վայելք չէ կարելի ունենալ առանց բազմաթիւ անախորժութիւնների։ Այգիների, փողոցների երկարութեամբ նստոտած են բազմաթիւ հաչմանդամներ, կաղեր, գօսացածներ, խեղաթիւրված՝ ծռմռված մարմինների մի ամբողջ չարք։ Հետևից օտարականին նչմարելով, նրանք չարժվում, իրար են անցնում, չխչխկացնում են իրանց երկայն ձեռնափայտերը, ճչում են, աղերսում են և օդի մէջ են բարձրացնում մի գալարված ու կապտած ձեռք, մի կտրած բութ, ոտք, կամ քայքայված մարմնի այլ նողկալի այլանդակութիւն։ Եւ անախորժ, և ցաւալի է այդ բոլորը։

Այժմ քայլում ենք վեզուվի փէչերի վրա՝ լաւայով պատած զառիվայր ճանապարհով. սա վուլկանի թագաւորութիւնն է։ Հազուագիւտ բոյսերը լաւայի կարմիր զանգուածի մէջ կուռած են, մուրացկանի խեղճութիւնն ունեն և կարծես թողութիւն են հայցում խստասիրտ բնութիւնից, որ համարձակվել են աճել այստեղ։ Մեր ձիերը քայլում են մի նեղ փոչոտ արահետով, որի երկու կողմում, ինչպէս ցանկապատ, չարված են լաւայի անձև, այլանդակ կտորներ։ Զանազան ժամանակներում տեղի ունեցած հրաբխային ժայթքումը ցած է մղել լաւայի ահագին հոսանքներ, որոնք իրանց

աւերիչ ընթացքում կեանքերը լիզելով իջել են դէպի հարթավայրը և այս ու այնտեղ սառել են, մնացել։ Վեզուվի սառոյան այսպիսով դարերի ընթացքում վերածվել է մի սև հրաբխային ծովի, ուր ալիքները իրանց բոլոր թափի մէջ զանազան ձևերով սառել են և քար կտրել ընդ միշտ։

Սառոյանները կամաց կամաց աւելի զառիվայր են դառնում և մեր ձիերն աւելի և աւելի դժուարութեամբ են բարձրանում։ Յանկարծ նկատում ենք, որ բացի մեր վարձած առաջնորդներից ուրիշ մի քանի հոգի՝ կասկածելի արտաքինով մարդիկ, մեզ ընկերացել են, քայլում են մեր յետևից, կախում են այս կամ այն ձիու պոչից զառիվայրի վերելքը հեչտացնելու համար և խեղճ կենդանիները քայլել չեն կարողանում։ Պահանջում ենք, որ ազատ ձգեն ձիու պոչերն ու վերադառնան, որովհետև մենք մեր առաջնորդներից դուրս ուրիշ մարդու կարիք չունենք։ Նրանք պատասխանում են, որ իրանց սովորական գործով են գնում և ոչ մեզ համար, թէ «աթոռակիրներ են», (les porteur des chaises), այսինքն աթոռներով Վեզուվի կատարը ճանապարհորդ բարձրացնողներ, իսկ եթէ ձիերի պոչից բռնում են, այդ միայն մեր սովորական բարիքի համար է, որովհետև հաւատացնում են նրանք, իտալական ձիերն առանց այդ գործողութեան արագ չեն գնայ։ Շատ միամիտ պիտի լինի ճանապարհորդը հաւատալու համար, թէ զառիվայրը բարձրանալիս, անհրաժեշտ է ձիու պոչից կախվել, ուստի առաջարկում ենք ազատել մեզ

իրանց այդ բարեմիտ օգնութիւնից և անօգուտ տեղը չը գայրացնել։ Նրանք համաձայնում են և ինչ... պահանջում են գոնէ մի մի ֆրանկ մինչև լեռնալանջը մեր խեղճ ու վատոյժ ձիերի պոչից կախված լինելու համար։ Սա արդէն չափազանց է, մեր գայրոյթը գագաթնակէտին է հասնում, և վրդովմունքով թողնում ենք և հեռանում, անարգելով այդ ասպիճան բիրտ և անլուրս խաբեբայութիւնը։ Խեղճ ձիեր. նրանք քայլում են այժմ աւելի հեչտութեամբ և հնար ունեն իրանց պոչերով պաշտպանվել բազմաթիւ մոծակներից։

Ահա լերան այն մասը, որտեղից զառիվայրը դառնում է համարեա ուղղաձիգ։ Թողնում ենք ձիերն այստեղ սառոյտում, մի մի երկայն լեռնային ձեռնափայտ ենք վերցնում և սկսում վեր երթել։ Արահետ չը կայ և ոչ էլ կեռմաններ. քայլում ենք հոսանուտ աւազի մէջ, բարձրանում ենք ծայրահեղ դժուարութեամբ, ամեն երկու քայլից յետոյ մի քայլ յետ ենք ընկնում, երբեմն ծնկների վրա գալիս թանձր աւազի մէջ, որի մէջ թաղված են մեր սրունքները և այսպէս անվերջ։ Վերան վրա՝ այստեղ, այնտեղ, մի քարի վրա, մի թմբի ծայրին երևում են իտալացիներ. նրանք մէկ-մէկ, երկ-երկու նստած, կամ ծոյլ ծոյլ պառկած, ծխում են անընդհատ։ Ճանապարհորդներին տեսնելով նրանցից մի քանի հոգի չտապով ցած են սողում աւազի վրայով, հանդում են մեզ և առաջարկում են պարաններ, որոնցից մենք պիտի կախվենք, իսկ տէրերը մեզ պիտի քաշեն ու այսպէս բարձրա-

նանք։ Ծանր ու անախորժ մի առաջարկութիւն թէ մեզ համար և թէ իրանց. աւելի լաւ է սողալով բարձրանալ, քան թէ օգտվել այդպիսի ծառայութիւնից։ Հրաժարվում ենք և չարունակում դժոխային վերելքը, մերթ ընկնելով, մերթ բարձրանալով թանձր ու հոսող աւազի մէջ։

Երբեմն երբեմն լսվում է ահագին որոտ, որից ամբողջ լեռը թնդում է և նրա հետ միասին մեր գլխի վերևը ծխի ոլորտը բարձրանում է, հա բարձրանում։ Բանի վեր ենք ելնում, այնքան աւելի են տաքանում քարերն ու աւազը մեր ոտների տակ։ Ձեռքուածքներ կան, որտեղից տաք գոլորշի է փչում, ձեռք մօտեցնել չի լինում։ Կատարին մօտիկ գոլորշի չնչող այդ բացուածքներն այնքան չատանում են, որ լեռը հազար բերանով մի հրէշի նման կարծես նստած հևում է։

Մի ժամից աւելի է, որ քայլում ենք։ Հասնում ենք վերջապէս այնտեղ, որից բարձր, դէպի կրատերը գնալ չէ կարելի առանց պետութեան կարգած և տեղին ծանօթ առաջնորդների, որոնք թեով մօտ քառասուն, կատարի շուրջը չղթայ են կազմել։ Նրանց ծառայութիւնից օգտուելու համար պէտք է վճարել մարդագլուխ չորս ֆրանկ։ Կատարում ենք և այդ պահանջը։ Այժմ մեր առջևն է իսկական կատարը, ծծումբով պատած և գոլորշի չնչող մի հսկայական կօնուս, որ կարծես արուեստական ձևով է դրված լերան մէջքին։ Այստեղ վերելքն աւելի ևս դժուար է, զառիվայրը համարեա ուղղաձիգ է պատի պէս։ Մեր վարձած առաջնորդները մնում են ներքև, իսկ մեզ ընկերանում է մի պաշտօնական առաջնորդ դէպի կատարը։ Մարդը հաւատացնում է, թէ լաւ օր ենք ընտրել, որովհետև հրաբուղիսը գործում է անսովոր այժմ։ Բայլում ենք ծծմբի միջից, խոնաւ ու տաք հողի մէջ թաղված մինչև սրունքները։ Տաք գոլորշու ամպը մեր ոտների ներքև և մեր գլխի վերև այլանդակօրէն պտոյտներ է անում, երբեմն մեզ խլացուցիչ ծածկում, ծծմբահոտով մեր քթերը լցնելով և երբեմն քամու չընչով ցրիւ է գալիս՝ հեռանում։ Որոտմունքն այստեղ դառնում է խլացուցիչ, ասես հարիւրաւոր թնդանօթներ են արձակում մեզանից մօտիկ, մեր ոտների տակ լեռը դողում է ահագին դրնդիւնով, այդ ձայնը մեզ և՛ վախեցնում է և զբաւում։ Մենք չտապում ենք։

Ահա և կրատերը։

XXXIV

Սաորերկրեայ մի աներևոյթ այժ մի խելագար մօմենտում, հսկայական զառանցանքի մի օրում, մի զարհուրելի օրում, որի յիշատակը կորել է դարերի մէջ անհետ, երկունքի խօլական թափով դէպի վեր է չպրտել լերան ամբողջ կատարը և նրա տեղ բացել է մի ահագին ակաւառակ, մի անդունդ, մի վիհ, ուչ, մի գժոխք։ Մենք կանգնել ենք այժմ այդ անդունդի չրթին և ցած ենք նայում

այնտեղ, ուր, չը գիտես ինչու, երկիրը պատռտում է իր արգանդը և կատր-կատր դուրս է չպրտում դեպի անհունը։ Ծծմբի թանձր ծուխը և գոլորշին բռնել են այդ ժժռոտին վիհը։ Ոչինչ չէ երևում, բայց լսում են այնպիսի՝ ձայներ, որոնցից մարդու էութիւնն ամբողջապէս սասանվում է։ Ասես մի ահռելատղոր ջրվէժ է, որ գահավիժվում է լեռան կատարից, կատաղի առիւծներ՝ որոնք մռնչում են, մի փոթորիկ՝ որ ոռնում է, մի լեռ՝ որ փուլ է գալիս, կաղկանձող գազաններ, սրտաճաք լացողների ձիչեր, եռուն կաթսաներ, ճարճատիւն, չռաչիւն, չաչիւն, դրնդիւն, և այս ամենը մերթ իրար խառնված, միաժամանակ, մերթ իրար ետևից, բարձր ու ցածր, մերթ խուլ, մերթ սուր կերպով՝ գալարվում են, վեր բարձրանում արգանդից դէպի կատարը, ապա կրկին խորտակվում և դնում անդունդները։

Երբեմն քամին փչում է դէպի մեզ, ծծումբը իր սուր հոտով լցնում է մեր աչքերն ու ռունդները. մի վայրկեան կորչում ենք ամպերի մէջ, հաղում ենք սաստիկ. ապա խեղդող ամպն անցնում է քամու թափով, և գարձեալ երկիւղով կըռացած, աչքերս չռած՝ վայր ենք նայում, որտեղից լսում են ձայները։ Ոչինչ չէ երևում։ Մութ է այնտեղ. ծխի ու գոլորշու ամպերը հաղար ու մի այլանդակ, հրէշաւոր ձևերով, ինչպէս մի անասելի մրրիկով մղված՝ պատյաններ են գործում այդ խաւար տարածութիւնի մէջ, անդունդների վրա, դիպչում են պատերին, տեղ են փնտռում փախչելու, երկնքում ապաստան փնտռելու, կարծես սոսկում են իրանցից ներքև կատարվածից։ Սակայն ամպերը փախչել ազատվել չեն կարողանում, իրանց ճիւղերի մէջ գալարվում, ոլորվում են հազար ու մի ձևերով և չարունակում են ծածկել այդ անդունդի բերանը, որի տակ, խորքից, չատ խորքից, մեր ոտների տակ, լսվում է մի խուլ դրնդիւն. լեռը դողում է, անքում է ցաւով. սաոր-երկրեայ հարուածներն ահագին են. իսկ մենք բռնված ենք սոսկումով։

Այդ աղմուկից, գոռում-գոչումից, սաոր-երկրեայ որոտմունքից չատ աւելի ճնշող, սասանեցուցիչ է երբեմն վրա հասնող լռութիւնը. դա տեսում է միայն մի վայրկեան, որի ընթացքում մարդ չունչը բռնած, բերանաբաց ամբողջապէս լսողութիւն դարձած՝ սպասում է, թէ ինչ մի աներևակայելի բան, մի ոչնչացնող որոտմունք պիտի լսէ, և սկսվում է... յանկարծ իրար հետից այնպիսի ձայներ, այնպիսի գղրդիւն, որ ծնկները ծալվում են, գողում, և մարդ ջնջված ու եթերացած կորչում է՝ չը գիտես ուր։ Փոսի անթափանցիկ խաւարն էլ աւելի սասակացնում է անդունդների սարսափը. զգում ես, որ այնտեղ, այն մութ ու ալեկոծ քաոի տակ կատարվում է մի աննկարագրելի, մի անասելի բան, որ տարերքը աւերածի և ոչնչութեան այդ խոլական երգով խօսում է մի անյայտ ու զարհուրելի բանից. նայում ես իմանալու համար, թէ ինչն է հնում, ճչում, ոռնում, լալիս այդ դժոխքում. նայում ես, ոչինչ չես տեսնում, և միայն

խաւարն է տակն ու վրա լինում, նրա սև ծալքերն են փռվում առաջդ և հոգիդ պատում անորոշ երկիւղի խեղդող զգայմունքով։

Քամին սաստկացաւ. նրա մի ուժեղ պոյտը, չը գիտես ինչպէս, կատարից ներս ընկաւ այն ահագին բացուածքի մէջ, ուր կատարվում է քնութեան ոյժերի պայքարը, նրա աւերիչ խենդութիւնը։ Քամին իրար խառնեց այդ ահագին սկաւառակի մէջ խաւարի ծոցում գալարվող ամպերը, որոնք աւելի կատաղաբար ու արագութեամբ սկսեցին սաւառնել անդունդների վրա, ձայներն ու որոտը դարձան աննկարագրելի և յանկարծ, կարծես կապանքներից ազատված՝ դուրս թռան այդ դժոխքից, սլացան դէպի լայնարձակ կապուտակը.—ամբողջ սկաւառակը բացվեց մեր առաջ։ Այժմ տեսարանը վեհօրէն ահռելի է. մենք տեսնում ենք նրա խոնաւ, լպրծուն և ծծումբի բաց չերտով ծածկված պատերը. բոլորովին ներքև, խորութեան մէջ, երևում են երկու ահագին հրաբխային բերաններ, որպէս երկու վառված հսկայական թոնիրներ։ Ստորերկրեայ մի հրային մրրիկ է խաղում այնտեղ, և նրա թափով բոցերը մեծամեծ խուրձերով դուրս են ձգվում բարձր, բարձր, և թանձր ծխի ոլորների հետ խառնված. իսկ նրանց հետ միասին չիկացած, կրակ կտրած մեծ ու փոքր քարեր ձըգվում են չեզոքակի թափով, ուղղահայեաց դէպի վեր, վզվզում են, չվչում, չաչում են՝ ինչպէս փոթորկի առաջ հեծող ծառեր, և ապա պոյտներ գործելով ընկնում են կամ բացուածքի չրթներին,

կամ հէնց նոյն անցքի մէջ, որտեղից մի վայրկեան առաջ դուրս ընկան։ Բայց անդունդներում գործող փոթորիկը նրանց այնտեղ հանգիստ չէ տալիս, կրկին դուրս է շպրտում նոյն թափով, նոյն որոտով, նոյն ուղղութեամբ, և այսպէս անվերջ։

—Քարերը մեր գլխին ընկնել չեն կարող, հարցնում ենք մեր առաջնորդին։

—Ոչ, պատասխանում է նա, քամին հակառակ կողմն է փչում։

Բաւական անհասկանալի պատասխան, կամ խիստ վտանգաւոր կացութիւն, եթէ միայն մեր ապահովութիւնը կախված է միայն քամու ուղղութիւնից, որի փոխվելը վայրկեանի գործ է։

—Այստեղ կրատերի մէջ անցեալ տարի մի անգլիացի երիտասարդ ընկաւ, չարունակում է առաջնորդը. բայց նա կտացել էր աւելի լաւ տեսնելու համար. կարծիք կայ նոյն-իսկ, որ քար է ընկել գլխին և գլորվել է անդունդները. բայց այժմ, հաւատացնում եմ ձեզ, պարոններ, ոչ մի վտա...

Մենք էլ չենք լսում առաջնորդին. կատաղի որոտն ու բոցերը վերսկսվում են. քարերը փոքրանում են մեր գլխից բարձր, լուռը դղրդում է, քամին սաստկանում է, և կարծէք հողը փախչում է մեր ոտների տակից, ամենքս էլ չփոթված ենք։

Ես տեսել եմ Հաենոսի ջրվէժը իր փըփուրների դէղերով, իր անկման վեհութեան մէջ, իր ալիքների անասելի մռունչով, իր բազմազան աղմուկով, որից մարդու հոգին է դողում։ Ես տեսել եմ լայնարձակ ծովը փոթորկի ժամին, երբ ալիքները

ամեհի նժոյգների պէս իրար վրա ծառանալով՝ ժամռացող բլուրներ են կազմել, որոնց վրա ահագին նաւը տարուբերվել, խաղացել է տաչեղի պէս։ Ես տեսել եմ վարարած գետը իր ափերի և կամաղութեան բոլոր սարսափով ու վհուկթեամբ։ Բայց այս բոլորը ոչինչ են Վեզուվի կրատերի առաջ, նրա մռնչոցի, նրա գղրդիւնի առաջ. նրա գործած ապաւորութիւնը նման ոչինչ չունի աշխարհում։ Բնութեան այս խաղը, այս բոցերի, այս քարերի, ծխի զարմանալի ժխորը դուրս է մարդկային երեւակայութիւնից, և մեր լեզուն երբեք, երբեք չը պիտի կարողանայ արտայայտել այն՝ ինչ զգում է մարդն այդ ահռելիչ պատկերի առաջ, այդ խլացուցիչ որոտի տակ։ Ի՞նչպէս արտայայտեմ զգացածս։ Այստեղ, այս բարձրում կանգնած, այս որոտմունքի և ցնցումների մէջ, թւում է, թէ մարդ մի չը տեսնված փոթորկի ժամին կանգնել է ճայթող ամպերի, չանթի և կայծակների վրա, խառնվել է նրանց հետ, տարվում է նրանց թափով, ինքն էլ մի մասն է երկնային մրրկի։ Ակնարկ և ներկայ վտանգի հանդէպ՝ մի կողմից մարդու մէջ ապրելու պահանջը մեծանում է անսահման չափերով և միւս կողմից սարսափի հաճոյքը բռնում է սիրտը, և այս երկու զգացմունքները հրէշաւոր չափերի հասած՝ բաղխվում են իրար, հոգին փոթորկում. նա ուզում է և՛ փախչել և՛ մնալ յաւիտեան իր տեղում մեխված։ Ներքեւում եռացող անդունդին երկար նայելիս՝ մարդ զղում է և միեւնոյն ժամանակ անյաղթելի պա-

հանջ զգում վայր նետվել այնտեղ, այդ կրակէ մրրկի ոլորանների մէջ, կատաղած տարերքին խառնվել, որը կարծես իր մասն է, իր համար է ոռնում այն դժոխքում։ Եւ այդ ժամանակ, առանց ինքն իրան հաչիւ տալու, կպչում է իր հարեւանի կողքին, բռնում է նրա ձեռքը և բոլոր ուժով սըղմում է, կարծես ոսկորները փչրելու համար։ Գեթագոյն վտանգի առաջ ինքնապաշտպանութեան բնազդից դրդված ապրել ուզող կենդանին ձգվում է դէպի իր նմանը և օգնութիւն հայցում։

Ասում են, որ երկիւղի և մանաւանդ անորոշ ու խորհրդաւոր երկիւղի ազդիւրը տգիտութիւնն է. անյայտն ու խաւարը սարսափի մայրն են. այդ ճիշտ է. բայց այստեղ, հրաբխային այս լեռան դժոխքիններների առաջ, մարդկային բանականութիւնն ու գիտութիւնը պապանձվում են, գլուխը դադարում է գործելուց։ Ի՞նչ գիտէ եթէ գիտես, որ երկրի արգանդում գործող ոյժերն են այս բոլորի պատճառը. դրանով սարսափը մաղի չափ չէ թուլանում, մարդ-կենդանին չարունակում է դողալ իր կեանքի համար, չարունակում է օրօրվել ոչնչութեան և մահի երաշտներում։ Այս որոտմունքի, ճայթիւնների, գղրդիւնների և բոցերի առաջ, այս ոռնացող անդունդի ափին մարդ այնքան փոքրանում է իր կանգնած տեղում, որ կարելի է ասել, թէ ոչնչանում, մոխիր է դառնում։ Այստեղ մարդ զգում է, թէ ինքը մինչև որ աստիճան չընչին է ստեղծագործութեան մեծ պրօցէսի մէջ, զգում է, որ բնութեան, նրա թագնված ան-

սանձ այժերի առաջ ինքը մի ողորմելի հիւղէ է իր բոլոր յաւակնոտ բանականութեամբ, իշխելու, տիրապետելու, ընկճելու իր յարատև ու յամառ տենչով։

Նոյն նեղ, վտանգաւոր չաւղով պտոյտ ենք գործում կրատերի չուրջը, ցած ենք գալիս մի տեսակ չչկլած, անորոշ վիճակի մէջ։ Մեզանից ոչ ոք չէ խօսում. տպաւորութիւններ չեն հաղորդվում, իրար էլ չենք նայում. իւրաքանչիւրն ապրում է իր առանձին աշխարհում, կարծես ոչ ոք ուշքի չէ եկել կրած խորին հոգեկան ցնցումներից։ Իջնելը հեշտ է.—սահում ենք աւազների վրայով, իսկ մեզանից վեր, մեր եռւում վեղուվը չարունակում է անքալ, դղրդալ, չարունակում է քրքրել իր արգանդը դարերի երկունքով։

XXXV

Նէապօլից մեկնում եմ։ Աւելի հարաւ, դէպի Կալաբրիա և Սիցիլիա գնալու ցանկութիւնս անկատար է մնում և ես վերադառնում եմ։ Այժմ ինձ ղեկավարողը Ֆլօրենցիան է, Իտալիայի պարծանքը, որ այնպէս մեծ դեր է խաղացել գեղարուեստական գրականութեան մէջ, որ հպարտ է իր Մեդիչիներով և Դանտէով և որ այժմ էլ կարող է պարծենալ իր կիրթ ճաչակով, իր ընտիր

իտալերէնով, իր նրբացած, քաղաքակրթված կեանքով, նիստ ու. կացով։

Իտալիայի արևմտեան ափերով Ջենօվայից սկսած իջայ մինչև Նէապօլ, այժմ հակառակ՝ արևելեան ափերով բարձրանում եմ դէպի վեր, դէպի հիւսիս և այցելածս քաղաքներից ստացած տպաւորութիւններս համեմատութեան առնելով՝ հասնում եմ մի ուշագրաւ եզրակացութեան։ Իտալական քաղաքներն իրարից այնքան տարբեր են թէ իրանց արտաքինով, թէ բնակիչների սովորութիւններով, նիստ ու կացով, որ մարդ դրանցից իւրաքանչիւրն այցելելիս ինքն իրան զգում է համարեա մի նոր աշխարհում. թւում է, թէ այդ քաղաքներից իւրաքանչիւրը պատկանում է զանազան երկրների, անդամ զանազան ժամանակների։ Մի քանի ընդհանուր գծեր և դրանց հետ միասին բազմաթիւ առանձնայատկութիւններ, ուրոյն, անհատական կողմեր,—ահա այդ քաղաքների ընդհանուր բնորոշումը։

Այս երևոյթի բացատրութիւնը, ի թիւս այլ պատճառների, փնտռելու է գլխաւորապէս աշխարհագրական և ցեղագրական պայմանների մէջ։ Աշխարհագրական տեսակէտից իտալական թերակղզին ներկայացնում է մի բացառիկ և ուշագրաւ կացութիւն։ Իտալիան ձգվում է հիւսիսից հարաւ մի երկայն շերտով Միջերկրականի գոլ ջրերի մէջ, և մինչդեռ նրա ոտքերը Սահարայի շնչով են տաքանում, գլուխն ընդհակառակը շատ հեռու չէ Ալպերի յաւերժական ձիւներից և քամիներից։ Այս


երկու ծայրահեղութիւնների մէջ իտալական ժողովուրդը դարերի ընթացքում ապրել է ամենաուեսակ կլիմաների, քնութեան բազմազան խառնուածքի մէջ։ Եթէ դրա վրա աւելացնենք ցեղական բազմաթիւ առանձնայատկութիւնները, որ ամենահին ժամանակներից այնտեղ թափվող ազգութիւնները բերել են իրանց հետ, ցեղերի այն զարմանալի խառնուրդը, որ տեղի ունեցաւ այդ թերակղզու վրա, ապա դուցէ մասամբ հասկանալի դառնայ, թէ ինչու հնարաւոր են եղել այդ բոլոր երևոյթին աշխարհագրական միութիւն կազմող երկրում այնքան մանր-մունր տէրութիւններ, Հռոմից առաջ և յետոյ՝ մինչև վերջին ժամանակները։ Պատմութեան ամբողջ ընթացքում մեմիայն երկաթէ լեգէոններին պողովեց, եթէ ոչ վերջնականապէս ձուլել, գէթ սերտ կապերով միացնել իրար հետ էտրուսկներին, լատիններին, Մեծ-Յունաստանի բնակիչներին, սաբինացիներին, այնքան այլազան, տարբեր լեզուի խառնուածքի, պատմական բաղդի, սովորութիւնների տէր տարրերին։ Հէնց որ ընկաւ կայսրութիւնը, հէնց որ կապը բռնող ձեռքը թուլացաւ, անմիջապէս, թէև այլ հիմունքների վրա, այլ ձևով և այլ պայմաններում, հաստատվեցին բազմաթիւ մանր պետութիւններ, տարբեր կազմով, տարբեր ձգտումներով, տարբեր օրէնքներով։ Ահա այս մանր ու մեծ, իրարից տարբեր, փոքրիկ պետութիւնների մէջ է մշակվել այս քաղաքների առանձին քնաւորութիւնը։ Եւ իտալական որ փոքր և չատէ նշանաւոր քաղաքը երկար ժամանակ առանձին անկախ պետութեան մայրաքաղաք չէ եղել. Միլան, Վենետիկ, Ֆլորենցիա, Ջենովա, Պիզա, հարաւում Նէապոլ ամբողջ դարեր ապրում էին իրանց ուրոյն քաղաքական կեանքով, չատ անգամ իրար դէմ ճակատելով լինչպէս թշնամիներ։

Վիկտոր-Էմմանուէլ, կավուր և Գարիբալդի, որոնք ներքին պատերազմներից, օտար լծից յոգնած՝ ժողովրդի պիտակցութեան մարմնացումն են դան նորագոյն ժամանակներում, աջողեցրին էլի մի անգամ ամբողջ Իտալիան Հռոմի թևի տակ դնել, նախկին մանր-մունր իշխանութիւնների վրա ձգելով քաղաքական միութեան թափանցիկ, բայց միօրինակ քողը։ Սա ժամանակի պահանջ էր, դուցէ և մի անհրաժեշտ էտապ թևակոխելու դէպի այլ քաղաքական կարգեր, որոնք աւելի կը համապատասխանէին այս երկրի զանազան մասերի կենսապայմաններին, տեղական քնաւորութեանը, աշխարհագրական անջնջելի պայմաններին։ Արդեօք ոչ չատ հեռաւոր ապագան չէ պահել Իտալիայի համար մի այլ միութիւն, ուր նրա առանձին մասերի ինքնուրոյնութիւնը լայնարձակ կերպով տեղ կը բռնէ, և նրանց միահամուռ գործակցութիւնը կանչ այն, ինչ Իտալիայի ներկայ միութիւնը փորձում է անել—բարոյապէս և նիւթապէս մի հզօր հայրենիք։

Այս խորհրդածութիւններին ինձ առիթ տուեց Ֆլորենցիան, ուր հասայ երեկ, մայիսի 1-ին։ Այս քաղաքի ընդհանուր տեսքը իտալական մնալով

հանդերձ՝ այնքան ուրոյն, տեղական գծեր ունի, այնպէս տարբեր է բոլոր մինչև այժմ տեսածներից, որ զարմանք է չարժում։ Նախ և առաջ չէնքերը. համարեա բոլորն էլ մասսիվ, ծանր ոճով չինված, փողոցների երկու կողմերում չարված են, ինչպէս մի պղեակ, մանաւանդ քաղաքի կենտրոնում, ուր հին մասն է։ Փողոցները շատ լայն չեն, բայց Նէապօլի, Վենետիկի նեղ փողոցներից շատ հեռու են. ամենքն էլ լաւ սալայատակած են լայն, քառակուսի և կարծր քարերով, որոնք ով գիտէ, երբ են ընկել միանգամ և տեղն ու տեղը մնացել անչարժ ու անմաշ։ Այս քարաչէն տներին և փողոցներին նայելիս մարդ հեշտութեամբ է կարողանում երևակայել «տների և սպիտակների», Ալբիգենների և Մեդիչիների, դեմօկրատների և բուրժուաների արիւնոտ կռիւները, երբ զանազան ընտանիքներ՝ հանրապետութեան դրօշ անցնելով՝ անողորմ կերպով հալածում, ջնջում էին հակառակորդներին, երբ փողոցից փողոց, անից տուն, թշնամի բանակներ էին կազմվում և ճակատում անխնայ։ Ներքին կռիւների, արիւնհեղութիւնների համար Ֆլորենցիան ասես յատկապէս չինված լինի։

Ֆլորենցիան հին և նոր Իտալիայի գուցէ գեղեցկագոյն քաղաքն է և իրաւացի կերպով կոչվում է «գեղեցիկ» և «Իտալիայի Աթէնք»։ Արնօ գետի երկու կողմերում խիտ ու խիտ չարված են տները, մաքուր ու գեղարուեստականօրէն բաղմազան, և նայում են գետի ալիքներին, որոնք այստեղ այնպէս պղտոր չեն, ինչպէս Պիզայի մօտ։ Բարե-



ՖԼՈՐԵՆՑԻԱՅԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍԱՐԱՆԸ.

(նկար 305)

խառն և առողջարար կլիման Ֆլորենցիան դարձրել է չատ օտարականների համար հաճելի զբօսավայր։ Հին քաղաքի չուրջը ձգված են բազմաթիւ չքեղ վիլլաներ, օդաչատ և բուսաչատ, որոնք մի գեղեցիկ երիզով չրջապատում են կենտրօնի շինութիւնները, միւզէներն ու պալատները։ Ինձ զարմացրեց մանաւանդ այս քաղաքի ոչ իտալական մաքրութիւնը, փողոցներում աղբի նչոյլ չը կայ և պատչգամբներից կախկխված չեն լուացած սպիտակեղէններ։ Աղգաբնակութեան բարեկեցութիւնից արդեօք, թէ մի ուրիչ պատճառով, չեմ կարող ասել, միայն ճանապարհորդն այստեղ չահագործութեան մչտական առարկայ չէ, ինչպէս իտալական միւս քաղաքներում, նրա յետևից չեն ընկնում ոչ մուրացիկներ, ոչ ծաղկեվաճառներ, ոչ էլ կառապաններ իրանց տաղտկալի պահանջներով և առաջարկութիւններով։ Այստեղ անգամ ամբոխի արտաքինը մի վայելչութիւն ունի, որ մօտենում է բարեկեցութեան։ Խաղաղ կերպով, առանց արիւն պղտորելու՝ կարելի է չրջել փողոցներում, դիտել խանութները, յիշատակարանները, միւզէները, և ոչ ոք չի մօտենայ մի բան խնդրելու, կամ ծոյլ ծոյլ պառկոտած մարդիկ չը կան, աչխատաւորներ են երևի, պարապներ չէք տեսնի, փողոցներում չեն երևում նաև սայլեր, նիհար, վատոյժ կենդանիներով, որոնցով այնպէս հարուստ են իտալական միւս քաղաքները։

Ուրախ ու կենդանի ժողովուրդ կայ այստեղ։ մարդիկ իրանց սովորական անցուդարձի ժամին

անգամ քայլում են եռանդով, խայտալով, ասես իւրաքանչիւրը հէնց քիչ առաջ մի անասելի աջողութեան է հանդիպել։ Հանրապետական հին Ֆլորենցիայի նախկին գոռոզութեան մի մասը դեռ կարդացվում է սրանց ճակատներին, որոնք դեռ չեն կորացել անհեսական հիւծող կարիքի, խեղճութեան, իտալական միւս քաղաքների այս բռնակալների լծի տակ։ Ֆլորենցիան, կարելի է ասել, Իտալիայի թագուհին է և նա իր վայելով, իր մաքրութեամբ, իր քաղաքակրթութեամբ գերազանցում է բոլորին։ Այս երկրի որ քաղաքում և լինի, եթէ տուրիստն անդադար զբաղված չէ որ և է ուսումնասիրութեամբ, անպատճառ կը ձանձրանայ, մինչդեռ այստեղ՝ Ֆլորենցիայում կարելի է ապրել ամիսներ և տարեներ ապրել առանց ձանձրոյթի զգալու։ Քաղաքի որ կողմն էլ դառնալու լինես, ամեն ինչ վկայում է ընակիչների կիրթ ճաշակը, գեղարուեստի սէրը, բարեկեցութիւնը, մաքրասիրութիւնը և մի կուլտուրա, որի մնացորդ յիշատակարանները ամենամեծ հետաքրքրութեան և հիացմունքի արժանի գործեր են։

Ինչպէս իտալական համարեա իւրաքանչիւր քաղաք, Ֆլորենցիան էլ ունի իր նշանաւոր հրապարակը, piazza-ն, ուր իրար կողքի չարված են համարեա բոլոր աչքի ընկնող չինութիւններն ու պալատները, արձանազարդ աւազանները, միւզէները։ Սրնօի աջ ափին է Piazza Seugnerie-ն, որ Վենետիկի Ս. Մարկոսի հրապարակի գեղեցկութիւնը չունի, բայց որ այնքան հետաքրքիր

պատմական անցքերի վկայ է եղած։ Սա Ֆլորենցիայի հանրապետութեան ֆորումն է, որ Մեդիչիներն իրանց զօրութեան և փառքի չրջանում զարդարել են բարգաւաճ պետութեան մայրաքաղաքին վայել չէնքերով ու արձաններով՝ սկսած XV դարից։ Հրապարակի կենտրօնում բարձրանում է կօմս Մեդիչիի մեծ, գեղեցիկ արձանը, հայեացքը վեհօրէն դարձրած դէպի մարմարեայ պալատները։ Սա այն յայտնի դեմագօգն է, որ իր երեսուն տարվայ (1434—1464) իմաստուն կառավարութեան համար հայրենակիցներից ստացաւ «Հայր հայրենեաց» տիտղոսը։

Այստեղ՝ հէնց այս արձանի պատուանդանի առաջ, 1498-ին, խարոյկի վրա այրվեց Սավօնարօլան։ Հրապարակի վրա ոչինչ չը կայ, որ յիշեցնէր այս արիւնոտ պատմական անցքը, բայց կան այլ հետաքրքիր յիշատակարաններ, գեղարուեստական գործեր։ Դրանցից ամենագրաւիչը մի մարմարեայ աւազան է, այլաբանական արձաններով չրջապատած, և մի բաց սիւնազարդ սրահ, որ նախկին իշխանական պալատներից մէկի ճակատն է կազմում և որի տակ չարված են բազմաթիւ արձաններ ու հետաքրքիր արձանախմբեր։ Ուսումնասիրում եմ դրանց նկարագիրը տալուց, որովհետև առանց այն էլ այս «թռուցիկ տպաւորութիւնները» երկարեցին. կասեմ միայն, որ այդ աստիճան խիղճ և գրաւիչ գործեր ես անգամ Հռօմի հրապարակներում չը պատահեցի, եթէ չը հաչվենք Քիրինալի

արքայական պալատի առաջ երկու դուռ երիվարները և նրանց զսպող տիտաններըը։

Այս մեծ և բազմանկիւնի հրապարակի հարաւային կողմում մի այլ փոքրիկ, քառակուսի հրապարակ կազմելով՝ դէմ առ դէմ բարձրանում են երկու պալատներ, որոնցից մէկը քաղաքային պաշտօնէութեանն է յատկացրած, իսկ միւսը՝ «Gallerie de offices», արձանների, նկարների, և հին, իշխանական հարստութիւնների միւզէն է։ Սրնօ գետի վրայից մի երկար ու նեղ կօրրիդօրով Gallerie des offices-ը միանում է քաղաքի մի այլ նշանաւոր միւզէի, Gallerie Pitti-ի հետ գետի միւս ափում։

Piazza Seugnerie-ից աւելի հեռուն գնում է մի երրորդ հրապարակ, ուր բարձրանում են Ֆլօրենցիայի Դօմը (մայր եկեղեցին) և Կամպանիլեան (աշտարակը)։ Թէ մէկը և թէ միւսը սև ու սպիտակ մարմարով չինված՝ խայտաբղետ տեսք ունեն։ Դուրս է գալիս, որ իտալական ամեն մի հանրապետութիւն, որ միջազգային քաղաքականութեան մէջ դեր է խաղացել, անպատճառ կառուցել է մի մեծածախս մայր եկեղեցի և նրա կողքին մի աշտարակ՝ թէ մէկը և թէ միւսը որպէս նշան պետութեան նիւթական և բարոյական կարողութեան։

XXXVI

Այսօր, մայիսի 23-ին, ամբողջ օրը թափառել եմ Ֆլօրենցիայում։ Սա այն քաղաքներից մէկն է, ուր մարդը յոգնածութիւն չէ զգում, որովհետև ոչ մի անախորժ տեսարան, ոչ մի ախուր երեոյթ օրվայ ընթացքում չէ գալիս մարդու հոգին ցաւեցնելու, ճաշակած էստետիկ զուարճութեանը թոյն խառնելու։ Իտալական միւս քաղաքներում այդ կողմից մարդ յաճախ այն դրութեան մէջ է լինում, որ կարծես ինքը մի բան է ուտում, մինչդեռ չորս կողմից բազմաթիւ քաղցածներ խղճուկ հայեացքները սևեռել են նրա չրթունքներին։ Ֆլօրենցիայում այդ անախորժ դրութիւնը չատ սակաւ է առաջ գալիս, կարծէք անհոգ ու անցաւ երջանիկները բազմաթիւ են այստեղ։ Ես այժմ հասկանում եմ, թէ ինչու Արնօի ափին չարված բոլոր առաջնակարգ հիւրանոցները լի են օտարականներով։ Այստեղ երեկոներն այժմ այնքան մեղմ են, օդն այնքան դուրեկան, դիչերները սիրուն։ Արնօի կամրջի վրայից այսօր մի վերջալոյս դիտեցի, որի նմանը չատ քիչ անգամ է պատահում հարաւի որ և է ուրիչ քաղաքում։

Երբեմն որ և է աննչան դէպք, սովորական երեոյթ այնքան մաքեր է զարթեցնում մարդու գլխում, այսօր երկու անգամ առիթ ունեցայ այդ

քանում համոզվելու։ Գետափին, մայթի վրա, մի թափառաշրջիկ նկարիչ, դուրչ և մի չնորհալի մանուկ արուեստագէտ, ածուխով նկարել էր Հռօմի լեգենդական գայլը ստինքներից կախված երկու մանուկներով. նկարել էր չատ ձեռքով, համարեա խաղալով գծագրել էր և անցել։ Գեղարուեստասէր քաղաքներում սովորական է տեսնել այս ու այն պատի, սեան, քարի վրա ածուխով, մատիտով քաշած զանազան նկարներ, որպէս ձեռքի խաղ։ Այս իմ տեսածն էլ այդպիսի խաղ է. տղայների համար երևի խիստ սովորական, որովհետև ոչ ոք ուշադրութիւն չէր դարձնում. հետաքրքրվողները մի քանի օտարականներ էին։ Եւ սակայն այս գործը կատարեալ էր թէ իբրև արուեստ և թէ իբրև տեխնիկա մինչև այն աստիճան, որ ես ցաւելով մտածեցի, թէ դա մի խաղ է, ինքնաբոյս տաղանդի մի քմահաճ խաղ, որին վիճակված է մի քանի րոպէում ջնջվել ամենավուլգար ոտների տակ։ Ա՜հ, այս իտալացիք, որոնց գեղարուեստը միշտ ժպտուն, միշտ խաղ է, ծիծաղ, դրաւիչ քմահաճոյք։

Piazza Seugnerie-ի աւազանի չուրջը և արձանագարդ սրահի տակ հաւաքված տեսայ բազմաթիւ փոքրիկ մանուկներ, որոնք մագլցելով բարձրանում էին արձանների վրա, վազվզում էին նրանց չուրջը, խաղում էին նրանց հետ, իսկ ծնողները քիչ հեռու դիտում էին այս տեսարանը։ Գեղարուեստը փողոցներում և հրապարակներում,—ահա թէ ինչն է մշակում տաղանդները, կրթում, զարգացնում

ճաշակը և գեղեցկի սէրը զարթեցնում։ Մի ուրիշ հրապարակում մարդիկ խմբված դիտում էին մի նոր բացված արձանախումբը, որ փայլփլում էր թարմ մարմարի կաթնային սպիտակութեամբ։ Իտալական ազատութեան պատերազմում ընկած Գլօրենցիայի երկու պինուոր եղբայրներ էին, որոնց երախտագէտ հայրենիքը պատում էր գեղեցիկ արձաններով. ծաղիկներով ու պսակներով զարդարված էր պատուանդանը, և մարդիկ նայում էին, խօսում նրանց փառաւոր կեանքից և դատողութիւններ տալիս արձանի մասին։ Փոքրիկ երեխաները, խառնված մեծերի հետ, լսում էին այս բոլորը ուշադրութեամբ և նոյնպէս դիտում էին արձանները հետաքրքրութեամբ, բնականաբար։ Այս բոլորը տեսնելուց յետոյ ես էլ չը զարմացայ, երբ երեխաներից մէկը գրպանից հանեց մի փոքրիկ արկղ, հանեց նրա միջից նկարչութեան գոյներ, մի փոքրիկ վրձին և իսկ ու իսկ մի վարպետի լրջութեամբ սկսեց նայել արձանին և իբր թէ նկարել. փոքրիկի ընկերները նայում ու ծիծաղում էին, հրհրում էին նրան, բայց փոքրիկ վարպետի միտքը չէր. նա մի և նոյն լրջութեամբ չարունակում էր իր խաղը, միայն երբ ես էլ մօտեցայ և ժպտալով հետևել սկսեցի, նա ինձ նայեց, ծիծաղեց, ներկերը հաւաքեց ու փախաւ կորաւ ամբոխի մէջ։

Այսպիսի տեսարանների հանդէպ ինչպէս չը յիշել Գլօրենցիայի անցեալը, նրա այն հարուստ չրջանը, երբ այդ քաղաքը չնորհիւ իր գեղասիրու-

թեան հզօր գործօն դարձաւ Վերածնութեան չըրջանի և հարստացաւ։ Զարմանալի չէ, որ Դանտէն այստեղ ծնվեց, «Աստուածային կոմեդիան» այս քաղաքի լեզուով գրվեց և վերածնված Իտալիայի գրականութեան օրօրանը սա եղաւ։ Ֆլօրենցիայի պատմութեան մեծ չրջանն սկսվեց XV դարի կիսում, կոմս Մեդիչիի իշխանութեամբ, որ մի առևտրական վաճառական էր և սեղանաւորութեամբ ու առևտրով ձեռք բերեց անդին հարստութիւն և ապա առատաձեռն նուէրներով, բարեգործութիւններով կարողացաւ ժողովրդի սէրն ու յարգանքը գրաւել և ի վերջոյ հանրապետական ամբողջ իշխանութիւնն իր ձեռքն առաւ Պերիկլէսի պէս՝ առանց սակայն որ և է միապետական տիտղոսի, պահելով ամբակավարական կառավարութեան արտաքինը։ Նա հովանաւորեց վաճառականութիւնը, որ լայն ծաւալ առաջաւ ու ծաղկեց, ժողովրդի բարեկեցութեան աստիճանը բարձրացաւ, նրա հովանաւորութեամբ գեղարուեստն ու գրականութիւնը զարգացան և Ֆլօրենցիան դարձաւ կենտրօն գիտութեանց և արուեստների։

Նրա յաջորդներից նչանաւորագոյնը՝ Լօրան Մեդիչի, որ անուանուեց «Աքանչելի» և «Հայր մուսաների», առանձին տեղ է գրաւում գեղարուեստի, ինչպէս և ամբողջ Վերածնութեան պատմութեան մէջ։ Բիւզանդական կայսրութեան վերջնական անկումից յետոյ նա էր, որ հովանաւորեց Պօլսից հալածված յոյներին, գիտուններին, բանաստեղծներին, թարգմանել տուեց Պլատօնը և դրա-

նով առաջին անգամ դարերից յետոյ Արիստօտէլի միահեծան և միակողմանի իշխանութեան դէմ մի զօրեղ հակառակորդ հանեց, որով և այնքան օժանդակեց այն ժամանակ մարդկային մտքի հօրիզօնի լայնութեան։ Բացի սրանից՝ նա Հոմերոսի նոր հրատարակութիւնը կատարել տուեց Քալքոնդէլի ձեռքով, Գիբերտին ձուլել տուեց ս. Յովհաննէսի Մկրտատան դռները, որ Միքել-Անջելօն գտնում էր «արժանի արքայութեան դռներ լինելու»։ Դա մի փառաւոր ժամանակ էր Ֆլօրենցիայի պատմութեան մէջ, և Եւրօպայի ամեն կողմերից այնտեղ էին թափվում գիտութեան և գեղարուեստի ծարաւանձինք, ինչպէս դասական ժամանակների Աթէնքը։

Սփոսս որ նրա որդի Պետրոս II իր կատարեալ անկարողութեամբ, իր սանձարձակ բարքով, իր մեծամիտ յաւակնութիւններով չարուցից դէպի ինքը բուռն քէն և ատելութիւն։ Կազմակերպվեցին այն երկու հռչակաւոր կուսակցութիւնները՝ ազնուականներինը կամ կատաղին՝ Arrabiati և ժողովրդականը՝ Frateschi կամ հոգևորականների բարեկամներինը։ Սկսվեց այն սարսափելի ժամանակը Ֆլօրենցիայի պատմութեան մէջ, երբ հակառակորդները մորդոտում էին իրար փողոցներում, հրապարակներում, տների մէջ և մինչև իսկ եկեղեցիներում, երբ ամբողջ ընտանիքներ հալածվում էին քաղաքից, ապա յետ գալիս յաղթական և փողոցներում վերանորոգում արիւնհեղութիւնը։

Այդ այն ժամանակն էր, երբ Սաւօնարօլան, Դօմինիկեան այդ փանատիկ կրօնաւորը, յուսա-

հատված՝ բացականչում էր. «Ո՛վ Իտալիա, ո՛վ Հռոմ, քաղցած առիւծների պէս բարբարոսները դալիս են... մահացութիւնը այնքան մեծ է լինելու, որ դերեզմանափորները փողոցներում կը չրջեն կոչելով՝ ո՛վ մեռել ունի... և այն ժամանակ մէկը կը բերէ իր հայրը, միւսն իր որդին. ո՛վ Հռոմ, ապաչխարիր, ասում եմ, ո՛վ Վենետիա, ո՛վ Միլան, ապաչխարեցէք»: Նրա չարագուշակ մարգարէութիւնը ճիշտ դուրս եկաւ. եւրոպական նոր կազմակերպվող ազգութիւնները վոխ՛առ վոխ չափեցին իրանց ոյժը գեղեցիկ Իտալիայում, և իր հայրենի ցաւերին պիտակից Սաւօնարօլան ինքը մէկն էր նրանցից, որոնք պատրաստեցին օտար տիրապետողների ճանապարհը: Երբ Մեդիչիների հալածվելուց յետոյ Սաւօնարօլան իշխանութեան գլուխն անցաւ, նա էր, որ հրաւիրեց ֆրանսիական Կարլոս XIII-ին Իտալիան գրաւել, և երբ այդ արշաւանքն անպտղի եղաւ, Սաւօնարօլան 1498-ին խարոյկ բարձրացաւ հակառակորդների ձեռքով, դատապարտված պապից, որպէս հերետիկոս և իշխաններից, որպէս խռովարար:

Այնուհետև սկսվեց Ֆլօրենցիայի և ամբողջ Իտալիայի համար այն սարսափելի անիշխանութեան ժամանակը, երբ իտալական ժողովուրդը ներքին կռիւներով ու ոճիրներով պղծում էր իր երկիրը, երբ Մաքիավելլի և Բօրջիաները սրբագործում էին քաղաքական ոճիրները և խաբէութիւնն ու խորամանկութիւնը, երբ ներքին արիւնհեղութիւնների, ամօթալի, մութ յանցանքների այնքան սիրահար

իտալացին դողում էր սակայն օտարի սրի առաջ, և իր հայրենիքը չարունակում էր ստրուկ մնալ, որովհետև մի ժողովուրդ չէ կարող ազատ լինել, երբ նա վախենում է ճակատ առ ճակատ պայքարից, երբ նա դողում է պատուաւոր մահից:

Միքէլ-Անջելօն, այդ տխուր ժամանակների մելանխոլիկ ոգին, իր հայրենիքի ողբալի կացութիւնը, նրա անկման, խեղճութեան բոլոր կսկիծը, իր մեծ, ստօյիկ սրտի ղգացած զայրոյթն ու ցաւը արտայայտել է մարմարէ մի հանճարեղ ստեղծագործութեան մէջ, որ իբրև մաւզօլէ ծառկում է Լօրան և Ցուլիոս Մեդիչիների գերեզմանը Ֆլօրենցիայում: Դա մի քնած գեղեցկուհի է, որ պատկերացնում է գիշերը և որի վրա Փիլիպպոս Սարօցին, Մեդիչիների այս երդուեալ հակառակորդը, մի օր գրեց. «Գիշերը՝ որ դու տեսնում ես քնած, այս քնքոյշ դիրքով, քանդակված է մի հրեշտակի ձեռքով այս քարի վրա. թէև նա քնած է, բայց կենդանի է. կասկածում ես, արթնացրու և նա կը խօսի»: Իտալիայի մեծամեծ դժբախտութեան օրերն էին, և Միքէլ-Անջելօն վշտով համակված՝ Սարօցիին պատասխանեց իր «Գիշերի» անունից. «Քաղցր է ինձ համար քնել. քանի տևում են դժբախտութեան և ամօթի այս օրերը, ես կուզէի քարից լինել: Չը տեսնել և չը զգալ ոչինչ—ինձ համար մեծ բախտաւորութիւն է. մի արթնացրու ինձ, ի սէր Աստուծոյ, ծ, ցած խօսիր»:

Իրար յաջորդող թշուառութեան և արիւնի դարերը, օտարների լուծը, անկախութեան կո-

ժուռաը, բոլորը, բոլորը չը կարողացան սակայն իսպառ մարել Ֆլորենցիայի բանաստեղծական և առհասարակ գեղարուեստական հուրը։ Իտալական Ալֆիէրը չարունակեց փայլել, որպէս մի վառ փարոս, նրա անունը միշտ հնչվեց պատկառանքով։ Այսօր էլ Միացեալ Իտալիայի մէջ Ֆլորենցիան Սավոյեան տան թագի ամենալաւ գոհարներից մէկն է, եթէ ոչ լաւագոյնը։

XXXVII

Ֆլորենցիայի մայիսը... Հմայիչ ժամանակ է։ Գեղածիծաղ գարնանային օրերը յաղորդում են իրար ասես վերջ չառնելու համար, քնութիւնը այնքան գեղեցիկ է, այնպէս հաճելի է դրսում թափառել, որ քանի օր է այստեղ եմ, այսօր միայն գնում եմ փակվելու միւզէններում, այն էլ ժամանակիս սղութիւնից ստիպված։ Նշանաւոր, հարուստ միւզէն Gallerie des office-ն է իչխանական հրապարակի վրա. որպիսի անօրինակ երևոյթ այս աղքատ Իտալիայում. միւզէի դրանը, հրապարակի վրա ոչ մի ձեռք չէ մեկնվում դէպի ճանապարհորդը և մարդ հանգիստ սրտով բարձրանում է աստիճաններից դէպի պալատի առաջին յարկը։

Բազմաթիւ միւզէները, որ մարդ այցելում է իտալական քաղաքներում և ճանապարհի յոգնածութիւնները վերջ ի վերջոյ թուլացնում են մարդու մէջ այն վառ հետաքրքրութիւնը, որով նա համակված է լինում իր չրջագայութիւնների

սկզբում։ Այս միւզէն բազմակողմանի կերպով հարուստ է իր արձանների, պատկերների և այլ հնութիւնների չատութիւնով, բայց չոտպով եմ անցնում, աչքատելով ամենաաչքի ընկնող գործերի առաջ միայն կանգ առնել։ Ամենից առաջ ինձ գրաւում է Բաֆայէլի ս. Յովհաննէսը, որ այնքան նման է Հռօմի Սէն-Լուկայի զարմանալի երեխային. նոյն իմացականութիւնը, նոյն անօրինակ կենդանութիւնը դէմքին, նոյն անմեղութեան, սրբութեան հմայքը, որ ծաղկի բուրմունքի պէս բաժանվում է այդ դէմքից և համակում դիտողին։ Նա կանգնած է մի ժայռի մօտ անապատում մենմենակ, իր ընկերն է մի եղէգն, մի գալար եղէգն, որ իր մերկութեան մէջ անկարող է հովանի անել մենաւորի գլխին. նա մի պատանի է, հազիւ 16—17 տարեկան, վարդ չրթունքները կիսաբաց, մի բան, մի խորհրդաւոր վեհ բան ասելու ակնարկ ցանկութեամբ։ Ո՞ւր է տեսել արդեօք Բաֆայէլն այսպիսի մի երեխայ. երևակայել է արդեօք և մի՞թէ ամեն մի իսկական գեղեցկութիւնը միշտ երևակայական է մեր երկրի տակ։

Միքել-Անջելօն այստեղ ունի մի փոքրիկ կտաւ, «Սուրբ ընտանիքը». այցելուները խումբ-խումբ գալիս կանգնում են այդ նկարի առաջ. չատ նշանաւոր գործ չէ, աւելի չուտ մի էսքիզ է, բայց հանճարեղ արուեստագէտի ձեռքի ամենաթեթև չարժումն անգամ գարձել է լուռ հիացմունքի, պաշտամունքի նիւթ. քննադատութիւնը լռում է մեծութեան առաջ, ինչպէս որ քնութեան մի հրա-

կայ տեսարանի կամ երևոյթի հանդէպ մարդկային լեզուն համր կարուած։

Պատկերների և արձանների դահլիճներից ոչ պակաս հետաքրքիր է այս միւզէում այն սենեակը, ուր զետեղված են Մեդիչիներից մնացած հրըստուբիւնները, թանկագին քարերից վազեր, ադամանդներով զարդարված ոսկեայ տուփեր, բաժակներ, սկիհներ, անօթներ, որոնցից իւրաքանչիւրը մենակ թէ արուեստի և թէ հարստութեան տեսակէտով մի մի անգնահատելի գանձեր են։ Այս փոքրիկ սենեակը մի լաւ ապացոյց է, թէ ինչպէս երբեմն մի հատ ընտանիք կարող է ծծել մի ամբողջ ժողովրդի կենսական հիւթերը մեն մենակ իր վայելքների համար, թէ ինչպէս հազար ճակատների դառն քրտինքը կարող է դառնալ մի հատիկ ադամանդ մի երջանիկ մատի վրա, որ երբէք չը գիտէ թէ ինչ է աշխատանք։

Ես թողնում եմ այս միւզէի մնացած արձաններն ու պատկերները և չտապում եմ դէպի Gallerie Pitti, որ, ինչպէս հաւատացնում են, չատ աւելի հետաքրքիր է սրանից։ Այս երկու միւզէները միացնող երկար նրբանցքը, որ ինչպէս ասացի, անցնում է գետի վրայով, իր տեսակի մի վերին աստիճանի օրիգինալ գործ է։ Իրրև պատկերների միւզէ, այս Gallerie Pitti-ն արդարև իր նմանը չունի Ֆլօրենցիայում, ինչպէս և Իտալիայի ուրիշ չատ քաղաքներում. գուցէ միայն Հռոմը կարողանայ սրանից գերազանցել, այն էլ եթէ ի նկատի ունենանք նրա չատ միւզէները և ոչ մի


հատը։ Gallerie Pitti-ը տեսնելու համար արժէ այցելել Ֆլօրենցիան։

Փիչ միւզէ կը ճարվի այնպէս հարուստ Բաֆայէլի գործերով, որքան այս գալլերէան. համաթեա իւրաքանչիւր դահլիճում նա մի աչքի ընկնող, իշխող ստեղծագործութիւն ունի։ Ես կանգ կառնեմ դրանցից մէկի՝ Մադոննայի վրա։ Դա մի մայր է, բայց կուսական բոլոր քնքշութեամբ, բոլոր անարատութեամբ իր աքանչելի դէմքի վրա. նրա մայրութիւնն արտայայտվում է այդ աստուածային երեխան գրկելու մէջ. միայն մայրը կարող է այդ ձևով իր կրծքին սղմել մի երեխայ, որ կողմից և նայում ես նրա դէմքին, այդ խանդաղատանքով, քնքոյշ սիրով լի աչքերը չարունակ ձեզ են նայում և կարծես ասում են՝ ես երջանիկ եմ, ես սիրում եմ սրան, չատ եմ սիրում, և տիեզերքի հետ չեմ փոխի այս իմ սիրասուն զաւակին։ Այդ արտայայտիչ, սիրող հայեացքի առաջ անկարելի է լինում չը մտաբերել հրաչալի կօնտրաստը, կատարված փաստի բոլոր տրագիզմը և մարդ մտքում ասում է՝ խեղճ մայր, հէնց այդ երեխան է, որ պիտի զոհվի տիեզերքի փրկութեան համար։ Եւ այդ հրաչալի երեխան, այդ գերբնական դէմքով հրեշտակը այնպէս է սղմվում մօր կրծքին, կասես պաշտպանութիւն է փնտռում այնտեղ հեռաւոր վտանգից, ասես աչխատում է զգալ մօր կրծքի ջերմութիւնը, նրա սրտի բաբախումը։ Դա մի նկար է, որ մենակ բաւական է մի միւզէ հետաքրքիր դարձնելու։

Առանձին ուշադրութիւն են գրաւում մի քանի

ուրիշ գործեր, այսպէս՝ Անգրէա Մինդայի «Եւայի ստեղծագործութիւնը», «Ադամ և Եւան դրախտում» Ֆուրինի, Ֆրանչիսկայի, և մանաւանդ՝ Ալլօրի Բրիսաւօֆանիի «Յուդիթը» իր յայտնի ապաշխարութիւնը կատարելուց յետոյ և դարձեալ Պափայէլի «Եզեկիէլի տեսիլքը»։ Gallerie Pitti-ը կարելի է չրջել մի քանի անգամ նրա բոլոր պատկերների հետ մօտիկից ծանօթանալու համար. այցելուները ամեն օր բազմաթիւ են. ընդօրինակողները մի քանի տասնեակ։ Ժամանակ չունիմ աւելի երկար մնալու, բաւականանում եմ այսքանով և գնում եմ Ֆլորենցիայի երրորդ միւզէին, գեղարուեստի ճեմարանը։

Գեղարուեստի ճեմարանում (Açadémie des beaux arts) ամենից առաջ աչքի ընկնողը Միքել-Անջելօի Դաւիթն է, նրա Մովսիսի նման մի խիզախ ու գրաւիչ գործ։ Դա մի մերկանդամ պատանի է, 17—18 տարեկան, հուժկու մարմնակազմով, որի անդամների բարեձեւութիւնն ու կատարելութիւնը, առնական ոյժի և գեղեցկութեան մի սքանչելի համաչափութիւն, առաջին հայեացքից զբաղեցնում են մարդու։ Այդ ներդաշնակութիւնը, որ երևում է արձանի բոլոր մասերի, ինչպէս և իր պատկերացրած իդէայի մէջ, հանգստացնում է մարդու հայեացքը ինչքան և երկար նայելու լինի։ Անջելօն երևակայել է Դաւիթին այն մոմենտում, երբ պատանի հերոսը իր ուսից կամացուկ ցած է բերում պարսատիկը և պատրաստվում է կռւի Գողիաթի դէմ։ Նա կիտել է իր թաւ, երկայն յօնքերը հարաւի արտայայտիչ աչքերի վրա, որոնք




«ԴԱՒԻԹ», ՄԻՔԵԼ ԱՆՋԵԼՕԻ (ՖԼՕՐԵՆՑԻԱ)
(Եր. և 320)

հետաքրքրութեամբ լի դարձած են դէպի ձախ այնպիսի ուշադրութեամբ, որ մարդ վարակվում է այդ հայեացքով։ Դէմքը մոռածկոտ է, բայց յանդուգն. մի տղամարդ աւելի առնացի, միևնոյն ժամանակ աւելի գեղեցիկ չէ կարող լինել. Հռոմի, Բելվեդերի Ապօլլոնը սրա մօտ մի քնքոյշ երիտասարդ է, լաւ ապրած, լաւ սնված, բարեձև, բայց ոչ հզօր ու ոյժգիր. նրա բազուկների և սրունքների վրա չը կան Անգելօի Դաւթի այս երկաթէ ջլերի գալարումները. նա կանգնել է չնորհալի, բայց ոչ սրա նման, ինչպէս մի ցնցված ժայռ։ Ի դէպ է ասել, որ Անգելօի բոլոր ստեղծագործութիւնների մէջ երևում է բարերար, արտադրող, մաքուր ոյժի պաշտամունքը. Նա տիտաններ ունի, որոնք աւերելու համար չեն, այլ ստեղծելու, բարիք գործելու։ Իր երկրի և իր ժողովրդի փրկութիւնը երազելով՝ նրա մեծ հոգին իջբև սիւժետներ անցեալից ընտրում էր մի Մովսէս, որ կարմիր ծովից ու անապատներից անցնելով Սւետաց երկիրն է հանում իր ազգին, մի Դաւիթ, որ նոյն ազգի քաղաքական միութեան և ոյժի մարմնացումն եղաւ, իսկ իր յաւատահաստութեան, իր վշտի մօմենտներում մի ազատ ու թախծալից գգիշերս, որ քնում է իր չուրջն իշխող չարիքը չը տեսնելու համար։

Իտալական զանազան միւզէումներում ես մեծ մասամբ տեսայ վերածնութեան մեծ չրջանի գեղարուեստը. ինձ համար անծանօթ մնաց այդ հետաքրքիր չրջանի նախընթաց և պատրաստող ժամանակի գեղարուեստը։ Ֆլօրենցիայի գեղարուեստա-

կան ճեմարանը այդ կողմից ինձ համար մի պիտա նզաւ. այստեղ մարդ կարողանում է մի մտաւոր դաշափար կազմել իտալական գեղարուեստի էվո լիւցիայի մասին մի քանի դարերի ընթացքում։ Այստեղ կարելի է տեսնել յաջորդական կարգով Անջելօից և Բաֆայէլից անմիջապէս առաջ ապրող և սրանցից էլ աւելի հին վարպետների գործերը, սկսեալ XV, XIV և XIII դարերից։

Վերածնութիւնից առաջ պատկերների նիւթն անպատճառ կրօնական է, բայարձակօրէն կրօնական։ Մարմնի ատրացման, անարգվելու, նրա տանջանքի, արհամարհվելու ժամանակն է. դասական դիցաբանութիւնից և ոչ մի նմուշ. գեղարուեստի իդէական իշխող կողմն է հոգու վերութիւնը և մարմնի ոչնչացումը։ Բոլոր նկարների վրա աչքի է ընկնում կեանքի, մարմնական յոյզերի պակասութիւնը և կրօնական էկստազների բայարձակ պերիչեանութիւնն ու առատութիւնը։ Կտաւի վրա թանձր, վառ գոյներով փռված այդ ձևերը կենդանի էակներ չեն, այլ կարրիկատուրաներ, իւրաքանչիւրը սրանցից մի մի կանդնած մեռել է, իր վիճակում քարացած, վիզը ծուռ, աչքերը չիլ լալկաններ վայտերի պէս կախ ընկած բազուկներով ու ոտներով։ Ամենք աղօթում են, ուրիշները հեզ, բայց հանդիսաւոր դիրքով անշարժացել են, ասես սպասելով, որ մեկը նրանց հրամայէ կենդանութեան նշան ցոյց տալ, չարժվել։ Մարդիկ չեն սրանք, իրանց յոյզերի ամբողջութիւնը չունեն, այլ կէսը, կամ քառորդը։



ԼԷՕՆԱՐԴՕ ՎԻՆՉԻ (1452—1519)

Այստեղ Ֆրա-Անջելիկոի XV դարի յայտնի նկարչի մի գործը տեսայ (Յիսուսի խաչից ցած բերվելը), որի վրա դժուար է առանց ծիծաղի նայել. մի խումբ մարդիկ են դէպքին պատչած իբր թէ սգաւոր դիրքերով. ահա այս մէկը, որ երկար մեխեր ունի ձեռքին, նա ցոյց է տալիս իր հարևանին, բայց այնպիսի եղանակով, որ կարծես որոշել է անպատճառ նրա քիթը կոխել. այս միւսը, որ փչի պատկն է պահում, նայում է այնպիսի եղանակով, ինչպէս մի ֆօկուսնիկ կը նայէր իր պլնարկին, որից իսկոյն դուրս է հանելու մի աւօրինակ առարկայ. միւսները, որոնք խմբված նայում են Բրիատոի չարչարանքի գործիքները, այնպիսի դէմքեր են ընտրել, որ կարծես ուզում են ասել, թէ պէտք է մի փոքր ախուր լինել, մօտենան է այդ պահանջում: Սա դեռ XV դարն է. և, հաւանեալով նախորդ երկու դարերի հետ, կարելի է ասել, որ արուեստը մեծ առաջադիմութիւն է արել, այս դարում կարելի է տեսնել մարդկային կերպարանքներ, որոնց պակասում է Անջելօի և Րաֆայէլի կենդանացուցիչ չունչը. բայց եթէ աւելի առաջ ենք գնում դէպի XIV և XIII դարերը, այնտեղ արդէն նկատվում է կրօնի կատարեալ թաղաւորութիւնը, ուր ոչ մի հանճարեղ չունչ կենդանութիւն փչել չէ կարող:

Այս ճեմարանում իշխողը գլխաւորապէս Պերուժէնն է, որին վիճակված էր այնքան յայտնի դառնալ ոչ այնքան իր տաղանդի, որքան իր մեծ աշակերտ Րաֆայէլի շնորհիւ: XV դարի այս յայտնի

վարպետի՝ Պերուժէնի գործերի մէջ արդէն նկատ-
վում է մեծ դարի արշալոյսը, Բաֆայէլի և Անջե-
լօի հանճարի ցոլքերը կարծես երևում են: XVI
դարից այստեղ մէկ հատիկ գործ կայ, Սարբօի եր-
կու հրեշտակները, որոնք մինակ իշխում են մնա-
ցած բոլոր պատկերների վրա: Մեծ դարի հզօր
չունչն է փայլում այդ նկարի վրա, մի վառ կեն-
դանութիւն է բուրում այդ դէմքերից, զգում ես,
որ առաջդ կատարեալ էակներ են կանգնած և ոչ
թէ XIII, XIV դարերի պարալիտիկներն ու հաչ-
մանդամները, որոնք չեն կարողանում դուրս սո-
ղալ միջնադարեան միատիկ խաւարի միջից:

XXXVIII

Պէտք է թողնել նաև այս դեղեցիկ Ֆլօրէնցիան,
որտեղից տանում եմ այնքան քաղցր յիշողութիւն-
ներ: Երկաթուղին մերթ բարձրանալով, մերթ վար
իջնելով կտրում անցնում է Ապենինեան չղթան:
Անկարող լինելով կանգ առնել Բօլօնիայում, անց-
նում եմ դէպի Պադուա և ապա Վենետիկ: Կրկին
այցելում եմ նուիրական ս. Ղազարը, էլ չեմ
գտնում կենդանի «Աւարայրի բլբուլին» Ալիշանին.
նա այժմ հանգչում է այնտեղ, ուր ինքը գրել էր
մի օր՝ «Վաստակեցան և ասա հանգչին»: Նրա տեղ
աթոռակալ է ընտրված Հ. Մինաս Նուրիխան, Ռա-
փայէլեան վարժարանի տեսուչը: Սա միակ հա-
մարեա գլխաւոր փոփոխութիւնն է, որ տեղի է

ունեցել այս մի տարում. նոյն վանքն է, նոյն ե-
ռանդուն, գործունեայ միաբանութիւնը, նոյն ան-
դադրում աշխատանքը: Ժամանակս կարճ է, մնաք
բարև եմ ասում հիւրասէր հայրերին, նրանց դիւ-
թիչ կղզիակին, այնքան նուիրական գամբարան-
ներին, որոնցից զօնդօլը հեռացնում է ինձ և ես
յաւով եմ մտածում, թէ դուցէ սա իմ վերջին
այցելութիւնն է ինձ համար այնքան քաղցր, այն-
քան նուիրական վայրերին:

Մի օր յետոյ Միլան եմ. այստեղ այցելում եմ
միայն հռչակաւոր մայր եկեղեցին: Գօթական մի
հրաշակերտ է սա, և նրա տեսքը առաջին րոպէին
մարդու չիոթում է: Ես յիշում եմ, ճիշտ այսպէս
էր Շափհաուզի ջրվէժի առաջին տպաւորութիւնը:
Զարմանալի չէ դուցէ, որ այժմ այս մարդկային
ձեռքի հրաշակերտի և այն ջրվէժի մէջ ես որոշ
նմանութիւն եմ գտնում, և մէկն նայելիս՝ միւսն
եմ յիշում. ճարտարապետական երևակայութեան
այս հանճարեղ, այս հսկայ ստեղծագործութեան
առաջ ակամայ մտածում եմ բնութեան այն աքան-
չելի տեսարանի մասին. երկուսն էլ յախուռն են
ու խօլական, երկուսն էլ գեղեցիկ են ու ահաւոր.
դեռ երբէք մարդկային միաքն այս աստիճան յան-
դուգն ձեով չէ մրցել բնութեան հետ: Նայում եմ
մարմարէ այս ծովին, որ մարդկային հնարամտու-
թիւնը խճողել է իրար, ինչպէս բարդ բարդ ամ-
պեր և իմ երևակայութեան առաջ պատկերանում
է Հաւնոսի ջրվէժը իր լեռնացած ալիքներով, որոնք
ժայռի կատարից չը գիտես ինչ մի անհասկանալի


գոռոցով գահավիժում են անգունդը, այնտեղ կատաղում են, փրփրում իրանց անկման համար և ապա փոչիացած՝ թափով վեր են ձգվում, ասես կամենում են վերատին իրանց նախկին տեղը գրաւել, վերատին ժայռի կատարը եղնել։ Ձիշտ այն ջրային փոչու ամպերի պէս, այստեղ մարմարէ կանաչագոյն ամպեր, որոչ ձևերով իրար են խառնըվում և ձգվում են դէպի վեր, դէպի կապուտակ անսահմանութիւնը և կարծես ուզում են խառնվել անհունի հետ։ Այնտեղ՝ ջրվէժի մունջոցի մէջ, տաքերքի այն զարմանալի աղմուկի մէջ, ջրերի այն կուտակ կուտակ ծալքերից հնչվող ոռնոցի մէջ մի գերբնական, անսահման բան կայ, որ խոսափում է մարդկային ըմբռնողութիւնից, սասանեցնում, ոչնչացնում է անգամ հզօր բանականութիւնը և հոգին խեղդում է այնպիսի անուրջներով, որոնք և՛ անհասկանալի են և՛ սարսափելի միաժամանակ։ Թւում է, թէ մարդ կանգնած է իրերի մերկ խորհրդի առաջ, բնութեան բացայայտ գարձած գաղտնիքի հանդէպ, հոգին դողում է անյայտի մեծութիւնից ու խորութիւնից, անգունդներ են բացվում, անհասկանալի ուժերով լեցուած, այնտեղից կարծես անհունի լեզուն է հնչվում մահկանացու ականջներին և յաւիտենականութիւնն է երգում այնտեղից իր սիրելական երգը այդ զարմանալի գոռոցով, մարդ չէ հասկանում, այլ զգում է սարսափով, ականջ չէ դնում այլ խլանում է իր ամբողջ էութեամբ. ևսը՝ ողորմելի, խղճուկ ևսը, ջնջվում է, անհատականութիւնը

ուծվում է և մարդ մի գերբնական պատնէշից մղված պատրաստ է ձգվել եռացող անգունդների մէջ, տարվել փրփուրների լեռների հետ, թաղվել անհունութեան մէջ։ Ոչ մի տեղ ինքնապահպանութիւնն այնքան հեշտ չը պիտի լինի, որքան Հեռնոսի ջրվէժի մէջ, ոչ մի տեղ մարդ իրան այնպէս մօտ չէ զգում անդրշիրիմեան անյայտին, որքան այդ ջրվէժի աղմուկի տակ, նրա դողացող ժայռերի վրա կանգնած։

Բնութիւնը հզօր է և ամենակարող ինչպէս Աստուած, բայց ևս երբէք չէի կարող կարծել, որ մարդկային հանճարը, որ կատրն է միայն սիրելական հանճարի, կարող էր խիզախել բնութիւնն անգամ իր ստեղծագործական գերբնական թափով, իր թռիչքի յանդգնութեամբ. Միլանի մայր եկեղեցին մարդկային մտքի մի հեղեղ է, նրա վիհերից վիժված մի ջրվէժ, նոյնքան ահաւոր, որքան Հեռնոսի ջրվէժը։ Այստեղ էլ աստուածութիւնն է խօսում ահաւոր լեզուով և մարդը դարձեալ սասանվում է, նա զողում է իր սեփական ձեռագործի առաջ, այս է սքանչելին։ Այստեղ է՝ որ մարդ խորը կերպով թափանցում է Արիստոտէլեան վարդապետութեան ճշմարտութիւնը—նիւթը թաղցնում է իր մէջ կատարելութեան հնարաւորութիւնը և յարատև չարժում է, կոչում է այդ այժը դուրս և ձև է տալիս նրան գործողութեամբ. բանականութիւնը չէ կարող բաւականանալ առարկայի, նիւթի գօրութեամբ միայն. նա դիմում է անդադար դէպի վեր, մի ձևից՝ միւսը, մի պատ-

ճառից՝ միւսը, մի վախճանից՝ միւսը։ Այստեղ մարմարի նման կոչտ, անձև նիւթը բանականութեան ուժով աստուածային գաղափարի արտայայտիչ է դարձել, իր ներքին զօրութիւնից գործողութեան նիւթից՝ ձևի փոխվելով։

Այս եկեղեցու ապաւորութիւնը այնպէս է, որ առաջին հայեացքից դժուար է թէկուզ չատ աչքի ընկնող մանրամասնութիւններ նկատել. հզոր հաւասարակշռութիւնը սկզբում խախտում է, երկար դիտելուց յետոյ միայն հնարաւոր է դառնում ներքին խաղաղութիւնը վերականգնել և դիտել զանազան մասերը։ Հիմքը լայն է և քարերը խոշոր, որոնք աստիճանաբար մանրանում են բարձրանալով, խճողվում են իրար անկանոն գծերով և վերջում՝ կատարին՝ դառնում են նուրբ մոզայիկներ։ Հիմքից մի քիչ բարձր, պատի վրա ցցված, կամ աւելի չուտ կախված են մի ամբողջ չարք արձաններ, որոնք բոլորում են չէնքը չորս կողմից և պատում նրա մէջքը, ինչպէս մի տարօրինակ զօտի։ Արձանների գլխին չարված նուրբ սրածայր կամուղիկէները այնպէս են փաթաթված պատերին, ինչպէս պատուտակները մայր ծառի ընթնա։ Արտաքին պատկերը նկարագրելու համար մարդկային լեզուն և արտայայտութեան սովորական ձևերը անբաւական են, մնում է դիմել ընութեանը համեմատութիւններ վնտրելով. ով տեսել է, օրինակ, մի անտառապատ բլուր, որի վրա հիմքից սկսած՝ ծառերը բարձրանում են հա բարձրանում, ամեն մի չարքն աւելի բարձր, քան իր նախորդը,



Ա Ր Ա Ր Ա Տ Ի Ա Կ Ե Ղ Ե Ց Ի Ն
(Տես և 325)

մինչև որ կատարը կորչում է ամպերի մէջ. մօտաւորապէս այդպէս է այս օրթոդոքսական եկեղեցին։ Փոքրիկ կաթոլիկէները թիւ չունեն. նրանք խուրձ խուրձ նրբանում, չարունակ վեր են ձգվում, իսկ վերջում այնպէս են սրվում, ինչպէս սրածայր սեպեր, խիտ առ խիտ իրար մօտ չարված. առաջինն չարքից վեր ակսվում է երկրորդ չարքը, ապա երրորդը, չորրորդը և այսպէս չարունակ, կարծես թէ էլ վերջ առնելու չեն, թէ պիտի բարձրանան այսպէս անհունութիւն։ Ինչպէս որ լեռ բարձրանալիս իլլիւզիան մեզ խաբում է և ամեն մի կատար համարում ենք վերջինը, ճիշտ այդպէս կաթոլիկէների իւրաքանչիւր չարքը թւում է վերջինը, սակայն իսկոյն նկատում ես, որ դա միայն իլլիւզիա է, որ նրանից վեր դեռ քանիսը կան, մարմարէ մի անտառ։ Եւ ամբողջ եկեղեցին կարծես աստիճանաբար ձգվում, բարականում և պատրաստվում է քաշվել դէպի երկինք. սա ինքը մարմնացած աղօթքն է, խորին հաւատը, որ այրված սրտերից բղխում է դէպի վեր։ Կրօնական տանջված հոգիների յուզիչ պատկերներ են այս սիւնաբարձ անդրիները, որոնք իրանց հռւժկու թաւիթ մէջ զալարված, այլանդակված են, ինչպէս մեղքերի բեռի տակ անքացող դժբաղդներ. անկիւնների սպիտակ սրբերը, քարացած իրանց ճիգերի մէջ, կարծես հաղիւ պահում են իրանց մէջքերին պատերի մասսան. դա եկեղեցին է նահատակների ուսին. ինչ աւելի խորհրդաւոր։ Գօթական ճարտարապետութիւնը ուղիղ անկիւնների, սուր գծե-

րի հակառակ է. այստեղ ամեն ինչ կոր է ու ոլոր-
բուն. մարմարէ ծովը ծածանվում է ալիքանման
չարժուններով, գեղարուեստական մի խառնաչփո-
թութիւն է, որ կրօնական մտքի փոթորկից է
դուրս վիժել և մի անգամ ընդմիշտ առել քարա-
ցել տարածութեան ու ժամանակի մէջ: Որքան
յանդուգն է եղել այս գաղափարը յղացող միտքը,
այս բարդ պատկերը ծնող երևակայութիւնը: Գե-
ղեցիկ ճարտարապետութիւնը այս իր զարմանալի
արուեստը կրօնի տրամադրութեան տակ դնելով՝
նրան երկար ժամանակի համար դարձրել է ան-
ընկճելի. հաւատն այստեղ զինված է. գեղարուեստն
Աստուծոյ ծիրանին է:

Ժամի 4-ն է, ներս եմ մտնում. եկեղեցին լի
է բազմութեամբ. սեղաններից մէկի վրա պատա-
րագ է մատուցվում. միւսի առաջը, մի մեծ տա-
րածութիւն, կտրված է վարագոյրներով և բեմից
քարոզում է մի քահանայ աթոռների վրա նստած
կորպլուխ բազմութեանը: Քարոզիչը ոչ թէ եռան-
դուն է, այլ կատաղի, որպէս միջնադարեան ֆա-
նատիկ, որպէս մարմնացած վրէժխնդրութիւն.
թւում է թէ այդ սև մարդը, ինչպէս մի զայրա-
ցած գև, կիսախաւարի միջից իր ուռնկոդիր բազ-
մութեանը հրաւիրում է դէպի մահ ու աւերած.
այսպիսի զարհուրելի քարոզիչ երևի միայն կաթո-
լիկ եկեղեցին կարող է ունենալ. խօսքերը թափ-
վում են նրա բերանից հեղեղի պէս, ձայնը հնչվում
է կամարների տակ որոտալին, և այս բոլորը չէ
յուզում, այլ սոսկում է պատճառում. այդ մարդը

կամ մի զարմանալի հաւատացեալ է, կամ մի հան-
ճարեղ խաբեբայ: Ահա նա գաղարում է, բայց
միւս կողմում պատարագը չարունակվում է. ա-
ղօթող բազմութիւնը մտնում է երկեցիկ խմբի
հետ մի կոկորդային «Ալէլուիա», իսկ լայնարձակ
եկեղեցու այլ անկիւններում, սեղանի ետևում,
խաչելութիւնների տակ, մայր սեղանի աստիճան-
ների վրա երևում են ատուերների պէս ջոկ-ջոկ
կերպարանքներ, կռացած, կանգնած, նստած, ա-
մենքն աղօթում են, դէմքերին էքստազ, աչքերի
մէջ կրօնական փայլ, ամենից անյոյզը, ամենից
անտարբեր դէմքերը քահանաներին և եկեղեցական
ատորին պաշօնեաներինն է. նրանք չարժվում են
մի անհոգութեամբ, որ հետու է կրօնական լինե-
լուց: Հաւատացնում են, որ հեթանոս Հռոմի վեր-
ջին տարիներում քուրմերն իրար հանդիպելիս չէին
կարողանում ծիծաղները զսպել. չը գիտեմ ինչու,
այս կրօնաւորներին նայելիս ես յիշեցի այդ կօմիկ
քուրմերին, և ինձ թւում էր, թէ սրանք էլ, ուր
որ է, իրար կը նայեն և կը փրթիկացնեն աչքունե-
քով ցոյց տալով այս գետնին թաւալող բազմու-
թիւնը, որ մոռնում է ցաւով. խնդմ ժողովուրդ...

Տեսարանը փոխվում է. ահա ներս է գալիս մի
քահանայ երկու ձեռքով բարձրացրած մի սև, ա-
հագին խաչափայտ. նրա ետևից ներս է խուժում
մի զարմանալի ամբոխ. մարդ, կին, երիտասարդ,
ծեր, բազմաթիւ երեխաներ, փոչու ամպերի մէջ
կորած, չոգից հևալով, նրանք սղմվում են իրար
վրա. նրանք վազում են դէպի խաչափայտը, իւ-

բաքանչիւրն աչխատում է աւելի մօտ լինել, կրօնաւորի փէչերին մօտ, սև խաչափայտի տակ, լուռ են, միայն վազում են։ Սրտաբինից երևում է պիւղական ամբոխ է, ուխտաւոր—ամբոխ, որ իր սեփական, փոքրիկ եկեղեցուց անբաւական, եկել է այս մայր տաճարի կամարների տակ, այս սև խաչափայտի կողքին փռել իր խղճերը, իր աղօթքն ու հառաչանքը։ Խաչափայտը կրող քահանան դարձեալ հանգիստ է. յուզվողը, տանջվողը, աղօթողը այս սև ամբոխն է, դարերից հետէ առեղծուածների եւ սիրից վազող, իր անհամար ցաւերի ճարը փնտռող, որ չարունակ նրանից խուսափում է, ինչպէս այս սև խաչափայտը, որ կրօնաւորը տարաւ ու ծածկեց չը գիտես ուր, մինչդեռ բազմութիւնը չոած աչքերով նայում է նրա ետևից, հառաչում է. լինչ փոյթ, բաւական է, որ միտքերը մնայ անխախտ, առեղծուածը անլուծելի, յաղթանակողը դարձեալ սև մարդն է, խաչափայտը նա թագցրեց... Եւ միթէ ուրիշ կերպ կարող է լինել, քանի այս աստիճան խորհրդաւոր է եկեղեցու կիսախաւարը. այստեղ ամեն բան մղում է խաւար միտքը դէպի էքստազ։ Աղօտ ուրուագծերով բարձրացող այս սիւները՝ որոնք չը նայելով իրանց ահագին բարձրութեանը, կարծես դժգոհ են, որ կամարները չուտ են վրաներն իջնում, կուզէին աւելի վեր երթալ։ Ի՞նչ կայ վերևում. սուրբեր և կանթեղներ, փոքրիկ աղօտ կանթեղներ, որոնք ասես հրաչքով կախված են տարածութեան մէջ, որովհետև նրանց չղթաները չեն երևում. նրանք հազիւ պլպլում են,

զգուշանալով խառնել միտքի կիսախաւարը, և իրաւունք էլ չունեն աւելի լուսաւորել. այս մայրի մէջ ծրարված է անյայտն ու անհասանելին. ամբոխն այն չը պիտի տեսնէ, գաղտնիքների գաղտնիքն է այն։ Ջը գիտեմ ինչու, նկարների տեղ այս եկեղեցում բռնում են արձանները և արձանախմբերը, հսկայական սիւների խոյակներից, սեղաններից, կաթուղիկէներից կախված է քար կտրած, սառած սրբերի մի ամբողջ բանակ. նահատակներ կան, որոնք աղօթում են սուրը կրծքերին, նետը թիկունքին, կան կմախքներ, կան բրօնզեայ պատկերներ, որոնք ոտքերի տակ գանդ ունեն և մատով երկինք են ցոյց տալիս, կան արտասուողներ, հառաչողներ, կան տանջանքների մէջ գերազոյն վայելքը ճաշակողներ և բոլորը նայում են վար այս աղօթող ու մոմառցող ամբոխի վրա. հրեշտակները չորս կողմից խոյանում են վեր ու վար, մարդարէները չանթ են արձակում, առաքեալները մեռնում հեզութեամբ։ Անյայտի ծառաւով բռնված մարդկային յուզված միտքը, նրա բորբոքված երևակայութիւնը ինչ որ կարողացել է արտադրել է, ինչով նա բնակեցրել է երկինքն ու երկիրը, այդ բոլորը, բոլորը լցրել են այս եկեղեցին, միախառնվում են խնկի ծխի ամպերի մէջ, որ էլ աւելի թանձրացնում է խաւարը, միտքը չփոթվում է, երևակայութիւնը գերվում, առեղծվում է պատկերների, տպաւորութիւնների մի զարմանալի խառնուրդ, հոգին բռնվում է ինչպէս ծուղակի մէջ ընկած թռչուն և խեղդվում է, խեղդ-


վում ու տարվում է կրօնական փոթորկոտ հովերի մէջ. սոսկալի է հաւատալ, այսպիսի հաւատը ինքնասպանութիւն է։ Ահա հնչվում է թաղման մեղեդին, օրգի ձայնն է այն, ահաղնապղորդ ու լայնածաւալ, որ իր մելոդիայի մէջ անգամ կրօնի սոսկումն ունի և որոտալով ու ալիքաւոր ծածանումներով գնում է մեռնելու բարձր կամարների տակ, մի տեսակ խորհրդաւոր մահով, խուլ արձագանքներով։ Ես հասկանում եմ այժմ կաթոլիկ եկեղեցու ոյժը և դուրս եմ գնում համարեա յոգնած և կրկնում եմ մտքումս՝ խեղճ ժողովուրդ։

—o—

Միանից յետոյ ուրիշ իտալական քաղաք այցելելու չեմ. թողնում եմ Իտալիան, ուր այնքան չատ բան տեսայ, այնքան չատ զգացի, և ուր կարելի է ասել՝ այնպէս չատ ապրեցի։ Ճանապարհ եմ ընկնում Տիբրինի վրայից Շվեյցարիա, և այնտեղից դէպի հայրենիք, որին կարօտել եմ և որը յիշելու այնքան առիթներ ունեցայ ճանապարհորդութեանս բոլոր ընթացքում։ Գեղեցիկ է Իտալիան, հարուստ է գեղարուեստով, վերին աստիճանի հետաքրքիր, բայց աւելի հետու մեր երկիրը կայ...

Մնաս բարի Իտալիա...

Վ Ե Ր Ջ



Հայաստանի Ազգային գրադարան
NL0432171

21548